



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9712

ՓՈՔԾԻԿ
ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԿԱՄ

ԿԱՆԱՔ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ

ԵԿ

ԱՅ ԵԿ ԱՅ ԵԿ ԹՈՅՈՅ ՎՐՅ ԵԱՄԱԿԻ ՕՐԵԱԿԱՆԵՐ

Հ ՊԵՏՈ ԴՊՐԱՑԱՑ

ԱՇԽԱՏԱՆՔԱՐԵԱՆ

Ա. Ա. ԳՈՐԸՆԵՍԵԱՆ



Կ. ՊՈԼԵԱ

ՏԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Յ. ԳԱՅՐԱՅԻՆ

— 1875 —

651

գ - 34

2011

• 2002

~~ԳՈՒՅԻԿ~~

ՔԱՐՏՈՒՂԱՔ

651

ԿԱՄ

կ 430

Գ-34 ԿԱՆՈՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ

ԵՒ

ԱՅԻ ԵԻ ԱՅԼ ՆԻԽԹՈՅ ՎՐԱՅ ՆԱՄԱԿԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ի ՊԵՏՍ ԴՊՐՈՅԱՅ

ԱՃԻԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆԻ



Կ. ՊՈՒՄ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԵՓԱՅ ԳԱՎԱՅԵԱՆ

— 1875 —

Ահ. № 1885/55



36924-66

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՔԱԶԻ ՄԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ 2002

ԵԿ

ԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ



136

1. ՆԱՄԱԿԵՐՈՒ ԹՈՒՂԹԸ

Հասարակ նամակները կը գրուին, ինչ
տէս յացանի է, դրի սովորական թուղթ
թէն քիչ մը աւելի աղնիւ թուղթի վրայ,
որ նաևսկի բուղյ կը կոչուի, և քառածաղ
թերթի, այսինքն՝ մէջտեղէն ըստ լայնու
թեան կտրուած թերթի մէծութեամբ է.
իսկ աղերսագրեր ամբողջ թերթի վրայ կը
գրուին։ Ասոնց համար յատուկ թուղթ
կայ, որ սպիտակ և աղնուագոյն է քան հաշ
տարակ նամակի թուղթը, և դիշանաբուղյ
կը կոչուի։ Գործի և առեւտրոյ վերաբեր
բեալ նամակ մը կրնայ երբեմն թերթին կի
տուն, այսինքն մէկ խաւին վրայ միայն գը-
թուիլ։ Աւրիշ նիւթերու վերաբերեալ նա-

50742 - Ա. հ.

մակներ միշտ երկխաւ թուղթի վրայ գըր-
ուելու են : Տոմսակներ և ընտանեկան նա-
մակներ կրնան ութածալ մեծութեամբ
թուղթի վրայ գրուիլ :

2. ՆԱՄԱԿԻ ԹՈՒԱԿԱՆԸ

Նամակին թուականն է՝ գրուած
ժամանակ տարւոյն և ամսոյն օրուան թիւը,
որ թուանշանով կը նշանակուի՝ յիշելով նա-
եւ ամսոյն անունը, ինչպէս նաեւ տեղւցնը
ուր նամակ գրուի : Արեւելք ուր թուականը
դեռ ըստ հին տոմարի կը գործածուի, ա-
նոնք որ նոր տոմարին կը հետեւին . շփո-
թութեան առիթ չտալու համար նոր տո-
մարին ամսաթուոյն հետ հին տոմարինն ալ
կը նշանակեն, այսպէս՝ 7/19 Մայիս : Ինչ-
պէս յայտնի է, ըստ հին տոմարի ամիսը 12
օր ետ մնացած ըլլալուն համար, առաջին
թուանշանը հին տոմարինը կը նշանակէ,
երկրորդը՝ նորինը :

Գործի և առեւտրոյ նամակներու մէջ
թուականը նամակին գլուխը կը դրուի՝
թուղթին վերի եզրը դէպ յաջ : Ուրիշ նիւ-
թերու վերաբերեալ թղթոց մէջ թուականը

նամակին վերջը կը դրուի դէպ ՚ի ձախ : Այս
կերպը յարդական է :

Կրնայ շարթուն օրը միայն յիշուիլ ա-
ռանց թուականի, եթէ մի և նոյն քաղքի
մէջ կամ անոր մօտ բնակողի մը կը գրուի
նամակը, և նոյն օրը կրնայ համեմիլ անոր
ձեռքն առ որ ուղղուած է : Նամակին թուա-
կանն ընդհանրապէս կարեւոր է, և պէտք
չէ զանց ընել :

3. ՆԱՄԱԿԻ ՎԵՐՆԱԳԻՐԸ

Նամակին վերնագիրն է յարգութեան,
երբեմն նաեւ պաշտօնի կամ պատուոյ անու-
նը որ կը տրուի այն անձին առ որ կ'ուղղուի
նամակը : Վերնագիրը միշտ նամակին վրայ,
վերի եզրէն քանի մը մատ վար և թուղթին
երկու եզրերուն մէջուեղը կը գրուի առանձին
տողալ : Որչափ պատուաւոր է անձն առ որ
նամակը կ'ուղղուի, վերնագիրն այնչափ վար
գրուելու է թուղթին դէպ ՚ի մէջտեղը, և
այնչափ աւելի միջոց թողուելու է վերնա-
գիրին ու նամակին մարմացն մէջտեղ :

Ընտանեկան նամակներու և տոմսակնե-
րու մէջ, վերնագիրը կրնայ բուն նամակին
տողին մէջ գրուիլ այսպէս :

Անհնար է ինձ , Տէր , կամսիրելի Բարեկամ , բացառել , Եւայլ :

4. ՆԱՄԱԿԻՆ ՄԱՐՄԻՆԸ

Կամալին մարմինը ըսելով կը հաս կըցուի բուն նամակը : Նամակին մարմնոցի մէջ բառ քերելէ , և բառ մը կամ խօսք մը գծելով վրան ուրիշ մը գրելէ զգուշանար լու է :

Խւրաքանչիւր էջի վարի կողմը , նոյնպէս թուղթին ձախ դին , գոնէ երկու մատ լայն լուսանցք թողելու է :

Երբ նամակը թուղթին երրորդ էջը պիտի լցնէ , մոռնալու չէ թուղթին աջ եզրը ողարապ մաս մը թողուլ կնքոյ համար , որ գուցէ նամակը բացուած ատենը բառ վեր ցուելով խօսքին խմասար խանդարուի կամ բանի մը տող անհասկանալի ըլլայ :

5. ՆԱՄԱԿԻՆ ՎԵՐՁԸ

Կամակը վերջացնելու ատեն այլեւայլ ասութիւններ կը գործածուին , զոր օրինակ շատ մեծարոյ անձի մը ,

Խորին յարգանօք եմ :

Տէր ,

Զեր խոնարհ եւ հնազանդ ժառան Ա. Ա.

և կամ ,

Պատիշ կ'համարիմ ինձ , Տէր , ողալ Զեր խոնարհ եւ հնազանդ ժառան Ա. Ա.

Հետեւեալ ձեւերն աւելի ընտանեկան են .

Ընդունեցէք իմ կատարեալ բարեկամութեան , կամ , սիրոյ հաշաստիքը :

Ա. Ա.

Ուրեն եւ սերով սիրով եմ միշտ Զեր հաշատարիմ բարեկամը Ա. Ա.

Ընդունեցէք իմ մեծարանաց սղոյննս :

Ա. Ա.

Վատան եղիք երախտազիտութեանս եւ սիրոյ :

Ա. Ա.

Ողջոյն սիրոյ եւ մեծարանաց :

Զեր կարողին բարեկամը

Ա. Ա.

Ողջ լերուր :

Հաշատարիմ բարեկամ Զեր
Ա. Ա.

Ողջ լերուր :

Համբուրիշ ձեռաց մնամ Զեզ միշտ
խանդակար , կամ , հնագանդ որդի
Ա. Ա.

Ողջ լեր .

Սիրելի , կամ , հարազատ եղբայր քո
Ա. Ա.

Պաշտօնատարէ կամ ծառայէ կամ որ և
լիցէ ստորնագոյն անձէ մը իր տիրոջը կամ
մեծին գրուած նամակի մէջ , ըստուիր այն
անձին : Մատուցէք ողջոյնս այս ինչ ան-
ձին : Ծնողաց կամ աղդականաց կամ բարե-
կամաց գրուած նամակիներու մէջ միայն նե-
րելի է այդ համարձակութիւնը :

Եթէ հարկ ըլլայ մեծի մը գրուած նա-
մակի մը մէջ ուրիշի մը բարեւ գրել , յարդա-
կան կերպով մը կրնայ ըստուիլ , զոր օրինակ .

Ներեցէք , Տէր , համարձակուրեանս ա-
ղաջել Զեզ մատուցանել յարգանաց ողջոյնս
Զեր մեծարոյ եղբօրի , կամ , սիրելի բարե-
կամին , եւայլն :

6. ՅԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ

Յետ գրութեան կ'ըսուի այն յաւել-
աւածը որ կ'ըլլայ երեմն նամակը վերջացնե-
լին և ստորագրելին եաբը նամակին տակը :

Այսպիսի յաւելուածներէն տու-
զին սկզբը կը գրուին Յ. Գ. գիրերը որ կը
նշանակէն յևո գրութեան : Պէտք է գիտ-
նալ որ այսպիսի յաւելուած մը մեծի մը
գրուած նամակին մէջ ընել անվայել է :

~~~

7. ՍՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ստորագրութիւնը նամակագրին ով ըլ-  
լալը ցուցնելու համար է , կը գրուի , նա-  
մակին աւարտելին եաբը , վարը գէպ յաջ ,  
թուականին գիմացը , եթէ թուականը վա-  
րը գրուած է , և կը պարունակէ՝ նամա-  
կագրին պատուայն և աստիճանին համեմատ  
խոնարհական կամ յարդական ածական մը ,  
նամակագրին անունը , մականունը , տիտղո-  
սը կամ պաշտօնին և կամ արտեստին անու-  
նը . զորօրինակ .

Հնագանդ որդի ձեր Ա. Ա. աշակերտ  
այս անուն վարժարանին :

Մեծ մարդոց գրուած նամակներու մէջ  
ստորագրութիւնը շատ վար կը գրուի : Յը-

ուականն ու ստորագրութիւնը պէտք չէ  
մոռնալ : Այսպիսի մոռացում մը նշան է  
համբակութեան , և կրնայ նաեւ վնաս բեր  
բել նամակը գրողին :

8. ՆԱՄԱԿՆԵՐ ԳՈՅԵԼ, ԿԱՄ ՇԱԼԵԼ

Նամակ մը ծալուելու է երկայն քառակ  
կուսի ձեւով . իսկ կարեւոր նամակներ կամ  
աղերսագրեր կը ծալուին ՚ի չորս և պատոցի  
կամ պահարանի մէջ կը դրուին : Որ և իցէ  
նամակ պատոցաւ զրկել պատիւ է անձին  
Փու որ կ'ուղղուի նամակը :

9. ՆԱՄԱԿՆԵՐ ԿԵՖԵԼ

Պաշտօնի տէր և պատուաւոր անձանց գրուած նամակները կը կնքուին կարմիր կնքամոմով . իսկ սովորական նամակներու համար նշխարիկներ կը գործածուին : Սգաւորաց կողմէն և առ սգաւորս գրուած նամակներու համար թէ կնքամոմը և թէ նշխարիկը սեւ ըլլալու է : Երբ կնքամոմ կը գործածուի , ջանալու է նամակին վրայ այն չափ մոմ կաթեցնել որ կնքոյն տարածութենէն քիչ մը աւելի ըլլայ , այնպէս որ գըրումին բոլորտիքը բարակ շրջանակ մը ձեւա-

նայ . խոշոր և թանձր կտոր կնքամոմ նամակին վրայ տգեղ է և կոշտութեան նշան :

10. ՆԱՄԱԿԻՆ ՀԱՍՑԵՆ

Նամակին հասցեն՝ նամակը գոցուելէն ետքը վրան գրուածն է . Այս գրութիւնը կը բաղկանայ անունէն և մականունէն և տիտղօսներէն , արուեստին անունէն պյն անձին առ որ նամակը կը գրուի , և քաղքին կամ տեղայն անունէն ուր պիտի երթայ նամակը : Տեղայն անունը կը գրուի միշտ տակը դէպ յաջ , այսպէս՝

Առ (մեջապատիշ) Տէր , Գարեգին Կամսարեան

Ի Վ.Ա.

Սովորութիւն է նաեւ նշանակել քաղքին անունէն ետքը այն անձին բնակած փողոցին անունը և տան թիւը , եթէ ասոնք ծանօթ են :

11. ԱՅԻ ԵՒ ԱՅԻ ԱՍՏԻՃԱՆԻ ԵՒ ԿԱՐԳԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՎԵՐՆԱԳՐԻ . ՊԱՏՈՒԱՆՈՒԱՆ ԵՒ ՀԱՍՑԵԻ ՁԵՒԵՐ

ՎԵՐՆԱԳԻՐ

Կայսերնկամ բագաւորի . ՄԵծափառ , կամ , ՎԵհափառ Տէր :

Իշխանի . Հցյակապ իշխան :

Ազնուականի . Ազնուազարմ Տէր :

Պաշտօնի տէր անձանց . Բարձրապատիւ  
Տէր :

Պատուաշոր անձանց . Մեծապատիւ Տէր :

Հասարակ քաղաքացւոյ . Սիրելի և պատ-  
ուական Տէր :

Տիկնու և Օրիորդի . Աղնիւ Տիկնին , կամ,  
Օրիորդ :

Կարուղիկոսի . Գերերջանիկ հոգեւոր Տէր :

Պատրիարքի . Արհիապատիւ Սրբազն Տէր :

Արքեպիսկոպոսի կամ Եպիսկոպոսի . Ա-  
մենապատիւ որբազն Տէր :

Արքահօր . Գերապատիւ Արքահայր Տէր :

Վարդապետի . Յարդյապատիւ Տէր :

Քանանայի . Յարդելի և պատուական Տէր :

ՊԱՏՈՒԱՆՈՒՆ ԿԱՄ ՎԵՐԱԴԻՐ ՆԱՄԱԿԻՆ  
ՄԷՋ ԳՈՐԾԱԽՈՒԵԼՈՒ

Կայսեր կամ թագաւորի . Կայսերական , կամ,  
Արքայական վեհափառութիւնդ :

Իշխանի . Հցյակապ տէրութիւնդ :

Ազնուայանի . Ազնուազարմ տէրութիւնդ :

Պաշտօնի տէր անձին . Բարձրապատիւ  
րութիւնդ :

Պատուաշոր անձին . Մեծապատիւ տէրու-  
թիւնդ :

Հասարակ քաղաքացւոյ . Պատուական տէ-  
րութիւնդ :

Տիկնու և Օրիորդի . Ազնուութիւնդ :

Կարողիկոսի . Գերերջանիկ հոգեւոր տէ-  
րութիւնդ :

Պատրիարքի . Արհիապատիւ տէրութիւնդ :  
Արքեպիսկոպոսի . կամ Եպիսկոպոսի . Ա-  
մենապատիւ տէրութիւնդ :

Արքահօր . Գերապատիւ տէրութիւնդ :

Վարդապետի . Յարդյապատիւ տէրու-  
թիւնդ :

Քանանայի . Յարդելի տէրութիւնդ :



### ՀԱՍՑԵՒ ԹՐԻՆԱԿՆԵՐ

Կայսեր կամ թագաւորի . Առ Մեծազօր և  
Վեհափառ Ա. Ա. Կայսր , կամ, Ինք-  
նակալ , կամ, Յագաւոր :

Իշխանի . Առ Հցյակապ Տէր և Իշխան Ա. Ա.:

Ազնուայանի . Ազնուազարմ Տէր :

Պաշտօնի տէր անձին . Առ Բարձրապատիւ  
Տէր Ա. Ա. Խորհրդական եւայլն :

Պատուաշոր անձին . Առ Մեծապատիւ  
Տէր Ա. Ա.

Հասարակ քաղաքացւոյ . Առ Պատուական  
Տէր Ա. Ա.

Տիկնոց և Օրիորդի . Առ Աղնիւ Տիկին , կամ ,  
Օրիորդ Ա . Ա .  
Կաբողիկոսի . Առ Գերերջանիկ Հոգեւոր  
Տէր Ա . Ա . , Կաթողիկոս Եւայլն .  
Պատրիարքի . Առ Ամենապատիւ Արքազոն  
Տէր Ա . Ա . , Պատրիարք Եւայլն .  
Արքեպիսկոպոսի կամ Եպիսկոպոսի . Առ  
Ամենապատիւ Տէր Ա . Ա . , Արքեպիսկո-  
կոպոս , կամ , Եպիսկոպոս Եւայլն .  
Արքանոր . Առ Գերապատիւ Տէր Ա . Ա . ,  
Արքահայր Եւայլն :  
Վարդապետի . Առ Յարդոյապատիւ Տէր ,  
Ա . Ա . , Ծայրագոյն Վարդապետ , կամ  
Քարոզիչ Եւայլն :  
Քահանայի . Առ Յարդելի Տէր Ա . Ա . , Ա-  
ռագերէց , կամ , Քահանայ Եւայլն :

## ԳԼՈՒԽ Ա.

ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ԵՒ ԾՆՆԴԵԱՆ ԱԽՈՒԹ  
ԿԱՄ

ԱՆՈՒԱՆ ՏՕՆԻ ՇՆՈՐՀԱԿՈՐՈՒԹԻՒՆՔ

### ԴԻՑՈՂՈՒԹԻՒՆՔ

Տղայք մանաւանդ կը գրեն այսպիսի նա-  
մակներ սովորաբար մեծ գուշտութեամբ և  
յարդանօք իրենց ծնողացը , Տղայոց առ ծը-  
նողս գրած նամակներուն գլխաւոր նպատա-  
կըն է ցուցնել իրենց ըրած յառաջադիմու-  
թիւնը տարւոյն մէջ , որպէս թէ ծնողաց  
համար ամենէն ցանկալիքանը , ամենէն պատ-  
ուական ընծան է՝ գիտնալ թէ իրենց զաւ-  
կըները ինչպէս մարմնուլ , նոյնպէս մոռք կը  
զարդանան . և թէ արդարեւ օգուտ կը քա-  
զեն իրենց տրուած դաստիարակութենէն :

Տղայք որ հեռու են իրենց ծնողքներէն .  
Նամակի ձեւով կը գրեն իրենց նոր տարւոյ  
շնորհաւորութիւնը . իսկ անոնք որ իրենց  
ծնողացը քով են՝ ընդհանրապէս մեծ և ազ-  
նիւ թուղթի վրայ գրելով և առանց ծալե-  
լու թուղթը կը կարդան անոնց առջև նոր-

տարւցին օրը կամ մանաւանդ նախընթաց եւ թէ կցին յարմար ժամանակ մը :

Այս տեսակ նամակներ գրողը, թէ տը զայ մը ըլլայ և թէ այլ ոք, միշտ քաղաքաւ վարական ըլլալու են, յիշելու է միշտ այն անձին առ որ կը գրուի արդիւնքը և երախտիքը, որոնց համար մեծարանքը կամ երախտագիտութիւնը, և կամ երկուքն ալ ստիպուած են գգրողն այն շնորհակալութիւնը ընելու, ոչ թէ իբր սովորութիւն, այլ սովորութենէ պատեհութիւն առնելով իբրւ կատարումն պարտաւորութեան։ Պէտք է խնդրել նաեւ սիրոյ, բարեկամութեան, երախտեաց տեսողութիւնը :

Ասոնք արդարեւ կրնան ըստիլ մանաւանդ երբ անձը օրուն նամակը կուղուի՝ պարտաւոր և բարերար անձ է :

Մտերիմ բարեկամաց կամ հասարակաց իրարու գրած նոր տարի շնորհաւորութեան նամակներուն մէջ միայն շատ քաղաքալարական նըրութիւն առելորդ է : Ասոնց մէջ համառօտիւ բարի և երջանիկ տարի մը մաղթելն ետքը, կրնայ զուարթ, նաեւ զաւեշտ խօսքեր անդամ ըստիլ իրաւու, որ չափ որ ընտանութիւնը կը ներէ և գրողին հանձարը կրնայ հաճայացնել զուարթն ու զաւեշտ :


Միշտ ջանալու է որ իմաստները կեղծ և բռնազբօւեալ ըլլան կամ այնպէս չթուին։ Պէտք չէ մոռնալ երբէք որ, ինչպէս խօսքի նյյնպէս գրութեան մէջ . թէ զուարթ ըլլայ ոճը և թէ ծանր, կեղծը կամ սեթեւեթեալը ցուրտ և ծաղրելի, շատ անդամնաեւ արհամարհելի է :

### ՆՈՐ ՏԱՐԻՈՑ ՇՆՈՐՀԱԿՈՐՈՒԹԻՒՆ

1. Որոյի մը իր ծնողացը նոր տարի կը մաղրէ :

Միրելի Հայր իմ և խանդակալթ Մայր :

Որչափ սիրելի է ինձի ձեզմով հանդերձ տեսնել ողջ և առողջ նոր տարւոյս առաւոտեան արեւը, նյյնչափ ցաւալի է յիշել որ այն ցանկալի առաւոտը պիտի անցընեմ ձենէ հեռու : Այս անդամ այն օրը, ինչպէս նախընթաց տարիներուն ոկիզբը սովորաբար կ'ըլլար, ձեր որդւոյն համբոյրներն ու մաղթանքը պիտի ըլլան ձեզ արթնցնողը, և հաւանական է թէ բոլոր այս տարին պիտի անցնի, և ես ձեզ տեսնելու և ձեր գլուխանկը վայելելու բարեբախտութիւնը տիւ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՋԱԿԱՆ  
ՀՀ ԿՈԲԼԻՆԻ ՏԵՐԱԾ  
2

տի չունենամ։ Բոլոր փափաքս և խղճերս այս  
են որ այս տարի ձեզի համար օրհնութիւն  
տարի մը ըլլայ, ամենեւ ին արկած կամ ձա-  
խորդութիւն ձեր հանդիսար և ուրախու-  
թիւնը չվրդովէ։ Ես ալ ինձի համար կը  
խոստանամ, սիրելի ծնողքս, ձեր հրաման-  
ներուն և ակնարկութեանց անդամ հնա-  
զանդ գտնուիլ, և սիրով ընդունել և ան-  
սալ ինչ որ ինձի նկատմամբ տնօրինել պիտի  
հաճիք։ Ողջ լեռտւք, սիրելի Հայր իմ և սի-  
րելի Մայր, յերջանկութիւն պանդո խո-  
ռուց ձեր, որ թէեւ ձենէ հեռու,  
բայց հոդուով ձեզի մօտ՝ կը մատչի ի համբոյր  
Ձեր աջան իբրեւ

Հնազանդ և երախտագէտ

(Թուական)

որդի Ա. Ա.



2. Շնորհաշորոշիւն նոր տարշոյ առ Հայր  
(կարդացուելու համար)։

Սիրելի Հայր իմ։


Ի՞նչ երջանկութիւն է ինձի համար որ  
կարող եմ այս գեղեցիկ օրուան մէջ գալ  
յայտնել ձեզ իմ սէրս և երախտագիտու-  
թիւնս։ Թէալէտ ամեն օր սիրտս ձեզի հետ  
կը խօսի, կը թուի ինձ թէ այս նշանաւոր օրս

որ ձեր բոլորտիքը կը ժողվէ ձեր ընտանիքն  
ու բարեկամները՝ աւելի զօրութիւն և ե-  
ռանդ կու տայ իր խօսքերուս։

Բարի վարուց խոստումներ զորս պիտի  
ջանամ կատարել՝ իմ միակ ընծայս են սի-  
րելի Հայր, և կարծեմ թէ ձեզի համար ալ  
ամեն բանէ աւելի պատուական։ Այս, պի-  
տի ջանամ, սիրելի Հայր, այս օրուընէ ըս-  
կըսեալ գործքով ցուցնել թէ ձեզի անար-  
ժան որդի չեմ, և թէ ձեր բոլոր ըրածներն  
ինձի համար ընդունայն չեղան, և այսու-  
հետեւ ալ պիտի չըլլան։

Ներեցէք արդ որ խօսքերուս յաջորդեն  
գգուանքո, զոր կը սկսիմ համբուրելով յար-  
դանօք ձեր պատուական աջը որմէ կը փա-  
փաքիմ օրհնուիլ։

Կեցցէ սիրելի Հայրս։



3. Փոքրիկ տղու մը նոր տարշոյ շնորհա-  
շորոշեան նամակն առ ծնողս իշր։

Սիրելի ծնողք։

Կատ կը փափաքէի այս նոր տարւոյ օրը  
ձեզի մօտ գտնուիլ, որպէս զի կարող ըլ-  
լայի յայտնել ձեզ թէ որչափ մեծ է սէրս  
և երախտագիտութիւնս առ ձեզ։ Այսու

առթիւ անտարակցոս պիտի խոստանայի ձեզ  
հնազանդութիւն, հանգարտութիւն, խո-  
հեմութիւն վարուցո մէջ, և ուսմանցո մէջ  
ջանք և յարատեւութիւն : Եւ որովհետեւ  
ձենէ հեռու գտնուելով չեմ կարող յայտ-  
նել ձեզ ասոնք անձամբ, կը փութամ ա-  
ւասիկ գրով ընել նոյնը : Ընդունեցէք ու-  
րեմն, սիրելի ծնողք, ձեր վարքիկ որդւոյն  
անկեղծ յայտարարութիւնը, շնորհելով փո-  
խարէն ձեր ծնողական օրհնութիւնը, ո-  
րով միայն կը յուսամ կատարել բարի ա-  
ռաջադրութիւններս առաջիկայ տարւոյս  
մէջ, և ձեզ գոհ և ուրախ ընել :

Ձեր խանդակաթ որդին

(Թագավոր)

Ա. Ա.



4. Մեծիակ տղոց մը նամակը նոր տարւոյ  
համար առ ծնողս իշր :

Սիրելի ծնողք .

Երախտագէտ որդւոյ մը քաղցր պար-  
տաւորութիւնն է յայտնել սէրն ու երախ-  
տագիտութիւնը զոր ունի սրտին մէջ առ  
սիրելի հայր իւր և առ խանդակաթ մայր :  
Ուստի շատ ուրախ եմ հասած տեսնելով  
այն հանդիսաւոր օրը որ պատեհութիւն

կու տայ ինձ յայտնել ձեզ թէ որչափ կը սի-  
րեմ զձեղ և որքան երախտագէտ եմ ձեզ  
բոլոր այն խնամոց համար զոր ցարդ ունեցաք  
և պիտի ունենաք իմ վերայ : Հաւատացեք,  
սիրելի ծնողք, որ ձեր որդին ապերախտ  
չէ, և թէ կըթութիւնը զոր կ'ընդունիմ  
ձեր շնորհիւ՝ պիտի աճեցնէ յիս այս զգա-  
ցումը : Գիտեմ որ չեմ կարող ձեր երախ-  
տեացն աւելի արժանաւոր փոխարէն մը ը-  
նել, բայցեթէ ջանալով հաւատարել վարքս  
և ընթացքս ձեր վափաբանաց և խնամոց :  
Արդ վասահ լերուք, սիրելի ծնողք, որ  
ձեր որդին այդ ջանքը կ'ընէ և պիտի ընէ .  
Եւանդու այնպէս մէծ է որ կը յուսամ թէ  
Աստուծով ձեզ չեմ ամցներ, և կ'ըլլամ  
ձեզի արժանի որդի, և գուք կը միխմաք-  
ուիք տեսնելով որ ձեր ըրած զոհերն ա-  
պարդիւն չեղան : Ահա ասոնք են իմ հանա-  
պազրդ իղձերս, և մանաւանդ այս միջու-  
ցին որ նոր տարի մը կը մտնենք : Ընդու-  
նեցէք ուրեմն, սիրելի հայր իմ և խանդա-  
կաթ մայր, իմ այս եռանդուն իղձերս հան-  
գերձ այն բարեմաղթութիւններով զորս  
կ'ընեմ ձեր կենացն ու երջանկութեանը  
համար : Ատոյդ եմ որ իմ այս անկեղծ խօս-  
քերս ձեզ ուրախութեամբ և միսիթարու-  
թեամբ պիտի լնուն, և գուք փոխարէն պի-

աի զեղուք իմ վրայ ձեր օրհնութիւնը ու  
բուն փափաքելով մնամ ձեզ միշտ ,  
Հլու և խանդակաթ որդի

(Թուական)

Ա. Ա.

— առաջ —

5. Փոքրիկ տղայ մը իր հաշուն :

Սիրելի Հաւս .

Ձեզ սերտիւ կը սիրեմ , օր քան զօր ալ  
կ'առաւելու սէրս , և , ինչպէս կը յուսամ ,  
միշտ պիտի սիրեմ , ցորչափ որ գուք և ես  
ողջ ենք : Հասակս և գիտութիւնս չեն նե-  
րեր որ ասկէ աւելի բան մը ըսեմ ձեզի ,  
ոչ ալ աւելի բանիբուն և զարդարուն խօս  
քեր շարադրելու արուեստը գիտեմ : Ըսի  
ինչ որ անկեղծ սիրտս և պարզ լեզուս ազ-  
գեցին ինձ : Ընդունեցէք ուրեմն , սիրելի  
Հաւս , ձեր մանուկ թուան այս առաջին  
գրութիւնը զոր իրեւ երախայրի իմ տը-  
խեղծ հանձարս կը մատուցանէ ձեզ : Ասոր  
փոխարէն ուրիշ բան չեմ խնդրեր ձենէ  
բայց ձեր հաճցական ազօթքը և ցանկալի  
օրհնութիւնը , որով կը յուսամ բարի ըլլալ  
և սիրելի պատուական Հաւուս , որոյ աջը կը  
համբուրեմ խնարհութեամբ :

Ձեր խանդակաթ թոռը

(Թուական)

Ա. Ա.

6. Տղու մը նամակն առ ճնողս իշր  
՚ի սկզբան նորոյ տարշոյ :

Սիրելի Ծնողք .


Ահա նոր տարի մ'ալ : Որչափ տարբեր  
կ'երեւի ինձ այս նոր տարիս անցեալ տա-  
րիներէն : Ասկէ առջի տարեգլուխներուն  
կը խորհէի թէ նոր տարին ուրիշ բան չէ՝  
բայց կազանդ մը , այսինքն՝ ուտելու , հագ-  
ուելու , պարգեւ առնելու և ուրախանա-  
լու օր մը : Բայց այս անդամ շատ տարբեր  
սկսայ մտածել : Հիմա կը զգամ որ նոր տա-  
րին նոր զգացումներ ունենալու , նոր և ան-  
կեղծ առաջադրութիւններ ընելու ժամանակ  
է : Մեր պատուական վերակացուին խրատը  
մեծ ազգեցութիւն ըրաւ ինձի : Անկէ սորվե-  
ցայ որ Աստուած մեջ նոր տարի կը չնորհէ ,  
որպէս զի պատեհութիւն ունենանք մեր անց-  
եալ կենացը վրայ խորհելու , և ապագային  
մէջ ուղղելու մեր վարքը : Աւստի կը յուսամ ,  
սիրելի Ծնողքս , որ այս նոր տարւոյս մէջ  
ինչ գոհ պիտի ըլլաք : Եթէ մինչեւ ցարդ  
այնպիսի ընթացք մը ունեցայ որ ձեզի ցաւ  
և գժգոհութիւն պատճառեց , ներում կը  
խնդրեմ ձենէ , և կը խոստանամ ամեն ջանք  
ընել որ այլ եւս այն թերութեանց մէջ  
չգտնուիմ :

Առ աջադրութիւններս բարի են . անքը դրդուելի մնալու համար բանի մը միայն կարօտ եմ , այն է ձեր ազօթքին և օրհնութեան : Ձեզի երկայն կեանք և ամեն երջան կութիւն մաղթելով , կը համբուրեմ խանդաղատանօք ձեր աջը :

Ամենահնագանդ որդի ձեր

(Թուական)

Ա. Ա.



7. Ծղոց մը զիրն առ հայր և առ մայր իշրանունց ըրտա՞ն ընծային փոխարէն 'ի սկզբան նորոյ տարւոյ :

Սիրելի ծնողք ,

Ձեր ինծի զրկած նոր տարւոյ ընծային փոխարէն զոր շնորհակալութեամբ ընկալայ՝ չէի կարող լաւագոյն փոխարէն մը ընելքայց եթէ վայելչագրաւթեան օրինակ մը ուղղել ձեզ որ իմ ձեռացս գիրն է : Հաճեցէք ընդունել զայս , սիրելի ծնողք , ոչ միայն իբրեւ . երախայրի իմ փութոյս և յառաջադիմութեանս , այլ և իբր ապացոյց փափաքանաց զոր ունիմ ձեզ գոհ ընելու ուսման մէջ զարգանալով օրս ըստ օրէ : Այսու առջիւ կը յայտնեմ ձեզ նաեւ . սիրելի ծնողքո , որ այս աարեգլիսոյ հետ նոր առաջադրաւթիւն մը ըրած եմ ընտիր վարք մը ունենաւ

լու , որուն գիտեմ թէ կը փափաքիք առաւել քան զամենայն :

Նամակիս ոչ միայն գիրը , այլ և խմասող և շարադրութիւնը իմն է . ըստ կարի ջանք ըրած եմ զայն թերութենէ ազատ ընելու : Համբաւրեցէք ուրեմն հոգւով ձեր որդին և տուեք ձեր օրհնութիւնը , ինչպէս որ անալ հոգւով կը համբուրէ ձեր աջը կաթութին :

Ձեր հնագանդ որդին

(Թուական)

Ա. Ա.



8. Նամակ որդւոյ առ հայր իշր 'ի սկզբան նորոյ տարւոյ :

Կենացս իւրաքանչյւր օրը կ'անցնի , սիրելի հայր , ձեզի համար նոր նոր իղձերով : Ձեմ կարող ըստ բաւականին շնորհակալ ըլւալ Աստուծոյ որ ինծի այսպիսի բարի հայր մը տուաւ : Իմ սէրս ու երախատագիտութիւնս առ ձեզ այսպէս սաստիկ ըլլալով , տարւոյս այս նշանաւոր օրը , ինչպէս է տարեգլուխը , հասարակ օրուան մը պէս համարած պիտի ըլլայի , եթէ պատեհութիւնն չհամարէի զայն՝ մասնաւոր կերպով յայտնելու ձեզ շնորհակալութիւնս այն հայրական սիրոյն և անդուլ խնամոց համար զոր կը

ցուցնէք ձեր անարժան բայց հաւատարիմ  
որդւցն : Ձենէ ուրիշ բան չեմ խնդրեր ,  
սիրելի հայր իմ , բայց օրհնութիւն . այն  
ինձ ամեն հարսաւթենէ աւելի պատուա-  
կան է : Ավ , ի՞նչ երջանկութիւն վասն իմ ,  
գիտնալ թէ սիրելի հայրս գոհ է ինէ , և  
ուրախ՝ զիս խորհելով : Խո ալ , սիրելի հայր ,  
պատրաստ եմ ընել ինչ որ բարի զաւկէ մը  
կը պահանջուի , այն է՝ ջանալ հետեւիլ ձեր  
ընակր օրինակին և արատ չբերել որեւիցէ  
անվայել վարուք այն բարի համբաւոյն զոր  
արդարեւ մեծ անձնուրացութեամբ . և հա-  
մեստութեամբ ստացած էք ՚ի մանկութենէ :

Ընդունեցէք , սիրելի հայր իմ , այս իդ  
ձերս , և հաւատացէք առաջադրութեանս  
անկեղծութեանը : Արդարեւ ծանր է ինձ  
բացակայութիւնս ձենէ , բայց միտքս գրած  
եմ ամեն զբկման քաջութեամբ համբերել  
ձեզի հնազանդելու համար , որպէս զի  
կրթութեանս քանի մը տարիներն ըստ ար-  
ժանւոյն կատարելով ըլլամ ձեզի արժանի որ-  
դի , մինչեւ որ նորէն հասցունեն զիս եր-  
կինք ձեր հայրենի յարկին տակ վայելել եր-  
ջանիկ օրեր , որոնց անձկանօք սպասելով եմ  
սիրելի հօրդ

Հաւատարիմ և հնազանդ  
որդի Ա. Ա.

(Յ. Ա. Ա.)

9. Պատաճոյ մը նամակն առ ծնողս իշր  
ի սկզբան նորոյ տարւոյ :

Սիրելի հայր իմ և Մայր ,

իմ մեծամեծ պարտաւորութիւններէս  
մէկուն մէջ սպակասութիւն ըրած պիտի հա-  
մարէի զիս , եթէ՝ ՚ի սկզբան նորոյ տար-  
ւոյս , զանց ընէի յայտնել ձեզ որտիս մէջ  
տիրուլ զգացումներն , այն է՝ որդիական սէ-  
րըս և գորովայի յարգանիքս որ առ ձեզ :

Ընդունեցէք ուրեմն եռանդուն իդձերս  
զոր կ'ուղղեմ յերկինս ձեր լիուլի առողջու-  
թեանը և ձեր բոլոր փափաքանաց լրմանը  
համար : Իցիւ , լսէր Ամենակալն իմ հանա-  
պազօրեայ ազօթքս , և հեղսոր ձեր վրայ մա-  
քուր և անմռայլ օրեր : Իցիւ , յերկարէր  
այն օրը յերջանկութիւն ձեր բոլոր տա-  
նը , մանաւանդ ինձի համար որ միշտ կա-  
րօտ եմ ձեր խրատներուն և պաշտպանու-  
թեանը : Եւրաքանչիւր տարի աճեցնելով  
հասակս՝ կ'աճեցնէ նաեւ երախտագիտու-  
թիւնս զոր պարտիմ ձեր ինեամոցը և այն  
զրհերուն զոր կ'ընէք ինձի ապագայ մը պատ-  
րաստելու համար : Հաւատացէք որ սիրտա  
մուացկոտ չէ , և երախտադիտութիւնը կը  
զօրացնէ յիս որդիական սիրոյ զգացումները

զոր բնութիւնը կ'աղդէ գրեթէ ամեն որդւց :

Հաճեցէք, սիրելի ծնողք, որ համբուրեմ ձեղ հոգւով այն շերմութեամբ զօր սիրտի տեսնէիք յիս, եթէ այսպիսի ուրախալի օր մը ձեզի մարմով մօտ ըլլալու բախտաւորութիւնն ունենայի :

Խորին մեծարանօք եմ,

Զեր խանդակաթ

(Թագավորական)

որդին Ա. Ա.

10. Ամուսնացեալ որդւոյ մը նոր տարւոյ շնորհակալութեամ նամակն առ ծնողս իշր :

Սիրելի ծնողք,

Ահա եկաւ այն օրը որ կ'իմացնէ ինձ պարտաւորութիւնս՝ յայտնելու սիրոյ և երախտագիտութեան զգացումներս որ առ ձեղ : Տարիները փոխանակ նուտղեցնելու և տիարացնելու, կ'աճեցնեն մանաւանդ և կը զօրացնեն այս զգացումները որ բնական են բարի որդւոյ մը որդին մէջ : Ուրախ եմ որ ես զիս այս տեսակ որդւոց թուցն մէջ կը գտնեմ : Արդարեւ, սիրելի ծնողք, հասակիս հետ մոքիս կարողութիւններն ալ զօրաչնալով, օր քան զօր աւելի կը զգամ ձեր ար

ժանաւորութիւնը : Զեր բարութիւնն ու իմաստութիւնը յայտնի կը տեսնեմ, և կը զգամ որ ձեր վարուցք և խրաներուն տըղայութեանս ատեն մոքիս և սրտիս ըրած ազգեցութեան արդիւնքն է որ հիմա կանոնաւոր և երջանիկ կեանք մը վարելու կարող եմ : Միով բանիւ՝ գիտեմ թէ ինչ որ ունիմ և կը վայելեմ, առաքինութիւն, բարի համբաւ, կրթութիւն, հարստութիւն, բոլորն ալ ձեր միջոցավը և ձենէ ունիմ : Անտարակոյս կը հաւատաք թէ ինչ որ կը սեմ՝ անկեղծութեամբ կ'ըսեմ, և թէ այսպէս ըլլալով անջնջելի է և անջնջելի պիտի մնայ ձեր յիշատակը մոքիս մէջ : Երանի թէ կարող ըլլայի ես ալ այնպէս կրթել իմ զաւկըներս, ինչպէս որ դուք զիս կրթեցիք :

Բոլոր այս գաղափարներուն և այս զգացմանց հաղորդ է նաեւ կինս որ ինծի հետ միաբան կը մաղթէ ձեղ երկայն և երջանիկ օրեր : Փոքրիկ Արամս որ միշտ կը յիշէ ձեղ՝ շատ տիսուր է որ չէ կարող ընդունել իր բարի հաւուն և սիրելի հանւցյն սիրոյ գըգուանկը : Բոլոր ընտանեօք ողջունելով ձեղ կաթոգին՝ մնամ 'ի սերտ սրտէ :

Զեր խանդակաթ որդին .

(Թագավորական)

Ա. Ա.

11. Դատեր մը նաևսկն առ մայր իշր ՚ի սկզբ-  
բան նորոյ տարւոյ :

Բարի և գթած Մայր իմ.

Որչափ դժուարին է ինձ հեռու ըլլալ  
ձենէ տարւոյն այն օրը, երբ ամեն դուստր  
կը փութայ յայտնել իւր իղձերն առ մայր  
իւր խանդակաթ : Բարե, ինչո՞ւ համար ըս-  
տիպուած եմ ես ցուրտ թղթոյ մը յանձ-  
նել մաղթանք՝ զոր բերանս պիտի բարեա-  
ռէր ջերմաջերմ : Ո՛հ, սիրելի Մայր իմ, թող  
ձեր առաջին մտածութիւնը տարւոյս առա-  
ջն օրուան մէջ ըլլայ ձեր դստերը վրայ :  
Ուրիշ մը ձեզի իւր սէրը յայտնելն առաջ  
երեւակայեցէք որ ես եմ ձեր քովը և կը  
համբուրեմ ձեզ գորովանօք : Այս չնորհքը  
կը խնդրեմ ձենէ, և կը յուսամ թէ անար-  
ժան չեմ անոր, իբրեւ այնպիսի դուստր մը  
որ գիտէ յարգել ձեր սրտին բարութիւնը :  
Հարկ չէ ըսել թէ ինչ են ձեզի համար իմ  
իղձերս . գիտէք թէ որչափ կը սիրեմ ձեզ,  
և այս բառը բաւական է ցուցնել ձեզի թէ  
ինչ մեծ երջանկութիւն կը մաղթեմ ձեզի  
համար :

Մնաք բարով, սիրելի Մայրս, մի՛ մոռշ  
նաք ձեր դուստրը, և հաւատացէք որ բո-  
լոր փոյթս պիտի ըլլայ ձեզ գոհ ընել . այս

միայն կրնամ տալ ձեր այնչտի խնամոց և  
գորովայն փոխարէն զոր ցուցած էք և կը  
ցուցնէք ինձ առատօրէն : Բոլոր փափաքս է,  
սիրելի Մայր, զգացունել ձեզ որ ապերախտ  
մը չէ այն զոր ծնաք և մնուցիք, և կը խը-  
նամէք :

Յարդանօք և գորովավ եմ ձեր ամենա-  
հընազանդ դուստրը .

(Թուուկան)

Ա. Ա.

12. Ուստեր մը կամ դատեր մը նաևսկն առ  
հայր կամ առ մայր իշրեւանց ՚ի սկզբան  
նորոյ տարւոյ :


Սիրելի Հայր իմ, կամ Մայր .

Միշտ ուրախութեամբ կը տեսնեմ այն  
օրուան հանիլը, երբ ուստեր (կամ դըս-  
տեր) մը սիրով կը թափէ սիրոյ և չնորհա-  
կալութեան բանաւոր ծաղիկներ իւր ծնո-  
ղաց ծոցին մէջ : Կ'ըսուի թէ մարդուս պար-  
տաւորութիւնն է յայտնել իւր զգացումը :  
Կ'երեւի թէ ուրիշ մարդոց պէս չեմ . քան-  
զի ինձի համար բազզը հաճոյք մըն է ոչ թէ  
պարտաւորութիւն զգացումն յայտնել, մա-  
նաւանդ ձեզ, սիրելի Ծնողք իմ :  
Կ'աղաչեմ, սիրելի Հայր իմ կամ Մայր ,

ընդունեցէք խղձերս որ ձեզի համար են ՚ի սկզբան նորոյ տարւոյս , և հաւատացէք անոնց անկեղծութեանը : Հաճեցէք նաեւ որ յաւելում առ այն նաեւ բարի վարուց խոստում մը տարւոյս բոլոր ընթացքին մէջ : Զեմ գիտեր թէ արդեօք մինչեւ ցարդ ձեղ գոհ ընելու բարեբախտութիւնն ունեցայ . բայց սա գիտեմ որ տարուէ տարի փափաքս կ'աւելնայ բարի ըլլալու յուրախութիւն ձեր . ուստի շատ երջանիկ պիտի ըլլամ եւ թէ ձեր ամեն նամակն ինծի աւետէ թէ գոհ էք ինէ : Այս երջանկութեան համեմու համար ամեն անձնուրացութիւնն ընելու պատրաստ եմ սիրելի ծնողքս , և կը յուսամ թէ այս առաջադրութիւնս բաւական պատճառ կուտայ ինծի հաւատալու թէ արդէն կը վայելեմ ձեր համութիւնը :

Օրհնեցէք ուրեմն , սիրելի ծնողք , այս սողերն արտասուօք և գորովով գրող խեղճ տղան որ է և միշտ պիտի ըլլայ :

Ձեր հաւատարիմ և խանդակաթ որդին  
(Թ. ուսական) (կամ դուստրը) Ա. Ա.




13. Նոր տարւոյ շնորհարութեան նաևակ մը առ ազգականս , ինչպէս հօրեղբայր , հօրաքոյր , հօրեղբօրդի ևայլն :

Սիրելի Հօրեղբայր ,

Շատ կը փափաքէի այս նոր տարին շնորհաւորել ձեզ բանիւ բերանոյ . բայց որովհետեւ այս անգամ անձամբ կատարել այս քաղցր պաշտօնն անհնար է ինձ , կը յանձնեմայս պարտաւորութիւնը գրչիս , թէպէտ գիտեմ որ գրիչս անկարող է ընել այնպէս ինչպէս կը փափաքի սիրտս : Շատ ատեն լեզուն անգամ անբաւական է թարգման ըլլալ սրտին , ուր մնաց գրիչը : Բայց գիտեմ թէ դուք որ քաջ ծանօթ էք զգացումներուս և անկեղծ բնաւորութեանս՝ դոյզն խօսքէ շատ բան հասկնալով կ'ընդունիք այս նամակս այնպէս՝ որպէս թէ սիրտս ձեզի կը մատուցանէ : Եթէ երկինք կը հաճին լսել և կատարել ձեզի համար ըրած մաղթանցո , դուք , սիրելի Հօրեղբայր , շատ երջանիկ տարիներ պիտի տեսնէք , անսարակոյս ձեր իղձերուն համեմատ ես ալ ,

Ձեր խանդակաթ եղբօրդին  
(Թ. ուսական) Ա. Ա.



14. Նար տարբոյ շնորհաւորութիւն առ կը և  
քահայր կամ առ կնքամայր :

Սիրելի Կնքահայր (կամ Կնքամայր),

Երկայն ատեն է որ ձեր սանը կը սպասէ  
մեծաւ անձկանօք տարւցին առաջին օրուան՝  
պատեհութիւն ունենալու համար յայտնել  
ձեզ սիրոյ և երախտագիտութեան զգացու-  
մը զոր ունի առ ձեզ։ Արդարեւ, յետ ծը-  
նողացս, ով աշխարհիս վրայ աւելի արժա-  
նի է սիրոյ և մեծարանացս, եթէ ոչ դուք  
սիրելի Կնքահայր։ Ինձի կնունք տրուած ու-  
րէն, երբ խոստացաք առաջի Աստուծոյ հըս-  
կել իմ վարուցս վրայ, ոչ ապաքէն հոգ  
տարիք ինձ իբրեւ բուն ձեր որդւցին։ Ա-  
յս, սիրելի Կնքահայր, ամենեւին խրատ,  
քաջալերութիւն չխնայեցիք բարեպաշտ և  
իմաստուն ընելու ձեր սանը։ ուստի և  
քաղցր է ինձ այսօր ճատուցանել ձեզ սերտ  
չնորհակալութեամբ իղձերուս և անեղծ սի-  
րոյս հաւաստիքը, զորս կը խնդրեմ լնդու-  
նել մարդասիրաբար, և հաշուել զիս ձեզի  
ձշմարտիւ երախտապարտ ըլլալու պարտա-  
կան անձանց թուցին մէջ։ Այս պարտառ-  
րութիւնս ճանչնալով, միանգամայն ջանա-

լով միշտ հաւատարիմ գտնուելու ձեզ, կը  
խոստովանիմ զիս սիրելի Կնքահօրդ  
Հնազանդ և խոնարհ սան

(Թագավոր)

Ա. Ա.

15. Բարեկամի մը ուղղուած նամակ մը տա-  
րեգիւոյ շնորհաւորեան համար։


Սիրելի բարեկամ,

Արդարեւ տարօրինակ բան մը պիտի ըլ-  
լայ, եթէ ձշմարիտ բարեկամներ լրեն տա-  
րեգլխուն, մինչ իրարու նկատմամբ անտար-  
բեր եղող անձինք անդամ սովոր են շատ ան-  
գամ ամեն տեսակ բարեմազթութիւն ընել։  
Գիտեմ, ձեզի հաճոյ չէ, ինչպէս նաեւ ին-  
ձի, հետեւիլ այնպիսի սովորութեան մը որ  
ըկ քաղաքավարութեան ձեւ մըն է, որուն  
մէջ գրիչը կը խօսի մանաւանդ քան թէ սիր-  
տը։ Բայց և ոյնպէս կը յուսամ թէ կարող  
էք դուք սիրոյ անկեղծ լեզուն զանազանել  
քաղաքավարութեան ցամաք լեզուէն։ մա-  
նաւանդ կը տեսնէք որ նամակս բոլորովին  
ազատ է այն սովորական ձեւերէն։ Մի մի-  
այն բարեմազթութիւնս այս է՝ յայտնել  
ձեզ իղձը զոր ունիմ ընդ հուպ վայելել ձեր  
գէմյանդիման տեսութիւնը։ Ուստի ողջ

Եղիք, սիրելի բարեկամ, ոչ միայն յուրաշխութիւն ձեր գորովալի ամրումնոյն և աննըման որդւոց որոց ճշմարիտ երջանկութիւնն էք, այլ և ՚ի խնդութիւն ինձ որ եմ Սիրելութեանդ

Անկեղծ և խանդակաթ  
բարեկամ Ա. Ա.

(Բառական)



16. Հայր մը իր որդւոյն դաստիարակին ՚ի սկզբան նորոյ տարւոյ հանդերձ ընծայիւք =

Տէր,

Ոտէպ խնամքն ու անդուլ ջանքը զոր ունիք որդւոցս դաստիարակութեանը համար՝ շատ պարտաւոր կ'ընեն զիս շնորհակալը ըլլալու ձեղ։ Գիտեմ որ այս պարտաւորութենէս չեմ կրնար շնորհակալութեամբ միայն ազատիլ, ուստի և ձեղ արդէն իմ սիրելի բարեկամներուս թուոյն մէջ և անոնց գլուխը դասած եմ։ Եթէ այս բարեկամութիւնը յարգի կը համարիք, հաճեցէք, Տէր, ընդունել մարդասիրաբար փոքրիկ ընծան զոր կը համարձակիմ մատուցանել ձեղ։ Գիտնալով որ ձեր մատենադարանին մէջ որ սակաւ բայց ընտիր գրենով անուանի է՝ գեռ չի գտնուիր Ա. ի գիտութեանց և արուեստից

Երկհատոր բառարանը որ անցեալ տարւոյ վերջին ամսոյն մէջ հրատարակուեցաւ, կը զրկեմ ձեզ անկէ օրինակ մը ամբողջ կաշեկազմ կարմիր այծեմորթէ, ծանր ոսկեզօծ և կը յուսամ թէ այս գործը ձեզի շատ հաճելի պիտի ըլլայ և զարդ ձեր մատենադարանին։ Ընդունեցէք այս նուերն իբր անկեղծ բարեկամի մը յիշատակ։ Բայց հաւատացէք, Տէր, որ ասով ոչ երբէք փոխարինութիւն մը ըրած կը համարիմ ձեր խնամոցը զոր զրկածիս հարիւրապատիկն անգամ չի կրնար փոխարինել։ Հանդերձ այսու կը մաղթեմ ձեղ այսպիսի շատ և երջանիկ տարիներ յուրախութիւն այնչափ պատանեկաց որոց ծնողը միանգամայն գայեակն էք բարյապէս։

Հաճեցէք ընդունել իզն և շարունակել ձեր խնամքը մեր Տիրանին վրայ որ երջանիկ է մանաւանդ ձեզի նման դաստիարակ մը ունենալով, ինչպէս նաեւ ես որ եմ խորին յարգանօք

Տէր հաւատարիմ բարեկամը

(Բառական)

Ա. Ա.



17. Նոր տարւոյ շնորհաւորութիւն առ  
անձն ոք բարերար :

Տէր ,

Գիտեմ որ տարեգլխոյ շնորհաւորութեան նամակները շատ անդամ ձանձրալի են : Բայց թէ եւ գիտնայի թէ իմ այս նամակս ալ տաղտկալի պիտի թուէր ձեզ , պիտի չուղելի տակաւին ետ կենալ այս սովորութենէն , որոյ պատճառաւ պատեհութիւն ունիմ աւասիկ յայտնել ձեզ անդամ մ'ալ երախտագիտութեանս վկայութիւնը : Գիտէք թէ որչափ պարտաւոր եմ ձեզ , Տէր . բայց չեմ կարծեր որ գիտէք թէ ինչ մեծ հաճութեամբ կը յիշեմ միշտ այս պարտաւորութիւնս : Թողէք ուրեմն որ այս պատեհութիւնը ձեռք առնեմ մատուցանել ձեզ յարգական զգացմանց և ըգձից յայտարարութիւնը , որով ուրախ եմ , Տէր , խոստովանել զիս Զէր

Խոնարհ և հնաղմանդ ծառան

(Թուական)

Ա. Ա.



18. Նամակ առ դաստիարակ կամ ուսուցիչ  
՚ի սկզբան նորոյ տարւոյ :

Զէր խնամքը , սէրն ու աշխատութիւնը մեծ եղած են ինձի համար , մեծարոյ Տէր : Գիտեմ որ դաստիարակի ( կամ , ուսուցչի ) մը պաշտօնն ու պատասխանատուութիւնը ծանր են , հետեւապէս արժանիքն ալ մեծէ . միով բանիւ ձեզի նման իմաստուն , հըմուտ և խնամուտ դաստիարակ մը երկրորդ հայր է երախտագէտ սանու ( կամ աշակերտի ) մը համար : Իմ շնորհակալու և խոհուն բնաւորութիւնս գիտնալով , մեծարոյ Տէր իմ և սիրելի դաստիարակ , կը հաւատաք , ինչպէս կը յուսամ , որ ձեր ինձի համար ըրածները մոռցած չեմ և յաւիտեան պիտի չմոռնամ : Ոչ այնչափ ձեզ գովելու համար , որչափ իմ զգացումն յայտնելու համար է , որ այս նոր տարւոյ պատեհութիւնը ձեռք կ'առնում այս շնորհաւորութեան նամակը ձեզ ուղղելու , միանդամայն յայտնելու ձեզ թէ ինչ բաներ կը մաղթեմ ձեզի համար : Ինչ որ եմ այսօր բարոյապէս՝ ձեր շնորհիւն եմ , և ամենը պարտական եմ ձեզ . այս է ահա զգացումն . իսկ մաղթանքս ձեզի համար երկինքէն ինչ կրնայ ըլլալ եթէ ոչ երկայն և երջանիկ կեանք , պարարտ

ծերութիւն մը՝ շատերուն երջանկութեանք  
համար օգտակար և բաղմարդիւն կեանք մը  
վարած ըլլալու ուրախութեամբ լեցուն :

Խնդրեմ, մեծարսյ Տէր, իմ այս անկեղծ  
իղձերուս հետ ընդունեցէք նաեւ գոյզն ըն-  
ծառ զոր (այս անուն) բարեկամը պիտի  
մատուցանէ ձեզ յիմ անուն : Ողջ լերուք,  
Տէր, և մի մոռնաք ձեր շնորհապարտ սանք .

(Թ. Ա. Կ. Ա.)

Ա. Ա.

---

49. Պատուաւոր անձի մը գրուած նամակ  
մը՝ ի սկզբան նորոյ տարւոյ :

Տարւոյս ամեն օրը, մեծարսյ Տէր, ձե-  
փ համար սրտիս մէջ նոր նոր իղձեր կը ծը-  
նանի, զարս բանիւ յայտնելու օրը մի միայն  
տարեգլուխն է : Բայց և այնպէս մեծարա-  
նացս վիայութիւնը ձեզի տալու մասին սըր-  
տիս եռանդն այնպէս սաստիկ է որ, առանց  
սպասելու այն բարենշան օրուան ծագելուն,  
կուզգեմ աւասիկ ձեզ այս շնորհաւորու-  
թեան գիրը : Կը յուսամ, Տէր, որ այսպէս  
նոր տարին քանի մը օր առաջ ձեզի շնոր-  
հաւորելու կանխելմ՝ տպացոյց մը պիտի  
համարիք այն ջերմ բաղձանաց զոր ունիմ  
ձեր բաղմաթիւ բարեկամաց մէջ առա-

ջնն ըլլալու : Այս փափաքս, անտարակոյս,  
երաշխաւորութիւն մի է ինձի համար թէ  
աճապարանքս կ'արդարանայ ձեր առջեւ,  
և կը շնորհէք ինձ, կամ լաւ եւս ըսեմ, կը  
պնդէք ինձի հետ այն բարեկամութեան կա-  
պը, զոր ցարդ չկրցաւ խզել վիճակի և առ-  
տիճանի բարձրութիւնը ուր հասած էք ձեր  
մեծամեծ տաղանդներուն և աղնիւ առա-  
քինութեանց համար : Զեմ գիտեր թէ  
արդեօք յանդուգն պիտի երեւիմ ձեր առ-  
ջեւ փափաքելով ձեր բարեկամը կոչուելու  
տիտղոսին . բայց վատահ եմ թէ սէրը որ  
շատ յանցանք անտես ընել կու տայ՝ ան-  
տես ընել պիտի տայ նաեւ իմ յանդգնու-  
թիւնս, եթէ յանդգնութիւն է փափաքիլլ  
սիրել առարկայ մը որ սիրոյ արժանի է :  
Բայց ինչո՞ւ համար կը վախնամ, ձեր սրան-  
չելի սիրաը բաւական երաշխաւորութիւն է  
ինձի, թէ պիտի չմերժուիմ ձեր բարեկա-  
մաց գէթ ամենէն ստորինն համարուելէ, և  
այս բաւական է ինձի համար որ եմ

Միշտ անձնանուէր Զեզ

(Թ. Ա. Կ. Ա.)

Ա. Ա.

ՀՅԱ

20. Յաջողութեան մէջ գունուող շատ լնատաւ ևի բարեկամի մը կը մադրուի նոր տարի նամակով և ընծայիւ :

Սիրելի բարեկամ,

Շնորհաւոր նոր տարի : Ուրախ եմ որ գուշակութիւններս անվրէս կատարուեցան մինչեւ ցարդ քեզի համար : Անցեալ տարեգլխոյ շնորհաւորութեան նամակիս մէջ մաղթեցի յաջող ամուսնութիւն և սիրուն մանկիկ մը , քանզի գիտէի թէ խօսեալ էիր : Քեզի ընկեր ըլլալու երջանիկ օրիորդը չէի ձանշար , բայց մարդարէական հոգիս վկայեց թէ նա քու սրտիդ համեմատ պիտի ըլլար , և եղեւ , ինչպէս վերջին նամակէդ իմացայ : Ըսի նաեւ թէ ուստրիկ մը սիրուն և կայտառ՝ նշան պիտի ըլլայ ձեր երկուքին երջանկութեանը , միանդամայն ամուր հանգոյց մը ձեր անքակելի միութեան կապին փրայ . կը լսեմ որ ձեր սիրուն նշանիկը կը կատարէ իմ այս երկրորդ գուշակութիւնս : Զարմանալով կ'ըսես նամակիդ մէջ թէ “Զըգիտեմ , մարդարէական հոգի ունենալուդ համար է թէ սրտիդ պարզութենէն , իդ ձերդ միշտ կը կատարուին ” : Զես խորհիր

բնաւ թէ քու առաքինութեանցդ համար է թերեւս որ երկինք հաշու են քեզի հետ ։ Նոր և մեծ ձեռնարկութեանդ յաջող ելք ունենալը խնդութեամբ լեցուց զիս . այս յաջողութիւնը որու տանք . ես կ'ըսեմ թէ այս ալ անմեղ մանկանդ և գրեթէ նոյնչափ անմեղ լծակցիդ բախտին պարզեւն է : Զիարդ և իցէ , կատակը մէկդի , ուրախ եմ , բարեկամ , որ 1872 ը քեզի համար նշանաւոր թուական մը եղաւ : Ասոր համար պէտք է որ բան մը ընենք . ես հոս յարեւ ձեր տարեգլխոյն նախընթաց երեկոյին պիտի բանամ ընտիր շամբանեայի գինի . կ'ուզեմ որ գու ալ այնպէս ընես : Եւ որովհետեւ գիտեմ թէ ձեր օրհնեալ քաղաքը զուրկ է Բաքրափ այդ պարզեւէն , բարսեղ ծառայիս հետ կը զրկեմ ձեզի յիշեալ նեկտարէն արկղիկ մը լեցուն . արբ , սիրելի , և ուրախ լեր հանդերձ բարեկամօք , բայց կը խրատեմ , չարբենաք : Չնչին է ընծաս , բայց խորհրդաւոր . և գիտեմ որ ասկէ աւելցն կարօտ չես : Ընկալայ քու զրկածներդ . որ են չորս զոյգ եղան լեզու ապիստեալ , արգարեւ ընտիր տեսակին , և երկու զոյգ մաճառակ պանրոյ . շնորհակալութիւն քեզ յինէն մինչեւ յերկինս , որմէ կը խնդրեմ երեք երկայն և երջանիկ կեանք , մին քեզ ,

միւս երկուքն անոնց որոց անունները վերը  
տուի : Մնաս բարով :

Հաւատարիմդ

(Թուական)

Ա. Ա.

— առաջ —

24. Զախորդուքիւն կրող բարեկամի մը  
նոր տարի կը շնորհաշորուի :

Սիրելի բարեկամ,

Ահա նոր տարի մը : Երբեմն տարին յա-  
ջողութեամբ կը սկսի , և յաջողութեամբ  
կը վերջանայ . Երբեմն ալ ասոր հակառակը  
կը պատահի : Ըսել չեմ ուզեր թէ յաջո-  
ղութիւնը կամ ձախորդութիւնը տարիներէ  
կախում ունի : Կը հաւատանք արդարեւ որ  
դիպաց որպիսութիւնը Նախախնամութեան  
կարգադրութենէն է . բայց և այնպէս կը ը-  
նանք յուսալ թէ Աստուած՝ ժամանակ մը  
մեզ փոթորիկներով փորձելէ ետքը , սՊայ-  
ծառ օրեր կը պարզեւէ : Այս շնորհքն ար-  
դարեւ երբեմն գրեթէ նոր տարւ յն հետ  
կը արուի մեզի : Ուստի , սիրելի բարեկամ,  
կը հաւատամ և կը յուսամ եւս թէ Նախախ-  
նամութիւնը պիտի սկսի հաշտ ակամբ նա-  
յիլ ձեզ , և թէ դասնութեան բաժակը զոր  
քամեցիք մինչեւ յասակը՝ այս նոր տար-

ւոյս հետ պիտի փոխուի քաղցրութեան :  
Իմ իղձս այս է , և Աստուած որ բարին  
անվարձ չի թողուր՝ պիտի վարձատրէ ձեր  
համբերութիւնը որուն մէջ սքանչելի օրի-  
նակ մը եղաք այս անցեալ երեք տարուան  
մէջ : Այս յոյսը և իղձը զոր կը յայտնեմ  
առանց պատճառի չէ . մեծ ուրախութեամբ  
լսեցի որ ձեր տիկնոջ երկար հիւանդութիւ-  
նը որ առաջին օղակն եղաւ ձեր ձախոր-  
դութեանց շղթային՝ սկսած է առողջու-  
թեան փոխուիլ : Այս բարի սկզբնաւորու-  
թիւնը պիտի ըլլայ անտարակոյս նոր և յա-  
ջող շղթայի մը առաջին օղակը : Ընդունե-  
ցէք , սիրելի բարեկամ , անկեղծ որտի մը  
այս իղձերը որ , ինչպէս վշտակից էր ձեզի  
ձեր ձախորդութեան մէջ , նոյնպէս ուրա-  
խակից պիտի ըլլայ ձեզի , իւր համարելով  
ձեր երջանկութիւնը :

Ձեր հաւատարիմ բարեկամը

(Թուական)

Ա. Ա.

— առաջ —

22. Նոր տարի կը շնորհաշորուի բարեկամի  
մը որուն երկար ժամանակէ հետէ նախակ  
գրուած չէ :


Ուրախ եմ որ նոր տարի շնորհաւորելու

սովորութիւն մը կայ բարեկամաց մէջ : Այս  
սովորութիւնը երբեմն պակասութիւնները  
կը բարեքէ , և ուժացեալ բարեկամութիւն  
ները կ'արծարծէ նորէն : Ասկէ ուրիշ միջոցով  
չէր կրնար ծածկուիլ իմ թերութիւնս ալ  
զոր ահա պարզութեամբ կը խոստովանիմ:  
Գիտեմ որ ձեր վերջին երկու նամակներն  
անպատճիսանի թողով , ոչ միայն բարեկա-  
մութեան , այլ և վայելչութեան դէմ գոր-  
ծած եղայ : Թերեւս կարծեցիք թէ հեռա-  
ւորութիւնը պազեցուց սէրը , և մոռնալ  
տուաւ բարեկամութիւնը , մանաւանդ որ  
երախտապարտ եւս եմ ձեզ : Կրնաք հիմա  
ինձի ըսել ռամկական առածը թէ Անցուկը  
մուցուկ եղաւ : Բայց չհարցունէք թէ որ  
կամ առիթ եղած է որ ձեզ չյիշեմ , և  
չըգձանամ ձեզի համար ինչ որ ըզձանալ ա-  
ամենէն ջերմ բարեկամի մը մոքէն հաղիւ  
կ'անցնի : Զբազում , դժուար պարագաներ ,  
քեզ մ'ալ ՚ի բնէ նամակ գրելու ծուլու-  
թիւն զոր ունիմ , պատճառ եղան ժամա-  
նակ մը զանց ընելու գիրս . և երբ շատ ու-  
շացաւ պարտաւորութեանս կատարումը ,  
յանցաւոր ըլլալուս գիտակցութիւնը յառաջ  
բերաւ տեսակ մը ամօթ որ ցարդ կը ծածկէր  
երեսս կարմիր քողովլ մը : Օրհնեալ նոր տարի  
որ պատռեց այս ամօթը , և կը յուսամ թէ

պիտի փարատէ նաեւ այն սեւ ամազը որ  
պատեց ժամանակ մը մեր բարեկամութիւ-  
նը , և որոյ գորոշին ելաւ իմ ցրտութե-  
նէս : Զիարդ և իցէ ներեցէք , սիրելի բա-  
րեկամ , զանցառութիւնս զոր , ինչպէս կը  
տեսնէք , կը խոստովանիմ անկեղծաբար , և  
խոստովանեալ յանցանք մը , ինչպէս կըսէ  
առակը , կէս մը ներուած է : Ուրիշ բան չի  
մնար ինձի հիմա , բայց եթէ մաղթել ձեղ  
երջանիկ նոր տարի մը , և երկար կեանք ,  
որպէս զի վայելեմ , որչափ կենդանի եմ ,  
այն քաղցր բարեկամութիւնը որով պատռե-  
ցիք զիս և որոյ շարունակուելուն կը փա-  
փարիմ , խոստովանելով որ եմ միշտ հաւա-  
տարիմ Զեր :

( Թառական )

Ա. Ա.



## ՊԱՏԱՍԽԱՆԵՐ

23. Դ. Նամակին պատասխան :

Սիրելի որդեակ ,

Շնորհակալ եմ քեզ այն բարեմազթու-  
թեանց համար զոր կ'ընես իմ երջանկու-  
թեանս նկատմամբ : Ճշմարիտ երջանկութիւ-

Նը Երկրիս վրայ աշխատութեան , առաքիւ  
նութեան և ընտանեկան սիրոյ մէջ է : Մեծ  
միսիթարութիւն է ինծի որ քեզի համար ը-  
րի ինչ որ կարողութիւնս կը թողուր ընել ,  
և ուրախ եմ որ քեզի տրուած կրթութե-  
նէն օգուտ կը քաղէս : Եթէ միշտ այսպէս  
վարուիս , իմ ծերութիւնս առանց միսիթա-  
րութեան պիտի չմնայ : Քեզի տարած ինաւ-  
մոցս փոխարէն ասկէ ուրիշ բան չեմ պա-  
պանջեր քենէ : Գիտես որ իմ մեծ երջան-  
կութիւնս պիտի ըլլայ քեզ ամուսնացեալ և  
բախտաւոր տեմնել , կը յուսամ թէ նա-  
խախնամութիւնը պիտի պարգեւէ ինծի այս  
շնորհը , և այն օրը որ իմ այս իղձս պիտի  
կատարուի՝ այնչափ հեռու չէ որչափ թե-  
րեւս կը կարծենք :

Մնաս բարով , սիրելի որդեակ , վատահ  
լեր քու հօրդ սիրոյն որ պիտի ըլլայ միշտ  
քու ազնուագոյն բարեկամդ :

Խանդակաթ հայր քո

(Թագավորական)

Ա. Ա.



24. Զ. Նամակին պատասխան :

Սիրելի որդեակ ,


Նոր տարւոյ շնորհաւորութեան նամակդ  
մէծ ուրախութիւնն պատճառեց ինծի : Կը

գովեմ ջանքդ և բարի առաջադրութիւնն  
ներդ , գիտցիր որ , եթէ անոնց մէջ կը յա-  
րատեւես , ոչ միայն իմ այլ և Աստուծոյ  
օրհնութիւնը պիտի հանդչի քու վրադ . և  
շատ երջանիկ և օգտակար անձ մը պիտի  
ըլլաս : Մայրդ և եղբարքդ սիրով կը համ-  
բուրեն քեզ . առաջին առթիւ պիտի զրկեն  
քեզ իրենց նոր տարւոյ ընծաները : Մնաս  
բարով , սիրելի որդեակ :

Խանդակաթ հայրդ

(Թագավորական)

Ա. Ա.



25. Ուրիշ պատասխան մը .

Սիրելի որդեակ ,

Շնորհաւորութեան նամակդ ժամանա-  
կին հասաւ , և մեծապէս միսիթարու եզանք  
այն ազնիւ զգացումներուն համար զրոս կը  
յայտնես , և որոնց անկեղծութեանը վրայ  
բնաւ չեմ տարակու օրիք : Ու բախ եմ որ քե-  
զի տրուած կրթութեան յարդր գիտես , և  
անոնցմէ օգուտ քաղած ես : Ես ըրի , ինչ  
որ պարտական էի իբրեւ հայր , և նախախիւ-  
նամութեան մեծ մէկ շնորհըն է որ անպը-  
տու կը բիր շներմանեցի : Այս մտածու-  
4

Թիւնն է իմ ծերութեանս մի միայն երջան-  
կութիւնը : Քու բարեմաղթութեանդ նամա-  
նը կ'ընեմ քեզի , կողակցիք և փոքրիկ Ա-  
րամիդ որս կարօտովը կը մաշինք , մանաւանդ  
մայրդ : Փութա մօտերս գալ առ մեզ քու-  
կիններովդ : Ողջ լեր , սիրելի որդեակ :

Խանդակախթ հայրդ

(Պատահան)

Ա. Ա.



### 26. Ուրիշ պատասխան մը .

Սիրելի որդեակ ,

Հնորհակալ եմ բարեմաղթութեանց  
համար զորս գուն , կինդ և մանկիդ կ'ընէք  
վասն իմց երջանկութեան , և ուրախ եմ  
լսելով որ ողջ և առողջ էք : Վարքդ արդա-  
րեւ բարի ամսւանց և իմաստուն հօր արժանի  
վարք է , և կը յուսամ թէ Նախախնամու-  
թիւնը պիտի վարձատիք քեզ հեշտ կեանք  
մը շնորհելով քեզի : Արդէն կը վայելսս  
առտնին խաղաղութիւն և ինդութիւն : Ա-  
ռաքինի կնոջ մը բարեկամութիւնը և որդե-  
կաց սէրը խաղաղ և հաճոյ կ'ընեն մարդուս  
կեանքը , և եթէ չափաւոր աշխատութիւն  
մը կ'ընկերանայ այս վայելման հետ , կեան-

քը կ'ըլլայ քան զամենայն երջանկութիւն  
գերազանց :

Դու եւս , սիրելի որդեակ , ինչպէս նա-  
եւ կինդ և որդիդ , ընդունեցէք բարեմաղ-  
թութիւննելը զոր կ'ընեմ ձեր բարեբախ-  
տութեան համար : Եթէ Աստուած կը լսէ  
ազօթքս , բոլը փափաքներդ պիտի կատա-  
րուին : Իմ ամենէն մեծ հաճութիւնս պի-  
տի ըլլայ տեսնել քեզ առաւել քան որչափ  
կը բաղձաս ըլլալ :

Մնաս բարով , սիրելի որդեակ , ջանա  
գալ աեսնել զիս փութօվ կնոջդ և որդւոյդ  
հետ : Ողջոյնս տուր անոնց զորս սերտիւ կը  
սիրեմ , և վատահ լեր սիրոյս և բարեկամու-  
թեանս վրայ :

Հայր քո

(Պատահան)

Ա. Ա.



### 27. ԺԳ. Նախակին պատասխան .

Սիրելի Նղեօրորդիս ,

Նոր տարւոյ շնորհաւորութեան նա-  
մակդ ընդունեցայ , և շնորհակալ եմ զգաց-  
մանցդ և բարեմաղթութեանց համար զոր  
կ'ընես վասն մեր : Գիտեմ որ լեզուդ որը .

տիգ պէս անկեղծ է , և ինչ որ կը յայտնես  
բանիւ՝ իբրեւ ձշմարտապէս՝ ՚ի սրտէ բխեալ  
կընդունիմ : Գիտես որ քեզ զաւկիս պէս  
կը սիրեմ , և կը բաղձամ քեզի համար ինչ  
որ բարի հօրեղբայր մը կրնայ և պարտի բաղձալ  
իւր եղբօրորդւոյն համար : Բարի և իւ-  
մաստուն եղիր , սիրելի , երջանկութիւնը  
կը հասնի անշուշտ : Երջանկութիւնը ոչ թէ  
բարեմաղթութեամբ կը ստացուի , այլ ար-  
դեամբ . Ողջ լեր , սիրելիդ իմ , յուրա-  
խութիւն և ՚ի պարծանո քու բարեկամացդ  
մէջ անկեղծագունին որ է

Քու կաթոգին հօրեղբայրդ

(Թ. Ա. Ա. Ա.)

Ա. Ա.



## 28. ԺԵ. Նամակին պատասխան .

Սիրելի բարեկամ ,

Ահա ձեզի շնորհաւորութեան նամակ  
մը իբր պատասխան ձեր բարեմաղթութիւն-  
ներուն զոր շնորհակալութեամբ ընդունե-  
ցայ : Շնորհեն ձեզ երկինք զուարթ և եր-  
ջանիկ տարի մը յուրախութիւն և յերջան-  
կութիւն սիրելեաց և բարեկամաց ձերոց  
յորոց մին եմ ես : Արդարեւ բաղաքալա-

րական խօսքերէ բաղկացեալ շնորհաւորու-  
թեան նամակներու շատ յարգ չեմ ոնծա-  
յեր , բայց այնպէս չէ ձերինը : Ձեր բեր-  
նէն ելած իւրաքանչիւր բառ կը համարիմ  
՚ի սրտէ բխեալ : Ինչպէս յամենայնի , նյոն-  
պէս յայտմ միաբան են ընդ իս կինս և որ-  
դիքս , որոնք հաճութեամբ և մասնաւոր  
ուշադրութեամբ կարդացին նամակդ , և  
շնորհակաղլ են : Ամենքին կը փափաքինք ձեր  
տեսութեան , որուն տեղը չեն կընար լե-  
ցունել նամակներ , թէեւ շատ հաճելի են  
մեզ : Ողջ լեր , սիրելի բարեկամ , և ծանիր  
զիս Ոիրելութեանդ

Հաւատարիմ բարեկամ

(Թ. Ա. Ա. Ա.)

Ա. Ա.



## 29. ԺԱ. Նամակին պատասխան .

Սիրելի գուստր ,

Լի գորովանօք գրուած նամակդ , իբրեւ  
նոր տարւոց շնորհաւորութեան գիր , նյոն-  
չափ գորովավ ընդունեցայ : Կը տեսնեմ ,  
սիրելիդ իմ , որ ՚ի մասրենի գգուանաց զուրկ  
մնալ ծանր է քեզ , քեզ՝ որ ամեն գգուա-  
նաց արժանի ես : Եթէ հեռաւորութիւնը

չլրցաւ նուազեցնել քու սէրդ , որչափ եւս  
աւելի չէր կընար նուազեցնել իս գորովս ,  
իմ՝ զոր բնութիւնը մայր ըրած է , և քեղի  
նման անհամեշատ զաւկի մայր : Կ'ուզես որ  
տարւոյս առաջին օրուան մէջ դուն ըլլայիր  
առաջին մտածութիւնս : Գիտցած ըլլաս ,  
սիրելի դուստր իմ , որ ոչ եթէ տարւոյն  
առաջին օրուան միայն , այլ ամեն օրուան և  
ամեն ժամու միակ մտածութիւնս դուն ես :  
Համբերէ , սիրելիդ իմ , մօտ է ժամանակը  
որ քեզ նորէն պիտի դարձնէ քու անձկայր-  
եաց մօրդ գիրկը : Միտ գիր ուսմանդ և ա-  
ռողջութեանդ . խնդրուածու Աստուծմէ այս  
է որ նորէն ընդունիմ քեզ այնպէս բարի և  
համեստ , ինչպէս էիր , երբ յուղարկեցի  
քեզ ասկէ :

Խանդակաթ մայր քու

Ա. Ա.

(Թուական)

ԾՆՆԴԵԱՆ ԿԱՄ ԱՆՈՒԱՆ ՏՕՆԻ  
Ա.ԻՈՒԻՐ ՇՆՈՐՀԱԿՈՐՈՒԹԻՒՆ

30. Նամակ առ հայր յաշոր տօնի նորա .

Սիրելի հայր ,

Այսօր ձեր անուան տօնախմբութիւնը  
կը կատարենք : Ուրախ եմ որ ահա նոր պա-

տեհութիւն մը ունիմ կըկնելու ձեզ իմ  
յարգանացս հանդէսը , ըսելով ձեզ թէ  
տարուէ տարի կը յաւելու սէրս առ ձեղ ,  
և թէ օրըստօրէ աւելի կը զգամ որ իմ եր-  
ջանկութիւնս ձեզի պարտական եմ : Թոյլ  
տուք ուրեմն ինձ յայտնել այն մաղթանիքը  
զոր կ'ընեմ ամեն վայրկեան ձեզի համար  
սրտիս մէջ 'ի ծածուկ : Արդարեւ իզձերէ և  
մաղթանիքէ ուրիշ բան չունիմ ձեր ինձի ը-  
րած այնչափ երախտեաց հատուցումընելու ,  
սիրելի հայր , բայց գոնէ իզձերուս անկեղ-  
ծութիւնը կը հաւասարի ձեր բարութեանը  
որ առ իս : Որովհետեւ հեռի եմ ձենէ այս  
վայրկենիս , և խօսքէ ուրիշ բան չեմ կըր-  
նար ընծայել ձեզ , թոյլ տուք գոնէ որ մատ-  
չիմ հոգւով ՚ի համբայր ձեր ձեռաց , խոս-  
տովանելով զիս

Ձեր անձնանուէր որդին

(Թուական)

Ա. Ա.

31. Նամակ առ մայր յաշոր տօնի նորա .

Սիրելի մայր ,

Ձեր որդին այնչափ ապերախտ չէ որ չը-  
գիտնայ թէ ինչ օր կու գայ ձեր տօնախմբու-

Թիւնը : Ամսէ մը աւելի է որ անձկանօք և  
մեծ հաճութեամբ կը տեսնէի այս օրուան  
մերձնալը . Եկաւ այն վերջապէս , և ահա  
կարող եմ յայտնել ձեզ իղձերս զոր ձեր  
երջանկութեանը համար կը մատուցանեմ առ  
Բարձրեալն : Հաւատացէք , սիրելի մայր ,  
սէրս որ առ ձեզ՝ հաւատար է այն բարու-  
թեան զոր ունեցած էք միշտ առ իս , և այն  
ամբաւ խնամոց զորս ձենէ ընդունած եմ  
մանկութենէս՝ 'ի վեր : Կը յուսամ պատաս-  
խանել այս երախտեաց՝ ջանալով յօդու տ 'ի  
կիր արկանել զնոսին , և պատճառ ըլլալ այն  
գոհութեան զոր զգալ բնական է մօր մը ,  
երբ կը տեսնէ որ իւր որդին զգուշութեամբ  
և սիրով կ'անսայ մայրական խրատուց և  
պատուիրանաց : Երանե՛ թէ երկայն ատեն  
առաջնորդէիք ինձ ձեր իմաստուն խորհուրդ-  
ներով ու փորձառութեամբ : Այս է իմ այ-  
սօրուան եռանդուն փափաքս , և առ Աստ-  
ուած իղձու : Ողջ լերուք , սիրելի մայր , և  
ճանչցէք զիս

Ձեր հնազանդ և կաթոդին որդին

(Թագավոր)

Ա. Ա.



32. Կամակ առ հայր կամ առ մայր  
յաւուր անի նոցա .

Սիրելի հայր իմ , կամ , մայր իմ ,

Պէտք չէ ինձ օրացցցը նացիլ գիտնալու  
համար թէ երբ է արդեօք ձեր անուան  
տօնախմբութիւնը : Ուր սէր կայ , հոն յի-  
շողութիւնը զօրաւոր է : Ընդունեցէք ու-  
րեմն իղձերս և մազթանկոս : Ո' տայր թէ  
Երկինք շնորհէին ձեզ պաւանց մըրկի անցու-  
նել այն օրերը որ պիտի սահին մինչեւ այն  
ատենը , ուր ժամանակն ուրիշ լաւագոյն պա-  
տեհութիւն մը պիտի ընծայէ ինձ յայտնել  
ձեզ սէրս որ առ ձեզ :

Դատ փափաքելի էր ինձ , սիրելի հայր  
(կամ , մայր) ձեր քով անցունել այսպիսի  
օր մը յորում ձեր շուրջը գտնուողներուն  
ամենքն ալ կը ջանան ցուցնել ձեզ իրենց  
սէրը : Որովհէտեւ զրկեալ եմ այս բարե-  
բախտութենէն , հաճեցէք իմ այս զրկմանս  
փոխարէն առաջին տեղին տալ ինձի ձեր  
սրտին մէջ : Այս տեղին կը վայելէ ապաքէն  
անոր՝ որ իւր առաջի պարտաւորութիւնը կը  
համարի ընել ինչ որ ձեզի հաջոյ է , և է  
խորին յարդանօք

Ձեր ամենահնազանդ որդին

(Թագավոր)

Ա. Ա.

33. Ուրիշ համակ նոյն նիւրին վրայ :

Սիրելի ծնող,

Եթէ ինձի համար հաճելի ժամանակ մը կայ տարւոցն մէջ, ձեր անուան (կամ, ծըննդեան) օրն է : Երբ այն օրը կու գայ, բոլոր նախընթաց գիշերը ձեզի շնորհաւութիւն մը պատրաստելէ ետքը՝ արեւը ծագելուն պէս ցնծութեամբ և հաճութեամբ կ'ելլեմ անկողնէս : Բայց պարտիմ խոստովանել որ երկու փոքրիկ վիշտեր կու գան պղտորել վայրմի երջանկութիւնս . մին սա է որ հեռի եմ ձենէ այն վայրկենին որ այլը կը վայելեն ձեր սիրոյ համբոյները . Երկրորդը սա է որ բաւական աղդու խօսքեր չեմ գտներ ըսելու ինչ որ կը խորհիմ :

Գիւնալով որ ամենէն աղէկ շնորհաւութիւնը ձեզի համար իմ բարի վարուց և յառաջադիմութեանս ապացոյցերն են, ջանք ըրած եմ ըստ կարի որ ոչ ոք պատճառ ունենայ իմ վրայով յոռի վկայութիւն մը տալ ձեզի : Ի քաջալերութիւնն իմ այս փութոյս՝ կը սպասեմ ձենէ, սիրելի հայր (կամ, մայր), համբոյր մը և ձեր օրհնութիւնները :

Ա տայր թէ տակա ին շատ տարիներ պաշ

տեհութիւն ունենայի ձեզի այսպիսի շնորհաւութիւններ մատուցանելու : Այս են անկեղծ իղձք սրտի մը զոր կը բարեախէ որդիական սէրը, և որ պիտի ընէ զիս միշտ ջեր հնապանդ և անձնանուէր որդին (Պատական)

Ա. Ա.

~~~

34. Պաշտպանի մը անոր անուան տօնին .

Մեծարոյ Տէր,

Երախտագիտութիւնս որ առ ձեզ՝ չթողուր ինձ անցունել պատեհութիւն մը առանց յայտնելու իմ զգացումս : Այսպիսի պատեհութեանց մին է ձեր անուան բարենշան օրը, որուն այս տարի ալ յաջողութեամբ հասնելը կը տեսնեմ ուրախութեամբ : Բարեմաղթութիւններս ձեզի համար այսօր շատ են, զոր բանիւ բացատրել անհնար է ինձ . Եղուն սրտին թարգմանն է, բայց ոչ միշտ : Երբ զգացումները սաստիկ և չերմ են, լեզուն բաւական չէ անոնց ամեն զանազանութիւնը և գոյները զգալի ընել . կը շփոթի, կը վարանի, և վերջապէս կը լոէ : Այս վեճակի մէջ կը գտնուիմ այսօր ես, մեծարոյ Տէր, լեզուս կը տկարանայ յայտնել սիրոս,

բայց և այնպէս ուրախ եմ որ ձեր մեծութիւնը գիտէ թէ ինչ կը զգամ և ինչ կ'ըշձամ, ուստի և աւ ելորդ կը համարիմ այս նկատմամբ աւելի երկայն խօսիլ: Սա միայն կ'ըսէմ, մեծարոյ տէր, որ այսօրուան աղաքանցու մէկն ալ սա է որ տան ինձ երկինք վայելել այս ասրի ալ և միշտ ձեր հզօր պաշտպանութիւնը: Թող, տէր, ձեր այսօրուան ուխտերուն մէկն ալ ըլլայ ձեր հովանին պակաս ընել ձեր ամենախոնարհ ծառային վրայէն, որ կը փափաքի ըլլալ միշտ Ձեր մեծութեան

Հաւատաբիմ և անձնանուէր

(Թողական)

ծառան Ա. Ա.



35. Գորդէն իր մօրեղբօրդ յաշուր
տօնի նորա .

Սիրելի Մօրեղբայր,

Ամեն տարի ձեր տօնին օրը կը նորոգէ յիս անցելցն քաղցր և սիրուն յիշատակը և կը բերէ մատացս առջեւ ձեր ներող և մարդասէր խնամքը որ առ իս: Ո՛րչափ կը փնտուէմ, սիրելի Մօրեղբայր, այն գեղեցիկ օրերը որ, բարէ, սահեցան անցան ՚ի վազուց: Աչացս առջեւն ե՞ն միշտ այն երկայն շրջագնացութիւնները զոր կ'ընէինք վերի

գիւղը, ձկանց օրսէրը մեծ անտառին քովի գետակն՝ անուանի կարմրաձկամբ, զորս դուք շատ յաջողութեամբ կ'որսայիք, մինչ ես կը փախցնէի միշտ: կը թողում յիշել այն օգտակար խօսակցութիւնները որով կը յորդորէիք զիս ըլլալ աշխատասէր, բարեմէր, աղդար և խնայող:

Կը յոսսամ սակայն որ առաջիկայ պարապոյ ամիսը կարող կ'ըլլամ պատեհութիւն գտնել գալ ձեղ տեսնել: Տենջանօք կը սպասեմ այն երջանիկ ժամանուն, և կրնամ թերեւս բանիւ բերանոյ յայտնել ձեղ սէրս և շնորհակալութիւնս:

Ընդունեցէք, սիրելի Մօրեղբայր, իդձերս ձեր տօնին, մանաւ անդ ձեր առողջութեանը համար: Շատ ապրիք որ ես ալ տոկիթ ունենամ ցուցնել ձեղ թէ որչափ կը սիրեմ զձեղ:

Անձնանուէր քեռորդիդ
(Թողական)

ԳՈՒՐԴԻԷՆ

36. Նամակ առ հօրեղբայր
յաշուր տօնի նորա .

Սիրելի հօրեղբայր,

Ձեր վրայ խորհիլ, ձեր առողջութեանն ու երջանկութեանը փափաքել, խնդրել

յերկնից ձեզի համար ամեն բարիք, ահա ասոնք են որ գրաւած են միշտ միտքս և միտոս միանդամայն։ Աւելի սաստիկ կ'ըլլան այս դժացումներն և բոլորնվին կը տէրեն արտիս, երբ այնպիսի օր մը կու գայ որ մասնաւոր կերպով կը յիշեցնէ զձեղ ինձ։ Այս տեսակ օրերուն գլխաւորն է ձեր ծննդեան տարեդարձին օրը։ Ես այնպէս կը հաւատամ, սիրելի Հօրեղբայր, որ այն օրը սրբազնն է ձեզի և ինձի համար միանդամայն։ ձեզի համար՝ քանզի այն օրը աւեսաք նիւթական արեւուն հետ ձեր պատուական կենաց արեւը։ ինձի համար՝ վասն զի երկրորդ հայր մը ծնաւ ինձ այն օրը։ Երկրորդ հայր ըսի, քանզի միայն ըստ մարմնոյ ծնողս չէք, ապա թէ ոչ առաջին կոչելու եմ զձեղ խընամոց և գորովց կողմանէ։ Արդարեւ դըմք բախտ հօրս կանուխ օրհասէն ետքը, ով ինամեց զիս թշուառ որբս, ովլ պաշտպան կեցաւ ինձ, ովլ ազատեց կորստեամն վտանգէն և աճեցուց հայրենական դոյզն ժառանգութիւնս։ Համառօտ ըսեմ, ովլ համբերեց այնչափ սիրով իմ մանկական յիմարութիւններուս և ինձի դաստիարակութեան պտուղները վայելել կու տայ, եթէ ոչ դուք, դուք միայն, սիրելի Հայր իմ։ Ով երկինք, ինչ հատուցում ընեմ հօրեղբօր մը, որ

այսպէս հայր, մայր, բարեկամ, պաշտպան և բարերար է ինձ։ Գիտեմ որ հիմա ձեզի համար ուրիշ բան չեմ կընար ընել, բայց ինդրել յերկնից որ ձեզի վաթոնի չափ այսպիսի օրեր պարգեւէ։ անատեն պիտի ունենաք Խսահակայ տարիքին մօտ տարիք մը, և պիտի օրհնէք ձեր անառակ Եւսաւը որ արդէն Յակոբ ըլլալու սկսած է։ Այլ ես այժմէն ինդրելով ձեր օրհնութիւնը ձեր այս ծննդեան տարեդարձին կը համբուրեմ խոնարհաբար ձեր բարերար աջը, խոսանվանելով զիս ձեր հնազանդ եղբօրորդին և որդին

(Փառական)

Ա. Ա.

~~~~~

37. Շատ մտերիմ բարեկամի մը անոր անորան տարեդարձին։

Ավելի,

Գալ այսօրս Սուրբ Յակոբ է։ ուստի անունովդ ապրիս, շատ տարիներու հասնիս, և ուրիշ ինչ օր կ'ըսուի և ըսել սովոր էի ուրիշ տարիներ, գարձեալ կ'ըսեմ։ Այս արարողութիւնը կը կատարու էր ամեն տարի մօտէն, և միշտ առջի իրիկուընէ։ Գիտես որ այս պարտաւորութիւնը ձանցող և ձշդիւ

կատարող բարեկամներուդ առաջինն էի ես , և ի՞նչ ուրախութեամբ կը պարպէինք գաւաթներ իրարու կենաց համար : Այս տարի այնպէս եղաւ որ գրով կը կատարեմ պարտաւորութիւնս ; բայց կը կատարեմ դարձեալ : Արդարեւ բախտը զատեց զմեզ իրարմէ ոչ տեղեով միայն , այլ և վիճակով : Դուն հօն յաջող ես , իսկ ես դրեթէ տարի մըն է , հովին դէմ թի կը բաշեմ : Ինչ դըժուարութեանց հանդիպեցայ , գործերս ինչ վիճակի մէջ էին , ի՞նչ թանձր մառախուղ կը պատէր զիս գիտես : Ութ օր է որ ամեն բան փոխուեցաւ . սեւ ամպերը փարատեցան , հորիզոնը բաց է առջեւս : Երեք հազար սովին որ կը պահանջէի Բ էն , առի , Գ ին հետ գատոս վերջացաւ ՚ինպատ ինձ , վճռագիրը կ'ընդունիմ այսօր կամ վաղիւ : Ասոնք կը ծանուցանեմ քեզ անուանդ շընորհաւորութեանն նամակին մէջ , որպէս զի գիտնաս և պարծիս , քանզի պարծիլը կը սիրես - , թէ որչափ բարենշան է անուանդ տարեդարձը . գիտնաս , կ'ըսեմ , և սեւ ջուրին վրայ ճերմակ կամ կարմիր մ'ալ աւելցնես բարեկամներուդ՝ անուանդ երեկոյին :

Մեր իւղաբերին ըսէ որ Հաճի Մաղաքը կանչէ , թող տունը մաքրել տան , մանաւանդ մեծ սրահը կ'ուզեմ որ շտկուած և

պատրաստ ըլլայ ընդունելութեան համար . վարագոյներն և օթոցը (խալին) կարծեմ փոխել հարկ է : Հաճի Մաղաքը գիտէ իմ ախորժակս , թող պատրաստէ ինչ որ պէտք է : Միւս ուրբաթ Ճամբայ կ'ելլեմ ասկէ , Կիրակի երեկոյին հոն եմ : Միհրանիդ ալըսէ որ չնորհաւորութիւնն մը պատրաստէ անուանս երեկոյին : Ստեփանոսի գիշերը կոչունք ունիմ , առանց վարձատրութեան չէմ թողուր : Մնաս բարով , սիրելի :

(Թուական)

Մտերիմ բարեկամդ  
ՍՏԵՓԱՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ

38. Ծանրաբարոյ անձի մը ճննդեան օրը կը շնորհաւորուի :

Աղնիւ բարեկամ .

Ահա տարի մ'ալ կ'աւելնայ այն բարենշան օրուան վրայ՝ յորում լցո տեսաք առաջին անգամ , և որուն համար ուրախակից են Զեղ ծանօթք և բարեկամք , որոց գլխաւորը , պարծանօք կ'ըսեմ , թէ ես եմ : Թերեւս պիտի ըսէք , Փոխանակ ըսելու թէ տարի մ'ալ աւելցաւ , պարտ էր ըսել մանաւանդ թէ տարի մ'ալ պակսեցաւ : Արդարեւ Ճշմարիտ է այս խորհրդածութիւնը , և մեր կենաց ամեն օրուան , ամեն վայրկեւ

նին համար իրաւամբ կընայ ըսուիլ թէ պակաւ  
սեցաւ մենէ : Բայց ի՞նչ ընենք . միթէ  
տրտմի՞նք : Որովհետեւ ամեն օր մեզի շնորհէ  
է , պատճառ ունինք ուրախանալու ամեն  
անդամ որ նոր առաւաօտ մը կը ծագէ մեզի :  
Այս կ'ակնարկէ բանաստեղծին խօսքը ,  
իւրաքանչյուր վայրկեան և օր , ամիս և ամ  
Որս է կորգեալ յանդութ ժանեաց ժամանա-  
կին :

Ասոնք կ'ըսեմ , քանդի գիտեմ թէ ծանր  
խորհրդածութիւններ կը սիրէք , և անդէպ  
չէք համարիր շնորհաւորութեան նամակի մը  
մէջ լուրջ խոկմանց նիւթ սուսող խօսքէր :  
Երանի թէ ամեն բարեսէր և բարերար անձ ,  
իւրեւ զձեղ ունենար երկինքէն պարգեւ ոչ  
շատ տարիներ միայն , այլ և շատ դարեր  
ուրիշներուն օգտին համար : Ներեցէք որ  
մաղթանեք մ'ալ ինձի համար ընեմ , այսինքն  
ապրիլ ձեզի հետ և ձեզի հաւասար՝ ձեր  
ընտիր օրինակներն յարգելու և անոնցմէ  
օգտելու նպատակաւ , ոչ թէ ուրիշ բանի  
համար : Թող ուրեմն երկար և երջանիկ ըլ-  
լայ ձեր կեանքը յօդուտ բարեկամաց , և  
մանաւանդ անոր որ գիտէ ձեզ յարգել ՚ի  
վեր քան զամենայն , իմա ձեր հաւատարիմն  
ու մտերիմը

(Թուական)

Ա. Ա.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՊԱՏՃԱՌԻ ՀԱՄԱՐ  
ՇՆՈՐՀԱԿՈՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Շնորհաւորութեան նամակները սովորա-  
բար կարձ կ'ըլլան : Այսպիսի նամակներու  
մէջ պէտք է նախ ուրախակից ըլլալ անձին  
առ որ կը գրուի նամակը , և ապա յա-  
ջողութիւն մաղթել : Երբեմն նաեւ համա-  
ռաօտ գովեստ մը կ'աւելցուի այն անձին ար-  
ժանեացը վրայ առ որ ուղղուած է նամակը ,  
որպէս թէ յիրաւի էր անոր այն պատուցն  
կամ պաշտօնին հասնիլ , կամ այն յաջողու-  
թեան հանդիպել : Խոկ ոճն այս նամակնե-  
րուն մէջ պիտի ըլլայ քաղաքավարական և  
յարգական , առանց աւելաբանութեան կամ  
քծնող շողոքորթութեան : Կատ ընտանի բա-  
րեկամի մը կընայ զուարձաբանութիւն ալ  
խառնուիլ , մանաւանդ եթէ նա գրողին հա-  
ւասար է աստիճանաւ :

ՃՃՃՃՃՃ

39. Նամակ շնորհաւորութեան առ նորոգ  
ամուսնացեալ այր կամ կին :

Տէր՝ կամ, Տիկին .

Շնորհաւորութեան նամակս զոր կ'ուղ-  
ղեմ ձեզ, այնպիսի միտթեան մը համար է  
որ, ինչպէս ես համոզուած եմ, արժանի և  
վայելուչ է ձեզ : Այն անձը որ ձեզի հետ  
կապուեցաւ այս անխղելի դաշտմբ՝ արժա-  
նի է մեծարանաց, և տարակոյս չունիմթէ-  
լաւագոյն կը համարի ձեր առաքինութիւն-  
ները քան թէ ձեր բերած հարստութիւնը .  
ինչպէս որ ձեզի համար ընտրելագոյն են ա-  
նոր գովելի յատկութիւնները քան թէ ըս-  
տացուածքը որուն մասնակից եղաք : Անհը-  
նար է որ երջանիկ չըլայ ամուսնութիւնն մը,  
երբ երկու ամուլք այսպիսի զգացմամբ կու-  
գան իրարու : Իմ կողմանէս հարկ չեմ հա-  
մարիր մաղթել որ ձեր միութիւնն այսպէս  
ըլլայ, քանզի գիտեմ որ այսպէս է . կը փա-  
փաքիմ միայն ընդ հուպ տեսնել փոքրիկ ժա-  
ռանգ մը որ ձեզ ամենուն սիրելի և ցան-  
կալի ընող յատկութեանց բոլորն ալ ունե-  
նայ : Եթէ այսպիսի երջանիկ միութեան մը  
վրայ աւելնայ նաեւ հայր (կամ մայր) ըլլա-  
լու բախտը, ան ատեն, ինչպէս կարծեմ,  
քան մը չի պակսիր 'ի լրումն փափաքանաց

ձերոց : Գէթ այս յոյսն ունի ան՝ որ 'ի վա-  
ղուց հետէ սիրոյ և բարեկամութեան կա-  
պերով ձեզի հետ միացած ըլլալուն պատիւն  
ու բախտը վայելելով, կը խոստովանի զնք,  
ինչպէս միշտ, նյոնպէս հիմա

Ձեր անձնանուեր բարեկամն

(Թուական)

Ա. Ա.

40. Նոյն հիշրին վրայ առ այր ոք :

Տէր .

Հաճեցէք որ ձեր այս նոր միութեան  
առթիւ ձեր վրայ ունեցած գաղափարս, մի-  
անգամայն իղձս յայտնեմ ձեզի : Ես այնպէս  
կը հաւատամ թէ իրեն հետ մէկտեղ ուրիշ-  
ներն ալ երջանիկ ընել գիտցողն արժանի է  
երջանիկ ըլլալու : Եւ որովհետեւ այս կա-  
րողութեան տէր կը ճանչնամ զձեզ, կը փա-  
փաքիմ որ երջանիկ ըլլաք ամեն կերպով,  
քանզի այսուհետեւ ունիք և պիտի ունե-  
նաք ձեր բոլորտիքն այնպիսի անձինք որոց  
երջանկութիւնը ձենէ կախում ունի . նախ  
ձեր աղնիւ կողակիցը, և ապա անմեղ արա-  
բածներ որ այս միութեան քաղցր պտուղնե-  
րը պիտի ըլլան, եթէ, ինչպէս կը յուսամ,  
երկնք օրհնեն ձեր միութիւնը : Ասիկա կը

բաղձամ ոչ միայն ձեր բարի տիկնոջը համար  
որ ազգականս է , այլ և ձեզի համար . քան  
զի անոր երջանկութիւնը դարձեալ ձեր եր-  
ջանկութիւնն է :

Եթէ լսեն երկինք մաղթանքս , ձեր այս  
նոր կենաց ասպարէզը դիւրին , և ձեր մըթ-  
նոլորտն առանց ամսի պիտի ըլլայ : Եւ միթէ  
ես ալ երջանիկ պիտի չըլլամ ձեզ այնպիսի  
տեսնելով , ես որ մինչեւ ցարդ բարեկա-  
մութեամբ միայն կապուած էի , հիմա իննա-  
մութեան կապն ալ աւելցած կը տեսնեմ :  
Որչափ ուրախ եմ որ մօրաքեռս սիրելի  
գուստորը և մեր բոլոր ազգատոհմին անձկա-  
լին կը տեսնեմ ազգականէ մը աւելի սիրելի  
և մեծարոյ բարեկամի մը իննամոցը յանձ-  
նուած : Երկայն կեանք և բարեք մաղթե-  
լով ձեզ , սիրելի Տէր , եմ

Զեր խանդակաթ բարեկամը

(Թուական)

Ա. Ա.

— առաջ —

Ա. Նոյն նիշին վրայ կնոց մը ուղղուած  
նաւակ :

Տիկն :

Կը փութամ ուղղել ձեզ ջերմ շնորհա-  
կալութիւններս ձեր երջանիկ ամուսու-

թեանը համար , քանզի ձեր ինձի աղդած  
զգացումները կը ստիպեն զիս մասնակից ըլ-  
լալ ձեր ուրախութեանը , ինչպէս նաեւ  
պիտի ըլլամ ձեր արտմութեանը . եթէ ,  
Աստուած մի՛ արացէ , երբէք պատահի ձեզ :  
Ուստի կը մաղթեմ ձեզ ամեն երջանկու-  
թիւն որուն արժանի էք , և կը յուսամ թէ  
երբէք պատճառ պիտի չունենաք ձեր  
աղջկնութեան ժամանակը վնասուելու : Բայց  
այս մասին ամենեւին տարակոյս չունիմ , և  
չեմ կարծեր թէ ձեր առ արքնութիւններն  
ունեցող անձի մը համար ամուսնական վի-  
ճակը դառնութեան պիտճառ կրնայ ըլլալ :  
Բան մը միայն կը մնայ ինձի բաղձալու , այն  
է ժառանդ մը որ բոլորովին նման ըլլայ իր  
մօրը պատկերին , անոր մէկ բարցական տի-  
պարը : Կարծեմ թէ այն ատեն բան մը պա-  
կաս պիտի չըլլայ ձեր և ձեր պատուական  
ամուսնոյն երջանկութեանը :

Խնդրելով որ ձեր բարեկամութեան վր-  
այ զոր ՚ի վազուց կը վայելեմ , աւելնայ  
նաեւ ձեր ամուսնոյն սէրն ու հաճութիւնը  
դէպ առ իս , եմ ՚ի սերտ սրտէ , Տիկն ,

Զեր հաւատարիմ բարեկամը

(Թուական)

Ա. Ա.

— առաջ —

42. Տղու մը ծննդեան համար շնորհաշորութիւն առ Հայր կամ առ Մայր նորա :

Տէր, կամ, Տիկին .

Ահա հիմա ընտանիքն ամբողջ է : Տղու մը ծնունդը լցուց ձեր և ձեր արժանաւոր ամուսնոյն ցանկալի փափաքը . նոր կապ է այս որ կը լրացնէ , կամ , եթէ արժան է ըսել , կը մինէ ձեր միութիւնը : Ի՞նչ ուրախութեամբ ընկալայք արդեօք այս պատուական շառաւիզը : Այսուհետեւ դուք անոր համար պիտի ապրիք , ձեր փոյթն ու հոգը պիտի ըլլայ անոր դաստիարակութեանը համար , ան պիտի ըլլայ ձեր բոլոր յօյը : Բայց ի՞նչ մեծ բախտ ձեզի համար , Տէր (կամ Տիկին) . իբր նեցուկ այն մատաղ տուն կին , բարի օրինակ վինտելու համար հեռուն երթալու պէտք չունիք : Թող այս մանկիկը հետեւի իր հօրը (կամ մօրն) օրինակին , թող անոր առաքինութիւններէն օդուտ քաղել գիտնայ , անտարակցո պիտի ստանայ բոլոր բարի մարդոց սէրն ու մեծարանքը : Այս է , Տէր , իմ մի միայն իղձս 'ի ծննդեան այս երջանիկ մանկան : Հաւատացէք որ անկեղծ է սէրս , քանզի սրտէս կը բխէ , և չի

կրնար ուրիշ կերպ ըլլալ , ցորչափ եմեւ պիտի մնամ : Զեր հաւատարիմ բարեկամն (Թուական) Ա. Ա.

43. Ուստեր (մանչ զաւկի) մը ծննդեան համար շնորհաշորութիւն առ ծննդս նորա :

Սիրելի բարեկամ


Ուրախութեամբ իմացայ որ կինդ ուստր մը բերած է աշխարհ : Նատոնց կը փափաքէիք այսմ դու և նա , ահա կատարեց Աստուած ձեր իղձը : Զաւակ մը ունենալն արդարեւ հասարակ բան մը կը համարուի , բայց Նախախնամութեան մեծ շնորհներէն մին է , եթէ բարի զաւակ ըլլայ . և այս մեծաւ մասամբ կախում ունի ծնողաց ջանքէն և հրակողութենէն : Օգտակար տունկ մը դժուարաւ աղէկ պառուղ կու տայ առանց յստուկ խնամոց պարտիզպանին , և ի՞նչպէս կրնան յուսալ մարդիկ որ տղայն բարի և աղիւ զաւակ ըլլայ , եթէ առանց փութոյ և խնամոց կը թողուի : Բայց այս խօսքերը ձեզի համար չեն , սիրելի , ձեզի համար , կ'ըսեմ , որ կրթութեան յարդը գիտէք , և արդիւնքը ճանչնալու կարօտ չէք : Բաւական է որ

Նորածին մանուկն անդամ մը խելաբերի իւր ծնողքը ճանչնալու . իմաստութենէ և առաքինութենէ ուրիշ բան պիտի չտեսնէ : Գիտեմ, այս մանկիկը ձեզի արժանի որդի պիտի ըլլայ , Եթէ Աստուած ձեզի երկայն կեանք տայ անոր վրայ հսկելու : Այս է միայն քու հաւատարիմ բարեկամիդ փափաքը որ բոլորին հաջրդ է քու այժմու ցնծութեանդ :

Մտերիմքո

(Թուական)

Ա. Ա.



44. Շնորհաշորոշեամ նաևակ առ տիկին ոք որոյ դուստրը պիտի ամուսնանայ :

Տիկին,

Իբրեւ վտղեմի բարեկամ ձեր հանգուցեալ ամուսնոյն , կը յաւելում իմ շնորհաւորութիւնս բոլոր այն շնորհաւորութեանց վրայ զորս ընդունած էք անտարակոյս յայլոց ՚ի պատճառս հարմանախօսութեան ձեր երեց դստերն ընդ որդւոյ Տ. Ալիրունեանի : Ուրախ եմ որ վաղեմի բարեկամիս դուստրը կը մտնէ այսպիսի պատուաւոր տուն մը : Նոր փեսային հայրը Տ. Ալիրունեան՝ կարգաւորութեան և ողջութեան մասին մեծ համբաւ ունէր ընդեղինաց առուտուրի մէջ

զոր իբր քառասուն տարի վարեց , և տարակյոս չունիմթէ նորա որդին և յաջորդը Տ. Մարգար Ալիրունեան մեծ փոյթ ունի հին հայրենի համբաւը պահելու : Այս երիտասարդը բարեբարոյ , միր և խնայող է , և նախանձելի հայր մը պիտի ըլլայ անտարակյոս : Ուստի և երջանիկ կը համարիմ ձեր դուստրը այնպիսի ամուսնոյ մը պատահելուն համար որ գիտէ յարդել այն չքնաղ յատկութիւնները որովք բնութիւնն ու դաստիարակութիւնը կը պճնեն զօրիորդ Պայծառու :

Կը ցաւեմ , Տիկին , որ պիտի չկրնամներկայ գտնուիլ Օրիորդին հարսանեացը : Կնոջս վատառողջութիւնը որ սկսած է վարանեցնել զիս՝ չի թողուր ինձ առայժմ օրմանգամ հեռանալ :

Հաճեցեք , Տիկին , հաւատալ որ այս ցաւս անկեղծ է , և ընդունեցեք յարդանքս :

Խոնարհ ծառայ ձեր

(Թուական)

Ա. Ա.



45. Տիկնոց մը շնորհաշորոշեան նաևնակն  
առ այլ տիկին որ դուստր մը ծնաք է:

Սիրելի Տիկին,

Այսօր ընկալայ աւետաբեր տոմսակդ որ  
կը ծանուցանէ ինձ թէ վերջալէս հասար  
փափաքանացդ , սիրուն գտարիկ մը բերե-  
լով աշխարհ : Ընդունէ , Տիկին , բարեկա-  
մուհուցդ անկեղծ մաղթանքը և սերտ շնոր-  
հաւորութիւնն այս բարենշան դիպաց , և  
այն երջանկութեան համար զրբ այս պատ-  
ճառաւ պիտի ունենաս առյապա :

Ուրախակից եմ նաեւ պատուական ա-  
մուսնոյդ որ դուստր մը ունենալ կը բաղձար ,  
և ահա լցաւ փափաքը :

Մնաս բարեաւ , սիրելի Տիկին , ընդու-  
նելով համբոյրո լոր կուտամքեղ և սիրական  
մանկանդ զոր կարօտ մեծ ունիմ տեսնելու :

Ձեր մտերիմը

(Թագավորական)

Ա. Ա.

46. Շնորհաշորոշեան նաևնակ առ հայր  
որոյ դուստրն ամուսնացած է :

Տէր ,

Մինչեւ յարդ ձեր ամեն ուրախութեա-  
նը մասնակից ըլլալով , չէի կրնար անտար-

բեր ըլլալ ձեր վերջին ուրախութեանը զոր  
ունեցաք ձեր ազնիւ դստելին ամուսնու-  
թեանը պատճառաւ : Զաւկի մը երջանկու-  
թեանը համար ամեն զոհ ընել ապաքէն հօր  
մը պարտաւորութիւնն է , բայց դժուարաւ  
կը գտնուի հայր մը որ ձեզի չափ ձանցած  
և անձնուրացութեամբ կատարած ըլլայ այս  
պարտաւորութիւնը : Կը յուսամ թէ ձեր  
այս առաքինութեանը համար Աստուած պի-  
տի օրհնէ այս ամուսնութիւնը , մանաւանդ  
որ երկու ամուսնացեալք այնպիսի յատկու-  
թեանց տէր էք , որ անհնար է թէ անոնց  
միութիւնը դժբախտ կապ մը ըլլայ : Օրիոր-  
դին յատկութիւններն արդէն գիտեմ , և կը  
վկայեմ թէ իւր ընկերը գոհ և երջանիկ ը-  
նելու ամեն հանգամանք ունի : Իսկ ձեր  
ազնիւ փեսային համար կը լսեմ թէ ոչ միայն  
հարստութեամբ երեւելի է , այլ և մտաւոր  
և բարյական յատկութիւններով , և կար-  
ծեմ թէ այս է կարեւորը , և ձեր փնտը-  
ռածն ալ միշտ այս էր : Եթէ ամենեւին տե-  
ղեկութիւն մը չունենայի անոր անձին վրայ ,  
գիտնալով ձեր փորձառութիւնը և օրիոր-  
դին ճաշակն ու իմաստութիւնը , պիտի ըսէի  
թէ խաբուած կամ սխալած չէք ձեր ընտ-  
րութեանը մէջ : Կը խնդրեմ որ երկինք շնոր-  
հէ երկուց ամուսնացելոց բարի պտուղներ ,

որ ճշմարիտ ժառանգներ ըլլան իրենց ծնողաց յատկութիւններուն : Կ'աղաքեմ, Տէր ; սիրոյ և յարգանաց ողջոյնս տուեք Օրիորդին և անոր նորընտիր ամուսնոյն, համարելով զիս միշտ

Զեր հաւատարիմ բարեկամը

(Թուական)

Ա. Ա.

47. Պաշտօն մը ընդունող անձի մը շնորհ հաւորոքեան նամակ :

Տէր,

Զեր (այս ինչ) պաշտօնի համնելուն առետիսն ընդունելով, կը փութամ ուղղել ձեզ շնորհաւորութիւնս, թէպէտ կը խոստովանիմ թէ պարտիմ շնորհաւորել մանաւանդ վարչութեան (կամքաղքին, ազգին, հասարակութեան, եւայլն, լաւո պարագայից) որ յանձին ձերում արդարեւ սրանչելի պաշտօնատար մը ստացաւ, քան ձեզ որ բեռն հոգ միայն աւելցուցիք ձեր վրայ : Եթէ վարչութեան (կամքաղքին եւայլն) կը վայելէ շնորհաւորութիւն, ձեզի պատշաճն է անտարակոյս գովեստ և շնորհակալութիւնը գովեստ՝ ձեր արժանեացը և տաղանդներուն համար, շնորհակալութիւն՝ վասն զի այսպիսի ծանր բեռ մը յանձն առիք անձն

նուրացութեամբ յօդուտ հասարակաց : Բայց ես, ճշմարիտ ըսելով, ուրախ եմ որ սովոր վարձատրուեցաւ ձեր արժանաւորութիւնը . Եթէ ցաւալի բան մը կայ, ըստ իս սա է որ ձեզի տրուած պաշտօնը ձեր կարողութեանը, գիտութեանը և տաղանդին նայելով փոքր է : Կը յուսամ, Տէր, ձեր զբաղանաց յաճախութիւնն ու պաշտօնին բարձրութիւնը փոփոխութիւն մը յառաջ չեն բերեր այն մարդասիրութեան և քաղցրութեան մէջ որոյ հանդէսը ցարդ սրանչելի խոնարհութեամբ ցուցէք նուաստութեանս : Այսպիսի փոփոխութիւն մը արդարեւ ուրախութիւնս պիտի գարձնէ յուսահատութեան :

Վարունակեցէք ուրեմն, Տէր, ձեր բարեսիրութիւնը, և այսմ կը փափաքի ձեզմով պարձենցող մը, որսէտ զի առիթ ունենայ միշտ ցուցնելու թէ որչափ անձնանուէր է ձեզ Տէր, Զեր խոնարհ ծառան (Թուական)

Ա. Ա.

48. Բարձր պաշտօնի հասնող պաշտպանի մը ուղղուած նամակ շնորհաւորոքեան :

Տէր,

Աւելորդ է ըսել թէ ինչ ուրախութեամբ կարդացի լրագրաց մէջ որ (այս ինչ) պաշտօնը ձեզ տրուած է : Բայց կը խոստովանիմ

որ վարձատրութիւն էր այս որ եղաւ ձեզի  
քան թէ շնորհը մը , վասնորոյ աւելորդ կը  
համարիմ շնորհաւորել ձեզ այս պատճառաւու :  
Ում կը վայելէ հասուցում , եթէ ոչ անոնց  
որ կարողութեան հետ ունին նաեւ հանձար ,  
գիտութիւն և եռանդ : Ազգն այսպիսի անձ  
մը կը ձանձնայ ձեզ : Ապա մենք ենք բա-  
րեբախտ որ ձեզի նման անձ մը կը տեսնենք  
ահա այսօր մեր ամենէն բարձր պաշտօնին  
գլուխը : Իսկ ձեզ ցաւակից ըլլանք արդ-  
եօք , վասն զի մեծ պաշտօն մը հարկաւ մեծ  
ծանրութիւն կը բերէ իրեն հետ : Ուրիշ  
մը համար , Տէր , թերեւս պատշաճ էր այ-  
սօրինակ ցաւակցութիւն մը , ոչ թէ ձեզի  
պէս անձի մը համար որպէս զօրութիւնն ու  
արութիւնը բաւական են բառնալու աւելի  
ծանրագոյններդ . իսկ հանձարոյ , գիտութեան  
և եռանդեան փորձն արդէն շատ առիթնեւ-  
րու մէջ ցուցած էք : Բան մը միայն կը մնայ  
նուաստիս խնդրել ձեր մեծութենէն , այն է  
որ ձեր բարձր պաշտպանութիւնը շարունաւ  
կէք իմ վրաս : Կը հաւասարմ , Տէր , որ ձեր  
հզօր ազդեցութեան փշրանքն անդամ բա-  
ւական են կազդուրել ինձ նման հաւասա-  
րիմ մը որ կը խոստովանի լինել պարծանօք  
Զեր խոնարհ և անձնանուէր ծառան  
(Թուական) .

Ա . Ա .

49. Երկայն պանդխոռքենէ մը հայրենիքը  
դարձող բարեկամի մը շնորհաւորութիւն :

### Սիրելի բարեկամ ,

Օտարութեան մէջ գտնուիլ միշտ վը-  
տանգաւոր և գրեթէ կէս մահ է , մանա-  
ւանդ այն օտարութեան յորում գուն գըտ-  
նուեցար այս հնգամեայ Երկայն պանդըխ-  
տութեան ատեն : Գուն արդարեւ նոր և զար-  
մանալի տեղեր և մարդիկ տեսար , և ան-  
տարակցոյ կը զուարձանայիր , և շատ բան  
սորվեցար , թէպէտ չեմ կարծեր թէ աշ-  
ուանց նեղութեան և կարօտոյ էիր : Բայց  
քուկիններդ անձկութենէ և հոգէ ուրիշ  
բան չունեցան : Գիտես որ քեզի համար մեծ  
հոգ ընողներուն մէկն ալ ես էի , և այնչափ  
աւելի՝ որչափ քաջ տեղեակ եմ բոլոր պարա-  
գայից այն տեղերուն յորս գուն կը գրտ-  
նուէիր : Կը յուսամ թէ նամակներս առիր ,  
և բաւական օգտակար եղան քեզի , քանզի  
փորձաւութենէ ինչ որ գիտէի քեզի հաղոր-  
դեցի : Զիարդ և իցէ , փառք որ նորէն ողջ  
առողջ դարձար քու վառարանիդ քով : Ի՞նչ  
մեծ բերկութիւն զգացին արդեօք կինդ և  
սիրուն ձագունքդ յորոց ոմանք կարծեմ  
յանուանէ միայն գիտէին իրենց հայրը , այն-

չափ մանր էին երբ թողեր զանոնք = Նատ  
բաներ ունիմ հարցնել քեզ և իմանալ . կար-  
ծեմ օրերով պիտի ստիպուիս նստել ինձի  
հետ , և բաւական պիտի ցաւեցնեմ գլու-  
խըդ : Այս պատճառաւ կ'ուշացնեմ գալս ,  
որպէս զի ճամբորդութեանդ յոգնութենէն  
քիչ մը կազդուրիս , որ կարող ըլլաս դիմա-  
նալ ճանձրութեան զըր պիտի կրես ինչ :  
Առայժմ մնաս բարով , սիրելի , շատ քնա-  
ցիր , լաւ կեր , զօրացիր , և սպասէ շատա-  
խօս և հետաքրքիր բարեկամիդ որ անձկա-  
նօք կը սպասէ տեսութեանդ :

Հաւատարիմ բարեկամդ

(Թ. Ա. Ա.)

Ա. Ա.

— 33 —

50. Ծանր հիշանդոքենի մը նոր առողջացող  
անձի մը շնորհաշորոքեան նաևակ :

Ցաւի ատեն բարեկամին վշտակից , ու-  
րախութեան ատենն ալ ինդակից ըլլալ բա-  
րեկամութեան առաջին պայմանն է : Այսն  
այն մոդական զօրութիւնն է որ լրով ան-  
գամ և հեռուէն կը հաղորդի , և կ'անցնի  
պրտէ 'ի սիրտ : Եթէ կը հաւատաս , սիրելի ,  
թէ ճշմարիտ բարեկամ եմ քեզ , հաւատա-  
խու ես նաեւ թէ ինչ անձկութեան մէջ ին-

կայ ծանր և վտանգաւոր հիւանդութեանդ  
գոյժն առնելով . և հիմա որ առողջութեա-  
նըդ աւետիսն հասաւ մեզ , ուրախութիւնս  
անպատում է : Թէրեւս զարմացած ես թէ  
ինչու հիւանդութեանդ երկամսեայ միջոցին  
ամենեւին նամակ չգրեցի քեզ ոչ ալ ընտան-  
եացդ : Մի կարծեր թէ անհոգ էի . Տէր  
Ա . ին հետ անդադար կը թղթակցէի , գրե-  
թէ շաբաթն երկու անդամ . հիւանդու-  
թեանդ որպիսութիւնը միշտ կ'իմանայի ան-  
կէ : Խոհեմութիւն չհամարեցայ գրել ձեզ  
ուղղակի , որ գուցէ քու և քուկիններուդ  
երկիւղ և կասկած տամ : Նախախնամու-  
թիւնը քեզ նորէն պարգեւեց մեզի , ուստի  
և մեծ է մեր շնորհակալութիւնը : Նիմա  
պարտք մը ունիմ կատարելու , այն է՝ խրատ  
տալ քեզ որ այս նոր առողջութեանդ միջո-  
ցին ամեն զգուշութիւն ընես . թէպէտ  
գիտնալով խոհեմութիւնդ , կը հաւատամ  
թէ ազդարարութեան կարօտ չես : Կը յիշ-  
շեցնեմ սակայն թէ ինչ ծանր հետեւանք  
կլնայ ունենալ քու այժմու վիճակիդ մէջ  
դոյզն անհոգութիւն կամ զանցառութիւն  
մը : Զգուշութիւն առողջութեան մասին  
միշտ պէտք է մարդուս . բայց մանաւանդ  
հիւանդութենէ մը անմիջապէս ետքը , մինչ  
ախտը ոչ թէ մեկնած և կորսուած է , այլ

որպէս թէ ՚ի դարանի կայ դրան ետին, և  
կը սպասէ . նորէն ձեռք ձգել իր որսը : Առ  
ուղղութեան ժամանակին սովորական բաւ  
ները եօթնեակ մը կամ երկու ետ ձգէ,  
թէ լուսի քեզ թէ կատարեալ առողջ ես :  
Խրատներուս միտ դիր, սիրելի, և այնպէս  
զերծ պիտի պահես զքեզ վտանգէ, և անձ  
կութենէ՝ քու բոլոր բարեկամներդ, որոց  
գլխաւորն ըլլալ կը պարծիմ :

Մտերիմքո

(Թուական)

Ա. Ա.



51. Շնորհաւորութեան նամակներու լճաղիա-  
նոր պատասխան մը :

Սիրելի բարեկամ, կամ . Տէր,


Մեծապէս շնորհակալ եմ սիրոյ և հա-  
մակրութեան զգացմանց համար զրոս ձեր  
շնորհաւորութեան նամակին մէջ կը յայտ-  
նէք ամուսնութեանս (կամ առողջութեանս,  
կամ նոր պաշտօնիս, կամ յաջող դարձիս)  
համար : Կ'աղաչեմ որ ընդունիք խորին շնոր-  
հակալութիւնս ձեր ըրած բարեկամզթու-  
թեանց համար : Այնչափ ուրախութիւն և  
հաճութիւն պատճառեց ինձի ձեր զուարթ  
նամակը, որ կարծես թէ մասնաւոր յարգ  
մը սկսայ ունենալ նոր վիճակիս (կամ պաշ-

տօնիս) վրայ : Ճշմարիտ կ'ըսեմ որ առաջ  
անտարբեր էի, և իբր սովորական բան մը  
կը համարէի ինձի եղածը . ձեր խօսքերն իբր  
մոդական զօրութեամբ փոխեցին յանկարծ  
զգացումս : Հաւատացէք, սիրելի, որ ձեր  
բերնէն ելած խօսքը, չեմ գիտեր ինչու հա-  
մար, ինձի միշտ ազդու և արդիւնաւոր  
է : Գիտցէք որ ձեր բարեկամութիւնն  
ինձի որ և իցէ յաջողութենէ մը աւելի պատ-  
ուական է . ուստի եթէ դուք զիս ուրիշ  
բարեաց համար երջանիկ կը համարիք, ես  
ձեր բարեկամութիւնը վայելելուս համար  
կը համարիմ զիս երանելի, և պիտի ջանամ  
միշտ լինել

Ձեր հաւատարիմ բարեկամը

(Թուական)

Ա. Ա.



52. Որիկ պատասխան մը :

Սիրելի բարեկամ,

Ճշմարիտ բարեկամութիւնդ որոյ ապա-  
ցոյցը շատ անգամ առաջ ես ինձ արդեամբ  
և բանիւ՝ կրկին հաստատուեցաւ վերջին  
նամակովդ, ուր կ'ըսես և կը մաղթես ինձ  
շատ բաներ որոց արդարեւ չեմ համարիր զիս  
արժանի : Միմիայն փափաքս այս է որ նաև  
խախնամութիւնը պատեհութիւն շնորհէր

ինձ յուցնել իրօք թէ որչափ շնորհակալ եմ  
քեզ, և թէ ինչ մեծ երջանկութիւն կը  
համարիմ բարեկամ ունենալ քեզ ինձ։ Առ  
այժմ սա միայն կրնամ ըսել թէ ինչ աւելի  
մտերիմ մը չունիս։ Հաւատառ խօսքիս, և  
պահէ բարեկամութիւնդ որս կորսւասն  
հաւասար է ինձ կենաց կորստեան հետ։  
Ոչ լեռ։

Քու խանդակաթ բարեկամդ

(Թուական)

Ա. Ա.

### 53. Ցաշակցութեան նամակներ։

ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Ցաշակցութիւն յայտնելու համար նա-  
մակ գրել սովորութիւն է։ բայց շատ ան-  
դամ խոհեմութիւն կը համարուի այսպիսի  
նամակ մը զանց ընել, քանզի երբեմն միս-  
թարական խօսքերով ցաւը փոխանակ թե-  
թեւնալու, կը նորոգուի մանաւանդ։ Ցա-  
շակցութեան նամակ մը կը գրուի սովորա-  
բար շատ ընտանի մարդոց։ Եթէ միսիթա-  
րելի անձն անձամբ տեսնել հնար է, լաւա-  
գոյն է աւեսութեան երթալ և անձամբ խօ-  
սիլ ինչ որ պէտք է, քան թէ նամակով ցա-  
շակց ըլլալու ջանալ։ Պէտք է նաև թո-  
ղուլ որ ցաւալի դէպքին ու ցաւակցու-

թեան մէջտեղ բաւական ժամանակ անցնի։  
Եթէ ցաւակցութիւնը մահուան հա-  
մար է, կրնայ մեռնող անձը յիշուիլ գու-  
լութեամբ, բայց շատ զգուշութեամբ և  
համառօտիւ։ Կատ անգամ, և մանաւանդ  
բարեպաշտ անձանց գրուած նամակի մէջ,  
կրօնական սկզբունքներէ խրատ կրնայ քաղ-  
ուիլ, բայց զգուշանալի է միշտ որ ցաւալի  
դէպքը թեթեւ բան մը համարել չկարծուի։

### 54. Մէկուն հօրդ կամ մօրը նահուան հունար ցաշակցութեան նամակ։


Մէրելի բարեկամ։

Խորին ցաւով իմացայ ձեր ըրած կորուս-  
տը, արդարեւ կորուստ մը որուն համար  
միսիթարութիւն չի կրնար մատուցուիլ։ Ե-  
թէ ձեր ցաւոցը համար խորին կարեկցու-  
թիւն մը կրնայ ձեր վիշտը գոնէ դոյզն ինչ  
մեղմել, գիտցէք որ ցաւելու մասին ձեր  
երկրորդն եմ։ Բայց դուք, միուելի, ունիք,  
եթէ ոչ միսիթարուելու առիթներ, գեթ  
այնպիսի պատճառ մը որ պիտի ստիպէ ձեզ  
չափ գնել ձեր կտտին դառնութեամբ, ըսել  
կ'ուզեմ, այն խնամքը զոր պարտիք ձեր ըն-  
տանեացը՝ չի թողուր կարծեմ ձեզ բոլորու

վին յափշտակուիլ յիշտատակով կորստեան մը  
որ անդարմանելի է : Բայց և այնպէս գիտեմ  
որ դուք հիմա ուրիշ բան չեք կրնար ընել  
բայց եթէ սպասել որ այդ տիսուր յիշտատա-  
կը ձեր մաքէն ջնջելու անկարող ժամանեակը՝  
գոնէ սակաւինչ մեղմացնէ հիմա ձեզ սրտա-  
ռուչ ընող ցաւը : Այս բանին կը փափաքի  
ձեր միշտ հաւատարիմ և կարեկից բարեկա-  
մը

(Թուական)

Ա. Ա.



ՅՅ. Յաշակցորդեան նաևնակ առ այր որոյ  
կինը մեռած է :

Սիրելի բարեկամ,

Սովորութեան յարմարելով կը ստիպուիմ  
ըսել որ 'ի սրտէ ցաւակից եմ ձեզ : Ապա  
ձեզի գրելու համարձակիլս անոր համար չե-  
որ ձեզ խրատեմ ցամաքեցնել ձեր արտա-  
սուքը, այլ ընդհակառակն որպէս զի յայտ-  
նեմ թէ ձեզի հետ ցաւակից և արտասուա-  
կից եմ : Լացէք ուրեմն, լացէք . արտա-  
սուքը, միայն արտասուքը կրնան մեղմել  
այսպիսի աղետից տապը: Եթէ գիտնալ թէ  
շատեր հազորդ են մեր ցաւոցը՝ կրնայ նը-  
ռուազեցնել փոքր 'ի շատէ մեր գառնութիւ-  
նը, պէտք է որ դուք քիչ մը թեթևութիւն

դդաք ձեր վշտին մէջ, քանզի չեմ յիշեր մէ-  
կը որոյ կորուստն երբէք այնչափ կսկիծ առ-  
ուաւ լսողներուն որչափ ձեր ազնիւ տիկնոջ  
տիսուր օրհասը : Բայց ներեցէք որ քիչ մ'ալ  
ուրիշ պարագաներ յիշեցնեմ ձեզ: Ձեր բո-  
լորտիքը նայելով պիտի գտաք իսկոյն թէ ու-  
րիշ պարտաւորութիւններ ունիք, և այս  
պարագան շատ պիտի նպաստէ յորդորել ձեզ  
սթափելու : Բաւ է ուրեմն այնչափ կսկիծը.  
զոր տուաւ ձեզ այդ աւազելի կորուսոր .  
այսուհետեւ գարձուցէք ձեր հոգը մնացած-  
ներուն . այս իմաստուն խորհրդածութիւնը  
պիտի բերէ անտարակոյս զովութիւն ձեր  
այրած սրտին :

Հաւատացէք, սիրելի Տէր, որ շատ տը-  
խուր եմ. բոլորովին սրտառուչ, քանզի քաջ  
տեղեակ եմ ձեր ողբերուն նիւթեղող անձին  
սքանչելի յատկութիւններուն . բայց և այն-  
պէս կը խոստովանիմ որ իմ ցաւերս ստուեր  
միայն են ձեր ցաւոց քով :

Ընդունեցէք, սիրելի, կարեկ ցութեա-  
նըս յայտարարութիւնը, և համարեցէք զիս  
ձեր Հաւատարիմ և վշտակից բարեկամն

(Թուական)

Ա. Ա.



56. Յաշակցուքեան նամակ առ կիև որոյ  
այրը մեռած է :

Տիկին,

Զեր խորին վշտին առաջին օրերը յարգելով, խոհեմութիւն չհամարեցայ մինչև ցայտը խոռվել ձեր ցաւը որ առանձնութեան և լոռութեան կարօտ էր : Բայց այսօր ահա շասփիկ կը յայտնեմ ձեզ ցաւակցութիւնս, և առանց խափանել ուղելու այն ախուր բայց գորովալի խորհուրդները որ գրաւած են ձեր միտքը, պարտք կը համարիմ ինձ յորդորել ձեզ որ, ձեր առողջութեանը և ձեր խնամոցը կարօտ եղողներուն օգտին համար, ջանաք ձեր միտքը զբաղեցնել ուղիւ կարեւոր գործերու :

Արդարե հանգուցեալն արժանի էր ձեր սիրոյն, քանզի իբրե հայր, իբրե ամուսին, և իբրե բարեկամ, բոլոր իր ծանօթներուն յարգանքը շահած և ամենուն սիրելի եղած էր իր իմաստութեամբն ու բարութեամբը : Այո, այս պատուական անձը չկայ հիմա, ուստի և ցաւելու իրաւունք ունիք . բայց միթէ բնաւ յիշատակ մը չթողուց : Այդ սիրուն արարածները որ ձեզ կը բոլորեն իբրե պատկ, ոչ ապաքէն հանգուցելոյն պատկերն ու նկարագիրն են, և բաւական՝ ձեզ միտ-

թարելու : Յածուցէք ուրեմն, Տիկին, ձեր ցաւոց անչափութիւնը . յիշեցէք որ ամեն քըս մահկանացու ենք, և թէ այն օրէն ՚ի վեր որ մեր ոտքը կենաց սեմին վրայ դրինք՝ կ'երթանք յառաջ դէպ ՚ի մահ, և անորն ենք :

Եթէ իմ անկեղծ բարեկամութիւնս առ հանգուցեալն՝ հաճոյ էր ձեզ, և եթէ տկար ծառայութիւնս կրնայ օգտակար բլլալ ձեզի, կը խնդրեմ, Տիկին, որ յիշեք զիս իբրե բարեկամ. ամեն կերպով պատրաստ եմ ձեզի ծառայելու :

Ձեզ յարգող և կարեկից

(Թագավորական)

Ա. Ա.

57. Ուրիշ նամակ նոյն նիշրիմ վրայ :

Սիրելի բարեկամ,

Մի կարծեր թէ այս նամակս կը գրեմ քեզ միմիթարելու, այլ մանաւանդ խառնելու համար արտասուքս քու արտասուացդ : Արդարեւ այնչափ մեծ է կորուստ մը որ չափ յարգի և պատուական է կորուսեալ առարկան : Հանգուցեալը որոյ մահն իբրաւամբ կ'ողբանք՝ իր վիճակին յատուկ ամեն առաքինութիւն ունենալով, հասարակաց սէրն ու յարգանքը ստացած էր : Եւ ինչ-

պէս չստանար նա՝ որ ընտիր մայր էր, քաղցր ամուսին և իմաստուն տիկին։ Ուրիշ ո՞ր յատկութիւնները թուեմ. սա միայն կը յիշ շեմ որ ճշմարիտ գութ ունէր քու վրադ, և բոլոր ջանքն էր քեզ երջանիկ ընել և նախանձելի ամենուն։ Ասոնք ըսելով գիտեմ որ քու կակիծդ կ'աւելցնեմ, բայց ինչ կըրը նամ ընել, միթէ կրնամ այս մեծ կորուսոր քեզի մոռցնել տալ։ Պէտք է ցաւիլ այն որ ցաւելու արժանի է։ Այս աշխարհէս եւ լողներուն վրայ եթէ միսիթարուելու բան մը կայ սա է որ անոնք այս արտասուաց հովտէն ազատեցան, և լաւագոյն կեանք մը կը վայելեն։ Եւ որովհետեւ կը հաւատանք թէ մեր բաժանումը ժամանակաւոր է, և թէ ընդ հուալ վերստին պիտի տեսնենք զիւրար, ինչո՞ւ համար յանչափս վշտանանք, մանաւանդ որ չափազանց կոկիծը մարմնոյ ալ վնասակար է։ Կը յուսամ, սիրելի բաւրեկամ, քու բարեկաշութիւնդ արդէն կը թելադրէ քեզ այս ճշմարտութիւնները. իմ գիտաւորութիւնս է յիշեցնել միայն քեզ։ ոչ թէ սորվեցնել. և որչափ ցաւակից եմ քեզ, այնչափ ալ կ'ուզեմ քու միսիթարուշ թիւնդ, գիտնալով որ բարեկամաց կարեկ ցութիւնը թէեւ չի մոռցուներ, բայց շատ անդամ կը թեթեւցնէ ցաւը։

Ընդունէ ուրեմն, սիրելի, ցաւակցութիւնս իբրեւ այնպիսի անձի մը զգացումները որ կը փափաքի ըլլալ յաւիտեան Քու հաւատարիմ և անձնուեր (Թուական) բարեկամդ Ա. Ա.

58. Յաշակցութեան նախակ սիրելշոյ մը (որդշոյ, ազգականի, բարեկամի) մահուան համար։

Սիրելի բարեկամ,

Յարգանաց և բարեկամութեան զգացումները զոր ունիմ առ քեզ՝ կը ստիպեն զիս հաղորդ ըլլալ ցաւոցդ։ Զեմ կրնար յայտնել բանիւ թէ որչափ վիշտ պատճառեց ինձ այս դէպքը։ Խորհելով եւս թէ նամակս աւելցունէ թերեւս քու ցաւդ, տակաւ ին չկըցայ լուել։ Քեզի պատահած դէպք մը ինչ որ ըլլայ, ուրախալի կամ ցաւալի, չկրնար անտարբեր թողուլ զիս, պէտք է որ խնդամ քեզի հետ՝ եթէ կը խրնդաս, և լամ՝ եթէ կուլաս։ Մանաւանդ փորձիւ գիտեմ որ բնական է մարդուս սփոփանք մը զգալ, երբ կը տեսնէ թէ իր ցաւոցը հաղորդ եղողներ շատ են։

Ընդունէ ուրեմն, սիրելի բարեկամ, վըշտակցութեանս հաւատարիքը, և հաւատա որ

կ'ուզէի , եթէ հնար էր , սփոփէլ քու վըշ-  
տահար սիրտդ , իբրեւ հաւատարիմ քո և  
համակիր բարեկամ

(Թառական)

Ա. Ա.



59. Ուստի կամ դուստր մը կը գրէ իր հօրդ  
կամ մօրդ երկուքեն մեկուն մահուանը  
համար :

Սիրելի հայր իմ , կամ , մայր ,

ի զուր կը ջանամ յայտնել սրտիս ցաւը .  
մոքիս շփոթութիւնը և սրտիս թախծու-  
թիւնը չեն թողուր բառ գտնել կոկիծս նը-  
կարգբելու : Զենէ հեռու գտնուիլս մա-  
նաւանդ կ'աւելցնէ դառնութիւնս : Իցէ՛  
թէ կարող ըլլայի իյնալ ձեր գիրկը , խառ-  
նել արտասուքս ձերինին հետ , և փարել  
զձեօք . թերեւս մեղմանային ցաւերս , կամ  
գէթ չէին սաստկանար , քանզի կ'ունենայի  
զօք որուն կրնայի հազորդել վիշտս :

Բարէ , ինչո՞ւ զրկեց զիս բախտը սիրելի  
հօրս (կամ մօրս) վերջին օրհնութիւնն ըն-  
դունելէ , անոր վերջին հեծութիւնը լսելէ :  
Արդարեւ սոսկալի ժամ է այն յորում կը  
կորսնցնէ մարդ իր կենաւառուն , իր ծնողը .  
չէմ գիտեր ի՞նչ տագնասղ կը պատէ զիս ,

Երբ կը խորհիմ թէ չկայ հայրս (կամ մայրս) ,  
զրկուեցայ խապառ անկիէ :  
Կոկիծը չի թողուր ինձ աւելի խօսիլ .  
վերջին խօսքս ձեզի , սիրելի հայր (կամ մայր)  
սա ըլլայ որ այս ահագին արկածն աւելցուց  
սէրս և յարգանքս որ առ ձեզ : Ծնողացս  
միոյն կորուստը ծանոյց ինձ լիովին միւ-  
սին արժանիքը , ուստի և եմ այսուհետեւ ,  
սիրելի հայր իմ (կամ մայր) ձեր տասնապա-  
տիկ աւելի խանդակաթ որդին

(Թառական)

Ա. Ա.



60. Նոյն նիշրին վրայ ուրիշ նամակ մը :

Սիրելի հայր , կամ մայր ,

Արդարեւ մեծ գիբախտութիւն է մեծ  
զի համար . կորուսինք անձ մը որ աշխարհիս  
ամեն բանէն աւելի սիրելի էր մեզ : Աւազ ,  
այլ եւս պիտի չտեսնեմ այն որ ինձի համար  
այնչափ նեղութեանց համբերեց : Դու միայն  
կրնաս , սիրելի հայր (կամ մայր) , հասկնալ  
սրտիս ցաւը , քանզի գիտեմ որ նոյնը կը  
զգաս նաեւ գուն : Բայց ինձի համար մե-  
ծագոյն թշուառութիւն քենէ հեռու գրտ-  
նուիլս է . Եթէ քու առջեւդ թափէի այս  
արտասուքը , թերեւս քիչ մը սփոփուէի ,

քանզի գէթ սա միմիթարութիւնը պիտի ունենայի թէ գու մօտ էս առ իս , դու , սիրելի հայր իմ (կամ մայր) , որ այսուհետեւ միմիայն յօսս , միմիայն պաշտպանս ես :

Եթէ ատմք գրելով քու կսկիծդդ կ'աւելցնեմ և նորէն արտասուք թափել կուտամքեղի , ներէ ինձի : Կ'ուգեմքեղ միմիթարել , բայց ինչպէս կարող եմ . վշտացեալ մը կրնայ ուրիշ վշտացեալ մը միմիթարել . աղքատ մը կրնայ ուրիշ աղքատ մը հարըստացնել : Թողունք ուրեմն միմիթարութիւնը որ այսուհետեւ մեզի համար չէ : Մերընելու բանը սա է . դուն , սիրելի հայր (կամ մայր) , մօրս սէրն աւելցուր քու ոփրոյդ վրայ որ առ իս , ես ալ ըստ կարի ջանամ իմորդիական սէրս և յարգութիւնս քու վրադ միայն ամիտփել . այսպէս օգուտ մը քաղած կ'ըլլանք այս հարուածէն որ Նախախնամութիւնը հաձեցաւ տալ մեզ , մինչեւ որ կանուխ կամ անագան երթանք տեսնել զայն որ մեզ այսչափ դառնութեան մէջ ընկղմելով գնաց իւր յաւիտենական հանգիստը : Յիշատակ արդարոց օրհնութեամբ եղիցի :

Հնազանդ և կաթոգին որդիքո

(Թուական)

Ա. Ա.



61. Զախորդոքեան հանդիպող բարեկամի մը գրուած ցաշակցոքեան նաևակ :

### Սիրելի բարեկամ .

Գիտնալով անկեղծութիւնս , և սէրս որ առ քեզ , կրնաս հաւատալ թէ ինչ կսկիծ ունեցայ , երբ քեղի պատահած այս ինչ ձախորդ գէպքը լսեցի : Սի՞ կարծեր , սիրելի , որ , եթէ նոյնը պատահած ըլլար ինձի , ասկէ աւելի ցաւ և տրտմութիւն պիտի զգայի : Ես որ և իցէ ձախորդութեան համար ուրիշ միմիթարել ջանալու սովորութիւնը չունիմ . գիտեմ որ այսպիսի գէպքեր անդարմանելի են , և ունայն խօսքեր ի՞նչպէս կըրնան իրաց վիճակը փոխել . և իրաց վիճակն առանց փոխելու՝ անոնցմէ սիրտերու վրայ եղած աղդեցութիւնը չնշել կամ չափաւութել ի՞նչպէս հնար է : Ուստի քեղի գրելուս նպատակն ուրիշ բան չէ , բայց յայտնել քեղի իմ կարեկցութիւնս , մաղթել որ յաջող գէպք մը մոռցնէ կամ մանաւանդ մեղմէ այս ձախորդութեան յիշատակը , միանգամայն իմացնելու համար քեղի , սիրելի , որ պատրաստ եմ աշխատել իմովսանն , եթէ կրնամ բան մը ընել որ քեղի կրնայ օգտակար ըլլալ այս գէպքին մէջ : Սա ալ գիտեմ որ քու առաքինութիւններդ , մանաւանդ

արութիւնդ , որեւիցէ ձախորդութենէ մը  
չնկատելու չափ մեծ է : Ուստի մնալով  
ուրախալի վայրկեաններու որ անտարակոյս  
պիտի պատահին , քանզի աշխարհիս վրայ  
տեւական բան չկայ , կը խնդրեմ ընդունել  
կարեկցութեանս ապացոյցը , և համարել  
զիս միշտ քեզ անձնանուէր

(Թուական)

Ա. Ա.

Գիտողութիւն

Ցաւակցութեան նամակի պատասխանը  
երկայն և մանրամասն ըլլալու չէ : Լոկ շնոր-  
հակալութիւն մը ըլլալու է որմէ տրոտմու-  
թիւնը կը մերժէ ամեն օտար խօսք և նիւթ :  
Հետեւեալ օրինակը կրնայ քիչ փոփոխու-  
թեամբ ամեն տեսակ ցաւակցութեան նա-  
մակի պատասխան ըլլալ :

62. Ցաւակցութեան նամակի պատասխան :

Տէր (կամ, Տիկին)

Սերտ ցաւակցութիւնը որով կը յայտնէք  
ձեր մասնակց ըլլալն իմ վշտացս (կամ ինձի  
պատահած ձախորդութեան) մեծապէս շար-  
ժեց զիս . ուստի և կ'աղաջեմ , հաճեցէք  
ընդունել փոխարէն շնորհակալութիւնս :  
Եթէ քան մը կրնար մեղմել վիշտո , կամ սիր-

աըս աիսովիել , անտարակոյս ձեր վշտակցու-  
թիւնը պիտի ըլլար :

Արդարեւ միսիթարուիլ այսուհետեւ ին-  
ձի համար անհնար է , բայց և այնպէս այն  
գողտր զգացումը որ ձեր խօսքերուն մէջ կը  
ցոլանայ՝ յաւիտեան պիտի չելլէ միտքէս ,  
և այս վշտագին օրերուս մէջ ամենէն քաղցր  
ժամը պիտի համարիմ այն՝ յորում ձեր նա-  
մակը բացի :

Հաճեցէք , տէր (կամ, տիկին) համարել  
զիս ձեր շնորհակալու բարեկամն :

(Թուական)

Ա. Ա.

63. Հօրեղբայր մը կը գրէ առ եղօրորդին  
իշր Վանան՝ որոյ մայրը մեռած է , յանդիչ  
մասնելով զանի նախախնամոքեան դէմ  
զանգատելուն համար :

Միրելիդ Վահան ,

Մեծ անձկութեան մէջ էի և շատ տը-  
խուր այսպէս օրերով մեղի չհանդիպելուդ  
համար , և չէի կարող գուշակել թէ ինչ էր  
պատճառը . որչափ հեռի էի խորհելէ թէ  
այսպիսի աղէտ մը որոյ գոյժը կու տաս ինձ՝  
անյուսութեան մէջ ընկղմած էր ձեր բարի  
ընտանիքը :

Բարէ , միրելիդ իմ , մայրդ , քաղցր և

բարի մայրդ որ այնպէս առողջ և ուժեղէր՝  
քանի մը ժամ միայն խոնաւ տեղ մը կենաց  
լուն համար թեթեւ պաղ մը առնելով այս  
պէս յանկարծ ընկճեցաւ . աւաղ : Բայց  
ցաւ մ’ալ ինձի նամակդ եղաւ . նամակդ ,  
կ’ըսեմ , սիրելիդ Վահան , որ կը ցուցնէ  
թէ յուսահատութեան վայրկենի մը մէջ  
գրուած է ։ կ’երեւելի թէ մոռցդ տէր չէիր ,  
և դառնութիւնը գրաւած էր սիրտդ , երբ  
կը գրէիր այն տողէրը : Գիտեմ որ ցաւը  
խորհել չունի , ոչ ալ գիտէ , առաջին վայր-  
կենին մէջ , բառ և խօսք ընտրել : Ներէ  
ինձի , խօսքերուդ մէկը միայն յիշեցնեմ ,  
քանզի կը հաւատամ թէ մոռցած ես գրա-  
ծը : “ Նախախնամութիւնը , կ’ըսես , անի-  
շաւ է ” : Նախախնամութիւնը , սիրելիս ;  
Աստուած է . անոր ինչպէս գգուանքը ,  
նոյնպէս հարուածն ունի իւր պատճառներն  
որ մեղ անհաս են . և մենք որ չենք կարող  
մանել անոր գաղանեաց խորութիւնը՝ պարզ  
տինք ջանալ խոնարհութեամբ ընդունել ա-  
մեն փորձանք որ մեղ կը զրկէ , և անհուն  
չնորհակարութեամբ գրկել բարիքը : Բայց  
թողունք այս առայժմ մէկդի : Հիմա փոխա-  
նակ տալու քեզ միսիթարութիւն որուն կա-  
րուտ ես , արութիւն կը պահանջեմ քենէ .  
և գիտես ինչու համար , քանզի երէց որդի

Ես գերդաստանիդ , պատանի քաջ և ուշիմէ  
Ահա այսօր եղար , որդեակի իմ , չորս թըշ-  
ուառ փոքրիկ որբերու մի միայն նեցուկը :  
Այն անմեղ արարածք , մանչ մը և երեք  
աղջիկ , քու ձեռքբդ կը նային ապրելու հաշ-  
մար . այսուհետեւ ոչ իբրեւ իրենց եղօ-  
րը , այլ իբրեւ հօր : Բայց մի վհատիր , սի-  
րելիդ իմ , Աստուած պիտի տայ քեզի և  
դուն անոնց : Ճրացիր ուրեմն , այր եղիր .  
արդէն քսաներորդ տարին մտար , և ունիս  
բաւական շահաւոր գործ մը ի շնորհս համ-  
բաւոյ հօրդ , որ հարստութիւն չթողուց  
քեզի , բայց բարի անուն որ ամեն հարը-  
տութենէ վեր է : Մեծ է , արդարեւ պար-  
տաւորութիւնդ , Վահան որդեակ , բայց  
մեծ է նաեւ միսիթարութիւնդ , եթէ գի-  
տես : Հարազատներդ պիտի գողան քու  
վրադ , իբրեւ իրենց բարերարին . բարի  
մարդիկ պիտի սիրեն քեզ իբրեւ ընտանեաց  
հայր . օտարք պիտի յարդեն քեզ , և որ  
մեծն է , Աստուած պիտի օրհնէ քեզ , քան-  
զի հիմա իբրեւ որբերու հօր կը նայի քեզի :  
Այս խրատները կը գրեմ քեզի , որդ.  
եակ իւր Վահան , քանզի մեծ վստահութիւն  
ունիմ քու վրադ . բայց մի կարծեր թէ  
ցաւակից չեմ քեզ : Եթէ տեսնէիր սիրտս ,  
ինչ անհուն ցաւերու մէջ ընկղմած եմ . կը

խորհիմ եղած կորուստը որ ոչ քուկդ միայն  
է, այլ և իմ։ կը խորհիմ նաեւ որբերդ,  
կը խորհիմ և քեզ ցաւս մէջ է, սիրելիս,  
միսիթարէ հօրեղբայրդ ծերացեալ և ցաւա-  
գին։ բայց դարձեալ կըսեմ, վստահ եմ  
առաքինութեանդ, մանաւանդ արի և վե-  
հանձն ոգւսդ, որ ի մանկութենէ քու  
սքանչելի՝ յատկութիւններդ են։ Մնաս բար-  
եաւ, որդեակ իմ, գիտցիր որ քեզ ի սրաէ  
ցաւակից հօրեղբայրդ, պատրաստ է միան-  
գամայն ըլլալ քու խորհրդատուդ և օգնա-  
կանդ ինչպէս և որչափ և կարող է։

Մանդակաթ Հօրեղբայրդ

(Թագավորական)

Ա. Ա.

— առաջ —

64. Բարեկամ մը կը ճանուցանէ իր բարե-  
կամին անոր եղրօրը մահիր, և կը միսիրա-  
րէ զանի։

Սիրելի բարեկամ։

Տեսնելով որ օտար մը կը գրէ քեզ եղ-  
բօրդ վրայ, իսկոյն պիտի հառկնաս թէ պա-  
տահած է անոր այն աղէտը որմէ կը զանգիւ-  
տէիր ՚ի վաղուց հետէ։ Արդարեւ նախախ-  
նամութիւնը յիշեց մարդոց աղնուագոյնը,  
և տուաւ այս առատու քու հարսիդ հար-  
ռած մը զորոյ նմանն ընդունած չէ նա տա-

կաւին իւր կենացը մէջ։ Նոյն ցաւ ագին  
տիվինը յանձնեց ինձ այս գժուարին պաշ-  
տօնը ծանուցանելու քեզ որ քու հարազատ  
եղբայրդ և մեր սիրելի բարեկամն այս առ-  
տու ժամը վեցին աւանդեց հոգին իւր կնու-  
ջը և բարեկամներուն գիրկը։

Ի զուր պիտի ջանամ միսիթարութիւնն  
տալ քեզ հիմա, քանզի գիտեմ որ միսիթա-  
րական խօսքեր լսելու յարմար չես այժմ։  
Բան մը միայն կ'ուզեմ ըսել, եղբայրդ մե-  
ռաւ անվիշտ, խաղաղ, և քրիստոնավյայել  
յանձնաբարութեամբ ՚ի կամս Աստուծոյ։  
Այնչափ երկայն և դառն ցաւերէ ետքը,  
կը վայելէր որ Աստուած անոր այսպիսի քաղ-  
ցը և հանդարտ մահ մը պարգեւէր։

Թշուառ հարագ հիմա աւելի արդահա-  
տելի է քան զնա, քանզի թէպէտ շատոնց  
կը սպասէր այս ցաւալի բաժանման, անհնա-  
րին դառնութեան մէջ ընկղմեցաւ, երբ  
հասաւ այն տխուր վայրկեանը։ Մեր բոլոր  
հոգն հիմա անոր համար է։ Երկու մատաղ  
մանկամբք այրի մնալով՝ անձկութեան և վա-  
րանման մէջ է թէ ինչ պիտի ըլլայ արդեօք  
անոնց վիճակը։ Կորոյս ամուսին մը որ անոր  
սիրելի էր քան զաշխարհ ամենայն։ Քաջ  
գիտես թէ որչափ արժանի էր հանդուցեա-  
լըն իր բոլոր ծանօթներուն սիրոյն և յար-

գանացը : Բայց և այնպէս առաքինի այլրւոյն վեմ սգին չընկեցաւ այն խիստ հարուածին ներքեւ , և կարծեմ թէ երկու փոքրիկ սիրուն որբերուն նայելով կը զօրանայ և կը ժրանայ այնպէս , որ չէր յուսացուեր այնպիսի փափուկ արարածէ մը :

Ըսի թէ քեզ չեմ ուզեր մսիթարել . բայց կը յիշեցնեմ քեզ քու բնակն զդաս տութիւնդ և արութիւնդ : Չեմ տարակուսիր թէ գիտես 'իստիպել հարկի համբերութեան և քաջութեան օրինակ ընծայել անոնց որ այս պարագայիս մէջ կարօտ են քու օգնութեանդ և մսիթարութեանդ :

Գորովալի բարեկամդ

(Թուական)

Ա. Ա.

65. Միսիարական նաւակ առ մայր՝ որոյ դուստրը հիշանդ է :

Տիկին .

Վերջին տիսուր լուրդ զիս շատ տրտմեցուց : Կը սպասէի լու թէ փոքրիկ Շուշանդրդ բոլորովին առողջացած է , քանզի նաև խընթաց նամակդ շատ յոյս կու տար , և հրշափ ուրախ էի : Նա մանաւանդ կը խորհիւի գրելքեզ և աղաչել որ նոր առողջացած մանկիկդ առնելով մեզի գայիր , քան-

զի մեր գեղին օդը շատ առողջարար է այն պիսի մատաղ մանկանց , երբ հիւանդութեւնէ նոր կ'ելլեն : Բայց վերջին նամակիդ մէջ կ'ըսես թէ տղուն հիւանդութիւնը հնացեալ ախտ է և թերեւս անբուժելի : Գիտեմ որ տղան դարմանող բժիշկը վստահութեան արժանի է . բայց կարծեմ թէ քան զչափին երկիւղ տուած է ձեզ : Կրնամ ցուցնել այն տեսակ հիւանդութեան շատ օրինակներ , ուր ամենէն կորովամիտ բժիշկն ալ շատ անդամ կը խաբուի : Եղբօրորդիս Արշակ , երբ քու դստերդ հասակն էր , նոյն ախտին հանդիպեցաւ , և արդարեւ շատ երկիւղ տուաւ մեզ . բայց և այնպէս գիտէք թէ հիմա ինչպէս առսցդ է և ուժեղ :

Քաջալերուէ , Տիկին , յուսա զաւկիդ մանկութեանը , առուգութեանը , և մանաւանդ 'ի բարութիւնն Աստուծոյ , որ չուզեր չարաչար հարուած տալ իբրեւ զքեզ կաթոգին , խնամոտ և բարեպաշտ մօր մը :

Մնաս բարով , սիրելի Տիկին , ընդունէ սիրոյ և համակրութեանս վկայութիւնը , և գիտցիր որ եմ

Քու հաւատարիմ բարեկամդ  
(Թուական)

Ա. Ա.

66. Միհրարական նամակ առ բարեկամ ոք որոյ տուն և գոյք այրած են Բերայի հըրդեհին :

Աղնիւ բարեկամ,

Ձեր վրայ յանկարծ եկող սոսկալի արկածին բօթը հասաւ ականջիս , և յապուշ հարայ : Սակայն կը յուսամ թէ տիկին մօրդ յուսահատութիւնը ստուարացնելով կը պատմէ պատահարը : Ի՞նչ , տուն , խանութ , կահ , կարասի , արկլ , ստակ՝ ամենը միանդամայն մոխիր դարձան այդ սոսկալի հրդեհին : Բայց արկածը պատմուածին չսփ մեծ ալ ըլլայ , տակաւին շնորհակալ ըլլալու ենք Աստուծոյ որ ձեր , ձեր տիկինոջը և զաւկը ներուն կեանքը պահուեցաւ այն ահեղ հարուածէն որ , ինչպէս տիրութեամբ կը լսեմ , թերեւս մոխիր դարձուցած տուներուն չսփ ալ հոգիներ խանձող ըրաւ :

Այսպիսի հարուած մը արդարեւ ամենապինդ հոգիներն անդամ սարսելու բաւական է . բայց և այնպէս որչափ մեծ եւս է չարեքը , անդարմանելի չէ : Ամեն բան փոքր ՚ի շատէ տեղը կու գայ , բայց հոգին տեղը չի գար : Կորուսիք տուն տեղ , գոյք , հարստութիւն , բայց բարի համբաւը զօր

կը վայելէք՝ կայ և կը մնայ . մի մոռնաք ոք այս ալ ստացուած է զոր ձեր բոլոր կենացը մէջ աճեցուցիք , և ոք միշտ պիտի աղատէ ձեզ : Ազգական , բարեկամ , քաղաքացի , յաճախորդ , ամենքն ալ ոչ ապաքէն վկայ են ձեր լաւութեանը , և պատրաստ ձեզ մսիթարելու և օգնելու :

Ապա իսկ և իսկ մ'երթաքյուսահատութեան որ միշտ վաստ խորհրդական է . այլ ձեզ զարնող խիստ հարուածին դէմ դրէք այն զօրութիւնը զօր ամեն հանճարեղ մարդ , ամեն առաքինի անձ և քաջ ոգի պարտի ունել յանձին :

Մեզի եկէք , սիրելի բարեկամ , եկէք իբրեւ մտերիմ ամենայն վստահութեամբ . միշտ բայց մանաւանդ այսպիսի գիպուածի մէջ մեր սիրտերն ու քսակլը բաց են ձեզի :

Մնաք բարով , սիրելիքս , մի կարի հոգայք . հաւատացէք համակրութեանս և անյլայլի սիրոյս :

Լաւագոյն բարեկամդ

(Թ. Ա. Ա. Ա.)

Ա. Ա.

67. Միսիրարական նամակ առ պատաճի  
ուն որ հիշանդոքեան պատճառաց չէ կա-  
րացեալ առնուշ առաջին մրցանակը :

Սիրելի Գառնիկ ,

Գիտեմ, շատ տիսուր ես որ ձեր գպրու-  
յին պարգեւաբաշխութեան օրը չկըցար առ-  
նուլ առաջին մրցանակը , որուն իրաւամբ  
կը սպասէիր : Բարեբախտ ախոյանդ շատ քիչ  
առաւելութեամբ քան զքեզ տարաւ մրցա-  
նակը , և ի՞նչ պատճառաւ : Այն դժբախտ  
հարբիսին պատճառաւ որ ստիպեց զքեզ  
քննութեան մօտ քանի մը օր անկողինը մնալ :

Արդարեւ բաւական մեծ միսիթարու-  
թիւն է քեզ , որ հարկը կամ բռնի դէպք  
մը առանց քու յանցանացդ զրկեց զքեզ  
յաղթանակէն : Ծնող.քդ և բարեկամներդ  
քաջ գիտեն որ այն մրցանակը քեզի անկ էր ,  
և կրնամ ըսել թէ վեցամսեայ անդուլ փու-  
թով և աշխատութեամբ արդէն գրեթէ  
ստացած էիր զայն , քո էր պասակը , դմնեայ  
բախտը խլեց զայն քու ձեռքէդ :

Միսիթարուէ ուրեմն , սիրելի Գառնիկ ,  
և գիտցիր որ դուն մեր առջեւ բոլոր քու  
ընկերացդ մէջ առաջինն ես ոչ միայն ուս-  
ման և փութոյ ; այլ և բարի վարուց կող-  
մանէ : Մնաս բարով , սիրելի , քանի մը օր

միայն . քանզի կը յուսամ տեսնել զքեզ ընդ  
հուպ , և զուարձանալ ընդ քեզ այս պարա-  
պոյ ամսոյն մէջ :

Քու խանդակաթ բարեկամդ  
(Թուական) Ա. Ա.



68. Հանի մը կը միսիրարէ ընճայով իշր  
աղջիկ բուռը , որուն եղբայրը զիշերօրիկ  
դպրոց գացած է :

Սիրելի Մաքրիկ ,

Ես , հանիդ կը գրեմ քեզ այս թուղթը :  
Մի լար , որդեակ իմ . ահա արկղիկ մը լու-  
փաթթուած , կապուած և քաջ կնքուած ,  
որ կու գայ քեզ երկաթուղեաւ , և կը պաշ-  
քունակէ հազար մանր մունը բաներ քեզ՝ի  
միսիթարութիւն որուն արդարեւ կարօտ ես  
այժմ :

Կարծեմ թէ բաւական տրտում ես եղա-  
քօրդ գիշերօթիկ դպրոց երթալուն համար :  
Մինչեւ ցարդ քըյր եղբայր բաժնուած չէիք  
իրարմէ , մէկտեղ կ'աշխատէիք , մէկտեղ կը  
խօսէիք , միշտ կը խաղայիք մէկտեղ , եր-  
բեմն փոքրիկ կոխւներ ալ կ'ընէիք , բայց  
միշտ կը հաշտուէիք շուտով : Գիտեմ որ այս

բաժանումը ձեր երկուքին համար ալ ծանր  
է . բայց Աեպուհ ութ ու կէս տարին մը-  
տաւ , և ուսման սկսելու ժամանակ էր ,  
թերեւս քիչ մ'ալ անցաւ ժամանակը :

Մայրիկ ալ չէր ուզեր , գիտեմ , իւր  
սիրելի մանչէն հեռանալ . բայց անոր օդ-  
տին համար ըրտ այս մեծ զոհը : Ճշմարիտ  
մայրենի գութին անձնասէր չէ : Աղա պէտք  
է , հանձարեղ Մաքրիկ , որ դու ալ անձնուշ  
բաց և խոհեմ ըլլաս , և մանաւանդ աւելի  
գութ և ակնածութիւն ցուցնես սիրելի  
մօրդ , խորհելսվ որ անոր սիրտը հիմա ո՞ւ  
չափ յաւած է , որպէս զի քեւ միսիթար-  
ուի : Մինչեւ ցարդ նա քեզ կը միսիթարէր ,  
կը գգուէր , և ո՞ւչափ . հիմա գուն անոր  
պարտիս ընել այդ բաները : Կը տեսնե՞ս ,  
դուստր իմ , ի՞նչ մեծ վստահութիւն ունիմ  
քու վրադ , որ կը համարձակիմ մայրդ քու  
խնամոցդ յանձնել :

Սա ալ մոռնալու չես որ , այս բաժանու-  
մը քեզ և մօրդ երբեմն երբեմն քաղցր փո-  
խարէն մը պիտի շնորհէ : Աեպուհ պիտի  
գայ տեսնել ձեզ ամիսն երկու անդամ . մը  
տածէ , ի՞նչ երջանկութիւն քեզի համար՝  
թեւթեւի ձեմել պարտէզը կամ վերի պա-  
տըշդամին վրայ , երբեմն ալ դուրսը ծովե-  
զելքը , փոքրիկ սիրուն ուսանողի մը հետ

գեղեցիկ նշանազգեստով , մայրդ առջեւէն ,  
սպասաւորն ետեւէն :

Բայց և այնպէս քեզ սփոփելու համար  
տես ինչ բաներ խորհեցայ , Մաքրիկ : Կը  
զրկեմ քեզի այսօր երկաթուղեաւ , ինչպէս  
ըսի , արկղիկ մը լի այնպիսի բաներով որ ,  
կարծեմ , քու ձաշակիդ յարմար են : Նախ  
սիրուն փոքրիկ պարեգօտ մը վարդագոյն  
զոր Մարդարիտ ձեւեց քու վերջին կաղա-  
պարիդ վրայ և կարեց . և գիտես որ Մար-  
դարիտ ձեւի ու կարի կողմանէ միակ է :  
Երկրորդ՝ սեաւ եթենոսէ կարի տուփ մը , ո-  
րուն մէջ պիտի գտնես ինչ որ ժիր աղջկան  
մը հարկաւոր է : մատնոց , մլրատ , կոճկիչ ,  
և որ ի կարգին , բոլորը գեղեցիկ փայլուն  
պողպատէ : Եւ որպէս զի ասոնք արկղին մէջ  
չերերային , հաւդ որ միշտ քեզ կը խորհի՛  
բոլոր այս բաներուն տակը , վրան , քովերը  
դրաւ մաքուր բարտկ թուղթերու մէջ  
պլրած շաբարեղէններ : Երբ արկղը բանաս ,  
պիտի տեսնես այս սպիտակ թուղթէ ծրար-  
ներուն մէջտեղ աստ անդ գեղին նարինջ և  
կարմիր խնձոր :

Բոլոր այս բաները կը զրկենք մեր սիրե-  
մի Մաքրիան , քանզի գիտենք որ Մաքրիկ  
բարի և մոտավարժ է . և կ'ուզենք որ մեք  
այս ընծան փոխարէն մը ըլլայ այն սիրոյն և


«ԱՐԱԿԱՐԱՇ»

յարգանաց զոր Մաքրիկ կը ցուցնէ միշտ իւր  
ծերունի հաւուն և սիրելի հանւոյն :

(Թ. Ա. Ա. Ա. Ա.)

Սիրելի հանիդ

Ա. Ա.



69. Միկրարուրեան նամակ առ քեռորդի  
որ ճանր դրամական կորոստ մ'ըրած է :

Սիրելի ,

Մայրդ կ'իմացնէ ինձ թէ մեծ վարան  
ման և անձկութեան մէջ ես Հովուեանց  
տանը ձախորդ մանկութեանը պատճառ  
ռաւ : Այս պատահարը , կ'ըսէ մայրդ , այն  
պէս ծանր վնաս հասոյց քու ստացուածոցդ  
և ապագայիդ , մինչեւ խորհել քեզ թէ  
այսպիսի հարուած մը ընդունելէ ետքը  
սթափել այլեւս անհնար է քեզ : Կը փափա-  
քէի , եթէ մարթ էր , թռչելով քովդ գալ  
ցաւակցութիւնս յայտնելու համար քեզ ,  
միանգամայն հասկցնելու համար թէ քու  
վարկդ , և առուտուրի մէջ պատիւդ բնաւ  
չնախութիւն այսու արկածիւ . կրնաս միշտ  
քու ժրութեամբդ , չափաւորութեամբ և  
ուղղութեամբդ շահիլ քեզ ուրիշներուն  
վատահութիւնն ու օգնութիւնը :

Քաջալերուէ , սիրելի , և շուտով պիտի


տեսնես որ շիտակ մարդուն կը հասնի նը-  
պաստը երբ և ուստի որ չի յուսար :

Ողջ լեռ . կը յուսամ տեսնել քեզ ՚ի մօ-  
տոյ , և խորհիլ ՚ի միասին ինչ որ արժան է ,

(Թ. Ա. Ա. Ա. Ա. Ա.)

Մօրեղբայրդ

Ա. Ա.



70. Շնորհակալութեան նամակներ

Դ. Տ. Տ. Պ. Ա. Թ. Ի. Խ.

Շնորհակալութեան նամակի՞՝ մը մէջ մեզի  
եղած ծառայութեան մը , կամ ընդունուած  
երախտեաց կամ շնորհաց փոխարէն կը յայտ-  
նենք մեր երախտագիտութիւնը : Այս տե-  
սակ նամակներու մէջ կրնանք ըսել թէ մեծ  
պարտաւորութեան ներքեւ ենք եղած շնոր-  
հաց կամ բարեաց փոխարէն , և թէ պատ-  
րաստ ենք ամեն կերպով մեր շնորհազարտ  
ըլլակը ցուցնել , եթէ ծառայութիւն մը ը-  
նելու առիթը պատահի . բայց պէտք չէ  
ըսել թէ եղածին փոխարէնը կ'ուղենք հա-  
տուցանել , ապա թէ ոչ կրնայ հասկցուիլ  
թէ մենք զմեզ պարտաւորութեան տակ ընկ-  
ճած կը համարինք և կ'ուղենք զայն իբր բեռ  
նետել մեր վրայէն :



74. Եղած ծառայութեան մը համար  
ոշնորհակալութիւնն :

Տէր ,

Ծնորհակալութիւնն արդարեւ մարդկային  
գդացմանց գեղեցիկն է , և հրէշ է ըստ իս  
ոչ այն մարդը միայն որ փոխանակ երախտեաց  
ապախտիք կը հատուցանէ , հապա նաև ան  
որ ինք զինք շնորհապարտ չուզեր ճանչնալ  
իւր բարերարին : Զենէ այս մեծ ծառայու-  
թիւնն ընդունելէն ետքը , բարերար տէր ,  
ապերախտ գտնուելու խորհուրդը բոլորո-  
վին հեռի է ինէ . կը վախնամ մանաւանդ-  
թէ գուցէ երբէք ըստ արժանւոյն չկարե-  
նամ յայտնել իմ խորին շնորհակալութիւնս ,  
թէ պէտքիսեմ թէ ձեզ բարերարելու մը-  
ղողը ձեր սրտին բնածին բարութիւնն է մա-  
նաւանդ քան ամենադոյզն փոխարէն մը ըն-  
դունելու ակնկալութիւնը : Զիարդ և իցէ ,  
չեմ կարծեր թէ շնորհապարտ սրտի մը ա-  
պացցցը կը մերժէք ընդունիլ , այնպիսի ան-  
ձի մը մանաւանդ որ իրեն երջանկութիւն  
և մեծ ուրախութիւն կը համարի անձնա-  
նուեր ըլլալ ձեզ : Այս գդացմամբ գրելով  
նամակս , կը յուսամ , Տէր , թէ պիտի հա-  
ճիք պատեհութիւն շնորհել ինձ ամենա-

խոնարհ հպատակութիւնս և ձեզի ծառա-  
յելու եռանդս արդեամբ ցուցնելու :

Խորին յարգանաց և սիրոց զգացմամբ  
կը խոստովանիմ զիս , Տէր ,

Զեր շնորհապարտ ծառան

(Թուական)

Ա. Ա.

72. Պաշտօնի մը հասնող մը նոյն պաշտօնն  
ընդունել տուրողին շնորհակալ կ'լրայ :

Տէր ,

Սովորաբար կ'ըսուի թէ ամեն մարդ մաս-  
նաւոր ձիբքով կամ յատկութեամբ կամ ա-  
ռաքինութեամբ աշխարհք կու գայ : Եթէ  
այս խօսքը ճշմարիտ է , կը պարտաւորիմ ը-  
սել թէ բնութեան ձեզի տուած ձիբքերէն  
մէկը , թէրևս գլխաւորը , և անշուշտ ամե-  
նէն գեղեցիկն է բարերարելու առաքինու-  
թիւնը : Զեր այս առաքինութիւնը ճանչնա-  
լու և հռչակելու համար ուրիշի վկայու-  
թեանը կարօտ չեմ . ասոր առաջին վկայն  
ես եմ : Բազմապատիկ երախտեաց համար  
զորս ձենէ ընդունած եմ՝ ըստ բաւականին  
շնորհակալ ըլլալու պատեհութիւն չունե-  
ցած՝ նորէն պարտաւոր ըրէք զիս , տէր ,  
ձեր հզօր միջնորդութեամբը զիս (այս ինչ)  
պաշտօնին հասցնելով : Այս շնորհքին հա-

մար պարտաւորութիւնս կրկին է , նախ եւ բախտագէտ ըլլալ ձեղ , և երկրորդ՝ այն պիսի հաւատարմութեամբ կատարել պաշտօնիս պարտաւորութիւնները , որ պատճառը չտամ ձեղ ամէնալու և խորհելու թէ անարժանի մը համար և ընդունայն արկիք ՚ի կիր ձեր պաշտպանութիւնը : Կը խոստովան նիմ , Տէր իմ , որ այս պաշտպանութիւնն ինծի վայելել տուողը ոչ իմ մէկ արժանաւորութիւնս է , այլ այն ձրի բարերարութիւնը , զոր չեմ գիտեր ինչ տեսնելով յիս , առատօրէն կը մատուցանէք : Բայց վստահ Երուք , Տէր , որ կորդ երկիր մը չցանեցիք . այս սիրու որուն մէջ ձեր բարերարութեան սերմանքն ինկան՝ պիտի տայ , վստահ եմ յԱստուած , մշտնջենաւոր երախտագիտութեան անթառամ ծաղիկներ :

Ընդունեցէք , Տէր , խորին մեծարանաց հետ միանգամայն սիրոյ և հպատակութեանս հաւաստիքը :

Չեր ամենախոնարհ ծառան

(Յուստիան)

Ա. Ա.



73. Փոխ ստակ տոշող բարեկամի մը շնորհակալութեան նաևնակ կը գրուի :

Տէր ,

Հաճելով փոխ տալ ինծի այն գումարը որուն պէտք ունէի՝ այնպիսի շնորհը մը ըրեք զոր պիտի չմոռնամ երբէք : Գիտեմ թէ Ճշմարիտ վեհանձնութիւնը չքնաղ առաքիւնութիւն մըն է , և այս է պատճառը որ ձեր ինծի ըլլած բարերարութեան համար յան հունս երախտապարտ եմ : Չեր շնորհիւն է որ կարող եղայ առանց մեծ դժուարութեան գործերուս մէջ յաջողութիւն գտնել ուստի և կը խնդրեմ որ վստահ ըլլաք թէ երախտագէտ եմ ձեղ , և ամենեին չդանդաղիք , երբ որ կը կարծէք թէ կրնամ ձեզի ծառայութիւն մը ընել , հրամայել ինձ ինչ որ պարտիմ ընել : Այսուհետեւ ինծի համար չը կայ այնչափ մեծ ուրախութիւն մը , որչափ պատեհութիւն ունենալ ցուցնելու թէ շնորհապարտ և անձնանուէր եմ ձեղ :

Խորին յարգանօք եմ , Տէր ,

Չեր խոնարհ և հաւատարիմ

(Յուստիան)

ծառայն Ա. Ա.



74. Բժշկի մը կը դրկուի շնորհակալուքեան  
նաևնակ հանդերձ ընծայի՛ :

Տէր ,

Այն խնամքն ու սէրը որով զիս դարմա-  
նեցիք իմ վերջին հիւանդութեանս ատենը՝  
խորին շնորհակալութեան և անմոռաց յիշ-  
ման արժանի է : Զեր բարերարութեան փո-  
խարէն ընել անհնար է , քանզի ինչպէս որ  
քան զկեանս աւելի պատուական բան մը  
չկայ , նյոնպէս չկայ հատուցում մը որ կա-  
րենայ հաւասարել մեր կեանքը մեզի գրեթէ  
նորին պարգևողին երախտեացը : Կը խոս-  
տովանիմ . Տէր , որ ձեր ազատեալն եմ .  
դուք զիս ձեր ճարտարութեամբն ու ար-  
թուն զգուշութեամբը որպէս թէ ձեռքէս  
բռնելով ՚ի բաց տարիք մահուան վհէն որուն  
բերանը հասած և մէջը գահավէժ ըլլալէն  
մազիւ չափ հեռի էի : Այս մեծ ծառայու-  
թեան համար ձեզի ինչ որ ըրի՝ ոչինչ էր ,  
և ինչ որ ընեմ՝ ոչինչ պիտի ըլլայ : Բայց և  
այնպէս երախտագիտութիւնը ստիպեց զիս  
ձեզի դաշն ընծայ մը ընել իբրև յիշատակ  
շնորհակալու մտացու : Երկայն խորհելէն ետ-  
քը որոշեցի արկլ մը լի վիրաբուժական գոր-  
ծեօք նուէր ընել ձեզ , ուստի և յատուկ  
կերպով պատրաստել տուի բարիզու երևելի

արհեստուորաց մէկուն : Կը յուսամ , սի-  
րելի Տէր , որ հաճութեամբ կընդունիք  
դաշն ընծաս , և կը յիշէք զիս միշտ իբրեւ  
ձեր հաւատարիմ հիւանդ բարեկամը , որ  
միշտ կը խոստովանի զինք երախտապարու  
ծեղ :

Զեր անձնանուէր բարեկամը

(Թուական)

Ա. Ա.

75. Սան մը իր կնքահօրը բացակայութեան  
ատենն անոր տօնը շնորհաշորելուն հա-  
մար անկէ շնորհակալութեան նաևնակ կ'ըն-  
դունի :

Ուրախութեամբ լսեցի , սիրելի Միհրան ,  
որ անուանս օրը տուն գալով շքեղ փունջ  
մը բերած և գեղեցիկ բարեմաղթութիւն  
մը ըրած ես ինծի համար : Նատ կը ցաւիմ  
որ տունը չգտնուեցայ : Զիս այսպէս կաթոշ  
գին յիշելուդ համար շնորհակալ եմ , և  
քեզ չտեսնելս շատ տիսրեցոյց զիս , մանա-  
ւանդ որ քեզի ընծայ ընելու համար գունաչ  
որ պատկերներով զարդարուած Եղովեսո  
մը պատրաստած էի , միանդամայն այն նշա-  
նաւոր խաղալիկը զոր գուն շատ կը սիրես ,  
այն է “ մոգական լապտեր ” , կոչուած արկդ  
մը , որուն մէջ աշխարհիս հինգ մասերուն  
հետաքրքրական տեղերը կը ցուցուին :

Կը յուսամ սակացն որ բարի մայրդ աշաջիկայ կիրակի օր կը բերէ զբեղ գիւղ . քանզի անուանս տօնը կատարուած պիտի չհամարիմ մինչեւ որ քեզ չհամբուրեմ, սիւրելի փոքրիկ սանս, և չյայտնեմ բերնով շնորհակալութիւնս այն գեղեցիկ շնորհաւորութեան և չքնաղ փունջին համար զոր սիւրով ընդունեցայ իբրև քու կողմէդ ինձ մասուցուած սիրուն նուէր :

Կիրակի առաւատուն կը սպասեմ ձեղ կանուխ . արդէն պատրաստութիւն տեսած եմ քուռակներով մեծ անտառը զբօսանքի երթալու . իրիկուան ալ ուրիշ ուրախութիւն մը պիտի ունենանք :

Տուր ողջոյն իմ կողմանէ սիրելի մօրդ և երկու սիրուն քերցդ նուարդի և նազկան : Մնաս բարով, անձկալիդ Միհրան . կիրակին յիշէ . բայց կը խնդրեմ որ կանուխ ճամբայ ելլէք :

(Թուռական)

Վիքահայրդ  
Ա. Ա.

76. Ընկեր մը իշր բնկերին շնորհակալ կ'ըլայ անկէ ընդունած ընձային համար :

Սիրելիդ իմ,

Սրտանց շնորհակալ եմ քեզ որ Պոնտոսի եղեցն ըրած ճամբորդութեանդ մէջ զիս

խորհեցար : Խեցեմորթներն ու զարմանալի ծովային տունկերը զորս զրկեցիր ինձ՝ պանչ չեն, և պատուական զարդ մը եղան փոքրիկ թանգարանիս մէջ, ուր զանոնք դրի ուրիշ չքնաղ իրաց հետ զորս այլ և այլ տեղերէ հաւաքած եմ :

Քու այս պատուական ընծան ընդունած ատենս, հայրս որ եռանդ Քիոսէն հոս հասաւ՝ քեզի զրկելու համար կը կապէր առասանօք ծրար մը զոր երկուշաբթի կ'ընդունիս : Ծրարին մէջ պիտի գտնես քանի մը տուփ շաբարելին և բանդակ (րէշէլ) մօրկանդ և քեզի համար : Ասոնք բերած էր հայրիկս Քիոսէն իբրև այն երկրին արդիւնքը, և շատ ուրախ է որ ձեզի կը զրկէ : Ամսոյս վերջը կը սպասենք ձեղ հոս : Բաւական բերկրութիւն պիտի ըլլաց ինձ տեսնել քեզ և խօսիլ մեր հին գպրոցական կենաց վրայ :

Մատո ողջոյնս սիրելի մօրդ, և մի ուշանաք :

(Թուռական)

Մաերիմ ընկերդ

Ա. Ա.

77. Պատանի մը առ մօրաքոյր իշր :

Սիրելի մօրաքոյրս,

Տիրան քու կողմանէդ բերաւ ինձ մեծ

կողով մի բալիւք , հաղարջիւք , ծիրանօք և  
ուրիշ պէսպէս համեղ մրդօք լի : Խսկցն տե՛  
զաւորեցի զանոնք ինչպէս որ դուն կը պատ-  
ռւիրէիր , այսինքն՝ տալ մանուկ ընկերացս ,  
և ասկա նոտայ գրել .քեզ չնորհակալ ըլլալու  
համար որ զիս յիշեցիր զրկելով ինձ այնպիսի  
համեղ բաներ :

Արդարեւ , սիրելի մօրաքոյրս , խմաժա-  
նաւորութենէս շատ աւելի ազնիւ և ներսղ  
ես գէպ առ իս .քանզի քու պայմանդ ինձի  
հետ էր՝ պարտէզիդ պատուղներէն զրկել ինձ  
նուեր , եթէ դպրոցիս եռամսեայ քննու-  
թեան առաջին մրցանակն առնուի , բայց  
հազիւ կարացի երրորդ մրցանակին հասնիլ ,  
թէպէտ շատ աշխատեցայ . ապա քու կող-  
մանէդ մեծ չնորհք է զրկել ինձ այդպիսի  
ախորժահամ ընծաներ , որոց ամենեւին չէի  
ակնկալեր :

Քու այս մեծանձնութիւնդ , սիրելի մօ-  
րաքոյրս , զիս պարտաւոր կ'ընէ , գիտեմ ,  
փոխարէն մատուցանել ջանք և յառաջա-  
դիմութիւն , ուստի և կը խոստանամ կըրկ-  
նապատկել փոյթս ՚ի հատուցումն պարտուցս  
որ առ քեզ :

Մնաս բարեաւ , սիրելի մօրաքոյրս , կի-  
րակի կը տեսնենք իրար , կը յուսսամ :

(Թ. ստուկոն)

Հնազանդ քեռողութիդ

Ա. Ա.

78. Ներում խնդրելու կամ չքմեղուքեան  
նամակներ :

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ


Ա.յս տեսակ նամակներ կը գրուին , երբ  
մարդ իրօք յանցաւոր է կամ յանիրաւի  
յանցաւոր կարծուած է : Ա.յս տեսակին կը  
վերաբերին նաև այն նամակները որովք նե-  
րում կը խնդրուի , երբ խոստում մը կատա-  
րել անհնար կ'ըլլայ իրաւացի պատճառի մը  
համար :

Ներում խնդրելու նամակներու մէջ գը-  
րողը պարտի գգուշանալ որ իբր թէ բռնա-  
դատուած չ'երեւի . և պարտի ցուցնել թէ  
պատրաստ է եղած անիրաւութեան փոխա-  
րէնն ընելու , և թէ կը բաղձայ բարեկա-  
մութեան նորոգուելուն :

Սովորութիւն է այս տեսակ նամակնե-  
րու մէջ՝ յանցանքը խոստովանելին եաքը  
գիմել վշտացելոյն ներսղամտութեանը . եր-  
բեմն նաև ինքնինք մեղադրել :

Ներում կը խնդրուի նաև շատ անդամ ,  
երբ նամակ կամ նամակի պատասխան կ'ու-  
շացուի : Բայց այս պատճառաւ խնդրուելու  
ներումը յանցանաց համար խնդրուած ներ-  
ման պէս խոնարհական ըլլալու չէ : Բաւա-

կան է ըսել թէ ինչ պատճառաւ յապաղուեցաւ, և ցաւ յայտնել յայն սակս . և եթէ լոկ առ զանցառութեան եղած է , պէտք է իր անհօգութիւնը կամ պղերդութիւնը խոստովանիլ , և խոստանալ առյապաշտագոյն ըլլալ :



79. Պատաճի մը իշր հաւել ներում կը խնդրէ դէմ 'ի նա յանդարար վարուելուն համար :

Սիրելի հաւս ,

Զեզ ութ օրէն պիտի տեսնեմ , բայց չեմ ուզեր որ այս ութ օրուան մէջ դուք անդէտ մնաք թէ որչափ զեզ և ապաշաւ է ինձ որ երէկ այնպէս յամառութեամբ և լրբօրէն վարուեցայ ձեր հետ : Ի դարձին մեր 'ի տուն , մայրս իմացուց ինձ թէ ի՞նչ մեծ յանցանք էր ինձ այնպէս թերի գըտնուիլ ակնածութեան և հնազանդութեան մէջ դէպ առ ձեզ : Կը զգամ , սիրելի հաւս , որ շատ անիրաւ եմ , և չափալանց պիտի ըլլար վիշտո , եթէ առանց ներում խնդրելու կայի մնայի : Բոլոր վստահութիւնս ձեր ներողամտութեան և սովորական բարութեան վրայ է :


Ուստի ներում կը խնդրեմ ձենէ , սիրելի

հաւս , լրբութեանս և խեռութեանս համար , և կ'աղաչեմ որ մօրաքեռս միջացաւ որ այս թուղթը ձեզի պիտի տայ՝ իմացնէք ինձի թէ կ'ուզէք ընդունիլ զղջումն և ներել ձեր հէք թոռին : Հաւատացէք , բարի հաւըս , որ այսուհետեւ պիտի ջանամ մոռցնէլ ձեզ այն ցաման և ստահակութեան շարժումը որոյ վասն ակնկոր եմ ձեր առ ջեւ :

Կիրակի , ինչպէս կը յուսամ , պիտի աճապարեմ գալ համբուրել ձեր աջը , և լսել ձեր բերնէն թէ ներած էք ձեր թոռին որ մեծարանք և խոնարհութեամբ ձեր օրհնութիւնը կը խնդրէ :

(Թագավորական)

Ա. Ա.



80. Վարժապետին դէմ բարկացող աշխակերու մը անկէ ներում կը խնդրէ :

Տէր .

Հաճեցէք որ ներում խնդրեմ ձենէ այն սրտնեղութեան համար որով յանցաւոր գըտնուեցայ դէպ 'ի ձեզ երէկ , մինչ արդարե հայրական և իրաւացի խրաներ կու տայիք ինձի : Որչափ կը խորհիմ այնպէս անարժան կերպով վարուիլս ձեզի պէս մեծարոյ անձի մը հետ , այնչափ ամօթը զիս կը պաշարէ , և կը նստիմ կոր 'ի գլուխ :

Գիտեմ որ այս


անձկութենէս պիտի չաղատիմ, բայց եթէ  
դիմելով ձեր ներողամտութեանն ու բա-  
րութեանը որոց ապացոյցը շատ անդամ տը-  
ւած էք ինձ :

Կը խնդրեմ ուրեմն, Տէր, Եղբօրս միւ-  
ջոցաւ որ այս թուղթը ձեզի պիտի տայ՝ ի-  
մացնէք ինձի թէ պիտի հաճիք արդեօք շը-  
նորհել ներումը զըր կը խնդրեմ այսօր ձենէ,  
և ընդունել խոստումն այսուհետեւ ջանալու  
արժանի ըլլալ ձեր ներողութեանը :

Ձեզ մեծարող և յարդող  
աշակերտ ձեր

(Թագավորական)

Ա. Ա.



84. Փոխ առնուած գիրքը ետ դարձնելու  
ակամայ յապաղող մը ներում կը խնդրէ իր  
բարեկամիկ :

Միրելիդ Սուրէն .

Շատ զարմացայ, նա մանաւանդ նեղա-  
ցայ յոյժ, երբ գեղէն դառնալով գրասե-  
ղանիս վրայ գտայ քենէ գրուած փոքրիկ նա-  
մակ մը, որով կը խնդրես Աշխարհագրու-  
թեան բառարանն ու Ա.տլասը զրս քանի մը  
օրուան համար միայն փոխ առած էի քենէ :

Երբ ծովու բաղնիքը պիտի երթայի, այն  
երկու գիրքը ծրարելով և կապելով յանձ-

նեցի ընկերիս Աշոտոյ՝ աղաչելով որ զանոնք  
իակոյն քեզի գրկէ . Աշոտ՝ առ որ նամակդ  
առնելուս պէս գացի հարցունել, հանդար-  
տութեամբ պատասխանեց ինձի թէ, խոր-  
հելով որ պարապոյ (վաքանսի) ժամանակը  
զբոսանաց ժամանակ է և ոչ ընթերցման,  
լաւ համարեցաւ չըրկել քեզի յիշեալ գըր-  
եանքն, և թէ ասով կարծեց ծառայութիւն  
մը ընել՝ առիթ չտալով քեզ որ կարդալու  
զբաղելով զբոսանքէ զրկուիս : Մեծասիւս մե-  
ղարբեցի զիս, սիրելիդ Սուրէն, այսպիսի  
յանձնարարութիւն մը տալուս համար մեր  
յոյլ և թոյլ Աշոտոյ, որ աշխարհ իւր կանդ-  
նովը կը չափէ :

Զիարդ և իցէ, իսկոյն առի գրոց ծրարը  
որ կը կենար այնպէս՝ ինչպէս որ պահած էի,  
առանց շատ յանդիմանելու մեր խոհեմ բա-  
րեկամը, որ իւր գաղափարովն արդարեւ ծա-  
ռայութիւն մը ըրած կը կարծէ :

Շատ կը ցաւիմ, սիրելիս, այս սխալման  
վրայ, և կը խնդրեմ որ ներես, քանզի գի-  
տեմ որ իրաւամբ զիս պիտի մեղադրես այն-  
պիսի ուշիմ և խոհեմ գործակալ մը ընտրե-  
լուս համար :

Հաւատարիմ բարեկամդ

(Թագավորական)

Նշան Հովուեսն



82. Երեւելի պաշտպանի մը նաևակ գրել ուշացնող մը ներում կը խմերէ :

Տէր ,

Երկայն ատեն է որ ձեզի գրած չեմ , և Եթէ ձեր ներողամոռութիւնը չգիտնայի , կարծեմ պիտի չհամարձակէի յիշեցնել զիս ձեզ . բայց խիթքս , մանաւանդ թէ սիրտս , այնպէս դաւն կերպով կը ստդտանէ զիս իբշ ըև յանցաւոր զանցառու , որ կ'իշխեմ աշւասիկ ըսել ձեզ , թէ երբէք չդադարեցայ խորհիլ ձեր վրայ , և կենդանի պահել յիշողութեանս մէջ երախտիքը զոր ըրեք ինձ երբ որ պէտք ունեցայ ձեռնտուութեան :

Ներեցէք ուրեմն , Տէր , կ'աղաշեմ այս լոռութիւնը զոր աւելի կանուխ կ'ուզէի լուծձել , և հաւատացէք որ այն անթիւ բարեաց համար որովք լցէք զիս՝ միշտ միւնցն շնորհակալութիւնն ունիմ սրտիս մէջ , և սեռն սիրոյ միւնցն զգացմունքը զոր ազդած են ինձ ձեր անդադար խնամքն և հայրական գորովք վասն իմ :

Հաճեցէք ուրեմն , Տէր , երկտող գըրուած մը թուցունել ինձ յորմէ հասկնամթէ զիս առանց հարցուփորձի դատապարտած չէք , և թէ տակաւին արժանի կը համարէք զիս ձեր պաշտպանութեանը : Գիտէք

որ ըստ կարի ջանացած եմ ձգել յիս ձեր յարդանքը , և չամցնել ձեզ : Տարի մը առաջ երկրորդ քարտուղարի պաշտօնիւ Եւրոպական Տաճկաստանի երկաթուղեաց գըրագորութեան դիւանը մտնելս ո՞չ ապաքէն ձեր միջնորդութեամբն եղաւ . նոյնակէս ՚ի շնորհս ձեր էր որ դիւանին տնօրէնը գոհ ըլլալով ինէ աւելցուց ամսականս այնչափ որչափ չորս տարուանն ծառայութենէ ետքը հաղիւ կրնայի ակնունել : Հիմա առաջին քարտուղար եմ , և ամսականս 3500 ֆրանքի ելաւ : Ահաւասիկ , Տէր , յաջող կացութիւնն մը զոր ձեր ձեռքէն ընդունած կը համարիմ : Ընդունեցէք ուրեմն նորէն շնորհակալութիւնը , և ծաներուք զիս :

Ձեր շնորհապարտ և անձնուէր  
(Թագավորական) ծառան Ա. Ա.

83. Վշտացեալ բարեկամներէ ներում խրնիդրելու նաևնակ :

Տիկին .

Երբ երէկ իրիկուն ձեզի հրաժարական ողջոնս տալրու եկայ , ձեր ընդունելութիւնը շատ ցուրտ թուեցաւ ինձ , ուր առաջ այնշափ չերմութեամբ և զուարթութեամբ կ'ընդունէք զիս , մինչեւ սքանչանալ ինձ :

Երկար խորհեցայ և տակաւին կը խորհմ, Տիկին, թէ ինչ պատճառ կը նար ունենալ այս յանկարծ փոփոխութիւնը որ մեծ կակիծ տուաւ ինձ, ինձ՝ որ այսչափ տարիներէ հետէ այնպէս անձնանուէր և հաւատարիմ գտնուած եմ ձեր պատուական դերդաստանին :

Եթէ արդարև դժբախտաբար ձեր աչքէն ինկայ, գէթ հաճեցէք, Տիկին, կ'աղաչեմ, իմացունել ինձ յանցանքս և բերել զիս ուղղորդ ճամբան : Թող չվարանի ձեր անկեղծութիւնն ու բարեկամութիւնը շետակ ըսել ինձ ամեն բան . ամօթով և խոնարհութեամբ պիտի լսեմ յանցանքս : Ես ինքնին շատ խորհելէ ետքը, սակաւ ինչ գուշակեցի ձեր ինէ ուժանալուն պատճառը . և եթէ կարծիք Ճշմարիտ է, հաւատոցէք, Տիկին, որ ակամայ և առ տկարութեան մեղայ : Կը թուի ինձ թէ ձեր մեծարոյ հօրը հետ մեր վերջին վիճաբանութեան մէջ կարի ջերմութեամբ խօսեցայ, և այնպէս յամառութեամբ՝ որ այնպիսի պատկառելի ծերունւոյ մը վայելուչ եղած ակնածութեան սահմանն անցաւ :

Եթէ այս է ձեր վշտանալուն բուն պատճառը, կը խնդրեմ որ իմացունէք ինձ . յայնժամ անտարակոյս պիտի գամ անձամբ նե-

րումն խնդրել յազնիւ ծերունւոյն, թէ գիտնամ թէ ձեր բարեկամութիւնը նորէն ստանալու բախտը պիտի չունենամ յանիտեան : Հաւատացէք, Տիկին, որ, եթէ կորսընցնեմ իսպատ ձեր գերդաստանին բարեկամութիւնը զոր կը սիրեմ և կը պատուեմ, յարդանքս մազիւ չափ պիտի չպակսի երբէք : Հաճեցէք, Տիկին, ընդունել մեծարանացս հաւաստիքը :

Ձեր խոնարհ ծառան  
(Թուագիտ)

Ա. Ա.

84. Ուն առ բժիշկ իշր :

Տէր բժիշկ .

Փութացէք կ'աղաւեմ, գալ մեր տունը՝ գարմաննելու համար պարտիզանիս որդին որ սանդղէ մը վար ինկաւ, և, ինչպէս կարծեմ, ճանը կերպով վնասուած է, քանզի անզգայ կը պառկի : Յարդանօք կ'ողջունեմ ձեզ, Տէր, աղաւելով դարձեալ որ արագ համնիք յօդնութիւն մեր թշուառ վիրաւորելոյն որ ձեր ճարտար խնամոցը կարուտ է :

Ձեր հնաղանդ ծառան  
(Թուագիտ)

Ա. Ա.

85. Խնդրուածոյ , պահանջման , յանձնաւուրեան և մերժման նամակներ :

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Խնդրուածոյ նամակի մը գլխաւոր յառկութիւնն է համեստութիւն : Ոչ ամբարտաւանութեամբ պահանջելու է , ոչ ալ նըւաստ կերպով աղաչելու է : Դարձեալ պէտք չէ որ գրողն իւր արժանիքն յառաջ բերէ , որպէս թէ վարձատրութիւն կամ իրաւունք պահանջելու պէս , գուցէ զայրացնէ փոխանակ դրաւելու այն անձին սիրտը առ որ կուզզէ իւր խնդրուածը :

Պահանջման նամակ մը կրնայ հրամայական , նաև յանդիմանական ըլլալ , եթէ եղած անիրաւութիւնը չարտկամութեամբ եղած չէ այլ սխալմամբ կամ յանգէտս : Այս վերջին դէպէին մէջ պահանջումը պարտի մեղմ և չափաւորութեամբ ըլլալ , դիմելով այն անձին արդարասիրութեանը որմէ իրաւունք կամ փոխարինութիւնն էր պահանջուի : Կայն մեղմութիւնը կամ դդ օնութիւնը կը պահանջուի : Երբ ստորակարգեալէ մը գանգատաս կ'ընենք անոր գլխաւորին : Վերջապէս խոհականութիւնը և պարագաներուն ուշացրութիւնը որև իցէ կանոնէ աւելի է :

Յանձնառութեան նամակով մէկուն ծառայութիւն մը ընել կ'առաջարկենք՝ ան մենէ խնդրելէն առաջ : Այսպիսի նամակները պարտին վեհանձնութեամբ գրուիլ , առանց ամցնելու որուն կ'առաջարկենք մեր ծառայութիւնը : Զգուշանալի է այնպէս չերեւացնել որպէս թէ նա առ որ կ'առաջարկենք մեր ծառայութիւնը՝ անօդնական մնացածէ , և մենէ ուրիշ ապաւէն չունի : Վերջապէս մեր ընելու շնորհքն իբր ծառայութիւն մը առաջարկելու ենք , և ոչ իբր ոզորմութիւն . միով բանիւ պարտինք թեթև ցուցնել մեր ընելու ծառայութեան արժեքը , եթէ մեր դիտաւորութիւնը ճշմարտի բարեկամութիւն մը ընել է , ապա թէ ոչ կը ստիպէնք մեր դիմացինը մերժել մեր առաջարկութիւնը :

Խնդրուածոյ կամ յանձնառութեան նամակներու երկու կերպով կրնայ պատասխան տրուիլ , ընդունելով և մերժելով : Եթէ կ'ընդունիս խնդրուածը , ցոյց թէ որչափ ուրախ ես բարեկամիդ հաճութիւն կամ ծառայութիւն մը ընելուդ համար : Եթէ առաջարկութիւն մը կ'ընդունիս , յայտնէ շնորհակալութիւնդ թէ՝ առաջարկուած ծառայութիւն և թէ՝ առաջարկութեան եղանակին համար : Իսկ եթէ կը մերժես , նայէ

որ մերժումդ վիրաւորիչ և վշտացուցիչ  
չըլլայ :

— առաջ —

86. Ունի կը յանձնէ քարեկամի մը խնամոց  
իշր որդին որ բարիզ կ'երբայ ուսման հա-  
մար :

Տէր ,

Թէպէտ մեր յարաբերութիւնը լոկ ա-  
ռեւտրական է, չեմ կարծեր թէ մեր մէջտեղ  
եղած տասնամեայ մտերիմ թղթակցութեան  
սահմանէն դուքս ելած կ'ըլլամ, եթէ ձենէ  
ծառայութիւն մը խնդրեմ որ մեր սովորա-  
կան գործերէն տարբեր, և բոլորովին անձ-  
նական է :

Որդիս առաջիկայ եօթնեկիս մէջ ճամ-  
բայ պիտի ելլէ բարիզ երթալու անտառա-  
գիտութեան ուսման վերջին քննութիւնը  
կատարելու : Վստահ եմ անոր զգօնութեան  
և զգ աստութեանը վրայ, թէպէտ ութեւ-  
տասնամեայ է : Բայց ես պատանւոյ մը բա-  
րիզ բնակելէն կը կատկածիմ, մանաւանդ որ  
որդիս Գալուստ պիտի ստիպուի հոն կենցա-  
զավարիլ իրեն հասակակից պատանեաց հետ  
որոնց մեծ մասը ցոփ և անառակ են : Այս  
պատճառաւ անոր հոն մինակ գտնուիլն ար-  
դէն մեծ անձկութիւն է ինձ :

Արդեօք չեմ կրնար, Տէր, ձեր բարե-  
սիրութենէն յուսալ որ այս պատանին ձեր  
քով ընդունիք, անոր իմաստուն խրատներ  
տաք և զգուշացնէք վտանգներէն որ այս  
կարճ միջոցին մէջ կրնան անոր պատահիլ  
այնպիսի ցոփ և զեղծ մայրաքաղքի մը մէջ,  
մանաւանդ որ մեր պատանին դեռ անփորձ  
և դիւրահաւան է, և ամենեւին խորագի-  
տութիւն չունի :

Հաճեցէք ուրեմն, Տէր, երախտապարտ  
ընել զիս՝ հրահանգելով որդիս թէ ինչպէս  
պիտի վարուի, և եթէ չէք կարող զնա 'ի  
տուն ձեր ընդունիլ, դէթ յարմար պան-  
դոկ մը դնել, և իւր ծախուցը համար պէտք  
եղած գրամը չափով տալ անոր . գիտեմ որ  
հլութեամբ պիտի անսայ ձեզ :

Հիմա կը մնայ ինծի ներում խնդրել ձենէ  
այս համարձակութեան համար, որ թերեւս  
պախարակելի թուի ձեզ . բայց գուք ալ,  
Տէր, հայր էք, և կրնաք հասկնալ հօր մը  
գորովական հոգն ու երկիւզը նորահաս որ-  
դւոյ մը համար որ կրնամ ըսել թէ տակու-  
ւին անարատ է :


Եթէ ինդրուածո ընդունելի ըլլալով ձեզ  
յաջող պատասխան ընդունիմ, իսկոյն կը ծա-  
նուցանեմ ձեզ հեռագրով պատանւոյն ասկէ  
մեկնելուն և հոն համնելուն օրն ու ժամը :

Հաճեցէք ընդունիլ, Տէր, սիրալի ողջնա, և համարեցէք զիս

Զեր անձնանուէր ծառան

(Թագավոր)

Ա. Ա.



87. Դասատոշէ մը կը խնդրուի տոշնը դաս  
տալ տղու մը :

Տէր,

Մէրն ու ինամքը զոր կը ցուցնէիք միշտ  
իմ որդւոյս մինչ ձեր դասին մէջն էր՝ հա-  
մարձակութիւն կուտան ինծի մասուցանել  
ձեզ աղաչանէք մը զոր կը յուսամ թէ կ'ըն-  
դունիք մարդասիրաբար : Կը ինդրեմ որ  
տուն գալով շարունակէք ձեր դասատուու-  
թիւնը որմէ կը յուսամ թէ մէծ օգուտ պի-  
տի քաղէ տղան : Գիտէք, Տէր, որ Երուան-  
դիս առողջութիւնը, թէպէտ բոլորովին գէշ  
չէ, չի ներեր անոր այլ եւս վարժարանին  
մէջ մնալ : Ըստ խորհրդոյ բժշկին ստիպուե-  
ցայ տղան դպրոցէն առնուլ տուն՝ լաւ հա-  
մարելով զրկել զնոս առժամանակ մի դպրո-  
ցական հրահանդութենէն : Բայց և այնպէս  
կը տեսնեմ որ անոր տկարութիւնն այնչափ  
չէ որ բոլորովին դադրի աշխատելէ գէթ  
առտնին դասառութեամբ :

Կը յուսամ, Տէր, թէ պիտի հաճիք ձեր  
պարապոյ ժամանակէն ժամ մը կամ երկուք  
գողնալով զանոնք նուիրել իմ որդւոյս կը-  
թութեանը : Պատանեակն, ինչպէն կը տես-  
նեմ, շատ պէտք ունի աշխատելու, որպէս  
զի իւր մինչեւ ցարդ կրած աշխատութեան  
արդիւնքը կորուսանելով իսպառ ձեռնունայն  
չելլէ՝ իր դասակիցներէն բոլորովին ետ մը  
նալով :

Հաճեցէք, Տէր, իմացունելինձ թէ շաբ-  
թուն որ օրը և որ ժամ կընաք գալ տուն ա-  
ռանձին դամ տալու Երուանդիս, որ արդէն  
մէծ ուրախութիւն ունի խորհելով որ նորէն  
իւր սքանչելի ուսուցչին խնամքը պիտի վա-  
յելլէ :

Ընդունեցէք, Տէր, ձեզի անձնանուէր  
և երախտագէտ հօր մը և որդւոյ անկեղծ  
շնորհակալութիւնը :

Զեր հաւատարիմ բարեկամը

(Թագավոր)

Ա. Ա.



88. Պաշտօնատար մը ընկերութեան մը տր-  
աօրէնքն ամսական մը կանխիլ կ'ուզէ :

Տէր,

Այն քաղցր մարդասիրութիւնը որով սո-  
վոր էք ընդունել ձեզի ուղղուած աղաչանէ՝

կը յուսացնէ զիս թէ իմ աղերսս ալ զոր պիտի մատուցանեմ՝ լսելի պիտի ըլլայ ձեզի :

Հայրս որ, ինչպէս գիտէք, դոյզն թոշակով մը հրաժարած է զինուորական ծառայութենէ՝ կը գրէ ինձ իրեն օգնել այժմու դժուարին պարագային մէջ ուր կը գտնուի մօրս ծանր և երկայն հիւանդութեանը պատճառաւ : Մինչեւ ցարդ այս պատճառաւ ըրած ծախըն իր թեթև ամսականին չափէն շատ աւելի ըլլալով՝ անհնարին նեղութեան մէջ կը գտնուի :

Կրնամ արդեօք համարձակիլ, Տէր տնօրէն, աղաչելով զձեզ որ հրաման տաք ինձ ինդութել գանձապետէն վճարել ինձ կանխիկ հարիւր յիսուն ֆրանք՝ ՚ի հաշիւ ամսական ներուս : Այս շնորհքը զոր կը ինդութեմ ձենէն՝ ներկայ պարագայիս մէջ շատ երախտա պարս պիտի ընէ մեզ : Ներեցէք, Տէր, որ այսպէս կը համարձակիմ ձեզի դիմել ուղղակի . արդարե մեծ յանդունութիւն պիտի համարէի այսպէս ընել, եթէ չդիտնայի այն անսպառ մարդասիրութիւնը զոր ունիք ձեր պաշտօնատարաց վրայ :

Հաձեցէք, Տէր տնօրէն, ընդունել իմ խորին մեծարանացս հաւաստիքը :

Տէր ամենահնազանդ ծառան

(Թուական)

Ա. Ա.

89. Մայր մը ուզելով իշր որդին գիշերօրիկ դպրոց մը դնել՝ բարեկամէ մը խնդրէ գտնել յարմար դպրոց մը :

Տէր,

Դարձեալ կը գիմեմ այն անխօնջ բարեմիրութեան որոյ ապացոյցները տուած էք ինձ միշտ սիրով և անձնուրացութեամբ :

Փոքրիկ Տիրանս որ այս օրեւս եօմը տարեկան եղաւ՝ յարմար է հիմա, ինչպէս կը կարծեմ, աւելի հիմնական դաստիարակութիւն մը ընդունելու քան զոր ցարդ կ'ընդունէր իմ խնամոցս ներքեւ, և որ կը պարունակէր հասարակ ընթերցանութեան, գրութեան և քերականութեան պարզ ծանօթութիւնները : Հիմա կը փափաքիմ դնել տղան գիշերօթիկ դպրոց մը, քանզի կարծեմ թէ անոր հանձարն ու բերումը մշակութեան պատրաստ են, և ժամանակ է որ, ինչպէս կը տեսնէք, ճշմարիտ կը խօսիմ, ժամանակ է որ տղայութեան կարգէն և տընական փափիկութենէ դուրս ելլէ :

Հաձեցէք ուրեմն, Տէր, վինտուել անձամբ կամ բարեկամաց միջոցաւ ընտիր վարժարան մը, ուր կարող ըլլամ դնել վստահ հութեամբ Միհրանիկս : Այս մանուկը, ինչպէս ուրիշ ամեն տղայ որ գեռ մայրական

հսկողութենէ դուրս մնացած չէ՝ շատ ձաւ խող ունակութիւններ ունի. աշխատելու եռանդը շատ նուազ է, և սորվելու յօժառութիւնը՝ շատ հարեւանցի. Սակայն իմացողութիւնը հասուն է, և տեսակ մը նախանձ ունի աւելի բան գիտնալու քան զոր հիմա գիտէ:

Միով բանիւ, սիրելի Տէր, ջանացէք յարմար դպրոց մը գանել հէք որդւոյս որ բաւական երկիւղ ունի դպրոցական կենաց համար, կեանք մը որ արդարև բոլորովին նոր է անոր: Եւ ես արդէն վարանման մէջ եմ այս բաժանման համար, բայց մօր մը կեանքը ոչ ապաքէն անձնութացութեան կեանք է:

Այժմէն կրնաք վստահ ըլլալ, Տէր, որ մեծ պիտի ըլլաց երախտագիտութիւնս առ ձեզ այս կարեւոր օգնութեան համար զօր կը խնդրեմ ձենէ:

Ընդունեցէք, կ'աղաշէմ, սիրալիր ողջյուս:

Չեր անձնանուէր աղախինը

(Թուական)



90. Փոխ ստակ ուզող խարդախ վաձառականի մը կը զացուի ստակ տալ՝ խարդախուրիւնը երեսը տալով:

Տէր,

Հիմա անհնար է ինձ ձեր խնդրած վեց հազար ֆրանքի գումարը փոխ տալ ձեզ. ինչ պատրաստ դրամ որ կը գտնուէր քովս՝ բոլորը գործածեցի նոր ամուսնացեալ աղջկանս օժտին:

Բաց ասոմի, ներեցէք որ համարձակ ըստեմ ձեզ, (քանզի գիտէք որ ուբ որ հարկ է, կարծիքս, բոել չեմ գանդաղիր): Ինձ կը թուի թէ ձեր յանցանօքն է որ այժմու ստակի նեղութիւնը կը կրէք: Գիտեմ որ, գրեթէ երկու տարի է, առուտուրի մասին խոհեմութեամբ չվարուեցաք, քանզի աւելի շահելու ակնկալութեամբ, անստոցդ և ձեր գրամական կարողութենէն վեր գործողութեանց ձեռնարկեցիք: Նոր ապրանք գնելին առաջ՝ պարտ էիք ձեր շտեմարաններուն մէջ համբարուած ցորենին գոնէ մէկ մասը վաճառել. այսպէս ընելով աւելի խոհականութեամբ, թերեւս նաեւ աւելի ուղղութեամբ և ըստ խղճի վարուած պիտի ըլլայեք. քանզի, եթէ ցորենի վաճառականիք գինը հետղիւտէ բարձրացնելու խորհրդով

ապրանքը պահած չըլլային, շուկային վիճակն աղեկ կ'ըլլար, հասարակութիւնն ալ այս պէտք չարաչար չէր նեղուեր :

Ուստի կ'ըսեմ դարձեալ. առանձին պարագաներս չեն ներեր որ ձեզի օգնեմ. բայց թէեւ կարող ըլլայի, պիտի չուզէի կարծեմ քաջալերել այսպիսի յանդուգն և ապիրատ շահադիտական նպատակներ : Այսու հետեւ մի յուսաք որ երբէք պիտի յօժարիմ օգնութիւն ընել ձեզ, մինչեւ որ տեսնեմ թէ առեւտրական ողջամիտ սկզբան կը հետեւիք, որոյ օրինակը տուաւ ձեզ ձեր լուսահոդի հայրը, և զոր գուք ալ կը յարգէիք մինչեւ վերջին ժամանակներս, և հետեւաբար պատիւ ունեիք իբրեւ իմաստուն և ուղղախոհ վաճառական :

Կ'ողջունեմ զձեզ :

(Թագավորական)

Ա. Ա.

94. Հայր մը իր որդուոյն համար որ Մարտիլիա կը գտնուի՝ կ'աղաք նոյն քաղաքը գտնուող բարեկամի մը, որպէս զի իրատ տայ անոր ձամքորդուքիւն ընելու նպատակին ետ կենալ :

Տէր,

Յուսահատիչ նամակ մը առի Մարտիլիա գտնուող ընկերէս, որուն քով, ինչպէս գիւ-

տէք, գրած էի որդիս Զոհրապ՝ որ մեր գործերուն մէջ հմտութիւն ստանայ : Յիշեալ նամակով ընկերս Տէր կարմիրեան կ'իմացնէինձ թէ Զոհրապ ամսէ մը հետէ այնպէս անհոգ, կամ մանաւանդ այնպէս վհատեալ է որ իր կարեւորագոյն գործերն անդամ կատարելու անփոյթ է, և կը փափաքի ճամբորդութիւն ընել :

Միթէ Մարտիլիոյ շեն նաւահանգստի՞ն տեսքը, ուր երկրիս գրեթէ բոլոր վաճառաշահ ազգերը ժամադիր կ'ըլլան, թէ անխոհեմ բարեկամ մը այս վեշտասանամեայ պատանւոյն խելապատակին մէջ դրաւ ծովերու վրայ թափառելու անխորհորդ նպատակը, որ հրազդը մը եղած է անոր իր պարտաւորութիւնները զանց ընելու և վրաննդի մէջ դնելու իւր ապագայն :

Այս մինչեւ յարդ փոյթ, հլու և հնազնդ պատանեկին բարուցն ու վարուցը մէջ տեսնուած այս անակնիալ փոփոխութեան բուն պատճառը գիտնալ ինձի պարտք է և կը ցանկամ: Ուստի աղաչեմ զձեզ, Տէր, հաճեցէք տեսնել Զոհրապ, և քաղցր ու համոզիչ խօսքերով ջանացէք նախ խրատել զնա, որ, եթէ հնար է, ետ կենայ այն խօլ մտածութենէն և անպատեհ երազներէն, որոնք, ինչպէս կը տեսնեմ, շփոթած են ա-

Նոր միտքը : Իսկ եթէ կը գտնեք զնա այն պէս յամառ որ անհնար է յուղղութիւն գալ, հաճեցէք խօսյն իմացնել ինձ գրով, որպէս զի ես անձամբ Մարսիլիա գալով փութամ չարին առաջն առնուուլ :


Ներեցէք ինձ, բարեկամ, այս նոր ձանձրութեան համար զոր կու տամ ձեզի : Զեր բարութեան վրայ վստահ ըլլալով համարձակեցայ աղաչել, և գիտէք որ հարք շատ անգամ անձնասէր կ'ըլլան, երբ խնդիրն իրենց որդւոյցը վրայ է :

Ի սերտ սրտէ եմ

Զեր անձնանուէր բարեկամը

(Թուական)

Ա. Ա.



92. Խնդրուած մը առ տիկին ոմն :

Տիկին,

Կրնամ արդեօք համարձակիլ դիմել այն անսպառ բարութեան որոյ ապացոյցը շատ անդամ տուած էք ինձ :

Կարաձմեռը որ այս տարի կանուխ կը սկսի, և ամեն կողմանէ գործերու դադարումը՝ կը հարկադրեն զիս կրկնել առ ձեզ այն աղերսը զոր անցեալ տարի ըրի, և դուք ընկալայք մարդասիրաբար :

Զեր կալուածներուն պահապանը յօժար է թոյլ տալ ինձ առնուուլ քանի մը բեռ փայտ ձեր անտառներուն առաջին անդամ կը տրուածներէն, բայց չի համարձակիր այս թոյլտուութիւնն ընել առանց ձեր մասնաւոր հրամանին : Ուստի կը համարձակիմ, Տիկին, աղաչել զձեզ այս տարի ալ ընել ինձի նոյն շնորհքը, որուն համար շնորհապարտ պիտի ըլլայ ընտանիքու, մանաւանդ ծերունի մայրս որ եօթանասնամենի է : Խոնարհութեամբ կը խոստովանիմ զիս, Տիկին,

Զեր ամենահնազանդ և անձնանուէր  
(Թուական) ծառան Ա. Ա.



93. Տիկին մը իր հօրաքեռէն աղախին մը կը խնդրէ :

Սիրելի հօրաքոյը,

Հիմա կը գգամ որ շատ գէշ ըրի՝ ձեր աղդարաբութեան հակառակ Զարմանդուխտ տիկնոջ աղախինն ինձի սպասաւոր առնլով։ Վեց ամիս է որ այս աղջիկն իմ քովս է, և այնչափ ժամանակի մէջ իր ծուլութեամբն ու լարչութեամբն ինձի տժգոհութիւնտալէ ուրիշ բան չըրաւ . ուստի և որոշցի որ արձակեմ զնա :

Մինչեւ որ անոր տեղ ուրիշ աղախին մը գտնեմ, անտեսուհի մը պիտի առնում խոհանոցի և տան մանր ծառայութեանց համար զրոս ես անձամբ չեմ կրնար կատարել ուրիշ կարեւոր զբաղմունք ունենալուս համար: Բայց որովհետեւ այս կինը տարիքն առաջ ըլլալով չէ կարող երկար մնալ իմ ծառայութեանս մէջ; կ'առաջեմ, սիրելի հօրաքոյրս, հաճեցէք ինձի համար յարմար աղախին մը գտնելու հոգը ձեր վրայ առնուլ: Զեր ընտրութիւնն այնպէս ապահով է, որ կրնամ աչուըներս գոց ընդունել ով որ առաջարկէք:

Կը խոստովանիմ որ ձեր խորհրդեան չանսալուս համար յանդիմանութեան արժանի եմ, բայց կը խնդրեմ սիրելի հօրաքոյր, ներեցէք ձեր եղբօր դստերը որ կաթողին կը համբուրէ ձեղ խոստանալով այսուհետեւ միշտ լսել ձեր խրատներուն:

Զեր խանդակախթ եղբօր դուստրը  
(Թագավորական)

Ա. Ա.

94. Ակիուն կ'առաջարկուի կառք մը զնեղ :  
Տէր,

Այս առտու ձեր տնտեսէն իմացայ որ կ'ուղէք կառք մը գնել փոխանակ այն կա-

ռաց որ քանի մը օր առաջ խորտակեցաւ : Հիմա կ'առաջարկեմ ձեղ գնել վրան. գոց կառքը զոր անցեալ ամիս գնեցի, և ստիպեալ եմ վաճառել, քանզի, ինչպէս գիտէք, կովկասու կողմերը ձամբորդութիւն պիտի ընեմ: Եթէ առաջարկութիւնս՝ ձեզի ընդունելի է, հաճեցէք իմացնել ինձ, սպասաւորս իսկոյն կը բերէ ձեզի կառքը, որպէս զի քննէք և փորձէք :

Հաւատացէք որ նպատակս շահադիտութիւն չէ, միայն կը փակաքիմ, որչափ հնարէ արագ, առգնող մը գտնել: Պարզաբար կ'ըսեմ ձեզի որ այս կառաց համար տուած եմ 1570 ֆրանք, կառագործը որ վաճառեց ինձ զայն (Շաւարչ, թիւ 71, փողոց Վարդանանց) կրնայ վկայել ՚ի ինել հարկի: Եթէ յիշեալ գինէն բան մը կտրել կը կամիք, քանզի կառքն ամիս մը գործածուած է, զայն եւս հաճեցէք իմացունել ինձ: պատրաստ եմ զեղջ մը ընել որչափ արդար կը տեսնէք, վատահ եմ ձեր խղճին և ուղղութեանը :

Ընկալարուք, Տէր, զհաւաստիս իմոց յարգանաց :

Անձնանուէր բարեկամ ձեր  
(Թագավորական)

Ա. Ա.

95. Զի մը զնել կ'առաջարկուի մեկուն։

Տէր,

Երէկ լրւայ ձեր եղբօրմէն թէ ձեր կառաց համար ձի մը գնել կ'ուզէք, և թէ կը վարանիք դիմել առ ձիավաճառս առ երկիւղի թէ գուցէ խաբեն զձեզ։ Ուստի կ'առաջարկեմ ձեզ գնել իմ ձերմակաձիս զոր գնեցի տարի ու կէս առաջ, երբ պատերազմէն դարձող հեծելազօրաց գնդին Երիվարներն աճուրդիւ ՚ի վաճառ հանուեցան հոս։ Նաւարկութեան մը պատճառաւ դէպ յ'եղիպտոս՝ ստիպեալ եմ կառքս և ձիս վաճառել։

Ձին զոր գնել կ'առաջարկեմ ձեզ՝ ութեւտասնամեայ է, առողջ և կայտառ, գցնը ձերմակ, ուրեք ուրեք մոխրագոյն, հեծնելու ալ շատ յարմար, գնացքը միօրինակ ։ Երեւելի թերութիւն մը չունի, միայն դիշերը քիչ մը երկչոս է։ Բայց կրնաք անձամբ փորձել, և պատրաստ եմ ամեն երաշխաւորութիւն տալ ձեզ, Եթէ սակարկութեան մոնենք։

Այս ձիցն համար վճարած եմ 450 ֆըրանք, բայց ձեզի կուտամ 300 ի։ Աւելի նուազ գնով տալ հնար չէ։ յիշեալ գնոց

տալով՝ արդէն քան զարժանն զեղջում ըրած կ'ըլլամ, ինչպէս որ հմուտք կրնան վկայել։

Եթէ առաջարկութիւնս ընդունելի է ձեզ, հաճեցէք, Տէր, որչափ հնար է արագ իմացունել ինձ, և ընդունել յարդանաց ողջյնս։

Հաւատարիմ ձեր

(Թագավորական)

Ա. Ա.

96. Մէկը կ'իմացնէ իր բարեկամին թէ վարձու հաւար շատ յարմար տուն մը կայ։

Սիրելիդ Զարեհ,

Կը փութամ ծանուցանել քեզ որ գեղեցիկ տուն մը կայ վարձու մեր արուարձանին վերի ծայրը գետին աջ դին ուր ՚ի վաղուց հետէ կը փափաքէիք, դու և կինդ, գալ բնակել։ Այս տունն, ինչպէս կարծեմ, ձեզի շատ յարմար է, քանզի ունի բոլոր այն բաները որոց գուք կը ցանկաք։

Ահա համառօտիւ նկարագրեմ քեզ տանն հանդամանքը։ Նախադուռնէն ներս մտնելուդ պէս կը գտնես պարտէզ մը բաւական ընդարձակ, ուր կը տեսնես համակ ծաղիկ և պտղատու ծառեր։ Զախ դին կայ գեղեցիկ ծառուղի մը կակագիներէ, և շատ զր-

ւարձայի է ամառը՝ քանզի հովանաւոր ծառաստան է, ամառուան տօթագին եղանակն՝ հովանուն, և ուր մարթ է նաեւ ընթրել, քանզի խոտորնակ ուղի մը կը տանի գըրեթէ երկու վայրկենի մէջ մինչեւ տան խոհանոցին գուռը։ Եթէ ծիրանենիք, ինձորենիք և փոքրիկ այդեստանը որ պարտէզին աջակողմը բունած են՝ ձեր տիկնոջ ախորժակին յարմար են, այս ծառուղին զբօսանաց տեղ մը պիտի ըլլայ ձեր տղոցը, որ կրնան հոն չուան կապել օրուելու համար, կամ գնդի խաղալ, կամ նաեւ ընթերցարան մը պատրաստել՝ պարապս ամիսներուն մէջ իրենց դասերը կրկնելու։

Տանը մէջ գետնայարկին վրայ կայ ընդարձակ ձաշարան մը, խոհանոց մը շատ լուսաւոր, և այս երկուքին մէջտեղ սենեակ մը ստուտուին համար, վերջապէս զուարձափ սրահ մը զոր կրնաք ձեղի պատկերներու և գեղարուեստից թանգարան ընել։

Առաջին հարկին վրայ ննջարան մը կայ շատ անդորր՝ գըրեթէ հարիւրամեան շըեղ կակղիներէ հովանաւոր, որոց ծաղկանց անուշահոտ բուրումը գարնան եղանակին բոլոր տունը կը լեցունէ։ Ալիսակը, շիկահաւն ու կարմրալանջը, քաղցրաձայն հաւեր, հոն կը դնեն իրենց բոյները և կը հնչեցնեն իրենց բոյները

բենց երդերը բոլոր տարին։ Բաց այս ննջարանէն կան այլ եւս երկու սենեակք ձեր դստերաց համար։ և սիրուն խուց մը որ հագուելու սենեակ ըլլալու շատ յարմար է։ Տանը գինն է 600 ֆրանք, հատուցանելի Փետրուարէ ՚ի Փետրուար։

Փութացէք գալ, սիրելիդ Զարեհ, տեսնել այս տունը, ուր կը ցանկամ որ բնակիք, քանզի երջանիկ պիտի ըլլամ իմ հին դասընկերս ունենալ ինձ դրացի։ Փութացէք, դարձեալ կ'ըսեմ, եթէ կամք ունիք հոս բնակելու, գուցէ յապաղէլով կորսնցնենիք պատեհութիւնը։

Կինս ձայնակից է ինձ հրաւիրել նաեւ ձեր տիկինը, և կ'աղաջէ զձեղ համբուրել իւր կողմանէ ձեր սիրուն տղայոց ականողիքը։

Հաւասարիմ ձեր

(Թ. ա. ա. ի. ա. ա.)

ԳԱՐԵԳԻՆ ԹԻՉԵԱՆ

— առաջ —

97. Տիկին մը ուրիշ տիկնոց մը երեկոյքը երբայի հրամարելուն պատճառները կը յայտնէ։

Տիկին,  
Կվ վութամ աւասիկ պատասխանել ձեր սիրուն հրաւիրանացը։ Արդարեւ կը փափաքէի առաջիկայ գանուիլ երեկոյթին զոր հան-

դերձեալ էք տալ գալ երկուշաբթի ձեր ամարանոցը : Բայց կը ցաւիմ որ չեմ կարող ընդունել ձեր հրաւերը , նախ՝ վասն զի դըստերքս կիրակի իրիկուն դպրոց կը դառնան , և վարժուհին չի ներեր որ դուրս մնան դըպրոցին բացման օրն այնպիսի պատճառի մը համար որ շատ կարեւոր չէ . Երկրորդ՝ կը խոստովանիմ որ , թերեւսքան զշափն տնասեր սովորութիւնը , և մեր կանոնաւոր ու հանդարտ ու լոիկ կեանիքը կը խրտնուն բաղման մարդ ակումբներէ , ուր կը նեղուինք մանաւանդ քան թէ կը զբօնունք :

Սա ալ կ'ըսեմ ձեզի , Տիկին , մտերմաբար , որ ես կը վախնամքիչ մը սովորեցնել դստերքս երեկոյթներու և պարահանդէսներու որ թերեւս դարձնեն անոնց ուշադրութիւնը տնական համեստ հանդարտութենէ և ՚ի կանացի տնաւեսական կենաց յունայն և ՚ի բազմազբազ հաճոյս որ չեն յարմար անոնց հասակին : Կ'ուզեմ որ անոնք տակաւին երկար առեն մնան իրենց դպրոցաշ կան կանոնաւոր կենցաղավարութեան եղանակին , և այն պարզ ու տնարար սովորութեան մէջ զօր կը ցանկամ որ անոնք ; Եթէ հնար է , միշտ պահեն :

Կը յուսամ , Տիկին , որ կը յարդէք իմ պատճառներս , և չէք մեղադրեր զիս . թէ եւ

ըստ ոմանց բամբասուիմ իբր մարդատեաց կամ տմարդի : Հաւտացէք , որ շատ շնորհապարտ եմ ձեզ որ զիս միտք բերել հաճեցաք : Այս միտք ունի անձամբ դալ կիրակի . . և կրկին ինդրել ձենէ բանիւ բերանց մեր հրաժարման ներումը , մատուցանելով միանգամայն զհաւաստիս սիրոյ և բարեկած մութեան մերս որ առ ձեզ :

Եմ 'ի սերտ սրտէ

Խանդակաթ բարեկամ ձեր

(Թագավոր)

Ա . Ա .

98. Մէկը կ'ինացնէ իր բարեւալին թէ չի կրնար փոխ տալ անոր խնդրած գորմարը :

Տէր ,

Կը ցաւիմ յոյժ որ չեմ կարող կատարել այն ինդիբքը զոր կ'ընէք ինձ ձեր քեռառն միջոցաւ : Դժբախտութեար ձեր ինդիրն այն պիսի ժամանակ մը հանդիպեցաւ որ ես ալ մեծնեղութեան մէջ չը գտնուիմ , ծախուցս այժմու վիճակը չի ներեր ինձ փոխ տալ 500 ֆրանքը զոր ինէ կը ինդրեք՝ վճարելու համար դումար մը զոր ստիպեալ էք հատուցանել :

Անակնկալ ծախք մը պարտաւորեց զիս քանի մը օր առաջ պատրաստ ստակիս մէկ


մեծ մասը տալ, և հիմա անհնար է ինձ կատարել ձեր խնդիրը : Հաւատացէք, Տէր, շատ վշտացած եմ որ չեմ կարող գոհացնել ձեզ այս պարագայիս մէջ :

Ընդունեցէք սիրոյ ողջոյնս :

Հաւատարիմ բարեկամ ձեր

(Թուական)

Ա. Ա.



99. Առաջ ունեցած պարտքը չհասուցանողի մը նորէն փոխ տալ կը զլացուի :

Տէր,

Ահա կը պատասխանեմ ձեր նամակին յորում կը հարցնէք ինձ թէ արդեօք կարող եմ փոխ տալ ձեզ հարիւր ֆրանք ձեր անձնական պիտոյից համար : Կը խոստանաք հատուցանել ինձ այս գումարը քանի մը օրէն հանդերձ 325 ֆրանքօք զոր պարտական էք ինձ ութեւտասն ամսոյ հետէ :

Կը ցաւիմ որ ստիպեալ եմ ձեր այս խրնդրոյն բացասական պատասխան տալ : Ներեցէք ինձ յաւելուլ նաեւ թէ լաւագոյն երաշխաւորութիւնը զոր կրնայիք ինձ տալ այն էր՝ հաւատարմութեամբ և ճշդութեամբ հատուցանել ինձ ձեր նախկին պարտքը գէթ մասն առ մասն ձեր եկամտից մէկ մասը յատկացնելով այս պարտուց վճարման : Ե-

թէ այսպէս ըրած ըրլայիք, անտարակոյս պիտի հաստատուեց վատահութիւնս ձեր վրայ, և ձեր այս նեղ պարագային մէջ պիտի չհամարձակէի զլանալ ձեզ այս փոքր փոխատըւութիւնը :

Ներեցէք, Տէր, զլացումս, և ջանացէք օգուտ քաղէլ այն խրատէն զոր այսու առթիւ անուղղակի կերպով ստիպուեցայ տալ ձեզ : Ամենէն մեծ շահն է մարդուս համար ուղղութեամբ և ճշդութեամբ իւր պարտաւորութիւնը կատարել :

Ներեցէք որ այսպէս համարձակութեամբ և անկեղծօրէն գրեցի ձեզ :

Ձեր բարեկամն

(Թուական)

Ա. Ա.



100. Յանձնարարութեան նամակներ :

Յանձնարարութեան նամակ կամ Յանձնարարական բռնդր կը կրչուին այն նամակները որով մէ կը կը յանձնենք պաշտպանութեան և խնամոց բարեկամի կամ ծանօթիմը, և կամ այնպիսի անձի մը որուն քով յարգի ենք, կամ որ գիտենք թէ 'ի սէր մեր կ'ուղէ կատարել մեր խնդիրը :

Յանձնարարական նամակները շատ նմանութիւն ունին խնդրուածոյ նամակաց, սա

տարբերութեամբ միայն որ խնդրուածոյ նամակներու մէջ մեզի համար շնորհ, ք կամ ծառայութիւն մը կը խնդրենք, իսկ յանձնարարականի մը մէջ ուրիշի մը համար է խնդրուած շնորհ, քը :

Եթէ յանձնուած անձը մեզի ծանօթէ, կրնանք համարձակաբար, բայց առանց չափազանցութեան, գովել անոր յատկութիւնները, իսկ եթէ անձամբ չենք գիտեր յանձնուած անձին որպիսութիւնը, այլ ուրիշ պատուաւոր և վստահութեան արժանի անձանց վիճյութեանն ապաւինելով կը յանձնենք այն անձը, հարկ է այս պարագան յիշել, անուանել նաեւ այն անձինքը որոց վրկայութեանը նայելով կ'ընենք մեր յանձնարութիւնը :

Այս տեսակ նամակներու մէջ սովորաբար գովութեամբ կը յիշուի այն անձին բարեսիրութիւնը և մարդասիրութիւնը առ որ կ'ընենք յանձնարարութիւնը : Երբեմն նաև, մանաւանդ նամակին վերջը, ներում կը խընդրուի տրուած ձանձրութեան համար :

Յանձնարարական նամակի մը պատասխան տալն աւելի դիւրին է քան թէ բուն յանձնարարական թուղթ մը գրել : Եթէ եղած յանձնարարութիւնը կ'ընդունինք, կրնանք ըսել թէ ուրախ ենք որ պատեհութիւն ու-

նեցանք ծառայութիւն մը ընելու յանձնարարութիւնն ընող անձին : Եթէ կը մերժենք յանձնարարութիւնը, պէտք է ցուցնել պատճառները որ կը ստիպեն զմեզ այն մերժումն ընել, և թէ կը ցաւինք որ չենք կը նար այն մասին օգտակար ըլլալ :



101. Վարժարանի մը տեսուչն որիիշ վարժարանի մը տեսչին վարժապետոց մը կը յանձնէ :

Սիրելի պաշտօնակից իմ,

Ահա կը դիմեմ ձեր մարդասիրութեանն ու բարութեանը, վստահ ըլլալով որ ըստ արժանաւոյն պիտի խորհիք խնդրուածոյն վրայ զոր պիտի մատուցանեմ ձեզ :

Անձը որ այս նամակը ձեզի պիտի տայ որդի է մտերիմ բարեկամիս տեառն Սուրբենեան Խաչկի, որոյ վրայով շատ անգամ խօսած եմ ձեզի : Պատանին կը ցանկայ մըտանել ուսուցչութեան պաշտօնին մէջ, քանզի ուսման և գիտութեան նպաստելու, ինչպէս կը տեսնեմ, մեծ կոչում ունի յայտնապէս :

Կարծեմ թէ կրնաք ինձի օգնել այս դէպէին մէջ, և յանձնել ինէ պաշտպանեալ

պատանին կրթութեան պաշտօնէին, և 'ի մնել հարկի նաեւ ներկայացնել անոր : Պատանին նոր ելած է . . . եան վարժարանէն ուր շատ կանոնաւ որ կերպով կատարած է իւր ուսմունքը, և կրնայ ցուցնել ձեզ իւր ուսուցիչներուն գոհութեան միանգաւմայն գովութեան վկայականները : Բարքը շատ հեղ է, ինք հանդարտ և խոհական : Կարծեմ թէ Մարտիկ Առւրենեան (այս է պաշտպանելոյս անունը) շատ օդտակար պիտի ըլլայ ձեր վարժարանին, եթէ, ինչպէս կը յուսամ, ընդունուի ձեր շնորհիւ :

Ամսականին գալով, Մարտիկ մեծամեծ պահանջումներ չունի . նպատակը սկզբնաւորութիւն մը ընել և համբաւ ոստանալ է, վարձատրութեան մասին գոհ կ'ըլլայ ինչ որ իր աշխատութեանն ու արժանեացը համար պատշաճ կը տեսնուի, անոր յոյսն ապագային մէջ է, ներկայն անոր համար հրաշկանգ մը պիտի ըլլայ կրթութեան :

Վստահ եմ թէ խոհեմ պատանին շուտով պիտի արդարացնէ իրեն շնորհուելու վստահութիւնը իւր զգաստութեամբը, իւր պաշտօնին մտադիւր հոգ տանելով և զուարթ վարժամբն ընդ ամենեսին : Արդէն իսկ շնորհակալ կ'ըլլամ ձեզ, սիրելի պաշտօնակից իմ, բոլոր այն բարերարութեանց և նպաստից

համար զորս պիտի մատուցանէք այս բարեկերթ պատանւցն, և կը յուսամ այս օրերս անձամբ գալ և յայտնել ձեզ երախտագիտութիւնս :

Յիշեցուցէք զիս, կը խնդրեմ, Տէր, ձեր ազնիւ տիկնոջ, և ընկալարուք սիրոյ ողջոններս :

Մտերիմ պաշտօնակից ձեր  
(Թագավորական) Ա. Ա.

102. Կունտշիէ մը կը խնդրուի թշուառ այրույ մը օգնել :

Ազնուազարմ Կոմսուհի,

Մեծ վստահութեամբ կ'ընծայեմ ահա ձեր արդար և վեհ և բազմագութ սրտին թշուառ մը սփոփելու պատեհութիւնը :

Ձեր ապարանքին քանի մը քայլ հեռուն, ողորմելի տան մը առաստաղին տակ որ ձեր պարտէզին վերի բարձրաւանդակէն կը տեսնուի՝ այս վայրկենիս մէջ յուսահատ և արտասուալից կը բնակի թշուառադայնն ՚ի մարս, հայցելով յերկնից իւր թշուառ տղայոց համար գոնէ ցամաք հաց մը զոր ինք չի կրնար հայթայթել, կամ խնդրելով բարերար ձեռքի մը նպաստը՝ պահպանելու հա-

մար երեք անմեղ արարածներ իւր աչաց  
առջեւ սովլամահ կորտուելէ :

Սանդուխս. Թագւորեան, թշուառ մայրը  
որուն վրայ է խօսքս, ժապաւէն գործող կին  
է : Այս գործով սկսաւ զբաղիլ իւր ամուս-  
նոյն մեռնելէն ետքը, սնուցանելու համար  
իւր մատաղ ընտանիքը որ կը բաղկանայ երեք  
մանր աղջիկ զաւակներէ որոց երիցագոյնը  
գեռ վեց տարեկան չկայ : Իւր ժրութեամ-  
բը, յետին խնայողութեամբ, դիւցազնա-  
կան արութեամբ հազիւ կարողացաւ մինչեւ<sup>1</sup>  
ցարդ հոգալ իւր աղքատին տնտեսութեան  
բոլոր պիտոյքը : Նորա փոքրիկ յարկին կամ  
մանաւանդ աղքատ տնակին մէջ կը դիտէր  
վայելչութիւն մը որ կարգաւորութեան,  
փութոյ և մաքրութեան արդիւնք էր, մինչ  
յանկարծ անակնկալ արկած մը երկրորդ և  
աւելի սաստիկ հարուած մը տուաւ այս ան-  
օգնական ընտանեաց : Կնոջ աչուըները յոգ-  
նելով շատ անդամ գրեթէ մինչեւ լոյս ձըգ-  
ուած աշխատութենէն՝ ծանր բորբոքման մը  
հանդիպեցան : Այս տեսակ հիւանդութիւ-  
նը դարմանելու հմուտ անարծաթ բժշկի մը  
դարմանները, բուն իւր ջանքը և զգուշու-  
թիւններն անօգուտ եղան : Տարակուսեալ՝  
Սանդուխտ ստիպուեցաւ, ամսէ մը հետէ,  
ամեն աշխատութիւն դադրեցնելով նստել

անցոյս և լալագին տուընջեան լուսոյն ան-  
գամնայելէ զուրկ : Խնչ զարդ որ ունէր իւր  
ամուսնոյն ժամանակէն մնացած, ամեն աւե-  
լորդ հանդերձ, կահ, կարասի, ամեն բան  
արդէն վաճառուած կամ գրաւ դրուած է,  
և հիմա ուրիշ բանի չսպասեր, բայց սովլա-  
մահ եղած մատաղ տղայոցը ցուրտ դիակուն-  
քը տեսնել իւր առջեւը : Ո՛վ աղետալի տե-  
սարան : Արտասուօք կը գրեմ այս սովլերս  
ձեզի, սիրելի կոմսուհիս :

Կրնամմ համարձակիլ արդեօք, Տիկին,  
աղաչել զձեղ այս ընտանեաց օգնելու : Մի-  
թէ հնար չէ<sup>2</sup> որ այնչափ կարօտելոց աւա-  
տապէս ամեն տեսակ նպաստ սփոռող ձեռքն  
այն օգնութիւններէն բաժին մ'ալ այս ողոր-  
մելեաց համար հանէ : Այս շնորհակալու  
մօր և անոր երեք հրեշտակներուն աղօթիւք  
անտարակյս պիտի վարձատրէ զձեղ, Տի-  
կին, բաժակ մը ցուրտ ջրոյն համար անդամ  
հատուցում ընող տէրը : Որ ողորմի աղքա-  
տին՝ փոխ տայ Աստուծոյ :

Հաճեցէր, աղնուազարմ կոմսուհի, ըն-  
դունել զհաւաստիս խորին յարդանաց և  
հպատակութեան

Զեր խոնարհ և անձնանուէր  
(Թ. Պ. Պ. Պ.) ծառային Ա. Ա.

103. Իրաւագետ պատահի մը կը յանձնո՞ւի  
առեւտրական ժողովոյ նախագահին :

Սիրելի Տէր,

Դժբախտաբար կորուսի այս օրերս տղա-  
յութեանս ազնիւ բարեկամներէն մին զՏէր  
Կարմիրեան զոր, կարծեմ, քանի մը անդամ  
տեսաք իմ տունս :

Այս պատուական անձը, իւր վերջին  
ժամուն յանձնեց ինձ ջերմաբար իւր որ-  
դին Դատ, որուն բարձր գաստիարակու-  
թիւն մը տուաւ լուսահոգին : Հիմա որբ  
պատանին ստիպուած է իւր պիտոյքն ան-  
ձամբ հոգալ, և ժրութեամբ միջամուխ ըլ-  
լալ գործերու մէջ իրեն վայելուչ վիճակ մը,  
ապագայ մը պատրաստելու համար :

Դատ փութով և յարատեւութեամբ  
յառաջ տանելով իւր ուսմունքը, հօրը վախ-  
ճանելէն քանի մը ամիս առաջ աւարտեց իւ-  
րաւագիտութեան դասերը, և 'ի մեծ գո-  
հութիւն հօրն ընկալաւ փաստաբանի պաշ-  
տօն : Այս պատանին շատ հրու և առաքինի  
է, բայց չափազանց երկշոտ, այնպէս որ ե-  
թէ բարերար ձեռք մը 'ի սկզբան օգնու-  
թեան չհասնի, չեմ կարծեր թէ յաջողու-  
թիւն գտնէ :

Ներեցէք ինձ, սիրելի Տէր, յանձնել  
ձեր խնամոց յիշեալ՝ պատանին այնպէս ջեր-  
մաբար, ինչպէս յանձնեց զնա ինձ հայրը  
մահուան անկողնոյն մէջ : Կը ինդրեմ ուրեմն  
ձեր մէրն ու իննամբը՝ պատանւոյս համար,  
մանաւանդ որ իբրեւ նախագահ առեւտրա-  
կան ժողովոյ կարող էք ձեր հզօր պաշտպա-  
նութիւնը շնորհել նմա 'ի լինել հարկի : Ինչ  
շնորհը որ կ'ընէք անոր, սիրելի Տէր, գիտ-  
ցէք որ ինծի ըրած պիտի ըլլաք, և վստահ  
եղէք որ ձեր երախտիքն ընդունայն պիտի  
ըլլայ :

Ընկալարուք, Տէր, գուք և ձեր ազնիւ  
տիկինը, անկեղծ բարեկամութեանս երաշ-  
խաւ որութիւնը . և շնորհակալութիւններս  
զոր կանխելով կ'ընեմ այն ամեն շնորհաց հա-  
մար զոր պիտի ընէք պատանւոյն, որոյ եմ  
պաշտպան :

Անձնանուէր բարեկամ ձեր  
(Թագավորական)

Ա. Ա.

104. Օտար երկիր զացող սպասարոր  
աղջիկ մը կը յանձնո՞ւի բարեկամ ըն-  
տանիքի մը :

Սիրելի Տէր,

Գիտեմ որ ձեզի հաճոյ ըլլալու և ձեզ

գոհ ընելու համար՝ շնորհք խնդրելու է  
ձենէ :

Օրիորդ Զարմանեցուխտ, կնոջս տղայու-  
թեան բարեկամներէն մին, երեք օրէն կը  
մեկնի ԳԵՀրան երթալ, իբրեւ սպասուհի,  
Անդղացի հարուստ ընտանիքի մը հետ որ  
իբր տասը տարի պիտի բնակի ձեր հեռաւոր  
կողմէրը : Այս սքանչելի օրիորդը մեծ անձ-  
նուրացութեամբ կը բաժնուի իւր ծնողնե-  
րէն որոնք անակնկալ ձախորդութեան մը  
պատճառաւ յետին չքաւորութեան մէջ կը  
գտնուին : Թշուառ աղջիկը շատ տխուր է,  
քանզի առանձին պիտի մնայ օտար երկիր  
մը, աղդականներէ և ծանօթներէ հեռու,  
ընտանիքի մը հետ զոր նոր սկսաւ ձանձնալ:  
Բայց անոր տիսրութիւնը պիտի փարատի  
գրեթէ բոլորովին, եթէ գիտնայ թէ այն  
օտար երկրին մէջ զոր աշխարհիս ծայրը կը  
համարի՝ իրեն ձեռնոտու բարեկամ մը պիտի  
գտնէ, որմէ այլ և այլ կարելի պատահա-  
րաց մէջ կարենայ օգնութիւն և պաշտպա-  
նութիւն յուսալ : Ուստի ձեզի, սիրելի բա-  
րեկամ, կամ մանաւանդ ձեր երկու ազնիւ-  
դստերաց կը յանձնեմ զօրիորդ Զարման-  
դուխտ : Արդարեւ պիտի տեսնեն դստերքդ  
թէ որչափ քաղցր, բարեբարց և կիրթ է  
այս գեռահասակ անձը զոր կը յանձնեմ ա-

նոնց խնամոցը և սիրցն . անտարակցոս ու-  
րախ պիտի ըլլան անոր հետ մուերիմ ըլլալով :  
Ամենայն վստահութեամբ յանձնեցի ա-  
նոր այս նամակը զոր ձեզի պիտի մատուցանէ  
հոն հանելուն պէս . և որովհետեւ գիտեմ  
թէ դուք ամենքդ մարդասէր և բարերար  
էք, չեմ տարակուսիր վստահացնել զնա թէ  
ձեր քաղցր ընդունելութիւնը պիտի հան-  
դարտեցնէ և միսիթարէ զնա բոլորովին : Այս  
շնորհքը զոր ձեր հին և մուերիմ բարեկա-  
մութենէն կը խնդրեմ՝ շատ յարգի պիտի  
ըլլայ կնոջս և ինձ, և պիտի համարինք զայն  
որպէս թէ մեր անձին եղած :

Ուստի արդէն խակ շնորհակալ կ'ըլլամ  
ձեզ, սիրելի բարեկամք, բոլոր այն նպաս-  
տից և պաշտպանութեան համար զոր պիտի  
մատուցանէք այս պանդուխտ աղջկան, շնոր-  
հակալ կ'ըլլան ձեզ նաեւ թշուառ պանդխտե-  
լոյն սրտառուչ ծնողքը, գիտնալով թէ իրենց  
այս միակ սիրելի դստեր միսիթարութիւնն  
ու երջանկութիւնը դուք պիտի ըլլաք :

Ողջն սիրց և յարգանաց ձեր տիկնոջը  
և սիրելի դստերաց :

Ձեր շնորհապարտ և կաթոգին  
(Թուական) բարեկամը Ա. Ա.

105. Շատ ընտանի բարեկամի մը գրուած  
յանձնարարական նամակ :

Սիրելիդ Առում.

Լսելով որ վաղիւ առաւօտուն պիտի  
մեկնիս Կարին Երթալու , և գիտնալով որ  
բարեկամի համար աշխատութիւն կրելէ չես  
փախչիր , կը համարձակիմ քեզի ծանրութիւն  
մը տալ : Քեզի ճամբու Երկու ընկեր պիտի  
տամ , զորս ջերմաբար կը յանձնեմ քու իր-  
նամոց : Վաղիւ կ'ուղարկեմ առ քեզ Երկու  
ուղեկիցներդ՝ աղաւելով որ զանոնք ողջ և  
առողջ հասցունես առ քեռորդին իմ Խորեն ,  
որ կը բնակի Անկնց փողոցը , թիւ 14 :

Այս փոքրիկ ճամբորդները , թէպէտ շատ  
փափուկ չեն ի բնէ , կարօտ են մեծ խնա-  
մոց , և կարծեմ բաւական ձանձրութիւն  
պիտի տան քեզի , և կ'աղաւեմ , մի գուցէ նեղ-  
սըրտելով խառես անոնց փոքրիկ գլուխները ,  
մանաւանդ որ խորօվուելով կրնան համեզ  
պաշար ըլլալ ճամբու : Պարտիս զգուշանալ  
նախ որ Երկար ատեն արեւու մէջ չմնան .  
Նոյնչափ հսկելու ես որ խոնաւ տեղ ալ չնըս-  
տին : Շատ անօթութեան ալ չեն դիմանար .  
կը վեստուին մանաւանդ , եթէ խնայես սուէպ  
զով և մաքուր ջուր արբուցանել անոնց :

Սա ալ ըսեմ քեզի կանխաւ որ ասոնք կատուէ  
և շունէ այնպէս կը վախնան որ լեզապա-  
տառ կ'ըլլան . միով բանիւ , կը խնդրեմ ,  
սիրելիդ Ա.տոմ , ամեն կարելի հոգ տանիս  
անոնց , եթէ կ'ուղես որ քեզի ջերմ շնորհա-  
կալութիւններ մատուցուին , երբ զանոնք  
յանձնես իրենց տիրոջը : Ովկ են , պիտի ը-  
սես , այս փափկիկները : Ալ ի՞նչ Երկայն ը-  
նեմ . քեզի ուղեկից ըլլալու զցոցը , որոց ՚ի  
նպաստ այսչափ Երկայնբանութիւն ընել  
հարկ Եղեւ՝ Երկու հնդկահաւ են , և փոք-  
րիկ կողով մը գետնասունկ . այս վերջնը քե-  
զի համար :

Ընկալ , սիրելի , սերտ բարեկամութեանս  
վկայութիւնը . և ծանիր զիս քեզ յաւերժ  
բարեկամ

(Թ. Ա. Ա. Ա.)

Ա. Ա.



106. Քահանայի մը կը յանձնոյի դժբախսո  
լնաւանեաց հայր մը :

Յարդելի Տէր Աւագերէց ,

Գիտեմ որ ձեր Յարդութեանը ողորմու-  
թեան գործ մը առաջարկել՝ զձեզ Երջանիկ  
ընելէ : Եւ այս թուղթը ձեր Յարդութեա-  
նը գրելու զիս համարձակեցնողն ալ ձեր այն

բարեսիրութիւնն է որոյ փորձը տեսած են  
առէպ ձեր վիճակին կարօտեալները :

Ձեր գեղին բարի ընտանիքներէն մին,  
ձեզի դրացի և շատ կողմանէ արժանի ձեր  
ուշադրութեանը և հայրական խնամոց, այս  
օրերս հանդիպեցաւ ծանր ձախորդութեան  
մը, որ հինգ մանր որդեկաց տէր այր և կին  
մը մեծ նեղութեան մէջ ընկլմեց : Այս ըն-  
տանեաց հայրը Վարդան Ռըշտունի, արհես-  
տիւ ծեփարար, քաղքիս բազմագանձ, այլ  
ոչ բազմողրմ սեղանաւորի մը տան սրահին  
ծեփը նորոգած ատենը, մինչ սանդղին վրայ  
կ'ելլէր, սահելով կ'իյնայ, և աջ դաստակն  
այնպէս կը վնասէ որ անկարող կ'ըլլայ աշխա-  
տելու, և որ չարագոյնն է՝ սանդղին ծայրը  
հարիւր ոսկի արժող մեծ հայելոյ մը զար-  
նելով, հայելին կտոր կտոր կ'ընէ :

Ինչպէս ըսի, մեր բազմագանձ բայց սա-  
կաւողրմ սեղանաւորը հայելոյն գինը պա-  
հանջելով գժբախտ գործաւորէն, ոչ միայն  
անոր մէկ ամսուան աւուրչէրը ութ ոսկին  
վար կը դնէ, այլ և մնացեալ իննասուն և եր-  
կու ոսկին կը ստիպէ հատուցանել՝ սպառնա-  
լով ոստիկանութեան ձեռքով առնուլ այն  
գումարը: Վարանեալ ծեփարարն այս ահա-  
գին գումարն հատուցանելու համար գրեթէ  
տանը բոլոր կարասին, մինչեւ իոհարանին

վերջին պղնձէ կաթսան կը ծախէ, և ինք  
հիմա ձեռքը կապած կը պառկի տունը կա-  
նամբն ու հինգ զաւկներով նօթի և ծարա-  
ւի: Բժշկին խօսքին նայելով թշուառ մար-  
դը հաղիւ քանի մը ամսէ կրնայ թերեւս  
աշխատելու սկսիլ: Ութ օր է որ ես, ձեր  
ծառան, 'ի սէր Աստուծոյ կը հոգամ այս ըն-  
տանեաց պիտոյքը՝ բժշկին և դեղագործին  
ծախիւքն հանդերձ :

Կ'աղաչեմ և կը պաղատիմ, Տէր Հայր,  
այն քրիստոնէական եռանդով որով հարիւս-  
րաւուներու օգնութեան հասած էք՝ հառ-  
նիլ յօդնութիւն նաեւ այս հէք ընտանեաց:  
Գիտեմ որ ողբրմած միրտն անսպառ է միջոց-  
ներ հնարելու ասոր նման յետին տարա-  
կուսանաց մէջ: Անտարակոյս, Տէր Հայր,  
ուրիշ դուռ մը պիտի զարնէի, եթէ քան  
զձեղ ողբրմած միանդամայն աղդեցութեան  
Տէր մէկը ճանչնայի:

Ներեցէք, Տէր Հայր, ձեր ծառային  
համարձակութեանը, որ սպասելով յաջող  
պատասխանուոյ մը նամակիս, եմ

Աստուածամէր հօրդ

Ամենախսնարհ հոգեւոր որդի  
(Թուական)

ՄԵՍՐՈՊ ԹՐԵԱՆ

107. Վերի նամակին պատասխան :

Սիրելի որդւց ՚ի տէր ողջյն .

Նամակդ ընկալայ և ուրախ եմ որ աղքատաց և տառապելոց վրայ այսպէս գութ ունիս : Մեծ ցաւ տուաւ ինձ մեր ծեփարար եղբօր վիճակը : Տէրը հարիւրապատիկ հատուցանէ քեզ, սիրելի, այն օդնութեան փոխարէնը զոր այս դժբախտ ընտանեաց ըրած ես : Կը զարմանամ թէ ինչպէս մեր հարուստ սեղանաւոր եղբայրը որ եկեղեցւոյ սեմը կը մաշեցնէ և կուրծքը բախելի չի դադրի՞ կրցաւ դիպուածով եղած վնասումը համար բարի ընտանեաց հայր մը մոխրոյ վրայ նստեցնել : Նամակդ առնելուս պէս վարանեցայ յոյժ, կը խորհէի թէ որու դիմեմ : Արդարեւ շատերուն բարեսիրութիւնը գիտեմ, բայց անոնց և ոչ մէկուն կը համարձակէի մօտենալ, քանզի ամենքն ալ մօտերս բաւական մեծ գումարներ նուիրեցին անձնուրացութեամբ սոյն նպատակին իմ ձեռքովս : Յանկարծ միտքս եկաւ ազնուական անձ մը որուն անունը չեմ ուղեր տալ : Այս անձը բարեպաշտ համարուած չէ ընդհանրապէս, հաղիւ տարին անդամ մը կը տեսնուի եկեղեցւոյ մէջ, ինձի ալ շատ ծա-

նօթ չէ, բայց գիտնալով որ բարեկը ընել կը սիրէ, մանաւանդ այսպիսի գիպուածներու մէջ, իսկոյն թուղթ մը գրելով պատմեցի եղելութիւնը՝ աղաչելով որ ՚ի գերեւ չհանեյցս, և արդարեւ չհանեց՝ զրկելով երկու հազար հինգ հարիւր ֆրանք զոր ահա կը զրկեմ քեզ : Կ'ուզեմ որ այս գումարով անմիջապէս հոգաս այն տառապեալ ընտանեաց պէտքը : Մէկ մասովը կրնաս գնել պէտք եղած կարասին վաճառուածներուն տեղը լեցունելու համար . մնացեալը կրնայ գործածուիլ անոնց օրըստօրական ծախուցը համար մինչեւ որ ծեփաբար եղբայրը կարող ըլլայ սկսիլ իւր սովորական աշխատութիւնը : Կը տեսնես, սիրելի, որ ողորմածութիւնը վերցած չէ աշխարհէս, և եթէ կան անգութ և անիրաւ հարուստներ, կան նաեւ ձըսմարտիւ աղքատասէր հարուստներ, որ ոչ թէ, աւետարանին մեծատան պէս, իրենց սեղանին փշրանքէն կը կերակրեն աղքատը, այլ իրենց բերնին պատառն անդամ պատրաստ են տալ կարօտելոց : Արդարեւ կարող է Աստուած, ինչպէս կ'ըսէ գիբըր, ՚ի քարանց յարուցանել որդիս Աբրահամու : Այս պէս՝ բարեպաշտ չկաղծուածներու ձեռքով կը խնամէ աղքատն ու որբը, որպէս զի յամօթ ընէ արծաթասէր բարեպաշտները :

Ողջ էր , սիրելի , և մի մոռնար գութն  
ու բարերարութիւնը : Տէրը հետդ ըլլայ :  
Գիտցիր որ եմ միշտ քու խանդակաթ հայրդ  
՚ի Տէր :

(Թուական) Տէր՝ Յուսիկ , Աւագերէց  
Եկեղեցւոյ Սրբայն Սանդխոտոյ  
որ ՚ի Մարբերդ :



108. Խրատուուրքեան յանդիմանուրքեան և  
գանգատանաց նամակներ :

ԴԻՑՈՂՈՒԹԻՒՆՔ

Խրատուուրքեան նամակ կը կոչուին այն  
նամակները որով խրատ կու տանք մենէ  
խորհուրդ խնդրող անձանց : Այս տեսակ  
նամակները շատ զգուշալի են : Յայտնի է  
թէ երբ գործ մը յաջողութիւն չի գտնե՞ր՝  
յանցանքը խորհուրդ տուողին վրայ կը ձըր-  
ուի : Շատ անդամալ մարդիկ խորհուրդ կը  
խնդրեն , թէեւ արդէն որոշած են թէ ինչ  
պիտի ընեն . այսպիսիներուն գիտաւորու-  
թիւնը մեր հաւանութիւնը կորզել է արդէն  
որոշուած բանի մը համար քան թէ հետե-  
ւելու համար խրատ առնուլ : Այս պատ-  
ճառաւ խրատ տարու մէջ լաւագցն ճամբան

է օգտատն ու վնասը ցուցնելով որոշումը  
խնդրողին թողուլ , առանց ըսելու թէ այս-  
պէս կամ այնպէս ընէ : Բայց եթէ գիտենք  
որ խորհուրդ խնդրողն արդարեւ տարակու-  
սանաց մէջ է և իրաւ խրատ կ'ուզէ , պէտք  
է ըստ խղճի մտաց խրատ տալ անոր , ըսելով  
թէ , եթէ ես քու տեղդ ըլլայի , այսպէս  
կամ այնպէս կ'ընէի . բայց դարձեալ գուն  
գիտես :

Յանդիմանուրքեան նամակներու մէջ մէ-  
կուն երեսը կը տրուի ըրած անիրաւութիւ-  
նը , և կամ , առանց անիրաւութիւն կրած  
ըլլարու , լոկ կը ցուցնենք անոր թէ ըրածն  
անվայելէ : Այսպիսի նամակներու մէջ պէտք  
է գդուշանալ կրիւք խօսելէ , ապա թէ ոչ  
փոխանակ գդաստութեան բերելու՝ կը խրս-  
տացնենք մանաւանդ : Խնչպէս հեղինակ մը  
կ'ըսէ , դիւրին է բարձրէն իջած ջուրը նո-  
րէն վեր հոսել տալ , քան թէ կշտամբանօք  
ուժացեալ սիրալնորէն ջերմացնել : Բայց կան  
գէտք որուն մէջ խստութիւնը կ'արդարա-  
նայ . զորօրինակ երբ բարեկամ մը նենդու-  
թիւնը ըրած է մեղի , կամ երախտեաց գէմ  
մեծ ապերախտութիւն մը տեսած ենք մէկէն ,  
որովհետեւ այսպիսի գէպէրու մէջ նորէն  
հաշտութիւն շատդժուարին , գրեթէ անհնար  
է , ամենէն խիստ կշտամբանքն իրաւացի է :

Տեսակ մը կշտամբանք ալ կայ , յորում կշտամբողը եղած յանցանքը կամ անիրաւութիւնը յիշելէն ետքը , կը սկսի արդարացնել ընողը , որպէս թէ սխալմամբ կամ առանց չարդիտաւորութեան ըրած է , և կամ ըսելով թէ , այսպիսի բան մը իրաւ լսած ենք , բայց ամենեւին չենք հաւատոր , քանզի չենք յուսար այնպիսի գործ մը այն անձէն :

Յանդիմանութեան նամակաց կարգը կը դասուին գանդատանաց նամակներ , որոնց մէջ տրտունջ կ'ընենք նամակի մը պատասխան չորուելուն կամ բնաւ նամակ չգրուելուն դէմ . բայց այս յանդիմանութիւնը բարեկամական մեղադրանք մըն է քան թէ բուն յանդիմանութիւն :

109. Հօրեղբայր մը կը ճանուցանէ իր եղբորորդույն նոր պաշտօնի մը հասնիլը :

Սիրելիդ Երուանդ .

Վերջապէս ընկալայ Ռումէլիի Երկաթուղւոյն գործակալէն նամակիս պատասխանը զոր գուն և ես սնձկանօք կը սպասէինք , և կը փութամ աւետիս տալ քեզ որ ընդունուած ես իրեւ Երբորդ հաշուեկալ Ադրիանուպոլսոյ կայանը վեց հարիւր ֆրանքի ամսական թոշակաւ :

Այս արագ միանգամայն յաջող ելքը շատ ուրախացուց զիս , և , Ճշմարիտը խօսելով , ամենեւին չէի յուսար այս բախտին հասնելու : Դու եւս , սիրելիդ Երուանդ , Երախտագէտ ըլլալու ես ընդ իս գործակալ մին անոր այս մարդասիրութեանը , և մանաւանդ արագութեանը համար : Մի յապաղեր յայտնել չնորհակալութիւնդ որչափ մարթ է փութով , ես ալ կը խորհիմ այցելութիւն մը ընել անոր՝ իմացնելու համար անձամբ թէ ինչ մէծ պատիւ ըրած , եղաւ ինձի այս շնորհ ընելով երկոցունցս :

Այս պաշտօնը , սիրելիդ Երուանդ , փոքը է արդարեւ , բայց ինչպէս կ'ըսէ նցյն ինքն գործակալն ինձի գրած քաղցր նամակն մէջ , այս ուրիշ բան չէ բայց մէծ պալատի մը առաջին գաւիթը կոխել , տակաւին կը մնայ հօյակապ սանդուղներէն վեր ելել և մտնել փառաւոր սրահներն ու գահմիջները . իսկ ըստ իմ հաշուիս կ'ըսեմ թէ այսչափն ալ արդէն մէծ քայլ է , և ամենէն գժուարինը հոս հասնելն էր : Նիմա կը մնայ քեղի ամեն ջանք ՚ի գործ դնել առ ՚ի բարուքել առ յապայ այս համեստ վիճակը , և տարակիյս չունիմ թէ բարի վարուք , պաշտօնիդ պատշաճը կատարելու ստէպ փութով , և հանձարովդ որ ինձ ծանօթ է , պի-

տի շահիս վերակացուացդ յարդանքն ու  
սէրը :

Պաշտօնիդ պարտաւորութիւնները շատ  
ծանր չեն, ոչ իսկ գժուարին գէթ առ այժմ,  
և բաւական ժամանակ պիտի ունենաս պա-  
րապյ : Ուստի խրատ կու տամքեղ, ամե-  
նայնիւ ջանալ կըթել գքեղ ուսանել ինչ որ  
պիտոյ է աւելի բարձր պաշտօնի մը հասնե-  
լու համար . այսպէս պիտի գտնուիս պատ-  
րաստ յառաջացման օրը որ, ինչպէս կը յու-  
սամ, պիտի հասնի 'ի մօտոյ, այնպէս որ ար-  
դէն յարմար ըլլաս քեզի տրուելու նոր պաշ-  
տօնին բարձրութեանը : Ի վեր քանի զամե-  
նայն ջանա սորվիլ ձեր սահմանին ընդարձա-  
կութիւնը, երթեւեկութեան սահմանները  
տնօրինելու եղանակը, վարչութեան կա-  
նոնները, բոլոր գծին տեղադրութիւնը,  
միով բանիւ ինչ որ պիտոյ է վարժ տնօրէնի  
մը ընդարձակ երկաթուղուց բոլոր շարժում-  
ներն ուղղելու անլրէպ : Ընկերներդ և մա-  
սաւանդ տնօրէնը որոնց հետ պիտի գործես՝  
կրնան քեզ հրահանգել լաւագուն քանի զիս,  
եթէ անոնց գործողութեան ընթացից արթ-  
նութեամբ մտադիր կ'ըլլաս :

Մնաս բարով, սիրելիդ Նրուանդ, ըն-  
կալ միւստնդամ սերտ բարեմաղթութիւն-  
ներս քու նոր ասպարիդիդ յաջող սկզբնա-

ւորութեանը համար, և հաւատոա միշտ որ  
եմքու յառաջադիմութեանդ փափաքող և  
ջանացող :

Անձնանուէր հօրեղբայրդ  
(Փառական) Ա. Ա.

110. Եղքոր մը յանդինանական նամակը  
գործը բողով օտար երկիր բախտ ինձրեղու  
համար գաղթել ուզող եղքորը :

Սիրելի եղբայր,

Կինդ լուր տուաւ մեզի թէ միոք ունիս  
միւս եւս անդամ թողուլ բարեկամներդ,  
գործդ, տեղն ուր ծնար և մնար, Եգիպ-  
տոս երթալու համար ՚ի խնդիր բախտի :

Ի՞նչ, սիրելի եղբայրս, առաջին գժբախտ  
փորձը զոր ըրիր քանի մը տարի առաջ, քեզի  
ուրիշ հայրենիք մը շինելու ուր կը յուսայիր  
հարստութիւն միանգամայն երջանկութիւն  
գտնել, միթէ բաւական խիստ գաս մը չե-  
ղաւ քեզի համար : Մոռցա՞ր արդեօք այն  
ահագին հողմը որ քեզ Աեաւ ծովուն եղեր-  
քէն ուր կ'ուզէիր հաստատուիլ Բուսիոյ  
սառնապատ կողմերը նետեց մանկամարդ ա-  
մուսնով և երկու մատաղ մանկամբք որոց  
մին զոհ եղաւ քու սիսալմանդ, չըսեմ թէ  
անիմաստութեանդ, մոռցա՞ր, կ'ըսեմ, նաեւ

այն ամսագործյն հարկը որ ստիպեց քեզ երկու տարի ծիւրել ծառայութեամբ օտար ներու դուռը քանի մը բուպղի ամսականով, մինչեւ, այլ եւս անկարող ապրելու, հաղիւ գտար, գրեթէ սքանչելոք, ազգայնոյ մը բարերար ձեռքը որ օգնեց քեզ գառնալ հայրենիքդ, և ինչ տաժանմամբ :

Ի՞նչ պիտի ընես, սիրելի, Եղիպատու . բամբակի մշակութիւն : Ի՞նչպէս կը յուս սաս յաջողել դուն որ հողագործութեան գործնական տեղեկութիւն մը չունիս : Քանի մը խեղճ գրոց կամ լրագրաց յօդուածներու վերացեալ կանոնները, ցնորելոց ոմանց խըրախոյսը որ միշտ յաջողութիւն կ'երազեն բախոյսը որ միշտ յաջողութիւն կ'երազեն երեկը գտած չեն, այս բաները, կ'ըստ երեկը գտած չեն, գիտեմ. կը հրապուրեն և կը ձգեն, գիտեմ. բայց փորձը, անողոքելի փորձը, շատ յայտն էր, շատ յանդուգն ձեռնարկութիւններ կը հանէ ՚ի գերեւ : Զես գիտեր առակը թէ երազի մէջ խնջյքը սովոյ հաւասար է : Յիշէ նաեւ որ Բուսաստանէն դառնալէդ եարը ի՞նչ տառապանօք կազմեցիր տուն մը դոր նորէն ցրուել կ'ուզէս : Ո՞ր աղաջուրը դրաւ բու միտքդ այս յիմարութիւնը :

Գործին ձախող դին ինձի կը ցուցնես, պիտի ըսես, այնպէս չէ . բայց ես ոչ քաշերող եմ և ոչ վհատեցնող, միայն նոր և

անկանգնելի կործանմանէ մը կը վախնամքեզ զի համար . և դնենք թէ երկիւզս ստուգւեցաւ, դուն ոչ այն մանկութիւնն ունիս և ոչ այն զօրութիւնը որ քեզ միջոց տուին կանգնելու առաջին անգամ :

Ես ըսի ինչ որ կրնայի ըսել, սիրելիդ Մարտիկ, ուր որ ըլլաս, ինչ միճակի մէջ որ դանուիս, գիտցիր որ միշտ քու օգտիդ համար կը խորհի քու վաթմանեաց եղբայրդ, և թէ քու ամենէն ստոյդ բարեկամդէ միշտ :

Մի ամեն հովէ շարժիր . իմա ինչ որ կ'ըսեմ, գարձեալ կամեցիր ինչպէս որ կը հաջիս, և ողլ լեր :

(Թուշիան)

Հարազատ քո  
Ա. Ա.

111. Նամակ նորիրաց և հրաշիրանաց :

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Նուիրաց և Հրաւիրանաց նամակները համառօտ գրուածներ են, որոնց ոճը պարզ և զուարթ ըլլալու է : Նուիրաց նամակներու մէջ պարտ է մանաւանդ զգուշանալ որ նուիրուած իրին շատ մեծ յարդ ընծայուի : Ընծայ ընելուն նպատակն է զուարձութիւն մատուցանել զայն ընդունովին, ոչ թէ ան-

ուղղակի կերպով պարտք դնել անոր վրայ  
շնորհակալ ըլլալու :

142. Ընձայ ընդունուած զիրքի մը համար  
շնորհակալութիւն :

Սիրելի բարեկամ,

Ընդունեցայ ձեր տպել տուած գեղեցիկ  
գիրքը որմէ օրինակ մը հաճեցաք ընծայ ը-  
նել ինձ : Հաւատացեք որ ձեր այս բարե-  
կամութեան նշանը շատ յարգի է ձեր հին  
ընկերոջը , և միշտ շնորհակալ պիտի ըլլայ  
ձենէ : Այս նամակը գրելէն առաջ ուղեցի  
ձեր գիրքը կարդալ ամբողջ , բայց այնչափն  
ալ որ կարդացի բաւական է , սակայն կը  
լուեմ ասոր վրայ , քանզի գիտեմ ձեր հա-  
մեսութիւնը որ գովեստի համար խուլ է :  
Բաւական կը համարիմ շնորհակալ ըլլալ ձեզ  
որ զուարձալի ժամեր անցունելու առիթ  
տուիք ինձ միայնութեանսմէջ , ցուցնելով  
միանդամայն որ զիս կը յիշէք և կը սիրէք :

Ձեր հին և հաւատարիմ ընկերը

(Թագավորական)

Ա. Ա.

143 Միասք իշր մօրաքեռորդշաբան կարենի  
ընձայ կը դրէ :

Սիրելիդ կարէն ,

Երբ անցեալ տարի այս եղանակիս մեր  
քովին էիր , լաւ կը յիշեմոր , մեր սալորնե-  
րուն համար կ'ըսէիր թէ շատ սքանչելի են ,  
և որչափ սիրով կ'ուտէիր , մանաւանդ վարի  
պարտէզին գեղձերը :

Այս տարի այն պտուղները հասած տես-  
նելով մօրս ըսի . Կարէն այս տարի մեր քովը  
չէ , նա մենէ զրկուած է , և մենք անկէ ,  
թող գոնէ սիրած պտուղներէն զրկուած չը  
մնայ : Ուստի պատրաստ եղիր , սիրելի , այս  
իրիկուն պիտի ընդունիս երկու կողով մեր  
պտղանոցին երախայրիներէն : Այօր առա-  
ւոտեան իններորդ ժամուն յանձնեցի կո-  
ղվաները երկաթուղւոյն տնօրէնին , և կ'ի-  
մացունեմ քեզի որ անյապաղ երկաթուղւոյն  
կայարանը երթալով պահանջես կողովներն  
որմէ որ արժան է , գուցէ փորձանեք մը պա-  
տահի , քանզի գիտես որ այսպիսի բաներու  
թշնամին շատ է : Պտուղները թղթերու մէջ  
պատած եմ , զգուշութեամբ տանել տուր ,  
մանաւանդ գեղձերը :

Կը համբուրենք քեզ կաթոգին , թէպէտ

արժանի ես ծանր յանդիմանութեան նաւ  
մակդ ու շացնելուդ համար ։ Ընծայի մը հետ  
փոքրիկ յանդիմանութիւն մը բան մը չէ ։

Ողջ լեռ ։

(Թագավորական)

Մօրաքեռորդիդ Միտաք

144. Բարեկամի մը լինայ կը դրկուի ։

Սիրելիդ Վահե ։

Հայրս որ հնդետասան օր առաջ հաւուս  
գնաց որս ընելու , կ'երեւի թէ մեծ նախ  
ձիր կոտորած են , քանզի երէկ իրիկուն մե-  
զի շատ որս զրկեց , գրելով մօրս որ անոնցմէ  
ձեզի ալ մաս հանե ։

Ուստի ըստ ընտրանաց մօրս՝ այս առ-  
առ կը յանձնեմ երկաթուղւոյն սակառի  
մը որուն մէջ պիտի դանես զոյտ մը նապաս-  
տակ և եօթը զոյտ կաքաւ որոնք ձեզի պիտի  
հասնին կեսօրութնէ կէս ժամ ետքը ։ Մայրս  
շատ ուրախ է որ , թէպէտ զրկածը չնչին  
բան մըն է , սակայն յարմար է ձեր ճաշա-  
կին , և կ'աղաւէ զձեղ ողջունել ձեր տիկին  
մայրը , և յիշեցնել անոր որ այս ձմեռ մեզի  
այցելութիւն ընելու խոստումը չմոռնայ ։

Ընդունեցէք , սիրելի , մեր սիրալիր ող-  
ջոյնը ։

Զեր անձնանուեր բարեկամը

(Թագավորական)

Ա. Ա.



145. Մանուկի իշր կենդանագիրը կը դրկէ իշր  
Հօրաքեռ ։

Սիրելի հօրաքոյրա ,

Գու սիրուն փոքրիկ նամակիդ մէջ զոր  
կը գրես ինձ Երզնկայէն ուր ողջամբ հասած  
ես , կ'ըսես թէ , մենէ բաժնուած ըլլալուդ  
տիսրութիւնը փոքր 'ի շատէ փարատելու հա-  
մար ու բախ պիտի ըլլաս ընդունել կենդա-  
նագիրս ։ Շնորհակալ եմ , ազնիւ հօրաքոյրս ,  
քու այդ փափաքանացդ համար , որ նոր ա-  
պացոյց է ինձ թէ որչափ կը սիրես նուաստ  
Եղբօրորդիդ ։

Նամակդ ընդունելու պէս , խկոյն գնաւ-  
ցի լուսան կարը որոյ հասցէն տուած ես ին-  
ձի , և հանել տուի պատկերս քու պատուէ-  
րիդ համեմատ շատ փոքր , որպէսզի մէտալեռ-  
նիդ մէջ կարող ըլլաս դնել ։ Ծրաբը յանձ-  
նեցի մեր երկայնականջ տափաքիթ սպասա-  
ւորին Պարսամայ . կը յուսամ թէ անվնաս

կը հասնի ձեռքբուժ : Առաջիկայ նամակիդ մէջ ,  
սիրելի հօրաբօյը , մի մոռնար իմացնել թէ  
ճշգիւ ինձ նման է արդեօք կենդանագիրս :  
Գիտես որ մարդ իր վրայ աղէկ դատաստան  
չի կրնար ընել . ես , շիտակը խօսելով , չկըր-  
ցայ որոշել թէ ճիշդ իմ կերպարանքըս է ,  
թէպէտ մեծ նմանութիւն կը տեսնեմ :

Հոս ամենքս ողջ և առողջ ենք , միայն  
կարօտ քեզի , մանաւանդ չարաձնի եղբօր-  
որդիդ , որուն այնչափ երես կու տայիր որ  
ահա կը յանդգնի այսչափ համարձակել քեզի  
հետ : Հայրս ապսպրեց գրել քեզ որ Զատ-  
կէն անդին չուշանաս , ինչպէս որ խոսա-  
ցար , ապա թէ ոչ հոգ պիտի ընենք քեզի  
համար :

Խանդակաթ Եղբօրորդիդ

(Թուական)

ՄԱՆՈՒԿ ՃԱՐԵԱՆ

446. Բարեկամական հրաշէր մը 'ի ձաշ՝ լե-  
տանելիան ոձով :

Տիկն :

Կինս կը պատրաստուեր ձեր գիւղը գալ՝  
քանի մը ժամ անցունելու համար ձեր զար-  
մանալի պարտէզին անուշահոտ կակիներուն  
կտա , մինչ յանկարծ հիւր եկաւ նստաձու-

րէն , մեր ձերունի մշաղացին կինն ու աղջ-  
կունքը : Այս պոռոստախօս գեղջուկներն առ  
գելք եղան կնոջո դիտաւորութեանը որ ա-  
կամայ ստիպուեցաւ մնալ տունը : Ուստի  
ապսպրեց ինձ յայտնել ձեզ իւր ցաւը , և  
յիշեցնել ձեզ ձեր խոսանոմը գալ ճաշել  
մեզի հետ օր մը յառաջիկայ եօթնեկիս : Եւ  
որովհետեւ հաճեցաք մեզի թողուլ այն օր  
ուան ընտրութիւնը , կը խնդրենք որ , Եթէ  
արդելք մը չկայ , առաջիկայ շաբաթ օր հը-  
րամէք . այն օրը բոլորովին աղատ եմ , և  
կը յուսամ հանդարտ երեկոյթ մը վայելել  
ձեր և ձեր չքնաղագեղին Սաթինկան հետ ,  
որ կը յուսամ թէ պիտի չուզէ մերժել մեր  
հրաւերն ու սրտառուչ ընել մեզ : Գիտէ  
թէ որչափ սիրելի է մեզ , և եթէ պակսի ,  
զոր Աստուած մի արասցէ , որչափ պիտի  
բարկանայ կինս :

Գրեցի նաեւ ձեր եղբօրը , աղաչելով որ  
նոյն օրը գայ օգնել մեզ պարտիկելու երեք-  
լըտերեան աբբայաձուկը և զյու մը խեցգետի  
զոր պիտի զրկէ մեզ ուրբաթ մեր մշաղացին  
որդին : Մեր բարեկամը գիւռել նաեւ թէ  
ինչպէս յաջողուկ է կինս պատրաստելու նոր  
անուանի սուրճը որ այնպէս մարսողական է  
կերպարոյ վրայ : Ոչինչ նուազ յաջողակ եմ  
ես , ինչպէս դիտէ , բանալ ամեն որուակ

որոյ բերանը կնքուած է կարմրամոմով, և հեղուլ բաժակները փրփրոտ ըմպելին, երբ ազնիւ բարեկամը իբրեւ զձեղ կը բոլորեն սեղանս ընդ հովանեաւ մեր մեծ կիսադարեան կնձնեցն: Գիտնալով, Տիկին, մեր բարեկամին, ձեր զուարթ եղբօր՝ մարդասիրութիւնը, բնաւ չեմ տարակուսիր թէ պիտի զանայ այս փոքրիկ ճառայութիւնը մեղ, որ է պատռել մեր սեղանը:

Կատակը մեկդի, կ'աղաշեմ, Տիկին, ներեցէք հրաւիրանացս եղանակին որ գիտեմ համաձայն չէ ճիշդ օրինաց հրաւիրման. բայց բարեկամաց մէջ բացառութիւնն ալ երբեմն օրինաւոր է: Ասպէս համարելով իմ հրաւէրս ալ, մի սպասցնէք մեղ, Տիկին, կ'աղաշեմ: Առայժմ ողջոյն:

Չեր վաղեմի հաւատարիմ դրացին

(Թագավոր)

Ա. Ա.



117. Գեղացի ընտանիք մը այգեկորի կը հրաշիրուի:

Միրելի Մուշեղ,

Առաջիկայ կիրակի օր մեր փոքրիկ այգին պիտի կթենք, և յայտնի է թէ չենք կառող առանց օգնութեան քու առոց մանչե-

րուդ, որոց յաջողակութեանն ու անխօնջ աշխատութեանը տեղեկակ ենք: Անցեալ տարի մի և նոյն առթիւ անոնց յուցած մրութիւնը դեռ մոռցած չենք, մանաւանդ պարագակին ձողաբարձները կթելու ատեն անոնց ճարտարութիւնն ու արագութիւնը որով թեթեւ սամցյրներու պէս կ'ելլէին կ'իջնէին առանց ձող մը կոտրելու:

Ուստի կ'աղաչեմ, սիրելի եղբայր, կանուխ Ճամբայ ելէք, կարծեմ թէ երեսուն արտավար ընդարձակութիւն ունեցող այգի մը կթող բարեկամաց օգնութիւն համնելու համար կանուխկեկ գալ հարկ է: Կնոջս յցարքու տիկնողդ և երկու կայտառ ձորսելուդ վրայ է. ամենէն ընտիր կողովներն ու մըկատները ձեզի համար արդէն պատրաստ են: Իսկ ես ոչինչ ընդհատ քան զնա անձուկ ունիմ տեսնել քեզ, և մեր վաղեմի դէպքերը յիշելով քանի մը ժամ անցնելու համար սպիտակ կաղամախոցն տակ՝ գիտեմ ոք շատ պատրաստութիւն պէտք չէր. ամենէն պատռաւկան բանն արդէն ունիմ. կարմիր, ճերմակ, գեղին հին գինի Գողթան և խոզու երշիկ զորիմձեռօքս պատրաստած եմ:

Գու հին բարեկամդ

(Թագավոր)

Ա. Ա.



118. Հրաւելու ՚ի խրախուրիշն :

Տէր և սիրելի պաշտօնակից իմ,

Որդիքս , կինս և տղայութեանս բարեկամնելը որ Սրբոյն Վարդանայ պաշտպանիս փառաւոր նահատակութեան օրը Երբէք չեն մոռնար՝ Երեկ Եկան խմբովին անունս չնորհաւորելու : Ես ալ սովորութիւնն ունիմ ամեն տարի անոնց տօնի փոխանակ տօն հատուցանել , մանաւանդ որ , ինչպէս գիտես կոչունք կը սիրեմ : Եւ թէպէտ սրտին յիշատակն արտաքին նշաններու պէտք չունի ինքզինք յայտնելու համար , սակայն և այն պէս կարծեմ թէ անկեղծութեան բնաւ չի մնանակ փոքր պարահանդէս մը մեր տղայոց համար , և ճաշ մը որ մեղ ամենքս կը ժողվէ :

Մեր ակումբն ու խրախութիւնը թերի պիտի ըլլայ անտարակոյս , Եթէ դուք մեր մէջ չգտնուիք : Ուրեմն հաձեցէք , Տէր , դուք և ձեր Տիկինը մեր կոչունքը պատուել առաջիկայ Զորեքշաքթի , Գիտցէք որ ձեզմուլ մեր բարեկամաց թիւը կրկին պիտի ըլլայ : Եւ որովհետեւ դուստրս Շարուհի կը պնդէ թէ իրեն համար մեր խրախութիւնը ցուրտ տօն մը պիտի ըլլայ , Եթէ օրիորդ Անոյշ չգտնուի հրաւերելոց թուցն


մէջ , կը խնդրեմ որ ան ալ մէկտեղ քերէք = Ոչ թէ հրաւեր մըն է այս որ կ'ընեմ , այլ աղերս , թախանձանք մեր Շարուհւոյն կողմանէ որ կը պնդէ թէ իւր աղաշանքը ձեր քով մեծ աղդեցութիւն ունի : Ապա Զորեքը շաբթի առաւտուն Երկաթուղոյն առաջին կառաջուով ձեզ Երեքինդ կը սպասենք :

Կինս առանձինն կ'ողջունէ ձեր տիկինը և կ'աղաչէ թախանձանօք չմերժել մեր հրաւերը : Ողջ լերուք :

Չեր մտերիմ պաշտօնակիցը

(Թագավորական)

Ա. Ա.



119. Ամարանոցի այցելուրիշն ընելու հրաւել :

Տիկին ,

Բաւական ժամանակ է որ այրս և ես գիտաւորութիւն ունէինք գիւղային ճամբորդութիւն մը ընել զբոսանաց համար , բայց մեր այս գիտաւորութիւնը թերեւս տակաւին առանց գործադրութեան պիտի մնար , Եթէ յաջող պարագայ մը մեղ այս անորոշութենէն չհանէր :

Մոռցած չեք , կարծեմ , Շահունեանց չքնաղագեղ տիկինը որ Երկու տարի առաջ

զիս տեսնելու եկաւ մեր փոքրիկ ձմերոցը  
մօտ յԱնդղ։ Այս տիկինը որ Վան կը բնակի՝  
անկէ իբր չորս հրասախ հեռու գեղեցիկ  
ամարաստուն մը ունի Արձշյ գիւղը ուր գա-  
ցած է հիմա ընտանեօք ամառն անցնելու :  
Հիմա կը հրաւիրէ մեղ թախանձանօք այցե-  
լութիւն ընել իւր շքեղ այգեստանին, խրնդ-  
րելով որ դուք, ձեր քոյրը, մօրաքոյն ու  
ձեր պատուական ամուսինը մեր հետ ընկե-  
րսնաք : Գիտցած ըլլաք, Տիկին, որ եթէ  
այս հրաւերը չնդունիք, տիկինն ՚ի խոր պի-  
տի խոցի, մեղ ալ սրտառուչ պիտի ընէք :

Միտք ունինք Կիրակի առաւօտուն կա-  
նուխ Ճամբայ ելլել ութ ժանուով իւրաքան-  
չիւրը չորս անդրուարաւ : Մեր կարգադ-  
րութիւնն այս է որ կառքերը զկայ առնուն  
գրեթէ կէս Ճամբուն, և մենք իջնելով գա-  
լար խոտին վրայ Ճաշենք Արծրունեաց հին  
աւերակին ներքեւ, որ ատենօք ամրոցն էր  
քաջին Գագկայ, որոյ պատութիւնը մեղ  
այնպէս կը շարժէր մեր մանկութեան ատե-  
նը : Անկէ պիտի երթանք շիտակ Շահուն-  
եանց ամարանոցը ուր կը սպասէ մեղ տիկի-  
նը : Շաբաթ պիտի դառնանք Առւրք կա-  
րապետ, քանզի գիտէք որ հետեւեալ օրը  
Կիրակի Պենտեկոստէ է :

Զկրցայ անձամք գալ հրաւիրել ձեզ,

քանզի այսօր հիւր ունիմ, ուստի և փու-  
թացայ գրել ձեզ, Տիկին, որպէս՝ զի պատ-  
ճառ չունենաք ըսելու թէ կամիսաւ լուր  
չորուեցաւ ձեզի պատրաստութեան համար :

Վաղիւ կը յուսամ գալ տեսնել ձեզ, որպէս  
զի մեր երթալու ժամը որոշենք, և ժամա-  
գիր ըլլամիք ուր արժան է իրար գտնել :


Ընդունեցէք, Տիկին, անկեղծ յարդան-

քըս որ ուռ Ձեզ :

Ձեր հաւատարիմը, Տիկին

(Թուական)

Ա. Ա.



120, Հրաւէր ընդունելէ հրաժարելու նաևսկ:

Տէր :

Կը յաւիմ որ պիտի չկընամ ընդունել Ձեր  
սիրուն հրաւէրը . քանզի այս վայրկենիս կը  
գտնուիմ յանկողնի, և պարտաւորեալ, հր-  
րամանաւ բժշկին, քանի մը օր փոխանակ  
կերակրոյ շատանալ գեղահատիւք և ապրով  
առանց արգանակի, գժբախտաբար խիթէ  
մը բռնուած ըլլալով հարկահանութեան  
համար ըրած Ճամբորդութեանս ատեն :

Ուստի ընդունեցէք, Տէր, հրաժարումն  
Ձեր տիկինն ալ հաճեցուցէք, հրաւիրեալ

բարեկամաց ալ ըսէք թէ որչափ ցաւ է ինձ  
որ հրաժարելու ստիպուած եմ. և ուրիշ  
կերպով չեմ կրնար ձեր փառաւոր ակմբին  
մէջ գտնուիլ, բայց եթէ սրտիւ և մտօք:

Առողջութիւն ստանալուս պէս, որ կար-  
ծեմ թէ շատ պիտի չուշանայ, կը յուսամ  
այս բոնի բացակայութեանս վիասն հանել  
գալով անձամբ շնորհակալ ըլլալու ձեզ, որ  
այսպէս մտերմաբար յիշեցիք զիս:

Բայց առ այժմ ընդունեցէք, սիրելի բա-  
րեկամ, անկեղծ սիրոյս վկայութիւնը:

Բարեկամ ձեր

(Թ. Ա. Կ. Ա.)

Ա. Ա.



ԸՆՏԱՆԵԿԱՆ, ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱ-  
ՎԱՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

121. Հայր մը իշր որդուոյն որ հիշանդուքնեն  
նոր ելած է:

Ա. յն հոգերեն զոր հիւանդութեանդ հա-  
մար ունեցայ՝ կրնաս դատել թէ որչափ մեծ  
եղաւ ուրախութիւնս, երբ առողջանալուդ  
լուրն առի: Շատ շնորհակալ ըլլալու ես Ա. ս-  
տուծոյ որ զքեզ չար արկածէ պահեց, քան-  
զի աչքիդ եկած իջուածը կրնար աղետալի

Հետեւանք ունենալ: Կը գովեմ շնորհակա-  
լութիւնը զոր կը յայտնես մօրդ քեզի առ-  
բած ինամբց համար, և կը յուսամ թէ չես  
մոռնար անոր ըրածը, և հատուցումն ըստ  
արժանւոյն կ'ընես՝ պատշաճ հպատակու-  
թիւնը մատուցանելով անոր բոլոր փափա-  
քանացը: Նամակդի ինձի շատ հաճոյ թուե-  
ցաւ. իմաստութեամբ գրուած է. առող-  
ջանալուդ պարագաներն, ինչպէս նաեւ այժ-  
մու վիճակդ, շատ մանը և յստակ կը նկա-  
րագրես: Նորէն գլորոց երթալու մի փու-  
թար. և կը խրատեմ քեզ որ զուարձալի  
բաներ միայն կարդաս, մինչեւ բժիշկն հրա-  
ման տայ քեզ նորէն սկսիլ առջի աշխատու-  
թիւնդ: Իմ կողմանէս սերտ ողջոյն մատո-  
ուսուցիդ, և ջանա որ զզղայ քեզի համար  
կրած նեղութիւններուն համար: Կը յու-  
սամ թէ 'ի մօտոյ քեզ տեսնելու հաճութիւ-  
նը պիտի ունենամ, առայժմ կը խնդրեմ որ  
ողջոյնս տաս քոյրերուդ, թէպէտ չեմ գի-  
տեր թէ գեռ հրաման ունին քեզի այց ընե-  
լու. եթէ այսպէս է, ողջոյնս տալու մի ա-  
ճապարեր, մինչեւ որ անոնց թոյլտուու-  
թիւն ըլլայ քու քով գալու: Աղջ լեր, սի-  
րելի որդեակ, և գիտցիր որ եմ

Խանդակալթ հայրդ

(Թ. Ա. Կ. Ա.)

Ա. Ա.

122. Շնորհնակալուքեան նամակ առ  
ուսուցիչ ունե :

Սիրելի ուսուցիչ իմ,

Իբր երկու տարի է որ ձեր սանը հե-  
ռացած է ձենէ , բայց հաւատացէք որ ձեզ  
մոռցած չէ : Բնական է մեզի մեզ սիրողները  
յիշել , և ձեր խնամքը և հայրական սէրն  
իմ վրայ՝ այնպէս խոր տպաւորութիւն ըրած  
են սրտիս , որ ձեր յիշատակն յաւխտեան  
չպահէլ անհնար է ինձ :

Ձեր պաշտօնակիցներէն մին , Տէր Յ .  
Սիրեան որ ձեր քաղքին Մեսրոպեան վար-  
ժարանը կ'երթայ իբրեւ դասատու ճարտա-  
սանութեան՝ յանձն առաւ անձամբ մա-  
տուցանել ձեզ նամակ մը զօր ՚ի վաղուց կը  
խորհէի գըել ձեզ : Նոյն անձը կընայ վիպայել  
ձեզ թէ ինչպէս օր քան զօր կ'առաւելու  
երախտագիտութիւնս և սէրս դէպ առ ձեզ .  
և իմ անուամբս շնորհակալ պիտի ըլլայ ձեզ  
սիրոյ այն նոր ապացուցին համար զօր տուիք  
յանձնելով զիս թախանձանօք առեւտրական  
ընկերութեան գլխաւորին որ , ինչպէս կը  
լսեմ , ձեր վաղեմի աշակերտն է , և որուն  
քով մոռած եմ ես գրագրութեան պաշտօնով՝  
Միտք ունիմ տարւոյս վերջը թողուլ այս

քաղաքը , ուստի և պաշտօնս . քանզի հայրա-  
որ զիս բաւական կրթուած կը համարի  
գրագրութեան արուեստին մէջ՝ կը խորհի  
զիս իւր գործին մէջ առնուլ : Այս աւե-  
տիսը որ այս օրերս հասաւ ինձ՝ շատ կ'ու-  
րախացնէ զիս , քանզի քիչ ատենէն ընտան-  
եացս մէջ պիտի գտնուիմ , և առիթ պիտի  
ունենամ երբեմն երբեմն ձեր քով գալ խօ-  
սիլ անցեալ ուսմանցս վրայ զորս թերեւս  
քիչ մը մոռցած եմ . բայց մոռցած չեմ և  
պիտի չմոռնամ երբեք վարուց և կենաց բա-  
րի սկզբունքը զորս ընդունած եմ ձենէ , ինչ-  
պէս նաեւ այն խնամոց և սիրոյ ապացոյց-  
ները զոր ցուցած եք ինձ :

Ողջ լերուք , սիրելի ուսուցիչ իմ , և  
վստահ ձեր նախնի աշակերտին կաթողին  
սիրոյն վրայ , հաճելով պահէլ ձեր բարեկրաք  
խնամքը դէպ ՚ի նա որ է խորին յարդանօք

Ձեր ամենախոնարհ աշակերտը  
(Թագավորական) Ա. Ա.



123. Պատամի մը կ'իմացնէ իշր մօրը քէ  
խօսուեցաւ այն ինչ օրիորդին հետ :

Սիրելի մայր ,

Ձեր խորհրդացն համեմատ զօր տուիք ինձ  
օրիորդ նարդիկ Սիրեան կնութեան ուզե-

լու՝ խօսեցայ առ Տէր և Տիկին Սիրեան, և  
ուրախութեամբ կը ծանուցանեմ ձեզ որ ա-  
ռաջարկութիւնս սիրով ընդունուեցաւ .  
ուստի և աճտպարեցի իմացունել նախ ձեզ,  
քանզի ձեզի պարտական եմ ինչ յաջող և  
ուրախալի բան որ կը պատահի ինձ :

Մեր ամուսնութիւնը պիտի ըլլայ Յու-  
նիսի ԱՇ ին : Ապա դեռ Երկու ամիս կայ, և  
ժամանակիս մէջ ջանալու եմ ամեն կարեւոր  
պաշտօնական գիր հայթայթել, այնպէս որ  
յիշեալ թուականէն գոնէ ութ օր առաջ  
ամենայն ինչ պատրաստ ըլլայ : Ուստի կը  
խնդրեմ որ այս ամսուան մէջ այս ամսուանու-  
թեան համար ձեր հաճութեան վաւերա-  
ցեալ գիրը զրկէք ինձի, հանել տաք նաեւ  
ծննդեանս թուականը և ուրիշ ինչ որ 'ի  
պաշտօնէ պիտի պահանջուի կառավարու-  
թենէն ամսուանութեան մուրհակը պաշտօ-  
նապէս շինելու համար, քանզի, ինչպէս գի-  
տէք, հոս ամսուանութիւնը քաղաքային է :

Կը յուսամ, սիրելի մայրս, որ մինչեւ  
յիշեալ օրը ձեր առողջութիւնը կը շտկուի,  
այնպէս որ կարող կ'ըլլաք առաջիկայ գտնուե-  
լով ձեր որդւոյն ամենէն ուրախալի հանդի-  
սին՝ գոհ և զուարթ ընել զիս և խօսեալս՝  
Օրիորդ Եւգինէ :

Բոլոր Սիրեան ընտանիքը, մանաւանդ և

յատուկ սիրով և յարգանօք Օբիորդ Եւ-  
գինէ Սիրեան, կ'ողջունեն զձեզ, մաղթելով  
ձեզի առողջութիւն և երկար կեանկը, ընդ  
որս ձայնակից է նաեւ ձեր

Ամենահնազանդ որդին  
(Թագավորական)

Ա. Ա.

124. Եղբայր մը իր քրոջը կը գրէ իրենց  
մօրը տօնին օրը և իրենց ստնտուին համար  
նուշեր պատրաստելու :

Սիրելի քոյրս,

Այս նամակը կը գրեմ քեզի ոչ թէ յի-  
շեցնելու համար որ Երկու շաբաթ ետքը մեր  
սիրելի մօր անուան տօնն է, ոչ ալ հարցու-  
նելու համար թէ մոռցած ես արդեօք զայն :  
Գիտեմ որ այն օրը հաշուած էիր և միշտ առ  
այն կը խորհէիր, ինչպէս որ ես կ'ընէի : Կը  
գրեմ քեզ խօսելու համար միայն այն օրուան  
վրայ որ մեզ ուրախ և գոհ պիտի ընէ :

Ուր հասաւ քսակը զօր կը բանէիր մեր  
մօրը համար . յօյս ունիս արդեօք ժամա-  
նակին աւարտելու զայն, չեմ գիտեր թէ  
ձեր գլորոցին վարժուհին ուրիշ բան ալ  
պատրաստելու հրաման ըրաւ քեզի . զորօրի-  
նակ՝ բաղպաններ և զգպան մը : Այս բա-  
ներուն վրայ գրելով ինձի տեղեկացուք :

Իսկ ես քանի մը անդամ կապարեայ գըր-  
չով անցնելով դաշտանկարին վրայէն զոր ե-  
րեք ամսէ հետէ մեծ խնամով կ'աշխատիմ  
գծագրել՝ պիտի աւարտեմ զայն։ Մեր գը-  
ծագրութեան դասատուն շատ դոհ է ինէ  
այս աշխատութեանս համար։ Բաց այս գը-  
ծագրութենէն աշխարհագրութեան տախ-  
տակ մը՝ և ուրիշ բաներ կը գծագրեմ գըր-  
չով։ Ասոնք են ձեռագործ նուերները զոր  
պիտի ընենք մեր սիրելի մօր անոր տօնին  
օրը, և գիտեմ թէ նրչափ պիտի ուրախա-  
նայ նա մեր յառաջադիմութիւնը տեսնե-  
լով։ Կը խնդրեմ, սիրելիդ Նունիկ, ամեն  
ջանք ըրէ որ ձեռագործ թերութիւն մը  
չունենայ։

Բայց այս նամակը գրելով նպատակս մեր  
այս փոքր աշխատութեանց վրայ խօսիլ չէ,  
ուրիշ կարեւոր առաջարկութիւն մը ունիմ  
ընելու քեզի։ այս խորհուրդը երեկ իրիկուն  
միտքս ինկաւ։ Գիտես որ մեր ստնտու դայ-  
եակը Վարդենի որ հիմա բաւական պառ-  
ուած է՝ մեր ստունէն ելլելով իւր գեղը եր-  
թալէն ՚ի վեր, ինչպէս կը լսեմ, և ձշմա-  
րիտ է, մեծ կարօտութեան մէջ է։ Հան-  
գերձ մը չունի որ հագնելով գուրս ելլէ։  
Թշուառ կին։ Մեր գթած մայրը որ շատ  
կը սիրէ զանի, քանզի կ'ըսէ թէ շատ սիրով.

կը խնամէր մեղ երբ մեր ստնտուն էր, ամսէ  
ամիս օգնութիւն մը կ'ընէ անոր, բայց ինչ  
գարման կրնայ ըլլալ փոքր նպաստ մը թըշ-  
ուառ ընտանւոյ մը այնչափ կարօտութիւն-  
ներուն։ Հիմա կը խորհիմ, սիրելի Նունիկ,  
որ նոյն խոր մեր մօրը մեծ հաճութիւն մը  
ըլլած պիտի ըլլանք, եթէ երկուքս միանաւ-  
լով մեր քսակէն ընծայ մը ընենք այս հէք  
ստնտուին։ Ես անոր ձմեռան համար ասուե-  
ղէն շընազգեստ մը կը շինեմ վրայի վերար-  
կուովը։ գու ալ քանի մը զցոր սպիտակ ա-  
գանելիք, զանկապան և արտախուրակ մը  
պատրաստել տուր։ Պառաւ կնոջ մը հա-  
մար ինչ կրնայ պէտք ըլլալ, իւրեւ ներքին  
ագանելիք, գու լաւ գիտես։ Ի՞նչ կ'ըսես  
այս մասածութեանս համար, Նունիկ։ չեմ  
գիտեր, աղէկ կը խորհիմ արգեօք։

Եթէ քեզ եւս հաճոյ կը թուի խորհուր-  
դըս, իմացո ինձ որ գրեմ հաւուն, որուն  
ձեռքն է մեր հայրենական ժառանգութիւ-  
նը, զըկել մեզի առ այս հարկաւոր ստակը։

Մնացիր բարեաւ, սիրելի քուրիկս,  
գիտցիր որ եմ միշտ

Քու կաթոգի եղբայրդ

(Յունական)

ԱՐՏԱՒՐ.ԶԳ ՄԱԶԵՍԻՆ

425. Պառաւեալ կիմ բարեխամ մը գրէ  
նորամուսին կնոջ մը տնաւեսոքեամ վրայ :

**Սիրելի որդեակ,**

Ահա վերջապէս տանտիկին եղար, ընտիր  
ամուսնու մը որ կը սիրէ քքեզ, և դու ըզ  
նա, ինչպէս որ արժանի է : Կը շնորհաւորեց  
քեզ՝ ի սրտէ, և կը մաղթեմ որ բարեբախ  
տութիւնդ միշտ առաւելու :

Շնորհ ունիմ քեզ փոքրիկ սիրուն նամա-  
կին համար զոր գրեցիր այս աւետիսը տալու  
համար ինձ : Ուրախ եմ որ չես մոռցած հա-  
ւատարիմ բարեկամդ որ երբէք անտարբեր  
եղած չէ և ըրլար քու կենացդ պատահար  
ներուն, և չեմ զարմոնար, քանզի գիտես  
մէրս որ առ քեզ, և պատճառ ունիս հա-  
ւատալու թէ իզգերուն համածայն ամուս-  
նութիւն մը որ ձեր բոլը գերգաստանը և  
ամեն բարեկամ լցուց ինդութեամբ :

Ամուսնական վիճակը մանելնուդ պէս,  
ինչպէս կը տեսնեմ, գլխաւոր փոյթդ եղած  
է գիտնալ թէ ինչպէս կը վայլէ կնոջ մը տը-  
նաշէն ըլլալ, ուստի և ինէ խորհուրդ կը  
խնդրես առանին տնաւեսութեան նկատմամբ,  
վստահերով իմ վաղեջուց փորձառութեանս  
և բարեկամութեանս որ առ քեզ : Այս փոյ-

թըդ, սիրելի որդեակ, ըստ իս մեծ պատիւ  
և գովեստ է քեզ, և սովորէնեւ իմ խոր-  
հուրդս կը հարցնես այս կարեւոր կէտին նը-  
կատմամբ, կը փութամ աւասիկ պատասխա-  
նել ըստ կարի շնորհակալ ըլլալով քեզ վատա-  
հութեանդ համար որ առ իս :

Արդ՝ տնտեսականութեան մատին, սի-  
րելիդ Յաշան, կը սեմ թէ կծծութիւնը  
խնայողութիւն չէ, ուստի և լաւ տնտես  
չեմ համարիր տան տիկին մը որ իւր քառա-  
կին բերանը գողգուցալով կը բանաց . զգու-  
շանալու ես ուրեմն հախ որ չափազանց ճըշ-  
դութիւնն ի ծախս քեզ ուշդութեան չտա-  
նի : Այրդ կը շահի ամիսն 2600 դահե-  
կան . և դու ամիսը 1500 դահեկանի եկա-  
մուտ մը բերիր օժիտ, ապա ունիք ամուշ ա-  
միս աւելի քանի չորս հազար դահեկան եկա-  
մուտ :

Այս եկամախն համեմատ րըէ ձեր տա-  
րեկան տան ծախքը, միշտ երեւելի մաս մը  
եկամաւեէն պահելով արտաքյ կարդի ծա-  
խուց համար :

Տնտեսութիւն ընտղները սովորաբար կը  
հարցնեն, թէ տան համար գնուած պաշար  
կամ պարէն կանխիկ թէ ապասիկ վճարուե-  
լու է : Եթէ այս խնդիրը լուծել ինձի թող-  
ուէր, պիտի ըսէի . ջանա ըստ կարի միշտ

կանիսիկ վճարել, այնպէս որ հաշիւ չունենաս վաճառականին քալ: Ով որ կ'առնու և կ'առնու առանց գիտնալու իւր քսակին հաշիւ՝ թերեւս գիւրին բան կը կարծէ առնուլը: բայց պիտի սարսափի, երբ ՚ի վերջ ամսոյն մատուցուի հաշիւը:

Խրատ կու աամ քեզի նաեւ տարեկան պաշար մը ունենալ, մանաւանդ այն բաներուն որ օր ըստ օրէ պիտոյ են: Զորօրինակ՝ ունեցիր միշտ կողի աղած և ձէթ ՚ի թակոյկու՝ ձեր տարեկան պիտոյից համեմատ այսչափ կամ այնչափ լիսր, նյնպէս աճառ և մոմ, շաքար և որիզ և ածուխ և փայտ ըստ բաւականին՝ գէթ քանի մը ամսուան համար պատրաստ: Այս ամենը եթէ իւրաքանչիւր իր եղանակին և լաւագոյն պայմանաւ գնուին, մեծ տարբերութիւն կ'ըլլայ ծախուց մէջ քան թէ օրէ կամ եօթնեկէ գնելով, մանաւանդ թէ ժամանակ ալ կը շահուի, քանզի բաւական բան հանապազրդ ձեռքիդ տակ կ'ունենաս:

Քիչ մը յառաջ ըսի ապառիկ չդնել վաճառականէն, մանաւանդ եթէ մանրավաճառ է: Բայց կայ մանրավաճառ մը որմէ ապառիկ գնել օգտակարագոյն է, այն է մասվաճառը: Ուստի, եթէ հնար է, սակ արկ մասվաճառի մը հետ, տարւոյ մը կամ վեց-

ամսեայ և կամ գէթ եռամսեայ ժամանակի համար, քեզի այս ինչ որոշ գնով սա երեք տեսակ մաէն տալու, եզան, որթու և ոչ խարի, զորօրինակ 2½ կամ 3 գահեկան կէս լիտրը: Այս գնով թերեւս երբեմն կորուստ ընես, մանաւանդ հասարակ կտորներու համար, բայց փոխանակ այս փոքր կորստեան՝ սա մեծ օգուտը պիտի ունենաս, որ միշտ չափաւոր գնով մոյ ընտիր կտորներ պիտի գտնուին սեղանիդ վրայ:

Եթէ ունիս մառան, և մանաւանդ եթէ պարագաները կը թողուն կամ կը պահանջեն, գինին մի մոռնար: Այրգ, պատելով գինւոյ նաւահանգիստը կամ գինւոյ մթերանցներ, կրնայ պատեհութիւն որսալ ընտիր գինի գտնել գիւրագնի: Եթէ կրնաք գինւոյ տեսակներն ընտրել, հասարակ և բնական գինին ընտրելի է, մանաւանդ եթէ ջուր կը վերցնէ. քանզի այնպէս թէ առողջարար կ'ըլլայ և թէ խնայողական, այսինքն գրեթէ հարիւրին 50 կը շահուի, սեղանդ ալ չի գըրկուիր այս զուարթ ըմպելիէն որոյ կիրառութիւնը որչափ խորչելի է դուրսը, այնչափ ընդունելի և շահաւէտ է առտնին, մանաւանդ սեղանի վրայ:

Բնակարանի գալով, սիրելի որդեակ, միաը 600 գահեկան վարձ տալու խօսք կը-

նես : ինձ կը թուի թէ այս գումարը գէթ  
առայժմ քիչ մը բարձր է : Դեռ տղայ չու-  
նիք , և կ'ըսես թէ դայեակ կամ ստնառու-  
թռնելու միտք չունիս : Կարծեմ թէ պարա-  
գաներն այսպէս ըլլալով , և թէպէտ տան  
վարձերն հիմա բարձր են , 400 դահեկանի  
տուն կամ գէթ յարկ մը ձեզի համար առ-  
այժմ հերթք է :

Խօսքս կը վերջացնեմ ըսելով , սիրելի  
դուստր իմ , թէ ամենեւին մի զարհուրիր ,  
եթէ ի սկզբան հաշխուդ ճիշդ չելլեր միշտ :  
Ամեն հասակի մէջ մարդ կը խաբուի , բայց  
լաւ տանտիկին և իմաստուն տնտես ըլլալու  
համար կարեւորագոյն բանը փորձառու-  
թիւնն է :

Մնաս բարեաւ , սիրելի որդեակ , ըն-  
դունէ բարեմաղթութիւններս , և հաւատա-  
զիս անյոդողդ բարեկամքեղ (զոր չեմդան-  
դազիր որդեակ կոչել , քանզի ձեռացս մէջ  
ծնար և մնար) , և այրկանդ՝ զոր կը սիրեմ  
և կը յարգեմ , իբրեւ արդարեւ արժանա-  
ւոր ամսութինքեղ : Ողջ լերուք երկոքին , և  
մի մոռնաք ձեր պառաւեալ բարեկամը որ  
արդէն գերեզմանին մօտ՝ ուրիշ բանի չի փա-  
փաքիր , բայց անդամմ' ալ ձեզ տեսնել :

Հաւատարիմ ձեր

(Թագավորական)

Ա . Ա .

126. Աղջիկ մը իր հօրաքեռը կը գրէ իր հօրը  
առողջուրեան աւետիսը :

Սիրելի հօրաքոյր :

Ահա ձեզի աւետիս մը : Բժիշկն այսօր  
շատ հանդարտ և գոհ էր , և յս տուաւ  
մեղի թէ հայրս վտանգն անցուց և առող-  
ջանալու վրայ է :

Արդարեւ տենդը գեռ կը տեւէ , թէ-  
պէտ շատ աղդու միջոցներով կը մաքառուի  
ընդդէմ : Այսօր մետասաներորդ օր է որ  
խեղճ հայրս ժամ մ'անդամքուն չտեսաւ ,  
քանզի քուն չըսուիր այն թմրութիւնը սրուն  
մէջ ատեն ատեն կ'իյնայ ախտացեալ մը չա-  
րաչար ընկճուելով հիւանդութիւնն : Այս  
շարունակ քնհատութիւնն ու պահեցողու-  
թիւնը շատ նիհարացուցին հէք հայրս : Բայց  
և այնպէս խաղաղ են մեր սիրտերը բժիշկ-  
ներուն երեկուան խորհրդակցութեանը վր-  
այ . երեք բժշկաց կարծիքը միաբան եր  
յայսմ թէ ներքին գործարանաց մէջ խան-  
գարտում չկայ , հետեւապէս վտանգ չկայ  
մեր սիրելի հիւանդին կենացը համար . սա-  
կայն , ըսին , ապաքինութիւնը շատ ծանր  
յառաջ պիտի երթայ , և թէ զգուշութեամբ

և խնամով միայն կրնանք կատարեալ առողջութեան հասնիլ :

Կը տեսնէք ուրեմն , սիրելի հօրաքոյր ,  
որ մեր հիւանդին ներկայ կացութիւնը հիւ-  
մա աւելի միխթարական է , այնպէս որ յոյս ,  
նա մանաւանդ վատահութիւն ունինք թէ  
նախախնամութիւնը մեր հայրը պարգեւեց  
մեզի : Ուրախութեամբ կը հազորդեմ ձեզ  
այս լուրը , այսուհետեւ ալ կը գրեմ ձեզ  
ինչ փոփոխութիւն որ պատահի հիւանդու-  
թեան ընթացից մէջ :

Մայրս կ'ողջունէ ձեզ կտթոգին , նոյն  
պէս , և աւելի ես , ես որ եմ

Զեր խանդակաթ եղբօր դուստրը  
(Թագավորական) ՎԱՐԴԵՆԻ ԿԱՄՍՈՐԵԱՆ

շատիպէին զիս : Յերեւո այս յառաջաբանէն  
հասկցար թէ ինչ առաջարկութիւն է Դր  
պիտի ընեմքեզի . բայց զիարդ և իցէ , ոչ  
ապաքէն պարտական եմ ըսել յայտնապէս :  
Ապա ուրեմն , սիրելի դուստր իմ . գիտցիր  
որ ամուսնութիւն մըն է զոր կ'ուզեմ առա-  
ջարկել քեզ :

Արդէն վեց տարի է որ այրի ես , Զար-  
դիկ : Բու գժբախտ այրութեանդ ժամա-  
նակն յիշելով , որդեակ իմ , ըսել չեմ ու-  
զեր թէ միխթարուած կամ միխթարուելու-  
ես . քու սբանչելի առնդ մահուան վրայ . գի-  
տեմ որ քու գորսվալի սիրտդ սփոփելու հա-  
մար գարեր բաւական չեն մոռցնել քեզ  
քաղցր ամուսնական եռամեայ կեանքի մը  
յիշատակը : Բայց հարկ է երբեմն բանակա-  
նութեան ձայնին լսել , երբ այս ձայնը մեզի  
կը խօսի յօդուտ այլոց որ սիրելի են մեզ ,  
և որոնց շահը նախամեծար ընարելու ենք  
քան զմերը :

Գուն , սիրելիդ Զարդիկ , ունիս երկու  
դուստրիկ զօրս կը սիրես կաթոգի , անոնց հա-  
մար ունիս մեծամեծ և բարձր փափաքներ  
զորս ունենալ մօր մը ներելի է . քու բոլոր  
իղձդ , բոլոր խորհուրդներդ են տեսնել զա-  
նոնք օր մը երջանիկ և վայելուչ կերպով տե-  
ղաւորուած : Ասոնք աղէկ , սիրելիս . բայց

127. Հօրեղբայր մը գրելով իշտ այրի եղբօր  
դսաեր՝ կ'առաջարկէ ամուսնութիւն :

Սիրելի Զարդիկ ,

Այս օրերս յանձնուեցաւ ինձ շատ փա-  
փուկ , միանդամայն գժուարին պաշտօն մը  
որ քեզի վերաբերութիւն ունի . և կը խօս-  
տովանիմ թէ անհնար էր ինձ ընդունել զայն ,  
Եթէ սէրն զար ունիմ առ քեզ , և զիս միջ-  
նորդ կացուցանող անձին բարեկամութիւնը

ըսէ ինծի ձեռու ՚ի կուբժս , հաստատուն յցս  
մը ունիս գործադրելու ինչ որ կ'ըղձաս անոնց  
համար : Կարծեմ թէ ոչ . սիրել և ըղձալ  
մօր մը ձեռքն է , բայց գործադրել՝ ոչ :

Ուստի , սիրելի դուստր իմ , թա-ի ինձ  
թէ , ասոնք խորհելավ , բաւական պատճառ  
պիտի չփառնես մերժելու ամուսնութիւն մը  
որ քեզի և սիրելի դատերացդ համար երջաւ  
նիկ և ցանկալի ապագայի մը ամենէն հաս  
տառուն երաշխաւորութիւնն արդէն կու-  
տայ :

Տէր Զաւէն Գուրգենեան բարի , ուղիղ ,  
զգօն , հարուստ , միանգամայն առատաձեռն  
է , և կարող , ինչպէս գիտեմ , քեզ երջանիկ  
ընելու . երջանիկ կ'ըսեմ սա մտօք , որ անով  
պիտի ունենաս հզօր պաշտպան մը քու մա-  
տադ ընտանեացդ և բարեկամ մը քեզի հա-  
մար . քեզի՝ որ գեռ քսան և չորեքամեայ  
այրի , զգաստ , հանձարեղ և գեղեցիկ , հօրէ  
և մօրէ զրւրկ , դոյզն եկամտիւ գրեթէ ան-  
տես թողուած ես , հեռի նաեւ մօրեղբօր-  
մէդ որ մի միայն պաշտպանդ եմ քո :


Տէր Գուրգենեան քառասնամենի է ,  
բայց ունի ամեն յատկութիւն այր և հայր  
ըլլալու : Արդէն մեծ համբաւց և ստաց-  
ուածոց տէր , ապագային մէջ եւս քան զեւս  
փայլելու յցսերն ալ ունի : Արդէն քու ըդ-

գաստութեանդ համբաւը լսած ըլլալով , տե-  
սած է քեզ երկու անգամ պարտէզը , և վեր-  
ջին անգամ իր գերձակուհւոյն խանութը  
ուր գլխարկդ նորոգել կու տայիր , և շատ  
խորհելէն եաքը իւր կողմանէ կ'որոշէ քեզ  
իրեն ամուսին ընել , և որավիշետեւ հօրդ  
ժամանակէն մեր մուերիմ բարեկամն է , և  
մեծ վստահութիւն ունի իմ վրաս , դիմեց  
ինձի , գիտնալով որ հօր տեղ եմ քեզ , և  
ահա անոր կողմէն փոխանորդաբար կը խըն-  
դրեմ քու հաճութիւնդ :

Հիմա կը թողում քեզ խորհիլ ազատա-  
բար : Ձեմ ուղեր ստիպել զքեզ , ոչ ալ ազ-  
գեցութիւն բանեցնել քու վրադ , միայն ,  
և քեզ սիրելուս համար , Զարդիկ , դուստր  
իմ , կ'ըսեմ թէ , եթէ առաջարկութիւնն  
ընդունիս , ուրախութեամբ պիտի լնում .  
կը յաւելում նաեւ թէ քու հաճութեանդ  
լուրը երջանիկ պիտի ընէ քեզի հետ նաեւ  
անոր այս առաջարկութիւնն իմ քերնով կ'ընէ  
քեզի :

Ողջ լեր , դուստր իմ , և փութացուր  
որչափ հնար է պատասխանդ որուն անձկա-  
նօք կը սպասէ

Խանդակաթ հօրեղբայր քո  
(Թուական) Ա. Ա.



128. Ճամբորդոքեան մը Ակարտագիրը :

Ակրելի ծնողը ,

Երեք ու կէս ամսուան ճամբորդու թենէ  
մը ետքը հասայ ահա Ռիոյ Ճանեիրոյ , հօր-  
եղեօրս տունը . բայց գիտցէք , սիրելի ծը-  
նողքս , որ թէպէտ հիմա հանդարտ և եր-  
ջանիկ եմ , ճամբան կրած նեղութիւնս ան-  
հնարին էր , և լի դժուարին և աղետալի  
պատահարօք :

Ինչպէս գիտէք , նաւը մտանիք Մոյիսի  
14 ին , և օդը որ հնդետասան օրէ հետէ  
շատ պարզ էր՝ կը խոստանար մեզ յաջող  
ճանապարհ . բայց մեր նաւարիութեան հե-  
տեւեալ օրը հարաւային արեւելեան հովմը  
փչելով շեղեցուց զմեզ մեր ճամբէն : Նա-  
ւապետն , այը հմուտ և փորձ նաւարիու-  
թեան արուեստին , և մանաւանդ , ինչպէս  
կ'ըսէին նաւաստիք , ովկիանոսի որդը , ամեն  
հնարիք բանեցուց մեր ապահովութեանը հա-  
մար : Մերթ տեղի կու տար հողմոյն , մերթ  
կ'ընդդիմանար , յուսալով այսպէս յաղթել  
անոր բունութեանը , և պրծիլ քանի մը օր-  
ուան յապաղմամբ կամ դոյզն վիասով մը :  
Բայց յետ սակաւ միոյ մրբիլ մը բրդաւ ,  
ահարկու մրբիլ մը , սիրելի ծնողքս . քանզի

մեր նաւը որ շատ ամսուր էր և պնդակազմ  
երեւ ընկուզի կեղեւ մը չկրցաւ դիմանալ  
կատաղի ալեաց : Քոլոր առագաստներն ամ-  
փոփուեցան , բաց ՚ի միոջէ փոքրագունէն որ  
բաց մնաց նաւը հաւասարակշռութեան մէջ  
պահելու համար . միով բանիւ նաւավարու-  
թեան արուեստին բոլոր ճարտարութիւնը  
դրուեցաւ ՚ի գործ , բայց ՚ի զուր : Մեր  
կայմերը խորտակուելով սարուեցան ալիք-  
ներէն մի առ մի . նոյն արկածը կրեց նաեւ  
մեր զեկը . կոհակները , մէն մի իբրեւ ահա-  
գին լեառն , իւրաքանչիւր վայրկեան նաւին  
վրայ խնալով՝ կ'աւշէին ինչ որ կը գտնէին  
տախտակամածին վրայ , մակոյի , մալուխ ,  
ըռւան . կահ և կաղմած ազգի ազգի :

Ի՞նչ երկնցնեմ , մեր նաւն եղաւ իբրեւ  
կոճղ ոստաքանց , զոր չէր հնար ուղղել այս  
կամ այն կողմը : Այսպէս մեր փրկութիւնը  
կամ կօրուսաը նախախնամութեան ձեռքն  
էր : Երեք օրհասական եօթնեակ թափառե-  
ցանք այս կերպով ովկիանու վրայ , խնայե-  
լով մեր պաշարը որ տակաւ կը նուաղէր ,  
այնպէս որ երկրորդ մեծ հոդ մ' ալ այս էր  
մեղի համար : Աղետալի գիպուածով մը բնաւ  
չպատահեցաւ նաւ մը որ մեզի օգնութեան  
համեմէր . անոնք որ հեռուն կը տեսնուէին  
չէին կրնար նշմարելոչ մեր կոճղացեալ նաւը ,

ոչ ալնշանները զոր կու տայինք : Վերջապէս  
Աստուած լրւաւ մեր աղօթքը , և օր մը այ-  
գուն ցամաքը երեւցաւ մեզի արեւմտից  
կողմը . այս ցամաքն էր Ամերիկայի մէջ  
Անդղիացւոց Երրորդութեան կղզին : Բարեւ ,  
սիրելի ծնողքս , եթէ գիտնայիք , ի՞նչ ան-  
պատում խնդութիւն կը զգայ նաւաստին .  
Երբ , այնչափ օր կենաց և մահու մշջտեղ  
անցունելին ետքը , կը տեսնէ ցամաքը , անոր  
ցնծութիւնը նկարագրել անհնար է : Ուրա-  
խութենէն մեռնելու մազ մը կը մնայ , երբ  
ոտքը խոտաւէտ և ծաղկալից հողին վրայ կը  
դնէ , հաստատուն հողին՝ որ կը փոխանակէ  
ալեաց շարժուն երեսը :

Կղզին ուր ելանք , կամ , լաւ ևս ըսեմ ,  
ուր հովը մեզնետեց , ինչպէս ըսի , Երրոր-  
դութեան կղզին էր , Անդիկեանց ամենէն  
հարաւայինը , դէմ յանդիման այն տեղւոյն  
ուր Օրենոգոյ գետ կը թափի ծովը : Այս  
կղզւոյն վրայ Երկինք միշտ կապոյտ են , միշտ  
պարզ , և գետինն այնպէս զուարթ և բեր-  
րի է , որ կղզին յիրաւի կը կոչուի Դրամ  
Անդիկեանց :

Երեւ օր հոս մնացինք , մինչեւ որ սպա-  
նիացի առագաստանաւ մը գալով տարաւ  
մեջ Ռիոյ ծանէիրոյ , ուր եմ , քառասուն  
և ութ ժամէ , սքանչելի մօրեղքօրս տու-

նը , գդուեալ և սիրեալ և երջանիկ : Լոե-  
լով որ նաւ մը կար պատրաստ Գաղիա եր-  
թալու և անկէ արեւելիք , փութացայ գը-  
րել այս քանի մը տողը : Թէ ինչպէս է Պը-  
րաղիիս , և ինչպէս եմ ես , առ այժմ բան  
մը չեմ կրնար ըսել , քանզի դեռ բան մը  
չեմ գիտեր , և ոչ իսկ ուշաբերած եմ նա-  
ւարկութեան ահագին թմրութենէն :

Մնաք բարեաւ , սիրելի ծնողքս . որչափ  
ուրախ եմ որ այն սոսկալի վտանգէն ազա-  
տեցայ , նոյնչափ տիսուր եմ ձենէ հեռու-  
գտնուելուս համար , թէպէտ , ինչպէս ըսի ,  
անդրանիկ որդւոյ պէս եմ , գրգեալ և գըգ-  
ուեալ :

Կ'աղաչեմ , սիրելի հայր իմ , գրեցէք  
փութով , մի մոռնաք ձեր անձկայրեաց որ-  
դին :

(Թուական)

Ա. Ա.

Տոմսակներ , այլեւայլ դիպաց և գործի  
նախակներ :

ԴԻՏՈՂ. ՈՒԹԻՒՆ

Տոմսակը համառօտ նամակ է որ կ'ուզ-  
դուի շատ ընտանի բարեկամներու և կամ  
առ ստորնագոյնս , բայց ոչ բարձր աստիճա-  
նի մարդոց , և կը տարբերի բուն նամակէ

այնու զի շատ համառօտ կը գրուի և սովորաբար յերրորդ դէմս, թէպէտ երբեմն կրնայ առաջին դէմք գրուիլ: Տոմսակներն ընդհանրապէս հրաւիրանաց, ընծայի, ընտանեկան դէպէմը, զոր օրինակ ծնունդ, հարսանիք, մահ ծանուցանելու համար կը դրկուին: Տոմսակի մէջ թուականը վերը կը գրուի, և վերնադիր ու սատրադրութիւն չի գրուիր, եթէ տոմսակն երրորդ դէմք գլրուած է, ինչպէս որ կ'ըլլայ սովորաբար:

Այլեւայլ դիպաց նամակները կը գրուին ազգականի կամ բարեկամի և կամ ո և իցեւ ումեք յաջող կամ ձախող դէպք մը ծանուցանելու համար, ինչպէս արկած մը, ամուսնութիւն, ծնունդ, հիւանդութիւն, մահ այլովքն հանդերձ: Շատ անգամ հարկ կ'ըլլայ այսպիսի նամակ մը գրել այնպիսի անձի մը որուն հետ ընտանութիւն կամ բարեկամութիւն չունիք. և ան տաեն պէտք է ըսկ դէպքը պատմել կամ իմացնել, բայց եթէ ազգականի կամ մտերիմ բարեկամի և կամ մեզի վերաբերութիւն մը ունեցող անձի մը կը գրենք, կրնանք դէպքին մանր պարագաներն ալ յայտնել. ընտանի անձինք սովորաբար կ'ուզգին պարագայիւք գիտնալ ինչ որ մեզի կը պատահի, շատ անգամ կը վշտանան իսկ, եթէ պարագաները կը ծած-

կենք կամ չենք յիշեր, զոր օրինակ երբ մէկուն կը ծանուցանենք իր մէկ ազգականին մահը, այն մարդը կ'ուզգէ որչափ հնար է անոր հիւանդութեան և մահուան ամենէն մանր դէպէրեն անգամ լսել, նա մանաւանդ կը միսիթալուի զանանք գիտնալով:

Գործի նամակներն, ինչպէս են հաշիւմը խնդրելու, առնլիք պահանջելու, գործի կամ գժուարութեան մը վրայով առաջարկութիւն մը ընելու նամակները, մի և նցյն բնութիւնն ունին, այսինքն ծանր նիւթերու վերաբերեալ են և պէտք է որ ծանրութեամբ գրուին: Այս տեսակ նամակներու մէջ, գարձուած, զարդ, զուարձաբանութիւն չի պահանջուիր, այլ յստակութիւն և պարզութիւն, և միայն այն բանն ըսել որ կարեւ որ է. բայց ըսել չէ թէ ու ճայ և վայելչութեան դէմ մեզանչելու է. առանց վայելչութեան ոչ պարզութիւն կայ և ոչ յստակութիւն: Գործայ նամակներու համար մանաւանդ ամենէն աւելի փայթ և զգուշութիւն կը պահանջուի. այսպիսի նամակներ գրել գրեթէ ուրիշ տեսակ նամակներ գրել գրեթէ ուրիշ տեսակ նամակներ մեզին է: Եթէ ոք յըստակ և լուրջ միտք չունի, չի կրնար երբեք այսպիսի նամակներ գրելու մէջ յաջողիլ:

ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ

1. Հրատէր 'ի ձաշ կամ 'ի հանդէս :

1.

25 Մարտ, 1873

Այս անուն Տէր և Տիկին յարդանօք ողջունելով զայս անուն Տէր և Տիկին կ'աղաշեն զնա հաճիլ գալ Երկուշաբթի միջօրէին իրենց հետ ճաշելու այս ինչ ժամուն :

2.

Այս անուն Տէր կամ Տիկին ողջունելով զՏէր և զՏիկին այս անուն՝ կը խնդրէ որ ամսոյս 7 ին, Հինգշաբթի օր հրամայեն կեսօրուան ճաշին իրեն սեղանակից ըլլալու : Հրաւիրեալ են նաեւ Տէր այս անուն, Տէր այս անուն և Տիկին այս անուն հանդերձ իւր գստերը այս անուն Օրիորդաւ : Ճաշը պատրաստ պիտի ըլլայ ճիշդ կէս օրին :

3.

Տէր և Տիկին այս անուն Երեքշաբթի գիշեր երեկոյթ մը ունենալով 'ի պատիւտօնի մօր իւրեանց այս անուն Տիկինը, կ'աղաշեն զՏէր և զՏիկին այս անուն հանդերձ բոլոր ընտանեօք, պատուելներկայութեամբ

իւրեանց այս ընտանեկան հանդէսն ուր բոլոր հրաւիրեալները բարեկամներ են :

ՊԱ.ՏՈ.ՍԻ.Ա.Ն

1.

Տէր և Տիկին այս անուն սիրով և շնորհակալութեամբ կ'ընդունին այս անուն Տեառն և Տիկինով ճաշու հրաւերը :

2.

Տէր կամ Տիկին այս անուն շնորհակալութեամբ կ'իմացունէ, այս անուն Տեառն կամ Տիկինով, որ ընդունած է Հինգշաբթի աւուր կեսօրուան ճաշու հրաւերը, ուստի և պիտի փութայ սահմանեալ ժամուն ներկայ գտնուիլ :

3.

Տէր այս անուն Տէր և Տիկին այս անուններում խնդրելով կ'իմացնէ որ իւր Տիկինով անհանգստութեանը պատճառաւ չիկրնալ ներկայ գտնուիլ Երեքշաբթի օրուան երեկութին :



2. Ժամանդրութեան տունակ

1.

2 Յունիս 1873

Տէր այս անուն կարեւոր գործի մը համար իբր կէս ժամ ուղելով տեսնել զՏէր այս անուն կը խնդրէ թէ հնար է արդեօք վաղիւ տեսնուիլ ի տան նորա (կամ այս ինչ տեղ) առաւոտեան ժամն ութ ու կէսին :

2.

Տէր կամ Տիկին այս անուն մեծ շնորհք մը ըրած պիտի ըլլայ , եթէ Կիրակի ժամը տանն ու կէսին հաճի քանի մը բութ շնորհել այս անուն Տեառն կամ Տիկինը որ կը փափաքի անձամբ գալ և խօսիլ առանձին այս ինչ գործոց վրայ :

3.

Տէր այս անուն երէկ մայրաքաղաքու հասած ըլլալով կ'աղաջէ զՏէր այս անուն վազիւ Հինգչարթի գալ տեսնել զնա Բերա այս ինչ պանդոկը Ա. յարկ , թիւ 7 : Կարեւոր լուրեր ունի հաղորդելու , և ներում կը խնդրէ անձամբ չներկայանալուն համար ՚ի պատճառս անհանգստութեան մը , որ թէեւ թէթեւ , պիտի չներէ իրեն քանի մը օրսենեկին գուրս ելլել :

ՊԱՏԱՄԻԱՆ

Տէր այս անուն ներում խնդրելով Տէր այս անունին կ'իմացունէ որ , վաղիւ առաւոտուն այս ինչ տեղ կամ այս անուն անձին Երթալու պարտաւորեալ ըլլալով , չի կրնար տեսնուիլ . բայց հետեւեալ օրը որ է Ուրբաթ պատրաստ է ընդունել մինչեւ կէսօր , ժամը քանիին որ հաճոյ թուի այս անուն Տեառն պատուել զնա խրալ այցելութեամբ :



Օրինակ տունակի որ կը գրուի երբ տունիր չի գտնուիր անձ մը որում այցելութիւն եղած է :

Տէր այս անուն կարեւոր գործի մը վրայ խօսելու համար այսօր առաւոտեան ժամը 9 ին այս անուն Տեառն այցելութիւն ընելով , գրախսուաբար զանի չգտաւ տունը , ուստի կ'իմացունէ որ այսօր ժամը երեկոյեան երեք ու կէսին գարձեալ պիտի գայ , և թէ շատ շնորհակալ պիտի ըլլայ , եթէ զանի յիշեալ ժամուն տունը գտնէ . և եթէ Տէր այս անուն չի կրնար վերսիշեալ ժամուն տունը գտնուիլ , հաճի իմացնել թէերբ կրնայ ընդունել զՏէր այս անուն :



3. Այլեւայլ միշրոց վրայ տունսակներ :

1.

Տէր այս անունը չնորհակալութեամբ ետք դարձնէ այս ինչ գիրքին առաջին հասուրը զօր կարդալու համար փոխ առած էր այս անունը Տեառնէ , աղաչելով զրկել իրեն միւս հատորը զօր կը խոստանայ դարձուցանել ընդհուպ :

2.

Տէր և Տիկին այս անունը ողջունելով զՏէր այս անունը կը խնդրեն իմացունել իրենց թէ արդեօք յաջողութեամբ հասան իրենց տունք : Ժամանակին անագան ըլլալուն , օդն ալ աւրուելուն համար յիշեալ տէրն ու Տիկինը մէջ անձկութեան մէջ են , և անյապաղ լուր մը կը խնդրեն :

ՊԱՏԱՍԽԱՆ

Տէր և Տիկին այս անունը չնորհակալ են այս անունը Տեառն և Տիկինոջ հոգ ընելուն համար , և կը փութան իմացնելոր , թէպէտ ժամբան քիչ մը դժուարութիւն կրեցին կառապանն անփորձ ըլլալուն համար , սակայն հասան անվնաս իրենց տեղը :

3.

Տէր այս անուն իւր այգեստանին երախայրիէն կազմով մը մշկահամ խաղող զրկելով առ այս անուն Տիկին , կ'աղաչէ զնա ընդունել զայն մարդասիրաբար , և փութալ իմացունել իւր առողջութեան վիճակը , մասնաւանդ այս անուն օրիորդինը որուն համար ըսուեցաւ թէ տկար է :

ՊԱՏԱՍԽԱՆ

Տիկին այս անուն սիրով ընդունելով այս անուն Տեառն զրկած խաղողը , կը փութայ երեւ նշան չնորհակալութեան առարել առնա երկու մէծ սրուակ իւր տան հին գինին , զօր Տիկին այս անուն ախորժելով կ'ըմպէ : Կ'իմացունե նաեւ թէ ինք և օրիորդ այս անուն ողջ և առողջ են :

ՃՃՃՃ

4. Այլեւայլ ձեռագիտաց գրուելոց տունսակաց օրինակներ :

1.

Տէր այս անուն կ'աղաչէ զՏէր այս անուն գերձակ վաղիւ առաւօտեան ժամբ 2 ին հաճիւ գալ տուն , այս անուն Տեառն և նորա որդւոյն համար մէն մի վերարկուի և

մի մի զցդ անդրավարտեաց և բաճկոնի չափ  
առնելու, և կը խնդրուի որ սեւ քաշմիրի  
օրինակներ հետք բերէ աղնիւ և միջին տե-  
սակէն :

2.

Տէր այս անուն կօշկակարէն կը խնդրը-  
ուի վաղիւ կեսօրէն ժամ մը ետքը գալ ի  
տուն այս անուն Տետոն Երկու զցդ մու-  
գաց, և վեց զցդ հողաթափի չափ առնե-  
լու համար :

3.

Տէր այս անուն խոյրարար վաղիւ առա-  
ւոտեան ութերորդ ժամուն հաճի գալ այս  
անուն Տետոն տունը՝ հետք բերելով Երկու  
զցդ բեզցյր սեաւ բարձր, և Երկու զցդ  
ցած գլխարկ ՚ի թաւշէ : Կը խնդրուի որ  
գլխարկները նոր և արդի ճաշակին յարմար  
ըլլան :

~~~~~

Ծանուցագիր կամ շրջաբերական հարա-
կիք, մասի, ծննդարերուրիշն իմացնելու
համար :

ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Մէկուն հարսանիքը կամ մահը, ինչպէս
նաեւ կնոջ մը ծննդարերութիւնը ծանու-

ցանելու համար գրուած նամակները շա-
տերու կը զրկուին, այս պատճառաւ շրջա-
բերական կը կոչուին : Ասոնք սովորութիւն
է տղել տալ նամակի թուղթի վրայ : Հար-
սանեաց շրջաբերականը կը գրուի յերրորդ
գէմս հարսանացելոյն կամ փեսայացելոյն ծնո-
ղացը կողմանէ, Եթէ ասոնք ողջ են. ծննդա-
բերութեան շրջաբերականը նյոնպէս յեր-
րորդ գէմս ՚ի գիմաց առն . իսկ մահուան
շրջաբերականը կը գրուի ննջեցելոյն բոլոր
ընտանեաց կողմանէ, նշանակելով հան-
գուցելոյն տարիքը, մեռելոյն տունը, մե-
ռած օրը և ժամը . և ապա թաղման օրը
և ժամը :

ՕՐԻՆԱԿ

Տիկին այս անուն և մականուն, յանուն
իւր և որդւոց, դատերաց և բոլոր ընտան-
եաց իւրոց, մեծ տրտութեամբ կը ծանու-
ցանէ ազգականաց և բարեկամաց, որ իւր
սիրելի ամուսինը

Տէր այս անուն և մականուն,

Ցետ կարճատեւ կամ Երկարատեւ հի-
ւանդութեան (այս մասը կրնայ զանց առ-
նուիլ), (ունանիք կ'աւելցունեն նաև) ըն-
դունելով եկեղեցւոյ խորհուրդները, հան-
գեաւ ՚ի Տէր այսօր կամ Երէկ, Մարտ 22,

Հինգշաբթի , 'ի տան իւրում այս ինչ տեղ ,
գիշերուան չորրորդ ժամուն , 'ի հասակի 54
ամաց :

Ննջեցելցն յուղարկաւորութեան և թաղ-
ման հանդէսը պատուել կամեցողք կը հրա-
ւիրուին 'ի տուն մեռելցն այս ինչ թաղ ,
այս ինչ փողոց , թիւ այս ինչ Սովորական
արարողութիւնները կատարուելէն ետքը՝
Հանդուցելցն մարմինը պիտի տարուի յեկե-
ղեցին այս անուն , և անտի այս ինչ գերեզ-
մանատուն յիւր հայրենական շիրմը :

(Թուուկան)

Ա. Ա.

— առաջաւ —

Հարսանեաց շրջարերականի օրինակ

Այս ինչ թաղ , 2 Յունիս 1873

Տէր ,

Տէր և Տիկին այս անուն և մականուն
ուրախութեամբ կը ծանուցանեն Ձեզ ի-
րենց սիրելի Որդւոյն կամ Դատեր . Տեառն
կամ Օրիորդի այս անուն և մականուն ա-
մուսնութիւնն ընդ այս անուն և մականուն
Օրիորդի կամ Տեառն , և կ'աղաքէն զջեզ
պատուել ներկայութեամբ ձերով հարսան-
եաց հանդէսը որ պիտի կատարուի 'ի տան
իւրեանց կամ յեկեղեցւոջ այս անուն , Յու-

Նիս 14 Կիրակի օր այս ինչ ժամուն . կը փա-
փարին նաեւ սեղանակից սննել զջեզ նոյն
երեկոյին :

Որիշ օրինակ

Այս ինչ թաղ , 7 Յունիս 1873

Տէր կամ Տիկին ,

Տէր և Տիկին այս անուն և մականուն
կը հրաւիրեն զջեզ և Ձեր Տիկինը , կամ ,
հանդէրձ ընտանեօք , 'ի հանդէս պատկի
Որդւոյ կամ Դատեր իւրեանց այս անուն
և մականուն ընդ այս անուն և մականուն
Օրիորդի կամ Տեառն :

Պատկի խորհուրդը պիտի կատարուի ա-
ռաջիկայ կիւրակէ Յունիս 22 Երեկոյեան
այս ինչ ժամուն յեկեղեցւոջ այս անուն ,
այս ինչ թաղ , կամ 'ի տան իւրեանց թաղ ,
փողոց և թիւ այս անուն : Կը փափարին
նաեւ որ պատուէք ձերով ներկայութեամբ
հարսանեկան ճաշը նոյն երեկոյին :

— առաջաւ —

Շրջարերական Տննդարերուրիւն մը
Ճանուցանելու :

1.

Այս ինչ տեղ , 10 Սեպտ. 1873
Տէր կամ Տիկին ,

Տիկին այս անուն և մականուն յաջու

զութեամբ աշխարհը բերաւ մանչ զաւակ
մը երեկ Ապրիլ 8, երեկցեան ժամը 11 ին :
Մայրն և մանուկը ողջ և առողջ են : Տէր
այս անոնք և մականոնք ուրախութեամբ
կը հաղորդէ Ձեզ այս լուրը :

2.

Այս ինչ թաղ, 21 Դեկտ. 1873

Տէր,

Տէր այս անոնք և մականոնք ուրախու-
թեամբ կը ծանուցանէ Ձեզ որ իւր ամու-
սինը Տիկին այս անոնք և մականոնք յաջո-
զութեամբ ծնաւ այսօր Դեկտ. 21, առա-
ւոտեան ժամը 4 ին ուսուր կամ գուստը մը :
Մայրն ու մանկիկը ողջ և առողջ են :

ՀՅՈՒՅՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԱՅԼԵՒԱՅԼ, ՆԱՄԱԿՆԵՐ
ՈՐԴՉՈՅ մը նաևակն առ հայր իւր իմացնելու
հաւար անոր իւր անոնչոքիւնը :

Ապրելի հայր իմ,

Ամուսնութիւնս ընդ այս անոնք և մա-
կանոնք օրիորդին կատարուեցաւ այսօր Կի-
րակի, Ապրիլ 27: Եկեղեցիէն ելլելով կը
փութամ ահա ձեր պատուերին համեմատ

իմացունել ձեզ այս լուրը որ ինձի համար
շատ կարեւոր է: Հիմա ուրիշ բան չի պակ-
սիր ինձի բայց ձեր ներկայութիւնը որ ինձ
շատ հարկաւոր է: Ներեցէք որ չեմ կարող
գրել ձեզ այսօր երկար . քանի մը օր ետքը
կը յուսամ տալ ձեզ մանր տեղեկութիւն
հարասնեացս վրայ: Կինս կը թուի գոհ:

Ողջ լերուք, սիրելի հայր, կը համբու-
րեմ զձեղ բոլոր որտով:

Անձնանուեր որդի ձեր

Ա. Ա.

~~ՀՅՈՒՅՆ~~

Նամակ առնուոի քոյ եղած մանկան մը
մահը իմացնելու :

Տէր և Տիկին,

Շատ տխուր լուր մը պիտի տամ ձեզի,
և գիտնալով որ այս լուրն այնչափ պիտի
վշտացնէ ձեզ որչափ զիս վշտացոյց, մեծ
վարսնան մէջ եմ, և չեմ գիտեր թէ ինչպէս
համարձակիմ ըսել: Ձեր թշուառ մանկիկը
մեռաւ քսան և չորեքմամեայ հիւանդու-
թենէ մը եաքք: Ոչ իմ ինամբս և ոչ բժը-
կաց օգնութիւնը կրցան նպաստ մ' ընել
ախտացելոյն, թէպէտ ամենեւին բան մը
զանց չառնուեցաւ հիւանդութեան սկիզ-

բէն : Արդարեւ առաջ այնչափ ծանր ըլթուեցաւ ախտը , բայց արագ արագ ծանրանալով շուտով իմացուց թէ մահացու էր : Բժշկին խօսքին նայելով՝ ուղղոյ հիւանդութիւն էր : Այս մեռելին համար պէտք եղածը պիտի ընէ . Եթէ հրաման մը ունիք շուտով հազորդեցէք հեռագրով : Իմացուցէք նաև թէ ինչ ընելու եմ տղուն վերաբերեալ հսնդերձ և կարասի :

Զեր ամենախօնարհ աղախինը

(Թուական)

Ա. Ա.

առաջաւագ

Ստնուի մը յանդիմանորիշն :

Ստնուու ,

Ինձի տրուած տեղեկութեանց նայելով՝ անփոյթ ես մանկիիս հոգալու : Չատ դժգոհ եմ քենէ , և կ'իմացնեմ քեզ որ ստնուուի մը պարտաւորութիւնն այս չէ : Կը լսեմ թէ շատ անդամ մինակ թողլով տղան կ'երթաս զբոսանքի կամ դրացեաց հետ շաղփաղիելու , թէ շատ կ'աշխատիս , այնպէս որ կաթդ կը ջեռնու , թէ խիւսն անդամ կը խնայես , մինչեւ ստէպ անօթի մնալ տղուն . վերջապէս անփոյթ ես նաև տղուն մաքրութեանը որ շատ հարկաւոր է տղոց , մանաւանդ այն հասակին մէջ :

Ասոնք լսելով մեծ վարանման մէջ եւր , և միտք ունիմ գալ անձամբ ստուգել : Եթէ ձիշդ են ըսուածները , քենէ պիտի առնում մանկիկը , և գանգատներս պիտի ընեմ որուոր անկ է : Կ'ողունեմ քեզ :

(Թուական)

Ա. Ա.

→→→○←←←

Նախընթաց նաևսկին պատասխան :

Տիկին ,

Խոր տրտմութեան մէջ ընկղմեց զիս ձեր նամակը : Եթէ միսիթարութիւն մը կայ , սա է , որ կը խոստանաք գալ անձամբ ստուգել ըսուածները : Որչափ հնար է փութացէք գալ , Տիկին , շատ չնորհակալ պիտի ըլլամ , քանզի մանկիկը տեսնելով իսկցին պիտի հասկնաք թէ ըսուածները սուտ և զրպարտութիւն են : Եթէ երբեմն կը ստիպուիմ դուրս ելլել , թէ եւ շատ քիչ կը պատահի , տղան երբէք մինակ չի մնար . միթէ այնչափ անմիտ եմ որ կաթներ տղայ մը մինակ կամ փոքրիկ տղոց հետ տունը թողում : Միշտ խոհես բարեկամի մը կը յանձնեմ , և եթէ շատ մօտ տեղ մը կ'երթամ , կը յանձնես երէց դստերս որ արդէն երկոտասանամեայ է և շատ հսնձարեղ : Տղուն գիրութիւնը և պայ-

ծառ գոյնը բաւական են ցուցնելու թէ ոչ
կաթս ջերմութիւն ունի , ոչ ալ երբէք անօթի
մացած ունի տղան : Իսկ տղան մաքուր պա-
հելուս ուրիշ ապացոյց չ'եմ կրնար տալ
բայց եթէ տանս և զաւկներուս մաքրու-
թիւնը : Այս , աղքատ եմ , Տիկին , բայց
չ'եմ այն կիներէն որ չբաւորութիւնը բա-
րուր ընելով կը ծիւրին աղոտեղութեան մէջ ,
բոլոր օրը պղերգութեամբ դրացեաց դուռ-
ներն անցունելով : Մնալով ձեր գալստեանը ,
Տիկին , կը խօստովանիմ զիս ձեր

Ամենախոնարհ աղախինը

(Թուուկուն)

Ա. Ա.



Նամակ գրեալ առ ազգական ոմն կամ
բարեկամ խնդրելու համար որ կնքանայր
ըլլայ :


Սիրելի հօրեղբօրորդիս ,

Կինս 'ի մօտոյ որդի մը պիտի ծնանի ,
ուստի կը խնդրեմ 'ի ձէնջ , յանուն իմ և
նորա , ձեր բարեկամութեան մէկ նոր ապա-
ցոցը , այն է հաճիլ կնքահայր ըլլալ ծնա-
նելու մանկան : Եատ բարեբախտ պիտի հա-
մարինք զմեղ , եթէ ընդունիք մեր առա-
ջարկութիւնը , մանաւանդ անոր համար որ

ձեր օրինակէն աւելի ընտիր օրինակ մը փա-
ռուց չ'ենք կրնար մեր զաւկին մատուցանել ,
ոչ ալ ձենէ աւելի սերտ բարեկամ և բա-
րերար մը ունինք որուն ընենք այս առա-
ջարկութիւնը :

Ընկալարուք , սիրելի հօրեղբօրորդիտ իմ ,
շնորհակալութեանս հաւաստիքը :

Ձեր անձնանուէր հօրեղբօրորդին
Ա. Ա.



ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՍՏԱՏԱԿԱՆ

Սիրելի հօրեղբօրորդիս ,

Շնորհակալ եմ որ խորհեցաք աղաչելզիս
կնքահայր ըլլալ ձեր որդեկին : Աիրով կ'ըն-
դունիմ ձեր առաջարկութիւնը , և եթէ ,
զոր Աստուած մի արացէ , ձեր մանկիկը օր
մը պէտք ունենայ ուրիշ խնամածուի մը բաց
իւր հօրմէն , վստահ լերուք որ պիտի գտնէ
զիս պատրաստ իրեն ամեն օգնութիւն մա-
տուցանելու . թէպէտ միշտ յօժար պիտի
ըլլամ սիրել և հոգալ զնա իրուեւ զիմ որդ-
եակ : Գիտելով մէրս որ առ ձեզ՝ կրնաք հա-
ւատալ թէ անկեղծ կը խօսիմ : Ողջ լեր ,
սիրելիս :

Անձնանուէր հօրեղբօրորդիտ
Ա. Ա.

ԲԱՅՑՍԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆ

Սիրելի հօրեղբօրորդիս,

Հաճութեամբ կ'ընդունէի ձեր առաջար-
կութիւնն կնքահայր ըլլալու. ձեր որդեկին,
բայց այս ծառայութիւնը ցարդ շատերու
ըրած ըլլալով՝ որոշած եմ այլ եւս չըն-
դունել այսպիսի առաջարկութիւն մը, և
որոյին տեւ ոչ սակաւ ազգականաց և բա-
րեկամաց զլացայ, չեմ կրնար ընդունել ըզ
ձերն՝ առանց 'ի խոր խոցելոյ զանոնք: Այս
է միմիայն պատճառը, սիրելի հօրեղբօր-
որդիս, որ կը հարկադրէ զիս այս բացասա-
կան պատասխանը տալ ձեզ: Կը լուսով այս
պարագան, կը յուսամ, իրաւունք պիտի
տաք ինձ, հաւատալով զիս ձեր միշտ

Հաւատաւիմ հօրեղբօրորդին

Ա. Ա.

Կամակ՝ ստեղուի մը քով եղած մաներան
հիշանդուրի քնը ծանուցանելու:

Տէր և Տիկին,

Զեր մանկիկն հիւանդ է քանի մը օր կայ,
և ես ամեն ինամ տանելով կը տեսնեմ որ

տղան օր քան զօր կը ծանրանայ: Երէկ կան-
չեցի բժիշկը, որ ինձի բաւական երկիւղ
տուաւ: Տղան դժուարաւ ծիծ կ'առնու,
և կու լայ անդադար: Գիտցէք, Տէր և Տի-
կին, որ գիշեր ցորեկ արթուն և մտադիր
եմ, և անհնար պիտի ըլլայ ինձ մխիթարուիլ,
եթէ դժբախտաբար կորսնցնեմ տղայ մը զոր
կը սիրեմ իմիններուս հաւասար, չըսեմ թէ
աւելի քան զնոսա: Այսուհետեւ կ'իմա-
ցունեմ ձեզ ինչ փոփոխութիւն որ պատսհի
յընթացս հիւանդութեան 'ի լաւն կամ 'ի
յոռին. իսկ եթէ չգրեմ, գիտցէք որ փո-
փոխութիւն մը եղած չ'է:

Զեր խոնարհ աղախինը
Ա. Ա.

— 234 —

Կամակ՝ իմացնելու համար թէ տղան
վրանգէ ազատած է:

Տէր և Տիկին,

Տղուն առողջութիւնը երէկուընէ հետէ
լաւագոյն է. բժիշկը քիչ մը առաջ հոս էր,
ինամով քննեց հիւանդը, և ըստ թէ, եթէ
անակնկալ գետք մը չի պատահիր, մանկիկը
զերծ է արդ վտանգէ: Ուստի փութացայ

Հաղորդել ձեզ այս լուրը : Տղան հիմա զբարթագցն է , կը սկսի դիել , գցնը կուգայ , կը քնանայ , և կրնաք վստահ ըլլալ թէ անդուլ խնամօքս ընդ հուպ պիտի դտնէ մանկիկն իւր առաջին առողջութիւնը : Շատ աղաչեցի զԱստուած , որ ողորմելով ինձ պահեց մանկիկը զոր կը սիրեմ իբրեւ զիմն :

Եմ , Տէր և Տիկին , ձեր

Խոնարհ աղախինը

(Թուական)

Ա. Ա.

Նամակ՝ ստուռի մը վրայով տեղեկութիւն
խնդրելու համար :

Տէր ,

Թէպէտ ձեզ անձամբ ճանաչելոյ պատիւն ունեցած չեմ , գիտելով սակայն ձեր բարութիւնը՝ չ'եմ վարանիր աղաչել զձեզ տեղեկութիւն տալ ինձ այս անուն կնոջ վրայ որ ձեր գիւղը կը քնակի , և եկաւ խնդրել յինէն յանձնել նմա դիեցունել նորածին մանկիկս : Կը ցանկամ գիտել միայն թէ արդեօք այս կինը պարկեշտ և անաշէն է , և ձեռնհաս ըստ արժանուցն հոգալու մանկիկս : Ձեր խորհուրդը չ'առած կնոջը հետ պայման ընել չ'եմ ուզեր ստնտուռու-

թեան համար , և որովհետեւ գիտեմ թէ անհամբերութեամբ կը սպասէ պատասխանուց , եթէ հնար է , փութացէք գրել առանց երկար յապաղելու , և շատ շնորհակալ պիտի ըլլամ . Տէր , խոստովանելով զիս ձեր հաւատարիմը

(Թուական)

Ա. Ա.

Մայր մը իր որդուոյն կ'իմացնէ անոր հօրը ծանր հիշանդ ուլալը :

Միրելի որդեակ .

Վեց օր է որ հօրդ կուրծքին իջաւ , և բժշկին խօսքին նոյցելով , երթալով ծանրանալու վրայ է ախար , և շատ քիչ յոյս կայ : Հիւանդն ալ զգալով թէ պիտի չկրնայ աղատիլ , կը ցանկայ տեմնել զքեզ : Եթէ կ'ուզես հօրդ վերջին օրհնութիւնն ընդունել , և զիս միսիթարել անոր կորսուեանը վրայ , միյապաղեր գալ : Աստուած միայն , սիրելի որդեակ , կարող է դարձուցանել մեր գըլ խուն վրայէն այս չարիքը . ապա աղաչել զզնա , ինչպէս օր ես կ'ընեմ ամեն օր , թէրեւուս Ամենական ողորմելով շնորհէ մեզ թշուռ հսցրդ . շատ կը խորհիմ թէ թնչ պիտի ըլլայ մեր վիճակը , եթէ այս սիրելի

ЧИТАТЬ
„КРАСИЦА“

Հիւանդը մենէ յափշտակուի : Ա.Ճապարէ ,
որդեակ իմ , և փցլթ տար չյամել վերջին
ողջնդ և համբայրդ տալու սիրելի հօրդ :
Խանդակաթ մայրդ

(Թ.Ա.Ա.Կ.Ա.Ա.)

Ա. Ա.



Նաւակ՝ հօր մը մահն անոր որդոյն
իմացնելու հաւար :

Սիրելի որդեակ ,

Զարիք մը հասաւ մեր վրայ՝ անակնկալ :
Հայրդ որ դեռ այս առաւօտ ողջ և առողջ
էր՝ մամ մը կայ որ զոհ եղաւ կաթուածի
մը հարուածոյն յանկարծ , որպէս թէ շան-
թահար , այնպէս որ ամեն գարման անօգուտ
եղաւ : Ասոկալի արկած է այս զոր Ա.ստուած
մեզի զրկեց , սիրելի որդեակ . պարտինք
համբերել քաջութեամբ և գիտել հնա-
զանգել վճռոց Ամենակալին , թէպէտ և
ծանր է հարուածը : Կը սպասեմ գալստեանդ
երկաթուղով , որպէս զի կարենաս հատու-
ցանել վերջին պարտիքդ այնպէս բարի և
բարերար հօր , որ ոչ այլ ինչ կը խորհեր
բայց քու և մեր երջանկութիւնը , և որ
բոլոր կենացը մէջ աշխատեցաւ թողուլ մեզ

դիւրաւ ապրելու միջոց : Պահենք անոր յի-
շատակը , սիրելի որդեակ , և ջանանք երւ
կուքս ալ արժանանաւալ անոր գովեստիցը ,
երբ օր մը կը միանանք անոր հետ յաւիտե-
նականութեան մէջ : Ողջ լեռ , որդեակ իմ ,
եղբայր քո և քոքքդ համբուրեն երկու աչ-
կունքու :

Գալստեանդ անձկանօք սպասող մայրդ
(Թ.Ա.Ա.Կ.Ա.Ա.) Ա. Ա.



Այր մը իր կնոջը մահը կը ծանուցանէ իշր
հօրը :

Սիրելի հայր իմ ,

Մեծ ցաւով կիմացնեմ ձեզ կնոջս մահը :
Մեռաւ նա այս առաւօտ , հինգերորդ ժա-
մուն , յետ երկար և ցաւագին հիւանդու-
թեան , գժկամակելով թողուլ այս կեանքը ,
ոչ թէ իրեն , այլ ինձի և իր որբերուն հա-
մար : Դուք , սիրելի հայր , գուք որ քաջ
գիտեք այս սքանչելի կինը՝ կրնաք հասկնալ
ցաւոյս սաստկութիւնը , և թէ ինչ մեծ կո-
րուստ ըրինք ես և որդիքս : Առաջին սաստի-
ճանի գժբախտութիւն է այս վասն իմ , և
բոլորովին 'ի կոր կը կործանէ զիս : Եթէ ա-

ռաջի աշաց չ'ունենայի տղայքո որոց սպա-
ռըսպուռ նուիրեալ պիտի ըլլայ այսուհետեւ
կեանիքս, անհնար էր ինձ մնալ կենդանի :

Ողջ լերուք, սիրելի հայր իմ, միշտ ձեր
միսիթարութեանը և խրատուն կարօտ որդի
ձեր

(Թուական)

Ա. Ա.



Հայր մը իշր որդույն մահը կը ճանոցանէ
միւս եւս որդույն :

Սիրելի որդեակ,

Կը փութամ տալ քեզ ցաւագին լուր մը
որ կը տիրեցնէ ծերութիւնս, և եւս քան
զեւս ցանկալ կու տայ ինձ վախճանի կե-
նացս որոյ իւրաքանչիւր օրը, կրնամ ըսել,
նշանաւոր եղաւ ցաւով կամ դժբախտու-
թեամբ իւիք : Թշուառ եղբայրդ ննջեց բազ-
կացս մէջ յետ կարձ բայց ցաւագին հի-
ւանդութեան : Մեռաւ մինչեւ վերջին վայր-
կեանը ինեւը վրան, ցաւելով որ չ'կրցաւ-
տալ քեզ իւր վերջին ողջոյնը լաւագոյն
կեանիք մը երթալու համար : Ահա մնացի
մնաակ, քու հեռաւորութիւնդ կը զրկէ զիս
օդնութենէ մը որուն կարօտ եմ մանաւանդ

Հիմա : Կը սպասեմ քեզ որ գաս օգնել ինձ
մեր վերջին պարախքն հասուցանելու այնմ
որ այնչափ կը սիրէր զմեզ և նուիրեց իւր
մանկութիւնն առ ՚ի քաղցրացուցանել իմ
ծերութեանս օրերը : Նախախնամութիւնն
պարտէր կոչել ոչ զնա, այլ զիս որոյ կենաց
ընթացքն հասած է ՚ի կատարած : Մինչդեռ
հիւանդ էր հանդուցեալը, քանիցս անդամ
խնդրեցի յԱստուծոյ թողուլ զնա կենդանի
և փոխանակ նորա զիս կանչել իւր քով, այլ,
բարէ, չ'լսուեցաւ աղօթքս :

Ողջ լեր, որդեակ իմ, և լեր երջանիկ
քան զիս :

Խանդակաթ հայր քո

(Թուական)

Ա. Ա.



Փոքրիկ տղու մը մահը կը ճանոցուի :

Սիրելի բարեկամ,

Աւազ, կորուսի փաքրիկ Սանդիկո՛ յետ
չորեքօրեայ հիւանդութեան : Բժշկական
արուեստին յարատեւ խնամքն ու նպաստ
ներն անօգուտ եղան . այսօր երեկոյին մե-
ռաւ դստրիկս, սիրուն որդեակս ՚ի բորբոք-
մանէ աղեաց : Մայրն անհնարին թախծու-

թեան մէջ է , այնպէս որ կը վախնամ թէ
հիւանդութիւն գայ վրան : Ննջեցեալ ման
կան յուղարկաւորութիւնը պիտի ըլլայ վա-
զիւ առաւօտեան տասներորդ ժամուն . եթէ
կրնաս մեզի մօտ գտնուիլ այն գժուարին
ժամերուն , չնորհապարտ կ'ընես զմեզ :

Ողջ լեր , սիրելի բարեկամ , և հաւասա-
ռը եմ

Քու հաւատարիմ բարեկամդ

(Թուական)

Ա. Ա.



Մոտաշոր ազգականի մը մամը կը
ծանուցուի :

Սիրելի որդեակ ,

Հօրեղբայրդ կարապետ մեռաւ այսօր
առաւօտուն յետ երկար և գժուարատար
հիւանդութեան : Յուղարկաւորութիւնը
պիտի կատարուի յետ վազուին , տուաւօտ-
եան տասներորդ ժամուն : Վասն սիրոյ և
խնամոց ննջեցելոյն որ առ քեզ պարտիս
յուղարկել զնա իւր վերջին բնակարանը և
ազօթել վասն նորա , ուստի կը սպասեմ ըզ
քեզ ընդ հուպ :

Գիտես որ հօրեղբայրդ ժառանդ որդի
չ'ունի և ոչ գուստը , բայց չ'ես գիտեր թէ

նա իւր սակաւ ստացուածոց մէկ մասը՝ թու-
զուց մեզ կտակաւ , և քեզ առանձինն , իբ-
րեւ յիշատակ , իւր ոսկի ժամացցց՝ զոր
կրեց բոլոր կենացը մէջ :

Փութալով գալ առ մեզ , ընկալ խան-
դակաթ ողջոյնս :

Հայր քո
Ա. Ա.



ԳՈՐԾԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Առնելիք կը պահանջուի :

(Թուական)
Բարեկամ ,

Շատ գոհ պիտի ընէք զիս , եթէ կարող
էք այս ամսուան մէջ հատուցանել 40 ֆրան-
քը զոր պարտիք ինձ . բաւական մեծ գու-
մար մը ունիմ հատուցանել ՚ի մօտոյ , և թէ-
պէտ այս գումարը զոր կը պահանջեմ ձենէ՝
փոքր ինչ է , շատ հաճելի պիտի ըլլայ ինձ
սակայն ընդունել զայն , և արդէն վստահ
եմ թէ պիտի ընէք ինչ որ ՚ի կարի ձերում
է յիշեալ գումարը ձեռքս հասցունելու
համար :

Զեր անձնանուէր բարեկամն
Ա. Ա.



Կոյն նիշին վրայ ուրիշ նամակ :

(Թուագիսն)

Տէր ,

Գիտեք , կարծեմ , թէ պարտիք ինձ 500
ֆրանք , և թէ մեծ հրդեհին ժամանակէն
հետէ շատ նեղութեան մէջ գտնուելով պէտք
ունիմ այն ստակին , զոր և քանիցս աղաչե-
լով խնդրեցի ձենէ : Դարձեալ կը ինդրեմ
հատուցանել ինձ յիշեալ գումարը մինչեւ
հնդետասան օր : Կը ստիպուիմ ակամայ ըսել
ձեզ , Տէր , թէ , ՚ի լրանալ այսր պայմանաժա-
մի , եթէ չվճարեք , հարկ պիտի ըլլայ ինձ դա-
տաստանական ճամբով պահանջել ձենէ զայն:

Ընկալարուք , Տէր , ողջյնս :

Ձեր հաւատարիմը

Ա. Ա.

— 38 —

Սնամկուրեան հաշուետեսէ (սինտիք) մը
տեղելուրիւն կը խնդրուի :

(Թուագիսն)

Տէր ,

Մին եմ՝ ՚ի պարտատեարց այս անուն ու-
նանկացելոյն որոյ , ինչպէս կը լսեմ , հաշուե-
տես կարգուած էք դուք : Անտարակոյս գի-

տէք հիմա մնանկացելոյն առնվիքն ու տա-
մբը , ուստի և կրնաք ճանչնալ հաւանակա-
նաբար թէ որչափ ինչ մաս պիտի ինայ իւ-
րաքանչիւր պարտատեառն : Շատ շնորհա-
կալ պիտի ըլլամ ձեզի , Տէր , եթէ հաճիք
իմացունել ինձ զայս . միանգամայն ըսել թէ
երբ պիտի սկսիք բաժնել մնանկացելոյն գոյքը
որ մնացած է պարտատեարց համար :

Կը սպասեմ , Տէր , ձեր կողմանէ արագ
և որոշ պատասխանւոյ , խնդրելով որ ըն-
դունիք յարգանացս հաւատատիքք :

Ձեր անձնանուերն

Ա. Ա.

~~~

Աւագերէցէ մը մկրտուրեան վկայական  
մը կը խնդրուի :

(Թուագիսն)

Տէր Աւագերէց ,

Որդիս , Վարդան Մանկեան , որ 1850 ին  
Ապրիլի մէջ մկրտուած է ձեր եկեղեցին ,  
պիտի ամուսնանայ ՚ի մօտոյ : Նօտարը որ ա-  
մուսնութեան պայմանագիրը պիտի խմբա-  
գրէ՝ կը պահանջէ անոր մկրտութեան վկա-  
յագիրը ձեր ստորագրութեամբը վաւերա-  
ցեալ . ուստի կաղաչեմ , Տէր Հայր , շնորհք  
ընէք հանել մկրտելոց դիւանագրէն մեր

Վարդանին մկրտութեան արձանագիրը , և  
վաւերացնելով դրկել մեղ :  
Եմ յարդանօք , Տէր Աւագերէց ,  
Զեր խոնարհ և հնազանդ  
ծառան Ա. Ա.

Թաղի խորհրդոյ անդամէ մը տեղեկորչիւն  
կը խնդրուի անձի մը վրայ :

(Թուական)

Տէր .

Աւագ Աւագեան , արհեստիւ կարուսիկ ,  
1868 ին կը բնակէր ձեր թաղը : Բարձրահա-  
սակ , հաստաբեստ , կարմրայտ , հիմա իբր  
երեսունեւհնդամենի : Ժառանդութիւն մը  
բացուած է , որուն մէջ յիշեալ անձը  
քառորդ բաժին ունի , բայց անոր բնակու-  
թեան տեղը ծանօթ չ'է : Ուստի կը խընդ-  
րուի ձենէ , Տէր , որ տեղեկանալով իմա-  
ցունէք ինձ թէ Աւագ Աւագեան անուն  
անձը տակաւին ձեր թաղին մէջ կը բնակի ,  
և եթէ անկէ ելած է , ուր գացած է բնա-  
կել : Գիտնալով թէ այսպիսի բարեսիրական  
աշխատութիւններէ չ'էք փախչիր , համար-  
ձակեցայ գրել ձեզ այս նամակը , որուն պա-  
տասխանին սպասելով կը խոստովանիմ զիս  
Զեր անձնանուէլ բարեկամն

Ա. Ա.

Ազգային հիշանդանոցի տնօրինելու հուն  
դունուած անձի մը վրայ տեղեկորչիւն  
կը խնդրուի :

(Թուական)

Տէր ,

Մեր դայեկին տագերորդին Մարդար  
Պետեան , գործաւոր կահագործ (մարանկօղ) ,  
որ Սկեան Տեառն Որդկան քով կ'աշխատէր  
հոս մեր քաղաքը , անցեալ Մարտի 22 ին  
զրկուեցաւ ազգային հիւանդանոց : Առ ըն-  
տանիս իւր գրած վերջին նամակին թուա-  
կանն է 7 Յունիս 1872 , և այս թուականէն  
ետքը լուր մը ընդունուած չ'է անկէ կամ  
անոր վրայով : Վստահ ըլլալով ձեր բարու-  
թեան վրայ կը խնդրեմ , Տէր , իմացնել  
ինձ թէ արդեօք այս երիտասարդը բժը-  
կուելով ելաւ հիւանդանոցէն , թէ մեռած  
է : Ծնոտանիքը մեծ հոգի մէջ ըլլալով անոր  
վրայ , շնորհապարտ պիտի ըլլան ձեզ , եթէ  
հաճիք պէտք եղած տեղեկութիւնը տալ այս  
գժբախտ անձին վրայ : Ես եւս ընդ նոսա  
արդէն շնորհակալ ըլլալով ձենէ , Տէր , կը  
մնամ յարդանօք

Զեր խոնարհ ծառան  
Ա. Ա.

Վեհ ունեցող անձ մը կ'առաջարկէ իր հակառակորդին իրենց մէջուեղ եղած դժուարութեան լուծումը յանձնել իրաւարարի :

(Թուական)

Տէր,

Ինչպէս գիտէք, իմ և ձեր մէջուեղ գըժուարութիւն ծագած է հաշուի մը պատճառաւ . Երկուքս ալ միաբան չ'ենք քանի մը յօդուածներու նկատմամբ : Եթէ դասի երթանք, բաց ՚ի ժամանակի կորսուենէ, Երկուքս ալ քիչ շատ ծախք պիտի ընենք, մեր բարեկամական յարաբերութիւնը պիտի դադրի, և թերեւս թշնամի պիտի ըլլանք իրարու : Խորհեցայ որ, Եթէ կը հաճիք, մեր վէճը յանձնենք մէկ կամ քանի մը բարեկամի որոշման, և ընդունին ինչ որ վճռեն նոքա : Եթէ առաջարկութիւնս ընդունելի է ձեզ, գրով իմացուցէք ինձ մինչեւ ութ օր, և ժամադիր ըլլանք մէկտեղ գալով ընտրել իրաւարար մէկ կամ Երկու վստահութեան արժանի անձ :

Հաճեցէք, Տէր, ընդունել զհաւաստիս յարգանաց և սիրոյ զոր ունիմ առ ձեզ իբրեւ վաղեմի բարեկամ ձեր

Ա. Ա.

Վերի նախակին պատասխան :

(Թուական)

Տէր,

Ես ալ իբրեւ զձեղ կը փափաքիմ առանց դատի վերջացնել մեր երկոցունց մէջուեղ եղած դժուարութիւնը, ուստի և ձեր առաջարկութիւնը կ'ընդունիմ՝ մեր ինդիրն իրաւարարի մը յանձնելու :

Եթէ կը հաճիք գալ առ իս այս ինչ օր, ընտրենք Երկու անձ, և թուղթ մը ստորագրենք որով Երկուքս ալ խստանանք ընդունել առանց բողոքոյ ինչ որ պիտի որոշեն իրաւարարք մեր : Եթէ Երկու իրաւարարք անմիաբան դանուին խնդրոյն որոշմանը նըկատմամբ, արտօնութիւն ունենան Երրորդ մը ընտրելու որ վերջին վճիւը տայ :

Ընկալարուք . Տէր, ողջոյնս, և հաւատացէք զիս ձեր անձնանուեր բարեկամն :

Ա. Ա.

—————  
Իրաւախոհ ըլլալու առաջարկութիւն մը :

Տէր,

Կը փափաքիմ իրաւախոհ ըլլալ ձեր հետ մեր նոր սկսած դատին մէջ, մի գուցէ ծանր ծախք վրայ գալով անհնար ընեն իրաւախոհութեան ամեն միջոց : Ատելի է ինձ ամեն

դատ , և կ'ուզեմ ասոր ապացոյցը տալ ձեզ  
առաջարկութիւն մը ընելով որ , կարծեմ ,  
ընդունելի պիտի ըլլայ ձեզ եւս :

Իմ և ձեր կալուածներուն մէջուեղ ՚ի լա-  
զուց հետէ անգործ մնացած քանի մը ար-  
տավար հողի համար է մեր գժուարութիւնը :  
Երկուք ալ կը պնդենք թէ մերն է հողը որ  
հարիւր ֆրանքէ աւելի չ'արժեր : Զիջանիլ  
իրարու անպատճութիւն կը համարինք մեզ՝  
երկուք ալ իրեն համարելով իրաւունքը : Բայց  
ոչ ապաքէն աւելի իմաստութեամբ վար-  
ուած պիտի ըլլանք , եթէ երկու բաժնելով  
վէճի տուկ գտնուած երկիրը , կէսը ես առ-  
նում և կէսը դուք . ծախքն ալ նոյնպէս կէս  
ընենք : Այս է , Տէր , առաջարկութիւնս ,  
և վստահ եմ որ եթէ այս խորհուրդն ըն-  
դունուի երկուստեք , մեր բարեկամութիւնը  
պիտի աւելէ , և թերեւս աւելի պիտի պնդի ,  
և խելօք վարուած պիտի ըլլանք , տեղի չը  
տալով օտարաց ծաղրել զմեզ իբրեւ անմիտ  
և յամառ :

Կը սպասեմ ձեր պատասխանոյ մինչեւ  
ութ օր նամակիս թուականէն հաշուելով :  
Ընկալարուք , Տէր , խորին մեծարանքս ,  
հաւատալով զիս

Չեր անձնանուէր բարեկամն

(Թագավորական)

Ա. Ա.

Պատասխան վերի նամակին :

(Թագավորական)

Տէր ,

Կ'առաջարկէք ինձ երկու հաւասար բա-  
ժնն ընել այս ինչ տեղւոյ հողը որոյ վասն  
վէճ կայ ՚ի մէջ երկոցունցս թէ որու կը վե-  
րաբերի այն արտը . կ'ուզեք նաեւ մինչեւ  
հիմա երկուստեք եղած ծախքը կէս առ կէս  
հատուցանել : Այսպիսի խաղաղական միջոց  
մը ընդունել չ'եմ կրնար մերժել , քանզի  
ես եւս . ինչպէս գիտէք , դատի բարեկամ  
չ'եմ : Ապա կ'ընդունիմ ձեր առաջարկու-  
թիւն , և կ'ուզեմ իրաւախոհութեան գիր  
մը ընել որոյ օրինակը կը զրկեմ ձեզ որ տես-  
նեք և խորհիք վրան , և եթէ գիտողութիւն  
մը ունիք , կրնաք ընել , որպէս զի խորհըր-  
դակցելով միաբանինք , և ստորագրենք՝ մեր  
վերջին որոշումը տալէն եաբը :

Հաճեցէք ընդունել , Տէր , խորին յար-  
գանքս որ առ ձեզ :

Չեր հաւատարիմ բարեկամն  
Ա. Ա.

— 383 —

Տան տիրոջ մը կ'առաջարկուի նորոգուքիւն  
ընել :

Չեր ինծի վարձած տունը կարօտ է մեծ  
նորոգութեան զոր սրդէն քանի մը անդամ  
պահանջեցի ձենէ , և դուք խոստացաք կա-  
տարել , երբ այս տարուան վարձը հասուցի  
ձեղ կանխիկ : Ահա նորէն կ'ընեմ նոյն խնդի-  
րը , և կը յուսամ թէ կը հասինաք որ վար-  
ձակալ մը վայելելու է վարձու բոնած  
տեղոյն դիւրութիւնն ու արդիւնքը : Մեծ  
սրահին ջերմոցը (սօպա) սոսկալի կերպով  
ծուխ կու տայ , այնպէս որ անհնար է լու-  
ցանել , մանաւանդ երբ հողմն հարաւային  
է , և տարւոյն կէսն այս հովը կը փչէ . պառ-  
կելու սենեկին պատուհաններն աղէկ չ'են  
դոցուիր , փեզկերէն մին փտած է և նորո-  
գութեան կարօտ է . մառանին դուռը կտոր  
կտոր է , առաստաղի յարկին պատուհանն  
այնպէս մաշած է որ չ'ենք համարձակիր բանալ  
որ գուցէ խորտակի : Հարկ է որ այս նորո-  
գութիւններն ըլլան որչափ հնար է արագ , և  
եթէ ասոնք չ'ընուին մինչեւ 'ի լրումն պայ-  
մանաժամու տան վարձուն ; արդէն կ'իմացը-  
նեմ ձեղ ակամայ , թէ վարձէն բաւական  
մեծ գումար մը պիտի ղեղչեմ : Ողջ լերուք :

Չեր հաւատարիմ բարեկամն  
Ա. Ա.

Տանունեառնէ մը կը խնդրուի ասա  
վարձագիրը նորոգել :

Տէր ,

Այս ինչ թուականին այս ինչ տարուան  
համար մեր երկոցունցու մէջտեղ եղած տան  
վարձագրին (գօնդրագ) պայմանաժամը կ'ա-  
ւարտի , ինչպէս գիտէք , այս ինչ թուա-  
կանին : Հիմա կ'առաջարկեմ ձեղ նորոգել  
զայն նոյն գնոյ և նոյն պայմաններով այսակի  
տարուան համար : Կը պահանջեմ միայն այս  
ինչ նորոգութիւնները : Կը խնդրեմ , մինչեւ  
այս ինչ որ պատասխանել ինձ , ապա թէ  
ոչ իրաւունք կ'ունենամ առաջարկութիւնս  
իբր չ'եղած համարելով , ուրիշ տեղ ինծի  
յարմար տուն մը վնասել :

Ընկալարուք ողջոյնս , Տէր , և համարե-  
ցէք զիս

Չեր հաւատարիմ բարեկամն  
Ա. Ա.

~~~~~


Յանձնարարական նաևսկ ՚ի նպաստ
գործաշորի մը :

Տէր ,

Այս նամակը ձեզի բերովը գործունեայ
և հանձարեղ գործաւոր է . ՚ի վաղուց կը

Ճանչնամ և մասնաւոր կերպով մը կը յանձնեմ զնա ձեր բարեսիրութեան։ Կրնաք գործածել կամ ուրիշի մը յանձն առնել զանի առանց վախնալու թէ թերեւս զղաք օր մը։ Ի դիպել առթի ես եւս պատրաստ եմ նոյնպիսի ծառայութիւն մը մատուցանել ձեզ։

Ձեր հաւատարիմը
Ա. Ա.



Յանձնարարական նամակ գործաշորէ մը
՚ի նպաստ ուրիշ գործաշորի։

Սիրելի բարեկամ,
Քեզի կը զրկեմ ընկերներէս մին, որ մեր արհեստակիցն է։ Աղէկ գործաւոր է, և գործունեայ ու բարեբարսց երիտասարդ, և որ կը վկայեմ թէ տժգոհ չըներ ելքէք զանոնք որոնց ծառայութեանը մէջ կը մտնէ։ Զանա ուրեմն, կ'աղաքեմ, անոր համար գործ մը գտնել. զայս ընելով զիս եւս չնորհապարտ կ'ընես. յիշէ որ պարտական ենք օգնել իրարու։

Հաւատարիմ բարեկամդ
Ա. Ա.



Գործաշոր մը շնորհակալ կ'ըլլայ ուրիշի մը որ յանձնարարութիւն ըրած է ՚ի նպաստ գործաշորին։

Շնորհակալ եմ յանձնարարական թուղթին համար զոր տուիք ՚ի նպաստ իմ առայս աւուն Տէր,

Ի չնորհս այն յանձնարարութեան, ինչպէս նաեւ նոյն Տէառն ջանիւք և միջնորդութեամբ, հսու հասնելուս հետեւեալ օրը յաջողեցայ գործ գտնել։ Հիմա կ'աշխատիմ, և գործին տէրը գոհ կ'երեւի ինէ. ես ալ կը ջանամ իմովսանն գոհացնել զնա. քանզի չ'եմ ուզեր որ զղաք ձեր յանձնարարութեան համար, և կամ ձեր երեսը զարնուի ձեր մարդասիրութիւն դէպ առ իս։

Պատիւ համարիմ ինձ, Տէր, խոստովագնել զիս

Ձեր խոնարհ ծառան
Ա. Ա.



Որմնադիր մը գործ կը խնդրէ։

Տէր.

Լուելով թէ ունիք ՚ի մաի շինել ձեր տուն որ անցեալ տարուան հրդեհին այրեցաւ՝ կը խնդրեմ յանձնել ինձ յիշեալ շնութեան

որմնադրի գործ, եթէ արդէն ուրիշի մը
հետ կապուած չ'էք պայմանաւ : Անունս
արդէն ծանօթ է ձեզ, և եթէ գործիս որ
պիսութեան և ուրիշ կողմանէ լոեցեկու-
թիւններ կ'ուղէք, կրնաք դիմել ձեր դրա-
ցիներէն այս անուն և այս անուն անձանց,
որոնց տուներուն որմնադրական բոլոր աշ-
խատութիւնն իմսէ, և, ինչպէս կը յուսամ,
կրնան ձեզ գոհ ընել այս մասին : Վատահ
լերուք, Տէր; որ մեծ հաճութեամբ և
փութով պիսի ջանամ գոհացուցանել զձեզ:
Գնցն գալով, կարծեմ թէ իմ գիներս բա-
ւական չափաւոր են : Շիտակ պատերու հա-
մար սովորութիւնս է պահանջել այսչափ
գահեկան առ կանգուն, իսկ կամարներու-
համար ուրցյն սակարկութիւն կ'ընեմ. միայն
կը պահանջեմ որ գործաւորներն ես բերեմ.
կամ գէթ իմ հրամանիս տակ ըլլան անոնք:
Սպասելով նպատասխանւոյ մինչեւ այս ինչ
օր, եմ յարգանօք

Տէր անձնանուէր ծառան
Ա. Ա.



Հասարակ գործաշոր մը գործ կը խմապէ :

Տէր,

Կը խնդրեմ ընդունել զիս եթրեւ գոր-
ծաւոր ոստայնանկ ձեր արհեստէն : Աշա-
կերտութիւն ըրած եմ այս ինչ տեղ, և
այս ինչ ժամանակէ ՚ի վեր շարունակ աշ-
խատած եմ այս անուն վարպետներու. քով
միշտ կատարելագործելով արհեստու : Կը հա-
մարձակիմ ըսել, Տէր, թէ յաջող գործաւոր
եմ. իսկ բարցից մասին կրնաք հարցանել
յիշեալ վարպետներուն, մանաւանդ վերջ-
նոյն որոյ քով առաջին գործաւոր էի, թէ-
պէտ բաւական յայտնի կը ցուցնեն վկայա-
կաններս, զորս պատրաստ եմներկայացնել
ձեզ, եթէ հաճիք ընդունել զիս :

Հաճեցէք, Տէր, որչափ հնար է արագ
վպատասխանել, քանզի ձենէ վերջին լուր
մը չ'առած չ'եմ ուղեր ուրիշ վարպետի
գիմել :

Խորին յարգանօք եմ

Տէր ամենախոնարհ ծառան
Ա. Ա. գործաւոր ատաղձագործ



1. Վաձառնան պայմանագրի օրինակ :

Տէր Սէպուհ Արդարեան ոսկերիչ և Տիկին Ասանէթ Արդարեան , ամուսինք , իւրեանց աղատ կամօք և միաբան հաճութեամբ , կը վաճառեն Տեառն Գառնկայ Մինասեան , նպարավաճառի , երկու հազար հարիւր (2,100) ոսկեց , իւրեանց քարաշէն տուն եռայարկ , որ է յայս նիշ թաղի , փողոց այս անուն , թիւ այս ինչ , հանդերձ 350 կանգուն պարտիզաւ որ տանը ետին է՝ երկու կանգուն բարձր որմով պատած , և կը հասնի մինչեւ ետեւի այս անուն փողոցը :

Վերսիշեալ Տէր և Տիկին , իբրեւ օրինաւոր Տեարք յիշեալ ստացուածոյն որոց վասն ունին իրենց ձեռքը վաւերացեալ մուրհակներ , կընեն այս վաճառումն ընդ Տեառն Մինասեանի հետեւեալ պայմաններուն համեմատ :

1. Տէր Մինասեան իւր աղատ կամօք կը գնէ յիշեալ տունն ու պարտէզը վերը նշանակուած գնով որ է ոսկի Օսմանեան երկու հազար հարիւր , որոց երեսունը վճարելով իբրեւ առհաւատչեայ պայմանագրիս ստորագրուած օրը , մնացեալ երկու հազար եօթանասունը կը պարտաւորի վճարել այն օրը որ տունը պիտի յանձնուի իրեն ըստ պայմանի :

2. Տէր և Տիկին Արդարեան կը պարտաւորին յանձնել յիշեալ տունն ու պարտէզը Տեառն Մինասեանի պայմանագրիս թուականէն 31 օր ետքը :

3. Տէր և Տիկին Արդարեան կը պարտաւորին յանձնել տունն , 'ի լրանալ պայմանաժամին , ողջ և անարատ , ապա թէ ոչ պարտական են ընել որ և իցե ծախսք ֆլած կամ կոտրած կամ վեասուած մասին , զոր Տէր Մինասեան պարտի ցուցանել տունը տրուելին առաջ :

4. Եթէ երկու կողման մէկը դրժելով պայմանին չ'ուզէ գնել կամ վաճառել տունը , Տէր Մինասեան գնոլ , բաց 'ի կորսնցնելիք երեսուն ոսկի առհաւատչեայն , պիտի տուժէ հարիւր ոսկի առ Տէր և Տիկին Արդարեան իբրեւ փոխարէն ծախուց զոր այս վերջինները պիտի ընեն տանը վաճառման պատճառաւ . իսկ Տէր և Տիկին Արդարեան վաճառողք՝ պիտի վճարեն Տեառն Մինասեանի երեսուն ոսկի , առհաւատչեին եռապատիկը . Գրուեցաւ կրկին 18 Փետր . 1873 .

(Առողջութեան)

2. Պայմանագիր խոստման՝ տուն մը
վարձու տալու :

Տէր Յարութիւն Մարդարեան ոստայնանկ
տանուտէր, այսու պայմանագրսվ կը պար-
տաւորէ զինք, սկսեալ յառաջնմէ Մարտի
1874, երեք տարուան համար վարձու տալ
Տերուն Ոսկանայ Տրիտուրեան, սեղանա-
ւորի, իւր քարաշէն տուն կրկնայարկ որ է
յայս ինչ գեղջ, փողոց այս անուն, թիւ
այս ինչ, հանդերձ ախոռիւ որ աջմէն կից
է տանը, ինչպէս նաեւ պարտէղն ու այդին
որ տանը ձախակողմն ու ետին են, տարին
հարիւր յիսուն ոսկւոյ, կանխիկ վճարելի
՚ի սկզբան իւրաքանչիւր տարւոյ :

Տէր Տրիտուրեան կը վարձէ յիշեալ տունը
և անոր վերաբերեալ մասերը նախ սա պայ-
մանաւ որ ինք պիտի բնակի հոն իւր ըն-
տանեօք, արտօնութիւն չ'ունենալով պայ-
մանեալ երեք տարուան միջոցին վարձել
տունն, առանց դիտութեան և հաւանու-
թեան տանուտեառն, ուրիշի մը, ոչ բոլո-
րովին և ոչ ըստ մասին . բայց արտօնութիւն
պիտի ունենայ վարձել պարտէղը կամ այդին,
կամ վաճառել անոնց բերքը որոյ վայելումը
միովին կը վերաբերի իրեն :

Երկրորդ՝ Տէր Տրիտուրեան կը պարտա-


ւորի տունը և անոր վերաբերեալ մասերը,
մանաւանդ պարտէղն ու այդին պահել ՚ի
վիճակին յորում են՝ ըստ արժանուոյն մշա-
կել տալով զանոնք յարմար եղանակին, ինչ-
պէս նաեւ գարմանել տալով ծառերը և որ-
թերը, ընդ պատճով տուժելոյ այս մասին
զանցառութենէ յառաջ եկած ամեն վիառ :
Պարտէղին և այդւոյն ըստ պայմանի հոգաց-
ուիլ ստուգելու համար Տէր Մարդարեան
վարձատուն՝ արտօնութիւն պիտի ունենայ
տարին երկիցս, գարնան և աշնան եղանակ-
ներուն, այցելութիւն ընել անոնց :

Երրորդ՝ Տէր Տրիտուրեան պարտական
է ընել մանր մունը նորոգութիւններ, և
կամ ինչ նոր շինութիւն որ կ'ուղէ՝ իւր
քսակէն, այս վերջին գէպքին մէջ սակայն
պարտի ինդրել տանուտեառն հաճութիւնը,
բաց անակնկալ արկածներէ, զոր օրինակ
կարկուտէ, սասանութենէ և ուրիշ ասոնց
նման պատահարներէ յառաջ եկած վիասուց
համար Տէր Տրիտուրեան պատախանատու
չ'է : Այսպիսի պատահարաց երեսէն, ինչպէս
նաեւ մէծամեծ նորոգութեանց համար պէտք
եղած ամեն ծախք պարտական է ընել Տէր
Մարդարեան տանուտէր: Նոյնպէս ստացուա-
ծոց վրայ դրուած կամ դրուելու որ և իցէ
հարկ պարտի վճարել Տէր Մարդարեան :

Չորրորդ՝ Երկու կողման որն որ իր պայմանին գրմէ , մին վարձու տալ և միւսը վարձու ունել չ'ուզելով , պարտաւոր է տուժել միւս կողման քսան ոսկի :

Պայմանագիրս կը զօրէ մինչեւ 'ի կատարումն բուն վարձատուութեան պայմանագրութեան , որ պիտի ըլլայ առաջիկայ հինգշբթի 24 փետր. 1873 , յատենի ձեռնհաս իշխանութեան :

Գրուեցաւ կրկին , Կ. Պօլիս Բերա
21 փետր. 1873 . (Սահմանադրութեան)



3. Տան մը մէկ յարկը վարձու տալու պայմանագիր :


Ես , այս անուն , այսու պայմանագրով վարձու կու տամ այս անուն Տեառն այս նիշ թաղի , փողոց այս անուն , թիւ այս ինչ , փայտակերտ տանս Երկրորդ յարկը որ կը բաղկանայ Երեք սենեակներէ , որ Են՝ ննջելու սենեակ մը , ճաշարան մը և խոհանոց մը . դարձեալ փաքրիկ մառան մը և նկուղ գետնայարկին վրայ . բակը , հօրը կամ գուրը (սառնը) , ինչպէս նաեւ սանդուղն , հասարակաց Են :

Վարձատուութեան գինն է տարեկան

այսչափ դահեկան (ղուրուշ) , որոյ քառորդ մասը որ է դահեկան այսչափ Տէր այս անուն պիտի հատուցանէ Երեք ամսէ Երեք ամիս կանխիկ :

Վարձատուութեան օրը պիտի սկսի առաջիկայ Յունի. 1 էն . բայց Երկու կողմն ալ պարտաւոր պիտի չ'ըլլայ սպասել տարւոյն աւարտմանը , այլ կընայ հրաժարիլ իւրաքանչիւր յաջորդ եռամսնեայ ժամանակէն ամիս մը առաջ ազդ առնելով միւս կողման : Գրուեցաւ կրկին , կոստանդն:

'ի 4 Դեկտ. 1873 :



Պարտամուրիակի օրինակ :

Ստորագրեալս այս անուն և մականուն կու տամ այս մուրհակս այս անուն Տեառն իբր վկայութիւն վաթսուն Օսմանեան ոսկւոյ զոր փոխ առած եմ յիշեալ Տեառնէն ընդպարտաւորութեամբ հատուցանելոյ , մուրհակիս թուականէն վեց ամիս ետքը , այն է Յուլիս 5 , 1873 , հարիւրին 7 Կատուն տոկոսեաւ զոր պիտի հատուցանեմ 'ի վախճանի իւրաքանչիւր ամսոյ՝ նոյնպէս յոսկի Օսմանեան : Ի կոստանդն. Բերա , 5 Յունի. 1873 :

Այս անուն



Վարտասովմայ (պոմ) օրինակ :

Կոստանդն. 6 Մայիս, 1873.

Գումար 50 ռոկտո :

Առաջիկայ Յունիսի 15 ին պիտի վճարեմ
Տեառն Նշանայ Զարգարեան , կամ վճա-
րատոմսու բերողին , յիսուն Օսմանեան ուկի ,
որոյ փոխանակ ընդունած եմ նոյնչափ գու-
մար մը առձեռն պատրաստ , կամ , որոյ փո-
խանակ ընդունած եմ նոյնչափ արժեքի
ասպրանք :

Վարդ Բաբկենեան , հայադործ :

— առաջ —

Ա.Դ.ԵՐՍՈՒԳԻՐ

Աղերսագիր կը կոչուին այն տեսակ նա-
մակներ որ կ'ուզզուին պաշտօնական ան-
ձանց՝ իրաւունք մը պահանջելու , անիրա-
ւութենէ մը գանգատելու , շնորհ.ք մը
խնդրելու համար , այլրվեն հանդերձ :

Աղերսագիրն սկիզբը կը յիշուին աղեր-
սագիրն ուղղողին անունը , և ուրիշ անձ-
նական կարեւոր պարագաներ , այնպէս որ
իմացուի ով ըլլալը : Ապա՞կը յանձնուի իրն-
դիրը ուշագրութեան կամ խնամոց աղեր-
սագիրն ընդունողին , և ապա կը բացարը-

ուի որչափ հնար է համառօտիւ , և յար-
գական ձեւով մը կ'աւարտուի նամակն :

Աղերսագիրն ոճը պիտի ըլլայ յարգական ,
բայց ոչ կարի ծառայական :

— առաջ —

Առ Պատրիարքն ուղղեալ աղերսագիր ուր
գեղի մը երիցուեն կը գանգատուի :

Սրբազն Տէր ,

Ստորագրեալքս , բնակիչք այս ինչ
գեղջ , հետեւեալ կարեւոր խնդիրը կը
յանձնենք ձեր Սրբազնութեան ուշիմ և
արդարակորով խորհրդածութեան :

Յայսնի է , ինչպէս կարծենք , ձեր Սրբ-
բազնութեան որ յետ վախճանելոյ ՚ի Տէր
մերոյ գիւղի եկեղեցւոյն ծերունի քահա-
նային Տեառն Մեսրոպայ Նշեցւոյ , փո-
խանակ հանդուցելոյն՝ յանձնուեցաւ մեր
գիւղի հոգեւոր հովառութիւն , ձեր Սրբ-
բազնութեան հրամանաւ , Տեառն Վարդա-
նայ Խորենեան , Երիտասարդ քահանայի :

Այս Երիցուն գայթակղական ընթացք շա-
տերուն ծանօթ էր , ուստի և զարմանք չէ
որ մեր գիւղին ալ հեռատես անձանց ոմանց
կողմանէ նորա առ մեզ առաքումն ընդդի-
մութիւն կրեց : Բայց ձեր Սրբազնութեան

կամացը հակառակած չըլլալու համար, խորհեղակ միանդամայն թէ թերեւս փորձն հասարակաց համարման հակառակ ցուցնէ մեզ յիշեալ քահանայն, լաւագոյն թուեցաւ մենէ մեծագոյն մասին ձեր Արբազնութեան կարգադրութեան հաճութիւն տալ: Աակայն, Արբազան Տէր, դժբախտաբար կը ստիպուինք այսօր խոստովանելու թէ փորձը մեր յոյս չարդարացուց, և Տէր Վարդան այսօր այնպիսի կացութեան մը մէջ կը գտնուի դէմ առ դէմ գրեթէ բոլոր գիւղիս, որ անոր մեր հօվուութեան պաշտօնին մէջ մնան աղետալի գժուութեան, գյոթակղութեան և երկպառակութեան պատճառ պիտի ըլլայ գիւղիս: Արդէն բարեկարգութիւնը վերցած է մեր եկեղեցիէն. պաշտօնն արհամարհուած է, բարեպաշտութեան հոգին երթալով կը նուազի մեր ժողովրդեան մէջ, և մեր Հովիւ, իւր հօտինկաց թըն ուտելու և բուրդը հագնելու մանաւանդ քանի թէ նորա հիւանդը հոգալու, կորուսեալը փնտուելու և յուսահատեալը մը խիթարելու իսակաքող, քանի մը զգուելի մուլութեանց անձնատուր, իր պաշտօնին անվայել կերպով տունէ տուն ձանձրալի երթեւեկութեամբ ընտանեաց հայրերու կասկածնիր գրայ զարթուցանելէ ուրիշ օգուտ մը չունի:

Բանն այս վիճակի մէջ ըլլալով, Արբազան Տէր, կը խնդրենք Ստորագրեալքս որ ձեր Արբազնութիւնն օրինաւոր ճամբով ըստ եկեղեցական կանոնաց քննելով յիշեալ Եկեղեցականին դէմ եղած այս միաձայն ամբառուանութիւնն՝ սոյն տարօրինակ վիճակին գարման հոգայ ըստ թելադրութեան իւրոյ ընաբոյս խոհեմութեան ու հանդարտութեան:

Յուսուալով թէ մեր այս գանգատ ձեր Արբազնութեան ու շաղրութեան միանդամայն գործունէութեան առարկայ պիտի ըլլայ, և սպասելով ձեր արագ տրամադրութեան այս չարեաց առաջն առնելու + մնամբ խորին յարդանօք և հնազանդութեամբ Ձեր սրբազնութեան

Հոգեւոր օրդիք
(Ստորագրութիւննը)

Այս ինչ գիւղ, 21 Ապր. 1873

ԹԱՂԻ ՄԸ ԺՈՂՈՎՈՅՆ ՈՒԴՂԵԱԼ ԱՂԵՐՍԱԴԻՐ

ԱՌ պատուական տեարս Թաղուկան Խորհրդաց այս ինչ թաղի:

Տեաբք,

Ստորագրեալս Արմիկ Վարդեան, կին Մարդարայ Ծերունեան Ասկերչի, խոնար-

հաբար կ'ենթարկէ պատու ական ժողովցող խորհրդածութեան և վճռոյն իւր հետեւ եալ գանգատ :

Ստորագրեալս , հինգ տարիէ հետէ ամուսնացեալ գողով ընդ Մարդարայ Ծերունեան , հազիւ տարի մը փոքր ի շատէ վայեւցի ամուսնական խաղաղութիւն ՚ի կենդանութեան սկերպառնս լուսահոգի Տերուն Սուրբենայ Ծերունեան : Այս պատուական ծերունւոյն մահուանէն անմիջապէս ետքը , թշուառ այրս , չգիտեմ ինչ դիւական թեւ լադրութենէ հրապուրեալ սկսաւ ատել զիս փոխանակ այն գողոր սիրոյն և խնամոց զոր ունէի և տակաւին ունիմ առ նա , և քիչ ժամանակի մէջ փոխելով իւր վարքն ու ընթացքը թողուց գործ , սկսաւ յաճախել գինետուններ և այլ անարժան տեղուանք : Ինչ որ բերած էի հօրս սունէն , և ինչ որ մացած էր լուսահոգի սկերպառնս ժամանակէն՝ վաճառուեցան . յետին աղքատութիւն , և անոր հետեւանքն եղող նուաստութիւն , հիւանդութիւններ , անօթութիւն , մերկութիւն հասան մեր վրայ : Այս ամենուն համբերել թելեւս հնար էր , և թէ դժբախտ այրս Մարդար Ծերունեան , գինեմոլութեան և ուրիշ զլուելի մոլութեանց վրայ չյաւելոյր նաեւ գաղանային

կատաղութիւն մը որուն նշաւակ եղած ես ամեն գիշեր չարաչար գանակոծ ըլլալով արբեցութեան չար ոգիէն ըմբռնեալ վրաս յարձակող այս հրէշին ձեռքէն : Բոլոր թաղեցիք ցաւով կը վկայեն թէ ի՞նչ ցաւալի վիճակի հասած եմ այս քսանեհինգամեայ հասակիս մէջ , և ի՞նչ սոսկալի վիճակի մէջ կը գտնուի թշուառ այրս : Ի՞նչ աստիճան գձութեան և եղկութեան կը մատնէ մոլութիւնն զմարդ :

Արդ յետին յուսահատութեան մէջ կը դիմեմ ի գթութիւն պատկառելի Յաղական Տեարցդ , որոց պաշտօնին պարտաւորութիւններէն մին է անմեղ և անօգնական անհատներ ընտանեկան հարստահարութենէ ազատել , աղաչելով զձեզ արձակել գթած նայուածք մը ձեր թշուառ ազախնոյն վրայ որ յետ Աստուծոյ ձեզ միայն ունի պաշտպան : Կը ինդրէմ ուրեմն որ ըստուգելով օրինաւորապէս ըսածներուս ճշշմարտութիւնը , կամ ստիպէք , եթէ հնարէ , ամուսինս փոխել իւր վարքը , և կամ աղատէք ձեր թշուառ աղախինը երեք մատաղ մանկամբս անուղղաց մարդու մը անտանելի գաղանութիւնն բաժնելով զմեզ գէթ առ ժամանակ մի : Միթէ արժան է որ չորս անմեղներ կորսուին հոգւով և մարմ

Նով ՚ի կորուստ մատնեալ մոլեգնելց մը
ձեռքը :

Սպասելով անհամբերութեամբ արագ
տնօրէնութեան մը պատկառելի թաղական
խորհրդող կողմանէ, մնամ խոնարհաբար

Պատուական Տեարցդ

Նուաստ աղախին

(Թուական)

Ա. Ա.

~~~

Աղերսագիր ուղղեայ առ Քաղաքական  
Ժողով :

Առ պատկառելի անդամն Քաղաքական  
Ժողովյ :

Տեարք,

Ստորագրեալս, Մահտեսի Խաչատուր  
Թագւորեան Խարբերդցի, Հացագործաշ  
պետ և աղօրապետ յայս անուն Թաղի,  
յարդանօք առաջադրելով պատկառելի Ժո  
ղովյդ խորհրդածութեան հետեւեալ խրն  
դիրս, կը սպասեմ արագ և վճռական պաշ  
տախանեց մը :

Իբր Երեք տարի առաջ, ըստ առաջար  
կութեան Ազգային Վարչութեան, Հածու  
թեամբ և արտօնութեամբ Ընդհանուր Ժո  
ղովյ, ստորագրեալս տուի 120,000 դահեծ  
կան մաքուր ստակ, կամ Հազար Երկու հազ

րիւր 0սմանեան ոսկի փոխ, ինչպէս կը վկայեն  
պաշտօնական ստորագրութեամբ և կնքով  
վաւերացեալ մուրհակներ, ազգ. սնտուկին :  
Ազգ. Տնտես. Ժողովը գիտէ որ իբր Երկու  
տարիէ հետէ այս գումարին տարեկան 100 ին  
տոկոսը որ շատ դողին բանէ՝ չվճարուեցաւ :  
Երբ որ, (և այս քանի մը անդամ եղաւ,),  
թէ յիշեալ գումարին և թէ տոկոսացն հա  
տուցուելուն համար դիմեցինք առ Ազգային  
Վարչութիւնն, միշտ ետ դարձանք սա պա  
տախանն ընդունելով թէ՝ ՚ի մօտց պիտի  
հատուցուի մայրը փոխորդւով հանդերձ :

Այսպէս վերցիշեալ գումարն, անվճար  
մնացած տոկոսն ՚ի միասին հաշուելով, կընէ  
իբր 1500 ոսկի . բայց ստորագրեալս, ՚ի  
գիւրութիւն ազգային սնտուկին, միանդա  
մայն ծառայութիւն մը ընել ուղելով ազգիս,  
կը պահանջեմ միայն մայրը՝ տոկոսացն վե  
րաբերեալ 288 ոսկին շնորհելավ ազգային  
Հիւանդանոցին, որուն ազգային սնտուկը  
պարտական ըլլայ յիշեալ գումարն առանց  
տոկոսաց : Բայց այս տրամադրութիւնն պիշ  
տի զօրէ, եթէ 1200 ոսկի մայր գումարն  
հատուցուի ինձ ազգային սնտուկէն ՚ի միջոցի  
առ առաւելն 31 աւուր . եթէ այն գումարը  
չ'տրուի մինչեւ յիշեալ պայմանագամը, վե  
րցիշեալ տրամադրութիւնս անգօր և ոչինչ

պիտի ըլլայ : Սա աւ կը պարտաւորիմ իմաց-  
նել պատկառելի ժողովշդ , որ , թաղիս անց-  
եալ շաբթուան ապականիչ հրդեհն ստո-  
րագրելցա փուռը և աղօրին , մէջը գտնուած  
300 պարկ ալերք և 1000 քու ցորենով հրոյ  
ձարակ ըլլալով , ստիպեալ եմ վերսիշեալ  
գումարը որ առնլիքս է՝ պահանջել աղդային  
մնտուկին , և այնպիսի անձկութեան մէջ  
կը գտնուիմ այսօր որ , Եթէ , Աստուած մի  
արացէ , պատկառելի ժողովդ զլանայ կա-  
տարել ինդիրս զոր կ'ընեմ աղդային մնտուկին  
այսափ շահաւոր պայմանաւ , պիտի բռնա-  
դատուիմ ուրիշ միջոց ձեռք առնել : Կը յուշ  
սամ թէ պատկառելի ժողովդ կը հաւատայ  
թէ , այս վերջն դիտողութիւնս ոչ իբր  
սպառնալիք կ'ընեմ , այլ վերջին աստիճան  
դժուարին կացութիւնս պիտի հարկադրէ  
զիս այնպէս ընել :

Վասահ ըլլալով թէ ժողովշդ իմաստու-  
թիւնը պիտի ջանայ այս գործին բարեկա-  
մական կերպով վախճան տալ , մնամ խորին  
յարդանոք

Պատկառելի ժողովշդ

Խոնարհ և անձնանուեր  
ի կոստանդնուպոլիս

28 Մայիս 1873.

Առեւտրական նամակներ :  
ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Առեւտրական կ'ըսուին այն տեսակ նա-  
մակներ զորս վաճառականք սովոր են իրա-  
րու գրել : Առեւտրական նամակաց գլխաւոր  
և էական յատկութիւններն են պարզու-  
թիւն , համառօտութիւն և յստակութիւն .  
ուստի ասոնց մէջ զարդ , ձեւ , դարձուած ,  
քաղաքավարական երկայն բացատրութիւն-  
ներ , և ամեն տեսակ խրթնութիւն խորշելիք  
է : Առեւտրական նամակներու ոճին այս  
յատկութիւնները յայտնի պիտի ըլլան օրի-  
նակներէն :

Վաճառականք իրարու կը գրեն այլեւայլ  
նիւթերու վրայ , ուստի և առեւտրական  
նամակներու շատ տեսակներ կան զորս պարտ  
է որոշել գիտնալ իրարմէ : Այս տեսակներն  
են .

1. Շրջաբերական նամակներ , որովք նոր  
տան մը կամ առեւտրական ընկերութեան  
հաստատութիւնը , լուծուիլ և կամ արդէն  
գտնուածին մէջ եղած փոփոխութիւն մը  
կը ծանուցուի : Այս տեսակ նամակներ շա-  
տերու կը զրկուին , և այս պատճառաւ կըր-  
նան նաեւ տպուած ըլլալ :

2. Գործ ընել առաջարկելու նամակներ :

Այս աեսակ նամակ մը կը գրուի , Երբ վա-  
վոտական մը ուրիշ վաճառականի կամ գործի  
մէջ եղող անձի կամ ընկերութեան կը յայտ-  
նէ իր յօժարութիւնը հետք գործ ընելու :  
3. Նոր յարաբերութեան մտնելու կամ  
գործի սկզբնաւորութեան նամակ :

4. Առ և գնոյ նամակներ , այսինքն խընդ-  
րել վաճառականէ մը այս ինչ վաճառք գնել  
կամ վաճառել ՚ի հաշիւ իւր :

5. Տեղեկութիւն տալու կամ խնդրելու  
նամակներ :

6. Վաճառաց առաքման նամակներ ,  
այսինքն ծանուցանել ումեք թէ վաճառք  
կը զրկենք :

7. Վաճառաց ընդունուած կամ հասած  
ըլլալը ծանուցանելու նամակներ :

8. Գումար մը զրկուած ըլլալը ծանու-  
ցանելու նամակներ :

9. Գումարի մը հասած ըլլալը ծանուցա-  
նելու նամակներ :

10. Ստակ ինդրելու նամակ :

11. Թուլացեալ յարաբերութիւն մը պըն-  
դելու համար գրուած նամակ :

12. Յանդիմանութեան նամակ :

13. Զքմեղութեան նամակ :

14. Հաշիւ աեսնելու կամ ցուցնելու նա-  
մակներ :

15. Վարկի նամակներ . այսինքն՝ գրել  
մէկուն որ ուրիշի մը վարկ (քրէտի) ընէ :

16. Յանձնաբարութեան նամակ :

17. Շնորհակալութեան նամակ :

18. Շնորհակալութեան , ցաւակցու-  
թեան նամակներ , այլովքն հանդերձ :

19. Զախորդալթիւն , մնանկութիւն և յն  
ծանուցանելու նամակներ :

Այս հատորին ընդարձակութիւնը ըլ-  
ներելուն համար , առեւտրական նամակաց  
յիշեալ տեսակներուն մէյմէկ օրինակ կու  
տանք :




4. Շրջաշերտարանի օրինակներ :

Կեսարիա ; 12 Դեկտ. 18 . . .

Տէր ,

Կը ծանուցանեմ ձեզ որ առաջիկայ Յուն-  
ուար ամսցն 1 էն սկսելով պիտի կաղմուի  
քաղքիս մէջ առեւտրական տուն մը՝ Փառ-  
նակ , Տիրայր և Ընկ . ձեռնագրով : Մեր  
գործը պիտի ըլլայ ամեն տեսակ ապրանք  
վաճառել ի հաշիւ մեր կամ յանձնաբարու-  
թեամբ : Հաճեցէք , Տէր , նշանակել մեր  
ստորագրութիւնները , բնդունելով մեր յար-

գանաց ողջոյնը և գիտնալով որ պատրաստ  
ենք միշտ ճառայել ձեզ սիրով :  
ՓԱՌՆԱԿ, ՏԵՐԱՅՐ ԵՒ ԸՆԿ.



Տէր ,

Կը ծանուցանեմ ձեզ որ , 'ի պատճառուց  
ալի կորսուեան որ պատահեցաւ մեզ  
մահուամբ հօր մերոյ Տեառն Միհրանայ Աւ-  
ագեան , մեր ընկերութիւն հասաւ 'ի վախ-  
ճան : Մեր սիրելի եղբօր Նշանայ Մ . Աւա-  
գեան յանձնուած է ածել յաւարտ մեր  
գործերն ու հաշիւները :

Ընկալարուք , Տէր , մեր շնորհակալու-  
թիւն այն վստահութեան համար որով հա-  
ճեցաք պատուել զմեզ ցարդ , և մեր յար-  
գանաց հաւաստիս :

Մ . ԱԽԱԳԵՍՆ ՈՐԴԻՔ



2. Գործ ընկերու առաջարկութեան նաևնակի  
օրինակ :

Տփղիս 20 Ապր . 18 . . .

Առ Տէր Շմաւոնեան 'ի Բարեկ .

Կը ծանուցանենք ձեզ , Տէր . որ , հրա-  
մանաւ և 'ի հաշիւ բարեկամին մերոյ Տեառն

Զարեհի Շահեան , համարձակեցանք քաշել  
ձեր վրայ փոխանակագիր 5,500 ֆրանքի , որ  
յետ երից ամսոց պիտի հատուցուի 'ի հրա-  
ման Տեառն Միհրանայ Բաբեկեան . կը խընդ-  
րենք ձենէ ընդունել այս տնօրէնութիւնը :

Այսու առթիւ կը փութանք յայտնել  
ձեզ մեր յօժարութիւն ծառայելոյ ձեզ : Ար-  
դարեւ ուրախ պիտի ըլլանք յոյժ , եթէ  
ստէպ գտնենք պատեհութիւն գործ ընելու  
ձեր պատուական տան հետ :

Նամակիս մէջ փակեալ պիտի գտնէք գոր-  
ծի նկատմամբ մեր սովորական պայմաննե-  
րուն ցուցակը : Ողջունեմք զձեզ , Տէր ,  
մտերմաբար

ԳԱՌՆԻԿ ԿԱՐՄԻՐԵԱՆ ԵՒ ԸՆԿ.



3. Գործի սկզբնաշրութեան նաևնակի  
օրինակ :

Կոստանդն . 24 Յուլ . 18 . . .

Առ Տէր Նպար Պարտիզպանեան յԱ-  
մբստերդամ .

Տէր ,

Ընկալայ 'ի ժամանակին զշրջաբերականն  
զոր հաճեցաք գրել ինձ 'ի 26 անցեալ Նո-

յեմբերի, ձեռամբ մերս և ձերս բարեկամին Տեառն Մարտուգէի Վարդեան։ Ձեր նորահաստատ տան հետ խոկ և խոկ թղթակցելու առիթ չ'ունենալով՝ ցարդ առանց պատասխանւոյ թողի ձեր նամակ։

Այսօր ձեր գործունեութեան դիմելոյ առիթ ունենալով՝ կը գրեմ ձեզ խնդրելով որ գնեք մեզի համար 1,500 է մինչեւ 2,000 քիլոկը. (այս ինչ ապրանքէն), կենդինարն 50 ֆիորին, եթէ կարող էք գնել այսափի, և յուղարկէք ընդ ծով, միջնորդութեամբ Տեառն Զաւէնի Տրիստուրեան որ ՚ի Մարսիլիա, տալով ապահովագրել յիշեալ ապահովը։

Տարակցոյ չ'ունիմ, Տէր, թէ գոհ պիտի ընէ զմեզ այս փորձն ըստ արժանւոյն, մինչեւ փութալ մեզ նոր նոր ապրանք ապապարել ձեզ։

Շատ գոհ պիտի ըլլանք, եթէ շարունակ տեղեկութիւն տաք մեզ զփոփոխութենէ գնոյ վաճառաց ձեր շուկային վրայ։

Հաճեցէք ընդունել, Տէր, զաղջոն մեր յարգական։

ՍՈՒՐԵՆ ՍՈՒՐԵՆԵՑՆ

4. Առ և զնոյ նամակի օրինակ։

Մարտիլեա 31 Օգոստ. 18 . . .

Առ Տէր Տիրան Գրասէրեան ՚ի Աթոքհոլմ։  
Տէր,

Հաստատելով զնամակն գրեալ յինէն առ ձեզ յԶ ամսոյս, փութամ ծանուցանել ձեզ որ; բաց յայն ապրանաց զորս ապապարեցար ձեզ յառաջին նոմակի մերում, գնեք նոեւ մեզի համար

400,000 քիլոկը. Երկաթ, զորոյ օրինակն պիտի ընդունիք սուրեհանդակաւ, և յուղարկէք առ մեզ ընդ Գալէ։ Հաճեցէք, Տէր, բարուք ուշ դնել որպիսութեան օրինակին, և ջանար յուղարկել առաջին նաւով, և աժան վարձու, որչափ հնար է։ Աւելորդ է ըսել թէ այս ապրանաց, ինչպէս նաեւ միւսոց գիներուն համար փոյթ տանիք որ մեզի ամենաշահաւոր կերպով ըլլան, և միշտ ջանար լաւագոյն տեսակներն ընտրել։

Ընկալարուք, Տէր, մեր յարգանաց ողջնը։

ՇԱԽԱՐԵ ԳԻՄՈՔՍԵԱՆ

5. Տեղեկութեանց նամակի օրինակ :

Առ Տէր Միապը Տագեսեան վաճառաւ-  
կան ՚ի Լոնտոն .

Զմիւռնիա , 9 Փետր. 18 . . .

Տէր ,

Կը հաստատենք մեր վերջին նամակն ուղ-  
ղեալ առ ձեզ ՚ի 26 Հոկտեմբերի :

Ձեր բաղաբի տուներէն մին Տ Տ. Վ. Ա,  
և Ընկ. որ կը զբաղի յատկապէս ոգեզինաց  
և գինւոյ առեւտրով՝ մեզի ցուցած ըլլալով  
ձեր պատուական տունն իբրեւ ինքեան ծա-  
նօթ , և կարող տալ մեզ ստոյդ տեղեկու-  
թիւններ նորա դրամական և բարոյական  
որպիսութեան վրայ , համարձակեցանք աղա-  
չել զձեզ հաճիլ լուսաւորել զմեզ յիշեալ  
անձին վրայով , և ըսել մեզ թէ ինչ աստի-  
ճան վարկի և վստահութեան արժանի է յիշ-  
եալ տունը : Կրնաք վստահ ըլլալ , Տէր , մեր  
գաղտնապահութեան վրայ :

Ընկալարուք , Տէր , մեր ողջայններն ՚ի  
սերտ որոտ :

ԹԱԹՈՒԼ ԱԼԱՆԵԱՆ ՈՐԴԻ



ՊԱՍԱՍԻԱՆ

Առ Տէր Թ. Ա. ՚ի Զմիւռնիա ,

Լոնտոն 27 Փետ. 18 . . .

Տէր ,

Ընկալանք ձեր փետր. 9 առ մեզ ուղ-  
ղեալ նամակն , որով կը զրկէք մեզ երկու  
առաջին ըստ կանոնի , այն է՝ ֆր. 6,000 և  
10,000 :

Տունն որոյ վրայով տեղեկութիւն կը  
խնդրէք մենէ՝ է ընդ տնօրէնութեամբ եր-  
կուց երիտասարդաց որք անգամ մի սնան-  
կացան : Նապատ գտնելով իրենց ընտանի-  
քէն որոյ համեստութիւն կը գովուի առ  
հասարակ՝ նորէն սկսան գործի որ առայժմ  
յաջող կը թուի , բայց իրենք տակաւին չեն  
վայելեր մեծ վստահութիւն : Ապագան պի-  
տի ցուցնէ թէ արդեօք ձախող վորձն ըրած-  
այս երիտասարդ վաճառականներն այնպէս  
զգօն և յառաջատես , ինչպէս որ կը պա-  
հանջէ նոցա ներկայ վիճակն :

Ընկալարուք . Տէր , մեր սիրոյ և յար-  
գանաց վկայութիւնը :

ՄԻՍԱՔ ՏԱԳԵՍԵԱՆ



6. Վաձառաց սաշաբման նաևնակի օրինակ :

Առ Տէր Մինաս Հովեան ՚ի Կոստանդն.

Մարսիլիա 26 Մարտ 18 . . .

Տէր ,

Ըստ հրամանի ձերում որ առ Տէր Տիրան Ծաղկեան , կը զրկենք ձեզ Ասիա անուն Շոգենաւաւ որ Եօթն օրէն պիտի հասնի ձեր նաւահ անգիստը՝ քիլոկրամը 20 ֆրանք է 1,000 քիլոկրամ այս ինչ վաճառներէն որոց վրայ մանր տեղեկութիւն մը պիտի գտնէք ՚ի ցուցակին որ նամակիս մէջ փակեալ է , և որոց գինն է

Ֆր. 8614 , 85 հարիւրորդ , զոր անցուցէք ՚ի հաշիւ մեր առնլեաց :

Կ'աղաքենք , Տէր , Հաճեցէք իմացունել մեզ ձեր գոհութիւնը յիշեալ վաճառաց նկատմամբ , որպէս զի կարող ըլլանք գալ անգամ գործել ձեր տեղեկութեան և կամաց համեմատ : Հաւատացէք որ շատ կարեւոր կը համարինք մեր յարաբերութիւն ձեր պատուական տան հետ , և թէ ամեն ջանք պատրաստ ենք ընել ձեզ գոհ ընելու :

Հաճեցէք , Տէր , ընդունել մեր սիրայիր ողջյնք :

ՄԵՍՐՈՊ ՇԱՀԵԱՆ

Առ Տէր Վարոյր Սենեքերիմեան ՚ի Թրիեստ

՚ի Տրապիզոն 10 Մարտ 18 . . .

Տէր ,

Հաճութեամբ կը ծանուցանենք ձեզ որ , ըստ հրամանի ձերում յանձնեցինք առ Տէր Երամեան Վ. Ա. նշանագրովք վեց հակ այս ինչ վաճառէն զրոյ ցուցակը կը գտնէք նամակիս մէջ փակեալ , և որոյ գինն է

Ֆր. 4,104 25 հարիւրորդ : Հաճեցէք անցուցանել զայս գումար ՚ի հաշիւ առնլեաց մերոց :

Ամեն փոյթ տարուեցաւ մեր կողմանէ յիշեալ վաճառաց յուզարկութեան համար , և կը յուսանք թէ գոհ պիտի ըլլաք :

Միշտ պատրաստ ըլլալով ձեր հրամանաց , եմք անձնանուէք բարեկամք ձեր

ՄԵՍՐՈՊ և ՆՇԱՆ

~~~~~

7. Վաձառաց ընդունելութեան նաևնակի օրինակ :

Թեսազոնիկ , 22 Ապր. 18 . . .


Առ Տէր Մակար Վահանեան ՚ի Թուլոն , Տէր ,

Ընկալաք երեկ հակս 77 այս ինչ վաճա-

ուն . մի հակ և եթ պակաս էր զոր տուժեց
նաւին ընկերութիւնը : Զեր զրկած վաճա-
ռաց կշխն է 3,374 քիլ , որ քիլոկրամը 58
ֆրանքէ կ'ընէ 1,956 ֆր . 92 հարիւրորդ ,
համաձայն ձեր ցուցակին որ զրկած էիք
մեղ ՚ի 14 ապրիլի :

Ի հասուցումն այս վաճառաց կը զբկենք
առ ձեզ փոխանակագիր մի ֆր . 1,956 , 92 ,
զոր ազաէմք անցուցանել ՚ի հաշիւ առնըլ-
եաց մերոց :

Կ'ողջունենք զձեզ , Տէր , սեռն սիրով :
ՏԻԳՐԱՆ ՈՍԿԵԱՆ



8. Գումարի մը դրկուած ըլլալը ճանոցա-
նելու նամակ :

Կոստանդ . 27 Յունուար 18 . . .

Առ Տէր Զորայ ՚ի Բարիկ .

Տէր

Ընկալայ զնամակն գրեալ ՚ի ձէնջ ՚ի 6
ամսոյս , հանդերձ ցուցակաւ վաճառաց զոր
յուղարկած էիք առ մեղ : Ըստ ցուցակին՝
պարագ մերէ ձեզ յիշեալ վաճառաց համար

ֆր . 7860 30 հարիւրորդ զոր գրեմք ՚ի
հաշիւ առնըլեաց ձերոց , զրկելով ձեզ հե-

տեւեալ գումարներն ՚ի թուղթ վճարելի ,	Ֆրանք 4,000 որս վճարաժամն հա- սած է .
“ 3,244 վճարելի ՚ի 15 Յու- լիս 900 “ առ օրին	“ 1,817 42 “ յետ 10 աւուրց

Ընդամենք ֆր . 6,928 42 , զորս հաճեցէք ան-
ցուցանել ՚ի հաշիւ առնըլեաց մերոց , և
ծանուցէք մեզ զընդունելութիւնն :
Հաճեցէք , Տէր , ընդունել մեր ողջոյնը :
ՍԵՊՈՒՀ ՇԱՀՆԱԾԱՆ



9. Գումարի մը հասած ըլլալը ճանոցա-
նելու նամակ :

Առ Տէր Մանուկ Փողեան ՚ի Կոստանդն .

Բարիկ 11 Ուպտ . 18 . . .

Տէր ,

Ընկալաք մեծ հաճութեամբ ձեր անց-
եալ ամսոյ 29 ին գրած նամակը , որ բերաւ
մեզ փոխանակագիր մի ձենէ քաղքիս վրայ
ֆր . 9,000 , որ պիտի անցնի ՚ի հաշիւ առ-
նըլեաց ձերոց :

Զեր Սդրազպուրկի վրայ քաշած փոխա-
նակագիրն ալ վճարուեցաւ հարիւրին մէկ

ու կէս կորստեամբ , ուստի և փոխանակ 2,400 ի . ֆր . 2,068 Յ անցաւ ՚ի հաշիւ ձեր առնլեաց :

Աճապարեցէք , Տէր , զրկել մեղ յիշեալ գումարները որ , ըստ հաշուեցուցակի դոր նամակիս միւս Եջին վրայ կը տեսնէք , գրեթէ հաւասար կու գայ ձեր պարտուց որ առ մեղ , մնալով միայն վոքր գումար մը ֆր . 140 97 : Մեր սիրոս բոլորովին հանգարտ էր ձեր վրայ , ուստի և կրնայիք յապաղել ձեր վճարումը մինչեւ ՚ի նախնթաց երեկոյն մեր պայմանաժամին զոր կանիսեցիք մարդասիրաբար :

Կ'ողջունեմ զձեղ , Տէր , յարգանօք :

ԿՈՐԻՒԽՆ Ա.Բ.Ա.ՄԵԱՆ ԵԽ ԸՆԿ



10. Սատակ իննդրելու նամակի օրինակ :

Առ տէր Սիրայր ձերմակեան յԱղեք սանդրիա :

Սիս , 20 Հոկտ , 18 . . .

Տէր .

Ի վախճանի իւրաքանչիւր տարւոյ սովոր ենք փակել մեր հաշիւներ , ուստի և կը զըրկենք ձեղ նամակաւս ձեր հաշուին ցուցան կը , որուն նայելով պարտական մնացած էք

մեղ , վերջին վճարմանէն ետքը , ֆր . 2,917 85 հարիւրորդ : Կը յանձնենք զայն ձեր քըն նութեան , ազաշելով որ իմացունէք մեղ թէ ուղիղ է հաշիւը , և կ'աղաքէնք առաքել մեղ վճարելի թղթով ձեր վերցիշեալ պարտուց հաւասարը :

Մնալով ձեր հրամանաց կ'ողջունենք զձեզ երրուսնդ , ԶԱՐԵՀ ԵԽ ԸՆԿ .



Նոյնը առ նոյն :

Տէր .

Մօտերս ստակի պէտք ունենալով համարձակեցանք քաշել ձեր վրայ հետեւեալ փոխանակագրերն ՚ի հատուցումն պարտուց ձերոց որ մեղ , ֆրանքս 4,924,50 : Ահա փախանակագրերը զըրս խնդրեմք ընդունել :

Ֆրանք . 500 „ վճարելի ՚ի վախճանի

Մարտ ամսոյ

„ 600 „ վճարելի ՚ի վախճանի

Ապրիլ ամսոյ

„ 822 50 վճարելի ՚ի վախճանի

Մայիս ամսոյ

Ընդամենը „ 1,422 50 . որ պիտի անցնի ՚ի հաշիւ առնլեաց ձերոց :

Կը յուսանք թէ մեր այս անօրէնութիւ-

նը պիտի ընդունիք . մանաւանդ որ բաւաշ
կան երկայն պայմանաժամ տուած ենք ձեզ ,
թէեւ մեր պէտքը կը ստիպէր արագ վճա-
րում մը պահանջել ձենէ :

Զեր անձնանուէր բարեկամք
ԵՐՈՒԱՆԴ ԶԱՐԵՀ ԵՒ ԸՆԿ .

11. Թուշացեալ յարաքերուրիւն մը պմնիկու
նամար գրուած նումակի օրինակ :

Առ Տէր Ա . և Բ . 'ի Բարիզ ,
Կոստանդն . 14 նոյ . 18 . . .
Տէր ,

Կը յիշեցնենք ձեզ Յուլ . 19 թուականով
գրուած մեր նամակը , որով յդեցաք առ
ձեզ ֆր . 1,500 . յետ այնորիկ ընկալանք նա-
մակ մը որոյ թուականն է ութ օր ետքը
քան զմերն , և որով զրկած էիք մեզ փոխա-
նակագիր մի 1,333 44 ֆրանքի 'ի վերայ այս
անուն Տեառն : Այս գումարն անցուցինք
'ի հաշիւ առնելեաց ձերոց :

Եատ կը ցաւինք , Տէր , որ գործերու
նուաղութիւնը թուլացց մեր յարաբե-
րութիւններ որ ապաքէն օդտակար պիտի
ըլլային երկուստեք և հաճելի . բայց յոյս

ունինք թէ ընդ հուպ կարող պիտի ըլլանք
գօրացնել զանոնիք՝ որպէս էին 'ի սկզբան :
Ընկալաբուք , Տէր , մեր ողջոն 'ի սերտ
սրտէ :

Ա . Ա . ԵՒ ԸՆԿ .

12. Յանդիմանուքեան նամակի օրինակ :

Առ Տեաբս Դ . և Դ . 'ի Բարիզ .
Ճենովա , 21 Յունի . 18 . . .
Տեաբք ,

Ճեմ կրնար լուել թէ ինչ մեծ եղաւ զար-
մանքս երբ ընկալայ Գեկտ . 20 ին ձեր գրած
նամակը , որով կ'իմացնէք թէ պիտի չկրնաք
տալ 5,000 գլուխ (քով) թուղթը պայմանեալ
ժամանակին , թէեւ ոչ բերնով միայն , այլ և
գրով խոստացաք յանձնել մեզ :

Ես կատարելու համար խօստումն առ
ձեզ , նաւիս մէջ 5,000 գլուխ թղթոյ համար
մեղ պահեցի , և մերժեցի զառաջարկու-
թիւնս այլոց որ կ'ուզէին նոյն վաճառէն ինծի
տալ : Տեսէք արդ թէ որչափ վեսա եղաւ
ինծի , որ ոչ միայն ապրանքը չ'ստացայ , հա-
պա նաւս ալ պարապ մնաց : Գիտէք , Տեաբք
թէ այսպէս խօստմունք չ'կատարելով ուրի

„КРАСИРАД“

շն անհուն վեստ հասցունելն առանց պատասխանատուութեան չ'է, և թէ ամեն մարդոց իբաւունքն է վետառոց հատուցում պահանջել :

Ընկալարուք, Տեարք, ողջյնու :

Ա. Ա.



13. Զրմեղուքեան նամակի օրինակ .

Առ Տէր Ժ. 'ի Կոստանդն.

Զմիւռնիա, 4 Յունի. 18 . . .

Տէր ,

Ժամանակին ընկալայ ձեր երկու նամակներն . զգբեալսն 'ի 28 Յուլիսի և 'ի 5 ներկայ ամսոյ : Առաջնովն ընկալայ փոխանակագիր 'ի վերայ այս անուն Տեսուն քաղաքիս Քր, 275 45 , զոր անցուցի 'ի հաշիւ առնկեաց ձերոց :

Երկրորդին համար կը գրէք թէ մեծ հոգ գոյ մէջ էք՝ քանզի անոր նկատմամբ բան մը չ'գրեցի ձեզի : Եթէ զայն ընդունելս ժամանակին չիմացուցի ձեզ, ներումն կը խընդում : Առութիւնս իրին նուազ կարեւորութեանը համար էր . գիտէք թէ կը ջանամ միշտ անօգուտ նամակներու համար ստակ վճարել չ'առաջարկ ձեզ :

Ի հաշիւ պարտուց ձերոց գրեցի
Ֆր. 200 , զոր տուիառ Տէր այս անուն ,
ըստ հրամանի այս անուն Տեառն , թղթակցին ձերոց :

Ենորհակալ եմ, Տէր , ձեր շնորհաւորութեան համար վասն նորոյ տարուց , և կ'աղաւեմ , հաւատացէք որ նոյնչափ անկեղծ են իմ իղձերս վասն՝ ձեր : Կը փափաքիմ առիթ անենալ այնպիսի ծառայութիւններ ընել ձեզ որ եւս քան զեւս համոզուիք թէ եմ ձեզ անձնանուեր :

Ա. Ա.



14. Հաշիւ տեսմելու կամ ցուցմելու նամակներ :

Դիտող. Վաճառականք սովորութիւն ունին տարուցն վերջը կամ ուրիշ որոշ ժամանակներ քննել իրենց տետրակներուն մէջ այն անձանց առնիք և տալիքը (compte courant) և արդիւնքը յայտնել անոնց : Այսպիսի արդիւնք մը ներկայացնելու նամակն օրինակ է հետեւեալլ :

Առ Տէր Ց. 'ի Կոստանդն.

Բարիդ 28 Դեկտ. 18 . . .

Հոկտ. 24 ին և ամսոյն 5 ին ձենէ գրուած նամակներն հասան մեզ :

Վերջին նամակով կը ներկայացնէք մեզ
մեր մինչեւ 21 դեկտ. առնելեաց և տալեաց
հաշուխն արդիւնքը, որմէ կ'իմանանք թէ
պարտական մնացած ենք ձեզ ֆր. 5,857 :
Քննելով կ'իմացունենք ձեզ թէ այդ հաշխն
համաձայն է մեր տումարներուն թէ ոչ :

Ընկալարուք, Տէր, մեր շնորհակալու-
թիւնը վասն մաղթանաց դոր կ'ընեք յաղագս
մեր՝ ի սկզբան նորոյ տարւոց : Նոյն իղձերը,
և նոյնչափ սեռնութեամբ, կ'ընենք մեք ՚ի
ձեր աղագս, իմացնելով միանգամայն թէ
կը փափաքինք մեր յարաքերութիւններն
յաճախել, եթէ պարագայք նպաստեն :

Ընկալարուք, Տէր, մեր սերտ ողջոյնները :
Ա. Ա. Եկ ՈՐԴԻՔ



45. Վարկ խմեղրելու նամակի օրինակ :

Զմիւռնիա 4 Մարտ 18 . . .


Տէր Ա. ՚ի Բարիզ,

Նամակս ձեզ բերողն է Տէր այս անուն,
զոր կը խնդրեմ ընդունել մարդասիրաբար :
Հաճեցէք տալ նմա ՚ի հաշխւ իմ մինչեւ
չորս հազար ութ հարիւր ֆրանք, ընկալա-
գիր առնելով և ձեր ծախքը զեղչելով :

Գրեցէք, կ'աղաչեմ, այս նամակիս տակ ինչ
գումար որ կու տաք յիշեալ Տեառն :

Ընկալարուք, Տէր, զհաւաստիս իմոց
յարգանաց :

Ա. Գ.



46. Յանձնարարութեան նամակի օրինակ :

Կոստանդն. 4 Մարտ 18 . . .

Տէր Լ. Պ. ՚ի Բարիզ,

Այս նամակը ձեզի պիտի տայ որդիս այս
անուն, որ մեծ պատիւ կը համարի իրեն
անձամբ հանաչել զձեզ : Որովհետեւ ծանօթ
չունի պատանին ձեր քաղքին մէջ, կը հա-
մարձակիմ, Տէր, յանձնել զնա ձեր տան,
որպէս զի հաճիք անոր տեղեկութիւններ
տալ, զորս երբեմն երբեմն խնդրելով պիտի
ձանձրացնէ զձեզ : Այս ձանձրութեան փո-
խարէն, կ'աղաչեմ, Տէր, պահանջեցէք յի-
նէն՝ ինչ ծառայութիւն որ կ'ուզէք :

Տէր անձնանուէր բարեկամն
Ա. Ա.



17. Շնորհակայութեամ նամակի օրինակ :

Կոստանդն. 21 Հոկտ. 18 . . .

Տէր Ա. Ա. ՚ի համազուրկ ,

Փետր. 23 ին գրուած ձեր նամակն ընկալաց , և անցուցի ՚ի հաշիւ առնլեաց ձերոց ֆր. 4,925 , զոր ճիշդ համաձայն գտայ իմ տետրակներուս հետ :

Շնորհակալ եմ վասն մարդասիրութեան զոր ցուցանեք եղբօրորդւոյս . արդարեւ կրկն երախտապարտ ըրեւ զիս ձեզ :

Չատ ուրախ եղայ տեմնելով ձեր որդին : Ձեր ընտանեաց բոլոր անհատները սիրելի են , բայց այս պատասնւոյն վրայ տեսայ յատուկ բարութիւն , քաղցրութիւն և այն պիսի սէր մը առ ընտանիս իւր , որ արդէն տայ գուշակել թէ պատասնին նշանաւոր անդամ մը պիտի ըլլայ և օրհնութիւն ձեր աղնիւ գերդաստանին . և գիտէք թէ ձեզի եղած ամեն բարիք իբրեւ ինձ եղած կը համարիմ :

Ընկալաբուք , Տէր , սեռն սիրոյ ողջոյնս : Ա. Ա.



18. Շնորհաշորութեամ և ցաշակցութեամ նամակի օրինակ :

Հավոր , 27 Դեկտ. 18 . . .

Տէր Ա. ՚ի Բարիկ

Ամսոյս 19 ին ձեր գրած նամակը կը պարունակէր մեր տալեաց և առնլեաց հաշուին արդիւնքը , որուն նայելով նաեւ գուք պարտական կը մնաք մեզի ֆր. 28 , 94. Այս հաշիւն համաձայն է մերիններուն :

Շնորհակալ ենք ձեր նոր տարւոյ շնորհաւորութեան համար , և կ'աղաչենք ընդունել մերիններն ալ զորս կ'ընենք ձեր առողջութեան և երջանկութեանը համար , և գիտենք որ կը հաւասաք թէ ինչ որ կ'ըսենք ի սրտէ է : Եթէ ձեր բարեկամութիւնը կը շարունակէք առ մեզ , վստահ եղէք որ մեր կողմանէ բնաւ ջանք պակաս պիտի չըլլայ զօրացնելու մեր յարաբերութիւններն առաջիկայ տարւոյս մէջ :

Նիւ Եղրքէն եկած նամակներուն լուրը կը հասնի մինչեւ Դեկտ. 20 , և կ'ըսեն թէ հրդեհին տուած սարսափն այն ինչ կը սկսի փարատիլ , և թէ աղդու միջոցներ ձեռք առնուած են հրդեհի ապահովագրութեան ընկերութեանց օգնելու , այնպէս որ հրկի-

զելոց պահանջները վճարուին ամբողջ և անշապաղ ։ Այս տիրուր դէպ.քը մեղի ուղղակի վնաս չունի, և կը յուսանիք թէ ձեզի համար ալ այնպէս է ։

Կրկնեմք, Տէր, զհաւաստիս մերսց կասարեալ մտերմութեան ։

Ա. Ա. ԵԽ ԸՆԿ.



49. Զախորդորիւն, սնանկորիւն և լն. Տանոցանելու նամակ ։

Լիոն 10 Օգոստ. 18 . . .

Տէր,

Անտարակոյս գիտէք թէ սնանկ հրատարակուեցաց գժբախտաբար ամսոյս 8 ին վըճռով, և թէ պարատեաբքս պիտի ժողվուին ամսոյս 28 ըստ հրամանի ձեռնհաս իշխանութեան ։

Միտք ունիմ անոնց այն օր իմ գժբախտ վիճակիս համեմատ առաջարկութիւն ընել երաշխաւորութիւն տարով ։ Ուստի կ'աղաքեմ, Տէր, որ դուք ալ հոս ձեր կողմանէ փոխանորդ մը ցուցնէք, որ ներկայ գտնուի պարատատեաբց ժողովին և սնանկութեան պայմանագրին ստորագրութիւն դնէ ։ Կը

յուսամ, Տէր, որ կարեկից ըլլալով թշուառութեանո՞ւ արդել չ'էք դներ յիշեալ պայմանագրին ։ Ինչ որ ըլլան իմ այն օրուան պայմաններս, գիտցէք, Տէր, որ կորուստընել չ'եմ տար ձեզ մինակ քիչ մը ժամանակ աւելի պիտի սպասէք ։

Ընկալարուք, Տէր, զհաւաստիս իմոց մեծարանաց :

Կ. Հ.



ՅԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ . Նամակագրուքեան վե-
րաբերեալ քանի մը ընդհանուր սո-
վորուքիւններ եւ ասուքիւններ 5

1. Նամակներու թուղթը	5
2. Նամակի թուականը	4
3. Նամակին վերնազիրը	5
4. Նամակին մտրմինը	6
5. Նամակին վերջը	6
6. Ցետ գրութեան	9
7. Ստորագրութիւն	9
8. Նամակներ գոցել կամ ծալել	10
9. Նամակներ կնքել	10
10. Նամակին հասցէն	11
11. Այլ եւ այլ աստիճանի եւ կարգի անձանց համար վերնազրի , պատուանուան եւ հասցէի ձեւեր	11
Վերնազիր	11
Պատուանուն կամ վերադիր նամակին մէջ գործածուելու	12
Հասցէի օրինակներ	13

Կոր և արշոյ և ծննդեան աշուք կամ անուան տօնի շնորհաշորուքիւնը	15
Գիտուրուքիւնը	15
Կոր աարշոյ շնորհաշորուքիւն	17

1.	Որդի մը իր ծնողացը նոր տարի՝ կը մաղթէ	17
2.	Հնորհաւորութիւնն նոր տարւոյ առ հայր, կարդացուելու համար	18
3.	Փոքրիկ աղու մը նոր տարւոյ շնորհաւութութեան նամակն առ ծնողս իւր	19
4.	Մեծկակ տղու մը նամակը նոր տարւոյ համար առ ծնողս իւր	20
5.	Փոքրիկ տղայ մը իր հաւուն	22
6.	Տղու մը նամակն առ ծնողս իւր 'ի սկզբան նորոյ տարւոյ	23
7.	Տղու մը գիրն առ հայր եւ առ մայր իւր անոնց ըրած ընծային փոխարէն 'ի սկզբան նորոյ տարւոյ	24
8.	Նամակ որդւոյ առ հայր իւր 'ի սկզբան նորոյ տարւոյ	25
9.	Պատանւոյ մը նամակն առ ծնողս իւր 'ի սկզբան նորոյ տարւոյ	27
10.	Ալուսնացեալ որդւոյ մը նոր տարւոյ շը նորհաւորութեան նամակն առ ծնողս իւր	28
11.	Գատեր մը նամակն առ հայր իւր 'ի սկզբան նորոյ տարւոյ	30
12.	Ուստեր մը կամ գստեր մը նամակն առ հայր կամ առ մայր իւրեանց 'ի սկզբան նորոյ տարւոյ	31
13.	Նոր տարւոյ շնորհաւորութեան նամակ առ աղդականս, ինչպէս հօրեղբայր, հօրաքիյը, հօրեղբօրոդի եւայլն	33
14.	Նոր տարւոյ շնորհաւորութիւն առ կընքահայր կամ առ կնքամայր	34

15.	Բարեկամի մը ուղղուած նամակ տարեգըլսոյ շնորհաւորութեան համար	55
16.	Հայր մը իր որդւոյն դաստիարակին 'ի սկզբան նորոյ տարւոյ հանդերձ ընծայիւք	56
17.	Նոր տարւոյ շնորհաւորութիւն առ անձնոք բարեկար	58
18.	Նամակ առ դաստիարակ կամ ուսուցիչ 'ի սկզբան նորոյ տարւոյ	58
19.	Պատուաւոր անձի մը գրուած նամակ 'ի սկզբան նորոյ տարւոյ	40
20.	Յաջողութեան մէջ գտնուող շատ ընտանիքարեկամի մը կը մաղթուի նոր տարի նամակով եւ ընծայիւ	42
21.	Զախորդութիւն կրող բարեկամի մը նոր տարի կը շնորհաւորուի	44
22.	Նոր տարի կը շնորհաւորուի բարեկամի մը որուն երկար ժամանակէ հետէ նամակ գրուած չէ	45
23-29.	Պատասխաններ	47-53
Ծննդեան կամ անուշան տօնի աշուր շը նորհաւորութիւնն	54	
30.	Նամակ առ հայր յաւուր տօնի նորա	54
31.	Նամակ առ մայր յաւուր տօնի նորա	55
32.	Նամակ առ հայր կամ առ մայր յաւուր տօնի նոցա	57
33.	Ուրիշ նամակ նոյն նիւթին վրայ	58
34.	Պաշտպանի մը անոր անուան տօնին	59
35.	Գուրդէն իր մօրեղբօրը յաւուր տօնի նորա	60

36.	Նամակ առ հօրեղբայր յաւուր տօնինորա	61
37.	Շատ մտերիմ բարեկամի մը անոր ան-	
	ուան տարեդարձին	65
38.	Ծանրաբարոյ անձի մը ծննդեան օրը կը	
	շնորհաւորուի	65
Այլ և այլ պատմառի նամար շնորհա-		
շորոշեան նամակներ . Դիտողու-		
րիւն	67	
39.	Նամակ շնորհաւորութեան առ նորոգ ա-	
	մուսնացեալ այր կամ կի՞ն	68
40.	Նոյն նիւթին վրայ առ այր ոք	69
41.	Նոյն նիւթին վրայ կնոջ մը ուղղուած	
	նամակ	70
42.	Տղու մը ծննդեան համար շնորհաւորու-	
	թիւն առ հայր կամ առ մայր նորա . . .	72
43.	Ուստեր մը ծննդեան համար շնորհաւո-	
	րութիւն առ ծնողս նորա	75
44.	Ենորհաւորութեան նամակ առ տիկին ոք	
	որոյ դուստրը պիտի ամուսնանայ . . .	74
45.	Տիկինոջ մը շնորհաւորութեան նամակն առ	
	այլ տիկին որ դուստր մի ծնած է . . .	76
46.	Ենորհաւորութեան նամակ առ հայր որոյ	
	դուստրն ամուսնացած է	76
47.	Պաշտօն մը ընդունող անձի մը շնորհա-	
	ւորութեան նամակ	78
48.	Բարձր պաշտօնի հասնող պաշտօնատա-	
	րի մը ուղղուած նամակ շնորհաւորու-	
	թեան	79

49.	Երկայն պանդխտութենէ մը հայրենիքը	
	դարձող բարեկամի մը չնորհաւորութիւն	81
50.	Ծանր հիւանդութենէ մը նոր առողջա-	
	ցող անձի մը չնորհաւորութեան նամակ	82
51.	Ենորհաւորութեան նամակներու ընդհա-	
	նուր պատասխան մը	84
52.	Ուրիշ պատասխան մը	85
Յաշակցութեան նամակներ . Դիտողու-		
րիւն	86	
54.	Մէկուն հօրը կամ մօրը մահուան համար	
	ցաւակցութեան նամակ	87
55.	Յաւակցութեան նամակ առ այր որոյ կի՞նն	
	մեռած է	88
56.	Յաւակցութեան նամակ առ կի՞ն որոյ այ-	
	րը մեռած է	90
57.	Ուրիշ նամակ մը նոյն նիւթին վրայ . .	91
58.	Յաւակցութեան նամակ սիրելոյ մը (որ-	
	դւոյ , ազգականի , բարեկամի) մահուան	
	համար	93
59.	Ուստր կամ գումար մը կը գրէ իւր հօրը	
	կամ մօրը երկուքէն մէկուն մահուանը	
	համար	94
60.	Նոյն նիւթին վրայ ուրիշ նամակ մը . .	95
61.	Զախորդութեան հանդիպող բարեկամի	
	մը գրուած ցաւակցութեան նամակ . .	97
62.	Յաւակցութեան նամակի պատասխան .	98
63.	Հօրեղբայր մը կը գրէ առ եղբօրորդին	
	իւր Վահան՝ որոյ մայրը մեռած է , յան-	

- դիմանելով զանի Նախախնամութեան
գէմ գանգատելուն համար 99
64. Քարեկամ մը կը ծանուցանէ իւր բարե-
կամին անոր եղբօրը մահը , եւ կը միխ-
թարէ զանի 102
65. Մխիթարական նամակ առ մայր որոյ
դուսարը հիւանդ է 104
66. Մխիթարական նամակ առ բարեկամ ոք
որոյ առւն եւ գոյք այրած են թերայի
հրդեհին 106
67. Մխիթարական նամակ առ պատանի ոմն
որ հիւանդութեան պատճառաւ չէ կա-
րացեալ առնուլ առաջին մրցանակը . . 108
68. Հանի մը կը միխթարէ ընծայով իւր աղ-
ջիկ թոռը , որոյ եղբայրը գիշերօթիկ
գպրոց գացած է 109
69. Մխիթարական նամակ առ քեռորդի որ
ծանր դրամական կորուստ մ'ըրած է . 112
- Ենորմակալութեան նաևնակներ . Դիտո-**
ղութիւն 113
71. Եղած ծառայութեան մը համար չնորհա-
կալութիւն 114
72. Պաշտօնի մը համարդ մը նոյն պաշտօնն
ընդունել առւողին չնորհակալ կ'ըլլայ . 115
73. Փոխ սամակ տուող բարեկամի մը չնոր-
հակալութեան նամակ կը գրուի 117
74. Բժշկի մը կը զրկուի չնորհակալութեան
նամակ հանդերձ ընծայիւ 118

75. Սան մը իր կնքահօրը բացակայութեան
ատենն անոր տօնը չնորհաւորելուն հա-
մար անկէ չնորհաւորութեան նամակ
կ'ընդունի 119
76. Ընկեր մը իւր ընկերին չնորհակալ կ'ըլ-
լայ անկէ ընդունած ընծային համար . 120
77. Պատանի մը առ մօրաքոյր իւր 121
- Ներումն յանդրելոց կամ քմեղութեան
նաևնակներ . Դիտողութիւն 123**
79. Պատանի մը իւր հաւեն ներում կը խընդ-
րէ դէպ ՚ի նա յանդզնաբար վարուե-
լուն համար 124
80. Վարժապետին դէմ բարկացող աշակերտ
մը անկէ ներում կը խնդրէ 125
81. Փոխ առնուած գիրքը ետ գարձնելու ա-
կամայ յապաղող մը ներում կը խնդրէ իր
բարեկամէն 126
82. Երեւելի պաշտպանի մը նամակ գրել ու-
շացնող մը ներում կը խնդրէ 128
83. Վշացեալ բարեկամներէ ներում խընդ-
րելու նամակ 129
84. Ոմն առ բժիշկ իւր 131
- Խնդրուածոյ , պահանջնան , յանձնա-
ռութեան և մերժման նաևնակներ .
Դիտողութիւն 132**
85. Ոմն կը յանձնէ բարեկամի մը խնամոց
իւր որդին որ բարիդ կ'երթայ ուսման
համար 134

87. Դասատուէ մը կը խնդրուի տունը գաս
տալ տղու մը 156
88. Պաշտօնատար մը ընկերութեան անօրէ
նէն ամսական մը կանխիկ կ'ուզէ . . . 157
89. Մայր մը ուղելով իւր որդին գիշերօթիկ
գպրոց մը գնել՝ բարեկամէ մը կը խնդրէ
գանել յարմար գպրոց մը 159
90. Փոխ ստակ ուզող խարդախ վաճառակա-
նի մը կը զլացուի ստակ տալ՝ խարդա-
խութիւնը երեսը տալով 141
91. Հայր մը իր որդւոյն համար որ Մարսիիա
կը գտնուի՝ կ'աղաչէ նոյն քաղաքը գըտ-
նուող բարեկամի մը, որ խրատ տայ ա-
նոր ճամբորդութիւն ընելու նպատակէն
ետ կենալ 142
92. Խնդրուած մը առ տիկին ոմն 144
93. Տիկին մը իր հօրաքեռէն աղախին մը կը
խնդրէ 145
94. Մէկուն կ'առաջարկուի կառք մը գնել . 146
95. Զի մը գնել կ'առաջարկուի մէկուն . . 148
96. Մէկը կ'իմացնէ իր բարեկամին թէ վար-
ձու համար շատ յարմար տուն մը կայ . 149
97. Տիկին մը ուրիշ տիկնոջ մը երեկոյթը եր-
թալէ հրաժարելուն պատճառերը կը
յայտնէ 151
98. Մէկը կ'իմացնէ իր բարեկամին թէ չի
կրնար փոխ տալ անոր խնդրած գումարը 153
99. Առաջ ունեցած պարաքը չհատուցանողի
մը նորէն փոխ տալ կը զլացուի 154

- Յանձնարարութեան նախակներ . Դի-
տողութիւն 155
101. Վարժարանի մը տեսուչն ուրիշ վար-
ժարանի մը տեսչին վարժապետու մը
կը յանձնէ 157
102. Կոմուկիէ մը խնդրուի թշուառ այրւոյ
մը օգնել 159
103. Երաւագէտ պատանի մը կը յանձնուի առ
եւ տրական ժողովոյ նախագահին . . . 162
104. Օտար երկիր գացող սպասաւոր աղջիկ
մը կը յանձնուի բարեկամ ընտանիքի մը 165
105. Շատ ընտանի բարեկամի մը զրուած
յանձնարարական նախակ 166
106. Գահանայի մը կը յանձնուի դժբախտ ըն-
տանեաց հայր մը 167
107. Վերի նամակին պատասխան 170
108. Խնդրուած իւրաքանչ յանդիմանութեան և
գանգատանաց նախակներ . Դիտո-
ղութիւն 172
109. Հօրեղբայր մը կը ծանուցանէ իր եղ-
բօրորդւոյն ոոր պաշտօնի մը համնիլը
եւ կը խրատէ զանի 174
110. Եղբօր մը յանդիմանական նամակը՝ գոր-
ծը թողլով օտար երկիր բախտ խընդ-
րելու համար գաղթել ուզող եղբօրը . 177
111. Նախակ նոշիրաց և հրաւիրանաց . Դի-
տողութիւն 179
112. Ընծայ ընդունուած գիրքի մը համար
20

- շնորհակալութիւն 180
 113. Միսաք իւր մօրաքեռորդւոյն կարենի
ընծայ կը զրկէ 181
 114. Բարեկամի մը ընծայ կը զրկուի 182
 115. Մանուկ իւր կենդանագիրը կը պակէ իւր
հօրաքեռ 183
 116. Բարեկամական հրաւէր մը 'ի ճաշ՝ ըն-
տանեկան ոճով 184
 117. Գեղացի ընտանիք մը այցեկութի կը հը-
րաւիրուի 186
 118. Հրաւէր 'ի խրախութիւն 188
 119. Ամարանոցի այցելութիւն ընելու հրաւէր 189
 120. Հրաւէր ընդունելէ հրաժարելու նամակ 191
 Ընտանեկան , բարեկամական և քաղա-
քավարեկան նամակներ 192
 121. Հայր մը իւր որդւոյն որ հիւանդութե-
նէ նոր ելած է 192
 122. Շնորհակալութեան նամակ առ ուսու-
ցիչ ո՞նն 194
 123. Պատանի մը կ'իմացնէ իւր մօրը թէ
խօսուեցաւ այն ինչ օրիորդին հետ 195
 124. Եղբայր մը իր քրոջը կը գրէ իրենց մօ-
րը տօնին օրը եւ իրենց սանտուին հա-
մար նուէր պատրաստել 197
 125. Պառաւեալ կին բարեկամ մը կը գրէ
նորամուսին կնոջ մը տնաեսութեան վր-
բայ 200
 126. Աղջիկ մը իր հօրաքեռը կը գրէ իր հօ-

- րը առողջութեան աւետիսը 205
 127. Հօրեղբայր մը գրելով իւր այրի եղբօր-
դատեր կ'առաջարկէ ամուսնութիւն 206
 128. Ճամփորդութեան մը նկարագիրը 210
 Տունակներ , այլ և այլ դիպաց և գոր-
ծի նամակներ . Դիտողութիւն 213
 Տունակներոց օրինակներ 216
 1. Հրաւէր 'ի ճաշ կամ 'ի հանդէս 116
Պատասխան 217
 2. Ժամփրութեան տոմսակ 219
Պատասխան 219
Օրինակ տոմսակի երբ տունը չի գտնուիր
անձ մը որուն այցելութիւն եղած է 219
 3. Այլ եւ այլ նիւթոց վրայ տոմսակներ 220
Պատասխան 220, 221
 4. Այլ եւ այլ ձեռագիտաց գրուելու տոմ-
սակաց օրինակներ 221
 Ծանուցագիր կամ շրջարերական՝ հար-
սանիք , մասն ճննդարերութիւն իմա-
ցընելու համար . Դիտողութիւն 223-226
 Տեղեկութիւններ տալու այլ և այլ նա-
մակներ 226
 Որդւոյ մը նամակն առ հայր իւր՝ ի մացնելու
համար անոր իւր ամուսնութիւնը 226
 Նամակ ստնտուի քով եղած մանկան մը մա-
հը իմացնելու 227
 Ստնտուի մը յանդիմանութիւն 228

Նախընթաց նտմակին պատասխան	229
Նամակ զրեալ առ ազգական ոմն կամ բարեկամ խնդրելու համար որ ինքահայր	250
ըլլայ	250
Պատասխան հաստատական	251
Պատասխան բացասական	252
Նամակ՝ ստնտուի քով եղած մանկան հիւանդութիւնը ծանուցանելու	252
Նամակ՝ իմացնելու համար թէ տղան վտանգէ ազատած է	253
Նամակ՝ ստնտուի մը վրայով տեղեկութիւն խնդրելու համար	254
Մայր մը իր որդւոյն կ'իմացնէ անոր հօրը ծանր հիւանդ ըլլալը	255
Նամակ՝ հօր մը մահը անոր որդւոյն իմացընելու համար	256
Այր մը իր կնոջ մահը կը ծանուցանէ իւր հօրը	257
Հայր մը իւր որդւոյն մահը կը ծանուցանէ միւս եւս որդւոյն	258
Փոքրիկ տղու մը մահը կը ծանուցուի	240
Գործի և աւելիներ	241
Առնլիք կը պահանջուի	241
Նոյն նիւթին վրայ ուրիշ նամակ	242
Սնանկութեան հաշուետեսէ (սինտիք) մը տեղեկութիւն կը խնդրուի	242
Աւագերէցէ մը մկրտութեան վկայական մը կը խնդրուի	243
Թաղի խորհրդոյ անդամէ մը տեղեկութիւն	

կը խնդրուի անձի մը վրայ	244
Ազգային հիւանդանոցի տնօրէնէն հոն ընդունուած անձի մը վրայ տեղեկութիւն կը խնդրուի	245
Վէճ ունեցող անձ մը կ'առաջարկէ իւր հակառակորդին իրենց մէջտեղ եղած դրուարութիւնը յանձնել իրաւարարի	246
Վերի նամակին պատասխան	247
Իրաւախոհ ըլլալու առաջարկութիւն մը	247
Պատասխան վերի նամակին	249
Տանտիրոջ մը կ'առաջարկուի նորոգութիւն ընել	250
Տանուտեառնէ մը կը խնդրուի տան վարձագիրը նորոգել	251
Յանձնարարական նամակ՝ ի նպաստ գործաւորի մը	251
Յանձնարարական նամակ գործաւորէ մը՝ ի նպաստ ուրիշ գործաւորի	252
Գործաւոր մը չնորհակալ կ'ըլլայ ուրիշի մը որ յանձնարարութիւն ըրած է՝ ի նպաստ նորին	255
Որմնագիր մը գործ կը խնդրէ	255
Հասարակ գործաւոր մը գործ կը խնդրէ	255
1. Վաճառման պայմանագրի օրինակ	
2. Պայմանագիր խոստման՝ տուն մը վարձուալու	258
3. Տան մը մէկ յարկը վարձու տալու պայմանագիր	260
Պարտամուրհակի օրինակ	261

Վասրատումնի (պօնօ) օրինակ	262
Աղերսագիր	262
Առ Պատրիարքն ուղղեալ աղերսագիր ուր գեղի մը երիցուէն կը գանգատուի .	263
Թաղի մը ժողովոյն ուղղեալ աղերսագիր	265
Աղերսագիր ուղղեալ առ քաղաքական ժողով	268
Առեւորսական նամակներ . Դիտողու թիւն	271
1. Երջաբերականի օրինակներ	285
2. Գործ ընկլու առաջարկութեան մամակի օրինակ	274
3. Գործի սկլընաւորութեան նամակի օրի- նակ	275
4. Առ եւ գնոյ նամակի օրինակ	277
5. Տեղեկութեանց նամակի օրինակ Պատասխան	278
6. Վաճառաց առաքման նամակի օրինակ .	280
7. Վաճառաց ընդունելութեան նամակի օ- րինակ	281
8. Գումարի մը դրկուած ըլլալը ծանուցա- նելու նամակ	283
9. Գումարի մը հասած ըլլալը ծանուցանե- լու նամակ	283
10. Ստակ խնդրելու նամակի օրինակ Նոյնք առ նոյն	284
11. Թուլացեալ յարաբերութիւն մը պնդելու նամաք գրուած նամակի օրինակ	286

12. Յանդիմանութեան նամակի օրինակ	287
13. Զըմեղութեան նամակի օրինակ	288
14. Հաշիւ տեսնելու կամ ցուցնելու նա- մակներ	289
15. Վարկ խնդրելու նամակի օրինակ	290
16. Յանձնարարութեան նամակի օրինակ .	291
17. Շնորհակալութեան նամակի օրինակ	292
18. Շնորհաւորութեան եւ ցաւակցութեան նամակի օրինակ	293
19. Զախորդութիւն, մանկութիւն եւայլն ծանուցանելու նամակի օրինակ	294

ԱՐ ՀԱՅԵՐՑՈՂՍ

Նամակագրութիւնը գրագիտութեան կարեւոր
Տիւղերէն մին է, եւ հարկաւոր գրեթէ ամեն աս-
տիճանի մարդոց : Կայ կենաց մէջ վիճակ մը որ
պէտք չունենայ աւելի կամ նուազ յաճախ դիմու-
թոյ առ այս պարզ միջոց գրաւոր հաղորդակցու-
թեան : Թէպէտ պարզ եւ սովորական, ունի սա-
կայն այս արուեստ բաւական գժուարութիւններ
որ կը հարթուին ի խոհեմութենէ թելադրեալ ոչը
եւ այլ կանոններով և ընտիր հեղինակաց տուած
գործնական օրինակօք :

Մեր փոքրիկ քարտուղար կը պարունակէ այս
կանոններ համառօտիւ, եւ որովհեաւ օրինակն
ազգու է քան զպատուէրս, գրքուշիս մէջ վոյց
տարուած է յաճախել այս վերջինները : Պիտի
գտնէն ամս լութերցողք այլեւայլ նիւթոց վերայ
տւելի քան երկերիւ նամականի, որոց ոչ միայն
ընտրութեան, այլեւ լեզուին եւ ոճոյն պարզու-
թեան եւ մաքրութեան խնամով միտ գրուած է .
յատկապէս ջանացուած է քաղցր ընել ընտանե-
կան ոճը : Ունի նաեւ գրքոյկս պայմանագրի, ա-
ղերմագրի, ծանուցմանց եւ առեւարական նամա-
կաց ոչ սակաւ օրինակներ : Հեղինակն ակն ունի
թէ նամականիս օգտակարութեան եւ զուարձու-
թեան և ընտիր ճաշակի ալ պիտի նպանաէ մեր
միր մանկաւոյն :



ՀԱՅՈ-ԱՐՄ ԸՆԴ

Ա. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ



9712

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0082469

ՅԱՆԿ ԳՐԱՅԻ

Ի ԳՐԱՏԱՆ ԵՂԲԱՐԵ ԳԱՎԱՅԱԵԱՆ

Դ. Պ. Գ. Պ.

Ապրեհնարան գիւղուոյց , Հեդարան կ.		
Ծեփեցարան	20	
Աշխարհագրութիւն բանկան և քաղաքան կան Ա. Մ. Գարագալչանի	4	
Աշխարհագրութիւն ուսումնա բնական քաղաքական Ա. Աքայիշեանի	8	
Գրադիտանը թւան առձեւն	11	50
Գաստիարակ մանկուց կամ առ Ծիներ բան Ա. Մ. Խաչուչաշեանի	5	
Գաստիար հաւաքւածութեան Տ. Յ. Պ.		
զանեան Գ. Տէղագրութիւն	8	
Գաղրութեալ կամ նոր շաբաթականաթիւն Ա. Յ. Գառագալչանի	8	
Կրթութ. Տաճէ լեզ Պ. Գաղլալչանի	5	
Մանր ու մոնակ Վեհանուեական հուասոյ և Արքազան պատմաթիւն Ա. Կառա- րանի Գ. Մարգարեանի	2	
Միջմահաւութեամ Յ. Փաշայեանի	8	
Նոր Գասադչեար ազգային պատմաթեառն Ա. Ա. Աւարիչ անի	5	
Աշրագան պատմաթիւն բանց Շահուկե- րոր գ. որդ բեալ Ա. Մ. Գարագալ-	5	
Տիկիւրագրութիւն կամ ուսումնական բնական և քաղաքական Աշխարհագ- րութիւն Ա. Մ. Գառագալչանի	3	
Բաղդամ ձեւավելի	6	
Փոքրիկ Քարտուզար կամ Նումակունի Ա. Մ. Գարագալչանի	10	
Քերականաթիւն Գ. Պ. և Հոյ բառ Ո.- ինսորֆի գրութեան Ա. Մ. Գարագ. 25	20	
Քերական, չմառ Ա. Մ. Գարագալչանի	4	